

Oragrowt'iwn owgeworowt'ean yEwropa Sahak B. Kat'ogikosin Kilikioy

Khoubesserian, V. L. (1870-1937). Oragrowt'iwn owgeworowt'ean yEwropa Sahak B. Kat'ogikosin Kilikioy. 1928.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.


Վ. Լ. ԽՈՒՊԷՍԷՐԵԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՅԵՒՐՈՊԱ
ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԿԻԼԻԿԻՈՅ



19

ՏՊԱԳՐ. «ԱՐԱՔՍ» Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ - ՀԱԼԷՊ



ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՅԵՒՐՈՊԱ
ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԿԻՆԿԻՈՅ

Վ. Լ. ԽՈՒՊԷՍԷՐԵԱՆ

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղեւորութեան յերապա

ՍԱՀԱԿ Բ. ԿԱՅՈՂԻԿՈՍԻՆ ԿԻԼԻԿԻՈՅ



1928

ՏՊԱԳՐ. «ԱՐԱՔՍ» Բ. Յ. ԹՕՓԱԼԵԱՆ - ՀԱԼԵՊ

ՀԵՐԱՊ
ԵՐԱՅ

ՈԿՏՅԱՐ

2008 - 239113

ԿԳ



N° 15

ՏՊԱՐԱՆ ԱՐԱՔՍ - Բ. ԹՕՓԱԼԵԱՆ

59, RUE TILÉL - ALEP, SYRIE



Կ Ա Ն Ի Ա Ք Ա Ն

Մ Ա Ր Ա Շ Ի աղէտէն յուսահատ՝ ձէպէլի Պէ-
րէքէթ նահանգի պաշտօնէս հրաժարած՝
Ատանա եկած էի: Ամենուրեք յուզումն ու
սարսափը աննկարագրելի էին. ամենուրեք ժողովուր-
դը ահ ու սոսկումով գերագրգռուած՝ ինքնապաշտ-
պանութեան եւ ապահովութեան վրայ կը մտածէր:
Պաշտօնիս մէջ եղած միջոցիս տեղական հան-
գամանքներուն եւ թուրք հոգևրանութեան ծանօթու-
թեանս սահմանին մէջ ըրած ջանքերս ապարդիւն
մնացած էին, միայն հրաշքով ազատեցայ Մարաշի
մէջ առաջին զոհն ըլլալէն.* սակայն հազարաւոր դժ-
բաղդ հայերու կեանքը եւ ֆրանսական դրօշի պա-
տիւր զոհուած էին թիրիմացութեանց, անհասկա-
ցողութեանց եւ անձնական նկատումներու: Վտանգը
մեծ էր Կիլիկիոյ քրիստոնէից, ի մասնաւորի Հայոց
քնաջնջում կը սպառնար: Թուրքերը Մարաշի վերա-
գրաւումէն քաջալերուած՝ օր ըստ օրէ սպառնա-
կան դիրք կը բռնէին: Իրաց այս կացութեան մէջ
ն. Սրբազնութիւն Սահակ Բ. Կաթողիկոսը զիս ուզած
էր: Երբ ներկայացայ, շատ ընկճուած ու ապագայի

* Եղերարսղդ Վահան, ազատեցար Մարաշի սպանդէն,
բայց չորս տարի ետքը Դամասկոսէն ՚ի Պէյրութ երթալուդ,
էլ Համե կայարանին մէջ զոհուեցար մայրիկդ ալ հետդ տա-
նելով: Լացաւ Կաթողիկոսը մահդ հայրական սիրով, ինչպէս
Դաւիթ ողբաց Աբխաղոմի մահը:

անատուգութեան մասին խորին մտածման մէջ էր: Այլեւոր գլուխը բարձրացնելով ըսաւ. - Բաժակը Մարաշի հազարաւոր Հայ զոհերով լեցուած է. Հանրնէն անմիջական օգնութիւն խնդրողնոր հեռագիրներ ստացած էր: Եղած դիմումներուն ֆրանս. Իշխանութիւնք բացասական պատասխանով գինուորական ուժ ղրկել անհնարին համարած էին: Միեւնոյն ատեն Մարաշի հոգեւոր ներկայացուցիչները անշուշտ թրքական ստիպումի տակ, հեռագրո՛վ յանուն մարդասիրութեան կը խնդրէին . - Աղաչել Ֆրանսացիները Մարաշի վրայ նոր յարձակում չը փորձել. հակառակ պարագային ամենքս ալ վտանգի կ'ենթարկուինք:

Այս ամէնը պարտադրած էին Նորին Սրբութիւնը անշուշտ եւ անմիջապէս եւ առանց ո՛չ ոյի տաղտուկ եւ ծանրութիւն ըլլալու երթալ Ֆրանսա եւ ժողովուրդի կեանքը ապահովելու համար ուղղակի Հանրապետութեան դիմել: Հարցուց . - Կ'ուզե՞ս ուղեկցիլ . - Ն. Սրբութեան հրամանը ինձ համար թէ՛ պատիւ եւ թէ՛ պարտաւորութիւն էր:

Կիլիկիոյ մէջ որեւէ օգտակարութիւն չի պիտի ունենար ներկայութիւնս. թէեւ միւս կողմանէ քաղաքական դարձուածք ցոյց կուտային, որ մեզ համար նպաստաւոր վայրկեանները կորսուած էին, բայց կենաց եւ մահու խնդիրներուն մէջ եթէ ամենափոքր յոյս մ'ալ ըլլայ, անկէ օգտուիլ աշխատելու է, մանաւանդ գրտէինք, որ 154րդ զօրաբաժնին հրամանատար Ժեներալ Տիւֆիոյ եւ հակակշիռի պետ Գօլոնէլ Պրեմոն, երկու պատուականագոյն Ֆրանսացիներ, թէեւ կացութեան ծանրութեան լաւ տեղեակ

չին, սակայն ձեռք առնելիք միջոցներու մասին չէին կարող ընդունել տալ Կեդր. Իշխանութեան:

Ն. Սրբութեան, իբրեւ բարձրագոյն հեղինակութիւն եւ Կիլիկիոյ կացութեան քաջածանօթ, 'ի Փարիզ ներկայութիւնը կրնար օգտակար ըլլալ: Սիրով ընդունեցի ուղեկցելու հրամանը: Ֆրանս. Իշխանութիւնը ընդունած չէր հրաժարականս, 'ի պատիւ Ն. Սրբութեան ուղեկցութիւնս իբրեւ Ֆրանս. Պաշտօնեայ արտօնուեցաւ:

Սուրիոյ եւ Կիլիկիոյ Բարձր. Գոմիսէր. Ժէնէրալ Կուրօ իր անձնական Ալպարուս գրօսանաւը տրամադրեց Ն. Սրբութիւնը Մերսինէն Պէյրութ տանելու, ներողութիւն խնդրելով, որ երկրի պաշտպանութեան համար զրահաւորներու պէտքը շատ ըլլալուն՝ չէր կարողացիր զրահաւոր մը տրամադրել:

Վ. Լ. ԽՈՒՊԷՍԷՐԵԱՆ



Ամսաթիվ 13. 11. 1919 թ. Մարտի



ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՅԵՒՐՈՊԱ

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Մ Ա Ր Տ

13.- Ատանայէն Մերսին իջանք. կայարանը ողջերթի եկած էին Գօլոնէլ Պրեմոն, Պ. Տամատեան և բազմաթիւ ազգայինք: Առաջ. Գեր. Գէորգ Ծ. Վոզ., Կիրակոս Վրդ., Տիարք Կ. Քէշիշեան, Կ. Կէօվտէրէլեան և Մ. Երեցեան մինչեւ Մերսին ուղեկցեցան: Հիւրասիրուեցանք Տիար Կ. Քէշիշեանէ. այցելութիւններ եղան ֆրանսական, թրքական պաշտօնեաներէ և ազգայիններէ: Երկրորդ օրը առաւօտ կանուխ Ալպարոս Մերսինի առջեւ խարսխեց: Հրամանատարը Ն. Սրբութեան ներկայանալով ըսաւ. - Նաւը Ձեր տրամադրութեան տակն է:

14.- Ժամը 11ին խռովեալ ծովով նաւ իջանք: Ն. Սրբութիւնը թնդանօթածգութեամբ և զինուորական պատուով ընդունուեցաւ: Հրամանատարը յանուն ժեներալին ողջունեց և ինքնագիր նամակ(2) մը յանձնեց: Ժեներալը ուրախութիւն կը յայտնէր, որ իր զբօսանաւը տրամադրելու առիթ տուած է և շատ փափկութեամբ ցաւ կը յայտնէր որ Հայերք մրանսան

կ'ամբաստանեն իբրև Մարաշի ջարդին պատճառ :
Եթէ Թրանսան չկարողացաւ Մարաշի Հայութեան ջարդը
արգիլել, քոնէ իր զինուորները կռուեցան և մեռան
Հայոց համար :

Յետ միջօրէի նաւը ճամբայ ելաւ . ծովը ալեկոծ
էր եւ հետզհետէ աւելի զայրացաւ . լեռնանման
ալիքները յարդի շիւղի նման կը բարձրացնէին Այ-
պաթրոսը, որ հակառակ իւր անունին դժուարու-
թեամբ կը դիմակալէր շղթայազերծ կոհակներուն :
Կիլիկիոյ ծովն ու ցամաքը դաշնակցած էին զայրուց-
քի կատաղութեամբ :

15.— Կէսօրէն ետքը ժամը 2,30 ին Պէյրութ
հասանք : Ժեներալի թիկնապահներէն տեղակալ ժաքէ
նաւ եկաւ և մեզ առաջնորդեց ուղղակի 20-Գումիսէ-
րութեան պալատը : Ժեներալը մեծ պատուով ընդու-
նեց Ն . Արքութիւնը և կատակով ըսաւ .— Լաւ ճամբոր-
դողը լաւ ախորժակ կ'ունենայ, հաճեցէք ուրեմն ճա-
շերու . . . : 'Ի պատիւ ճոխ սեղան մը պատրաստուած
էր . սեղանակցեցան Ամիրալ լը Պոն, Առաքելական
Նուիրակ Մօնսինեոր Ճանինի, Րոպէր Տը Բէ, Հայ և
Հայ Կաթողիկ Հոգեւորներկայացուցիչները և բարձրաս-
տիճան սպայներ : Մեզմէ զատ ամէնքն ալ ախորժա-
կով կերան և խմեցին, որովհետև մեզ սպասելով ա-
կամայ ծով պահած էին : Առաք . Նուիրակը տարի մը
վերջը Ատանա այցելած միջոցին՝ այս ծամապահու-
թիւնը յիշած էր Ն . Արքութեան :

Ճաշէն ետքը Ա . Կաթողիկոսը Ժեներալին հետ
մասնաւոր տեսակցութիւն մը ունեցաւ Ռոպէր Տը Բէի և
իբրև թարգման իմ ներկայութեան : Ժեներալը հար-
ցուց .— Ինչո՞ւ և ի՞նչ նպատակաւ կ'երթաք Եւրոպա .—

Ն. Սրբութեան անակնկալ պատասխանը եղաւ .— Կ'երթամ Ձեր վսեմութեան օգնութիւն խնդրելու Կեդր. Կառավարութենէն : Շատ գոհ մնաց ժեներալը այս անկեղծ պատասխանէն : Ապա Կիլիկիոյ ընդհանուր կացութիւնը պարզեց և ծանրացաւ Հաճընի օրհասական վիճակին վրայ և ցոյց տուաւ վերջին հեռագիրը, որով կը յայտարարէին .— Ֆրանսայի համար կը մեռնինք : Ինքնագիր նամակով ժեներալին յայտնած ցաւին ակնարկելով՝ Ն. Սրբութիւնը ըսաւ .— Ազգ մը կարելի չէ, որ մէկ գլուխ և մէկ միտք ունենայ : Ամէն ազգի պէս հայերուն մէջ ալ կը գտնուին ծանրախոս և հեռատես անձնաւորութիւններ և կան առօրեայ դէպքերէ և դիպուածներէ ազդուած՝ զգացումով դիտողութիւն ընողներ : Վստահ եղէք որ Կիլիկիոյ ամբողջ Հայութիւնը իր համակրանքն ու սէրը կեդրոնացուցած է Ֆրանսայի վրայ և իր ապահովութիւնը անկէ կը սպասէ : ժեներալը խոստացաւ կարելին բնել և խնդրեց, որ Կիլիկիոյ մասին խօսածները Կեդր. Իշխանութեան ալ կրկնէ և անոր նկատառութիւնը խնդրէ :

Այս տեսակցութենէն յետոյ թէ ժեներալէն և թէ բոլոր ներկայներէն հրաժեշտ առնելով՝ տրամադրուած օթամոպիլով սւղղակի շոգենաւ գացինք, որ ելնելու համար մեզ կը սպասէր : Նաւը Պարավիա անուն Գերմաններէն գրաւուած հսկայ մըն էր, լեցուն Լիբանանցի և Սուրիացի ճամբորդներով, որոնք Շէրիֆ Ֆէյսալի հանդէպ Ֆրանսացւոց դիւանագիտական մեղմ ընթացքէն դժգոհ՝ Նոր-Ալիսարհ կ'երթային : Ասանցմէ զատ ուղեկից ունէինք Ջահլէի Յոյն Կաթուղիկ Նպիսի . Մօնսիներոք Կապկապ, որ բազմախօս

կրօնաւորի մը հետ Ֆրանսա կ'երթար Հասպիե և Բա-
ժիյե երկու դաշտային գաւառները Լիբանանին միացնել
տալու նպատակաւ : Եպիսկոպոսը և ընկերը այնքան շա-
հագրգռուած էին այս երկու նահանգներով և մանաւանդ
այնքան զայրացած էին Շէրիֆ Ֆէյսալի թագաւոր
հռչակուելէն, որ մինչև Մարսիլիա խօսակցութեան
նիւթն էր Հասպիյէ-Բաշիյէ : Ունէինք Հալէպցի
Քրիստոնեայ երիտասարդ մը, որ հակառակ Եպիսկո-
պոսին՝ համակիր էր Ֆէյսալի կառավարութեան և
Սուրիոյ խաղաղութեան և տնտեսական զարգացման
համար որեւէ կարգադրութիւն վնասակար կը համա-
րէր : Պէյրութէն մինչեւ Մարսիլիա, ութն օր, մեր
արիւնոտ սրտերուն միակ սփոփանքը եղաւ Եպիսկո-
պոսին և Հալէպցի վաճառականին վիճարանութիւնը :

23.— Մերթ ալեկոծ և մերթ խաղաղ նաւարկու-
թեամբ առաւօտեան ժամը 8,30ին հասանք Մարսիլիոյ
նաւահանգիստը : Կառավարութեան պաշտօնեայ մը,
Ազգ. Միութեան Ատենապետ Տիար Յ. Սահաթճեան
եւ անդամք, մեր բարեկամը Պ. Վարդան Փիրանեան
եւ Aiguillon թերթի խմբագիր Պ. Ա. Թիւրապեան
փութացած էին ընդառաջ գալու եւ առաջնորդելու
Սրեյ Նուայլ : Եւրոպայի հանգիստ կեանքի ճաշակը
առաջին անգամ այս տեղ առինք : Հետզհետէ բարի
գալուստի եկան գաղթականութեան գլխաւոր անդամ-
ները, Տիար Մ. Չերազ, երբեմնի ազգանուէր գործիչ,
ծերացած, ընկճուած եւ մեկուսացած, եւ Soleil du
Midi թերթին խմբագիր Հայասէր Օ. Պ. Պուրէլին,
որ երկար տեսակցութիւն մը ունեցաւ եւ պէտք եղած
տեղեկութիւնը քաղելով եւ կիլիկիայի մասին Պ.
Չերազի պատմական տեսութիւնը լսելով շնորհակալու-
թեամբ մեկնեցաւ :

Ն. Սրբութիւնը Ֆրանսական ազատ հողի վրայ լիաթոք շունչ մը առնելով իբրեւ երախտագիտական պարտք՝ Հանրապետութեան վսեմ. Նախագահին հեռագրեց.— Այսօր երջանկութիւնն ունեցայ Ֆրանս. ազատ հողին վրայ ոտք դնել. 'ի դիմաց Կիլիկիոյ Հայութեան կ'ողջունեմ յանձին Ձեր մեծն Ֆրանսան, որ իր ծոցին մէջ հանգչեցուց Լեւոն Ե. Լուսինեան, Հայոց տարաբազդ վերջին թագաւորը :

24.— Հայ Գաղութը հանդիսաւոր հացկերոյթ տուաւ եւ երեկոյեան ժամը 7½ին մեկնեցանք 'ի Փարիզ : Գիշերը զրկեց զմեզ Ֆրանսայի գեղեցկութիւնը դիտելու հաճոյքէն :

25.— Առաւօտեան ժամը 10,30ին ժամանեցինք Փարիզ : Ընդառաջ եկած էին Գեր. Վռամշապուհ Մ. Վարդապետը, Պատուիրակութեան Փարիզ մնացող անդամներէն Տիարք Մ. Պապաջանեան, Վ. Թէքէեան, Տօքթօր Նէվրուզեան եւ Համագումարի Կիլիկիցի անդամ Ատանացի Տիար Զ. Պզտիկեան, Հայ գաղութի երեւելիներ եւ Կիլիկիցի ուսանողներ, Հայր Վռամշապուհ բարի գալուստի ուղերձ մը արտասանեց : Ս. Կաթողիկոսը գգածուած եւ յուզուած պատասխանեց.— Ազգ. Պատմութեան մէջ կարդալով Հայերու հաւաքական գաղթականութեան ողբերգը եւ Հայրենիքի դատարկումի լալահառաչ տողերը, գաղթականութիւնը անէծք կը համարէինք. վերջին անճիտացումի սարսափը անէծքը օրհնութեան փոխեց. Եթէ այս օրհնութիւնը չըլլար, զՁեզ տեսնելու երջանկութիւնը չը պիտի ունենայի : Եթէ Հայ օրհնեալ գաղութները չը լինէին, ո՞վ պիտի ամօքէր Ազգին ծով ցաւերը :

Նախ Սբ. եկեղեցին առաջնորդուեցանք. ըստ հնամենի սովորութեան «Հրաշափառ»ի արարողութեանէն ետքը օրհնեց Ս. Կաթողիկոսը համախմբուած ժողովուրդը եւ խոստացաւ պատեն ժամանակներուն խօսիլ իրենց: Գնացինք Օփերայի պողոտային Տր Տիւ մոնս Օթէլ: Ի տես այդ հոյակապ եւ ընդարձակ օթէլին, Ն. Սրբազնութիւնը հառաչանօք ըսաւ.— Թող տան այս Օթէլը Հաճընցիներուն, ամէնքն ալ կը տեղաւորուին, ո՛չ կռուի եւ ո՛չ փոխադարձ արիւնի պէտք կը մնայ:

Հանրապետութեան Նախագահի կողմէն Պ. Լուի Հերմիթ, արտասովոր դեսպան եւ Նախագահութեան ընդհանուր Քարտուղար, Նախարարապետի կողմէն ալ արեւելեան Գործոց դիւանապետ, Պարթըթոն բարի գալուստի եկան և ներողութիւն խնդրեցին որ կանխաւ տեղեկութիւն չունենալով չկարողացան կայարան գալ: Ս. Կաթողիկոսը շնորհակալութեամբ խորին յարգանքներ յանձնարարեց թէ՛ Նախագահին եւ թէ՛ Նախարարապետին:

26.— Ն. Սրբութիւնը հեռագրով Պ. Միլրանէն ունկնդրութիւն խնդրեց: Նախարարներուն, Սէնայի, Սորհրդարանի Նախագահներուն եւ Հանրապետութեան Նախագահին այցեքարդեր ձգեց:

27.— Տիար Մ. Պապաջանեան և Տեօքթօր Նէվրուզեան այցելութեան եկան և բաւական երկար վիճարանութիւն տեղի ունեցաւ: Պարտք կը զգամ ըսելու, որ Տիար Պապաջանեանի յայտնած գաղափարները, իրականութիւնը ըմբռնող և քաղաքական որոշ հասկացողութիւն ունեցողի տպաւորութիւնը թողուց վրաս:

Նախարարապետին տրուելիք այցելութիւնը Մարտ 31, երեկոյեան 7,30 ժամին որոշուեցաւ: Ն. Սրբու-

Թիւնը յիշատակագիր մը (3) պատրաստեց՝ յետ
ունկնդրութեան մատուցանելու համար։ Որոշեալ
օրը որոշեալ ժամին Քէ ս'Օրսէ գնացինք, համաձայն
փրոտոգոլի ընդունուեցանք. պահ մը հանգիստէ վերջ
Նախարարապետին ներկայացանք։ Ս. Կաթողիկոսը
զիս և Պ. Պզտիկեանը ներկայացնելէ ետք, Նախա-
րարապետը ողջունեց Ն. Սրբութիւնը և աւելցուց. —
Կիլիկիոյ Կաթողիկոսին այցելութիւնը ընդունելով ո՛չ
միայն անոր ներկայութեան պատիւը կը վայելեմ,
այլ այս առթիւ Հայ Ազգին հանդէպ Ֆրանս. Կառա-
վարութեան համակրութիւնը արտայայտելու պատե-
հութիւնը կ'ունենամ։ Քաղաքավարական տեսակցու-
թենէն յետոյ խօսակցութիւնը բուն խնդրին դարձաւ։
Ն. Սրբութիւնը իրեն յատուկ պերճախօսութեամբ և
ծանրութեամբ Կիլիկիոյ ներկայ կացութիւնը և Հա-
յերու համեստ բաղձանքները պարզեց և Արեւելքի
մէջ Ֆրանսայի պատիւը և հրայքը և հարիւր հազա-
րաւոր Քրիստոնէից կեանքը պահելու եւ պաշտպա-
նելու որոշ թելադրութիւններ ըրաւ։

Վարչապետը Սենայէն դարձած էր, ուր տաք վի-
ճաբանութիւն ունենալով մտազբաղ ըլլալը յայտնի
էր. հակառակ անոր Ն. Սրբութեան տեսութիւնները
և թելադրութիւնները ուշադրութեամբ լսելով՝ հաւաս-
տեց. — Ինչ որ պէտք է պիտի ընէ Ֆրանսան ո՛չ միայն
ներկան ապահովելու, այլև ապագայ զարգացման և
զօրաւոր Հայաստան մը կազմելու համար։ Պատրաս-
տուած յիշատագիրը յանձնեց Ն. Սրբութիւնը և
հրատեչտ առնելու միջոցին խնդրեց ու փափաք յայտնեց
Վսեմ. Նախագահին ներկայանալ և Կիլիկիոյ Հայու-
թեան երախտագիտութիւնը մատուցանել։ Սոստացաւ

անմիջապէս կարգադրել, գոհ սրտով մեկնեցանք:

Երեկոյեան ընթրիքի միջոցին Նախարարապետութեան դիւանէն թելեֆոնով կանչուեցայ: Հաղորդեցին թէ, վաղը Հանրապետութեան Նախագահ Պ. Տէչանէլը ժամը 10ին պիտի ընդունի Ն. Սրբութեան այցելութիւնը և թէ պաշտօնեայ մը պիտի գայ ինքնաշարժով առաջնորդելու համար:

Ա Պ Ր Ի Լ

1. — Ըստ ժամադրութեան, Արտաքին Գործոց պաշտօնեայներէն Հայազգի Տիար Նշան Գալրպէտեանի առաջնորդութեամբ գնացինք Էլիզէի Պալատը: Դրան առջեւ զինուորական պատիւներ կոչան: Արարողապետի մը առաջնորդութեամբ սպասման սրահը գնացինք. մի քանի վայրկեան հանգիստէ կողքը շատ մը սրահներէ անցնելով Նախագահի ընդունելութեան սրահին առջեւ Արարողապետներէն մէկը բարձրաձայն աղագարարեց. — Ն. Սրբութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսը. — Նախագահը համակրելի և ժպտուն դէմքով դրան առջեւ երեւցաւ, և Ս. Կաթողիկոսին ձեռքը թօթուելով ներս հրամցուց: Ն. Սրբութիւնը իր հեռուորդները ներկայացնելու ասին աթոռի պակասութեամբ ոտքի մնալս տեսնելով՝ Նախագահը իր ձեռքով թիկնաթու մը քաշելով նստելու հրամցուց: Արեւելքի վարք ու բարքին ընտել մէկուն անըմբռնելի և ապշեցուցիչ է Նախագահին կենցաղագիտական ժեստը: Այնչիւն մեր երկրին մէջ պարզ ոտականը կթէ նմանօրինակ մեծարանք մը ընելու պարտաւորուի, իր պաշտօնին նուաստացում պիտի սեպէր:

Նախագահը աթոռը մօտեցնելով խորին ուշադրութեամբ լսեց, ինչ որ Ն. Սրբութիւնը ըսաւ Կիլիկիոյ կացութեան և Ֆրանսական ուժերու անբաւականութեան մասին: Նախագահը ըսաւ. - Ինքզինքս չըջանիկ կը զգամ ՀայԱզգին Կաթողիկոսին ներկայութիւնը վայելելու: Կարծեմ ես Ձեր ազգին անձանօթ չեմ, որովհետեւ անձնապէս Հայոց դատին համակիր և պաշտպան եմ: Հայերուն կրած տառապանքը և յանուն արդարութեան դաշնակիցներու կողքին ըրած զոհողութիւններն ալ ծանօթ են մեզ. մանաւանդ Մարաշի վերջին աղէտը բոլոր Ֆրանսացիները խորին վշտով համակեց: Ս. Կաթողիկոսը շնորհակալութիւն յայտնեց, որ Մարաշի աղէտին առթած վիշտը Ֆրանսացիք բաժնած են, և աւելցուց, որ Կիլիկիոյ Հայութեան միակ մխիթարութիւնն է այն յոյսը, թէ ինչպէս առաջ՝ յետ այսու Հայկական արդար դատը աւելի ուժգնութեամբ պիտի պաշտպանէք: Նախարարապետի յայտարարութենէն գոհ մնացի՞ք հարցումին պատասխանեց Ս. Կաթողիկոսը. - Որչափ Ձերդ Վսեմութեան համակրութենէն, նոյնչափ Նախարարապետի յայտարարութենէն գոհ մնացի: Նախագահը շարունակեց. - Խնդրեմ ըսէք, ի՞նչ կըրնայ ընել Ֆրանսա գործնականապէս Հայերուն համար: Դուք օտար չէք, կրնամ ըսել Ձեզ, Ֆրանսա շատ երիբիւհ շրջան մը կ'անցնէ: Պատերազմի շրջանին դրամական և մարդկային ահագին զոհողութիւններ ըրաւ: Հիմա ալ կացութիւնը տակաւին բարւոքած չէ: Հակառակ տարուած յաղթանակին՝ տակաւին շատ ծանր բեռ և պարտաւորութիւններ ունինք. հսկել Հռենոսի վրայ, վերաշինել մեր քանդուած նահանգ-

ները . Ճէզայիրի , Թունուզի , Մարոքի , Սուրիոյ և այլ խնդիրներ : Բայց այս ամենուն հետ Ֆրանսա երբէք չը պիտի թերանայ Հայերու հանդէպ իր պարտուց մէջ և կարելին պիտի ընէ յօգուտ և յապահովութիւն Հայերու : Յաճախ Նախարարապետին հետ Հայկական խնդրին վրայ կը խորհրդակցինք՝ քիչ վերջը նորէն պիտի կանչեմ Ձեր ըրած թելադրութիւնները իրեն հետ ուսումնասիրելու համար : Ն . Սրբութիւնը շատ փափկութեամբ կիլիկիոյ պաշտպանութեան համար Ֆրանքո-Հայկական զինակցութեան մը ակնարկեց . - Եթէ նոր ուժեր զրկելու դժուարութիւն կայ , Հայերը պատրաստ են Ֆրանսական դրօշի տակ ծառայելու : Նախագահը շնորհակալութիւն յայտնելով ըսաւ . - Աւելի լաւ չե՞մ գտնու , որ Բաղաճականութեամբ մեր նպատակին հասնինք : (Հայկական խնդրոյ դամբանականին յառաջաբանը) Համառօտ յիշատակագիր (4) մը յանձնելով՝ հրատեղտի ողջունով մեկնեցանք :

Երեկոյեան Պ . Չօպանեանը եկաւ Լոնտրայէն Ն . Սրբութեան օգնելու ընդունելութեանց ընկերակցելով : Ս . Պատրիարքէն նամակ մը և Մարաշի խնդրոյն համար ըրած հեռագրական զիմումներուն պատճէնները բերած էր : Պ . Չօպանեան Լոնտրայի վեհաժողովին Ազգ . պատու իրակութեան զիմումներով , կարինը Հայաստանի մէջ առնուիլը աւետելով՝ կարեւոր անձնաւորութեանց հետ բանակցելու պաշտօն ունենալը յայտնեց :

Յանուն Պօղոս Փաշայի Պ . Չօպանեան թելադրեց Ն . Սրբութեան , որ զիմում ընէ Ֆրանս . կառավարութեան Չօրավար Անդրանիկը կիլիկիա հրաւիրելու : Այս առաջարկը յաճախ կրկնուած էր Ազգ . Պատուի-

րակութեան կողմէ, առանց պարագայները և քաղաքական տրամադրութիւնները նկատի առնելու Ս. Կաթողիկոսի կողմէն կրկնուիլը անթաքթ և անյարմար սեպուեցաւ: Նպատակը լաւ, բայց յաջողութեան համար կանխաւ գիտին պատրաստուած շէր թէ՛ երկրին և թէ՛ կեդրոնին մէջ:

2.— Երեկոյին յուր տրուեցաւ, որ վաղը ժամը 3,30ին Արտաքին Գործոց գլխաւոր պետ Պ. Պարժըթոն պիտի ընդունի Ս. Կաթողիկոսը՝ մեր բացակայութեան Պ. Լէօն Պուրժուա եկած և այցաքարդ ձգած էր:

3.— Որոշեալ ժամին Քես'Օսէ գնացինք. Պ. Չոպանեան միջանցքին մէջ մեզ կը սպասէր: Պ. Պարժըթոն դռնէն դուրս դիմաւորեց և սիրալիր յարգանօք ընդունեց: Յետ գանապան խօսակցութեանց Ս. Կաթողիկոսը ՚ի պատիւ Պօղոս Փաշայի, Ժեներալ Անշրանիկի նման փորձառու և ընդհանուրին վստահութիւնը և համակրութիւնը գրաւող մէկու մը ՚ի կիլիկիա պէտքը ցոյց տուաւ թէ ինքնապաշտպանութեան և թէ ռազմական տեսակէտով մեծ ծառայութիւն կրնայ մատուցանել Ֆրանսայի: Պ. Պարժըթոն անուղղակի պատասխանեց պարզելով Ֆրանս. քաղաքականութիւնը.— Քաղաքակիրք եւ ինքնագիտակից կառավարութիւն մը կազմել, թուրք դրօշակը պահել կիլիկիոյ մէջ իւրաքանչիւր ցեղի եւ ազգի առանձնաճնօրհուով: Մի կարծէք թէ մենք, այլ բաղաբակաւորութիւնը եւ բաղաբակրո՛թիւնը այսպէս կը պահանջեն: (Երկրորդ դամբանական Հայկական դատին և նրազանքներուն):

Ն. Արքութիւնը նկատել տուաւ, որ դրօշակի վերահաստատութիւնը քաղաքական պարտութիւն մը

ըլլալով մէկ տեղ . թրքական մուսուլմանութիւնը աւելի պիտի գերազրգուէ և Մարաշի արիւնոտ դէպքերը , որ ըստ յայտարարութեան Ն. Բարձրութիւն Նախագահին բովանդակ Ֆրանսան վիշտով համակած է , վերակրկնելու առիթ պիտի ըլլան : Իսկ թուրքը քաղաքակրթելու փորձը նոր չէ , դարերէ ի վեր կրկնուած և անիրականալի մնացած է : Թերեւս կարծուի , որ թուրքին քաղաքակրթիչները անոնք են , որ եւրոպան տեսեր և Եւրոպացին կը ճանչնան և Եւրոպական կրթութիւն ստացեր են , դժբախտաբար աւելի մուսուլմանդ և Քրիստոնէից թշնամիներն են :

Պիտի վերադառնամ ըսաւ Ս. Կաթողիկոսը , բայց յուսալքուած ժողովուրդը ինչո՞վ քաջալերեմ , ձեռքս թղթի պատառ մը անգամ չունիմ : Պ. Պարժրթօն ըսաւ .- Նախարարապետին տրուած գրութիւնը Դիւանին յանձնուած է , բնականաբար պատասխանը պիտի տրուի : Կիլիկիայէն նոր լուրեր հարցուեցաւ .- Նոր բան չը կայ ըսաւ . միայն օդանաւով կը ջանան Հաճընի օգնել և Սիսը պարենաւորելու համար Ատանայէն Գոլոն մը ղրկուեցաւ : Սոստացաւ ստացուած նոր տեղեկութիւնները օրը օրին հաղորդել :

Պ. Պարժրթօնի խոստումին վրայ գրեթէ ամեն օր Արտաքին Գործոց պաշտօնատուներ կը հանդիպէի տեղեկութիւններ առնելու համար : Բոլոր պաշտօնեաները շատ քաղաքավար ընդունելութիւն կ'ընէին :

Պ. Լէօն Պուրժուա Ն. Արքութեան ունկնդրութեան խնդրանքին նամակով մը (5) պատասխանած էր , թէ Նախագահին հետ Նիս երթալուն չը պիտի կարողանայ վայելիլ Ն. Արքութեան այցելութեան պատիւը և յոյս կը յայտնէր վերադարձին նոյն պատուոյն արժանանալ :

Պաշտօնական այցելութիւններէն ետքը կը մնար ընդհանրութեան կարծիքները ներկայացնող անձնաւորութեանց հետ տեսնուիլ, Կիլիկեան խնդրոյն իրազեկ ընել և մեր վիճակով շահագրգռել :

Երբ Ֆրանսա հասանք, մեզի համար ստեղծուած աննպաստ կացութեան մը առջեւ գտնուեցանք . կամ ինչպէս կանխաւ ակնարկեցինք, նպաստաւոր վայրկեանները կորսնցուցած էինք : Թուրքերը քաղաքական գոյավիճակէն օգտուելով՝ ի նպաստ իրենց շատ գետին շահած և թրքական քաղաքականութիւնը ժողովրդականացուցած էին : Գերմանացիք վերսալի դաշնագիրը գործադրելու կը դժկամակէին և ռազմաշունչ յայտարարութիւններ կ'ընէին : Սուրիոյ մէջ Շէրիֆ Ֆէյսալի դիրքն ալ նուազ թշնամական չէր : Այսպիսի կացութեան մէջ Ֆրանսան ամէն ժամանակէ աւելի ուժի պէտք ունէր : Մղուած փրօպականտի շնորհիւ թրքական ուժին առասպելական չափ տուած ու մինչեւ կէս միլիօն կանոնաւոր զինուորի քանակին բարձրացուցած էին : Այս պայմաններուն տակ Ֆրանսան չէր ուզեր Արեւելքի մէջ նոր ճակատ մը բանալ և գրեթէ բոլոր թերթերը Կիլիկիայի անմիջական պարպումը կը պահանջէին . այս ձախող քաղաքականութեան իբրև հետեւանք՝ վերջը պարտաւորուեցաւ չ'ուղուած ճակատը Սուրիոյ մէջ բանալ աւելի ծանր զոհողութիւններով :

Կիլիկիոյ գրաւման բանակի բարձրաստիճան Սպաներ և պաշտօնատարներ յանձնարարականներ տուած էին ինձ պետական անձնաւորութեանց և զանազան թերթերու խմբագրապետներու : Յանձնարարականաց մէջ կը յիշէին, որ պաշտօնիս բերումով իբրև իրա-

զեկ կրնայի որոշ տեղեկութիւններ տալ Արեւելքի եւ մասնաւորապէս Կիլիկիոյ վերջին դէպքերու մասին : Ամէն տեղ սիրալիր ընդունելութիւն գտայ եւ տուած տեղեկութիւններս հետաքրքրութեամբ լսուեցան : Զանազի թրքական ուժի մասին կազմուած նախապաշարումը հերքել, բացատրեցի Կիլիկիոյ նման արգասաբեր հողամասի մը Ֆրանսայի տնտեսական օգտակարութիւնը եւ զայն պահելու համար մեծ զօրութեան պէտք չըլլալը՝ եթէ տեղւոյն վրայ կարող պաշտօնեաներով որոշ քաղաքականութիւն մը որդեգրուի : Հայերու զինուորական գործակցութեան նուազ համամտութիւն ցոյց կուտային, միշտ կ'առարկէին, Հայ - Լէզոնը ակնարկելով, թէ առաջին փորձը լաւ արդիւնք չը տուաւ. մինչդեռ Մարաշաստ Ալէնպի եւ Լէզոնի Ֆրանս. հրամանատար Գօլէնէլ Պլի Սէնտ Մարի գովեստով խօսած էին Հայ - Լէզոնի կարգապահութեան եւ քաղաքագործութեան մասին : Սակայն մի քանի տեսակցութեամբ շատերը Կիլիկիան պահպանելու ջերմ կուսակիցներ եղած երեւցան :

Օրագրութիւնը չ'ստուարացնելու համար մի քանի տեսակցութիւններ յառաջ բերելով պիտի բաւականանամ. որովհետեւ ամենուն հետ նոյն խօսակցութիւնները եւ նոյն պատասխանները կրկնուեցան :

5. — Գ. Ֆէթվաճեան Հայկական հնութեան եւ նորութեանց նկարահանողէս մը բացած էր Լուվրի գեղարուեստական բաժնի մէջ. յատուկ հրաւիրագրով փափաքած էր Ն. Սրբութեան այցելութեան : Բազմաթիւ արուեստագէտներու կարգին կար նաեւ գեղարուեստից նախարարը : Նկարները ճաշակի նորութեամբ եւ նրբութեամբ գեղարուեստական որոշ գաղափար մը տուին այցելուներուն :

8. — Պատերազմական Նախարարութեան ղիւանապետ Ժեներալ Բէնէէն հրաւէր ստացայ Կիլիկիոյ զինուորական կացութեան մասին տեղեկութիւն տալու : Յարգելի Ժեներալը ընդունելով զիս ըսաւ .- Նախարարը ինձ պաշտօն տուած է տեղեկութիւններ առնել Կիլիկիոյ զինուորական կացութեան և Մարաշի աղէտի մասին : Կիլիկիոյ գրաւումի օրէն տեղի ունեցած քաղաքական և զինուորական բոլոր դէպքերը մանրամասնօրէն յիշելէ յետոյ՝ Մարաշի ինչ պարագայներու տակ գրաւումը և գործուած քաղաքական և զինուորական սխալները և վերջնական պատճառները մի առ մի բացատրեցի : Ժեներալ Բէնէէն ջերմ շնորհակալութեամբ ըսաւ .- Պ . Նախարարը անձամբ կ'ուզէր զՁեզ տեսնել . Ն . Սրբութիւնը այցելութիւն պիտի տայ և խոստացաւ մասնաւոր հրաւիրագրով ընդունելութեան օրը հաղորդել :

9. — Լոնտոնի Վեհաժողովը վերջացած էր . Ազգ . Պատուիրակութեան Նախագահ Վսեմ . Պօղոս Փաշա Փարիզ վերադարձաւ և այցելեց Ն . Սրբութեան : Առաջին անգամ էր , որ կը տեսնէի այդ պատուական Հայը և Հայկական դատին համար անվհատ գործիչը . համեստ , անձնագոհ և ազնուականի օրինակելի տիպար : Եթէ այս պատկառելի ծերունին սկիզբէն Վսեմ . Նորատունկեանի , Տիարք Պասլաջանեանի և Գ . Աինապեանի նման հեռատես և քաղաքագէտ մարդիկ գործակից ունենար , թերեւս շատ աւելի օգտաւէտ և Ազգ . դատը տարբեր և նպաստաւոր արդիւնք կ'ունենար :

Փաշան կարեւոր և նոր տեղեկութիւններ չի բե-

րաւ , Կարնոյ Հայաստանի մէջ առնուիլը կ'ոգեւորէր զինքը : Երկրի իրական կացութեան անիրազեկ՝ Հայաստանի սպառնացող անմիջական վտանգը նկատի չէր առներ և թուղթի վրայ գծուած սահմաններով կը գոհանար : Հայաստանի մանջալի խնդիրն ալ Ազգերու Լիկին ձգուած էր , որ իր առաջին նիստը Փարիզի մէջ պիտի գումարէր :

11 .— Փաշան այցելելով Ն . Սրբութեան հաղորդեց , որ Հայաստանի խնդրոյն լուծումը մինչեւ սեպտեմբեր յետաձգուած էր : Խեղճ Հայաստան :

Ըստ ժամադրութեան Ն . Սրբութիւնը Նազլեան Յ . Գերապայծառին հետ Փարիզի Արք-եպիսկոպոս Ամէթիին այցելեց , որ ազնուական բարեպաշտի մը նուիրած հոյակապ պալատի մը մէջ կը բնակի : Կարտինալը յարգանօք ընդունելով հարցուց Կիլիկիոյ և Սուրիոյ Քրիստոնէից մասին : Ս . Կաթողիկոսը ուշադրութիւնը խնդրեց Արևելքի Քրիստոնէից մասին և ուժ տալ եղած և ըլլալիք դիմումներուն : Կարտինալը անցողակի ակնարկութիւն ըրաւ . - Արևելքի կարգ մը Քրիստոնեայներ փոխանակ Պրանսայի՝ ուրիշ պետութեանց հովանաւորութիւնը ուզած են : Սոստացաւ աղօթել Արեւելի Քրիստոնէից համար :

13 .— Ն . Սրբութիւնը ըստ կանխորոշ ժամուն Օրէլ Սերիսի մէջ վսեմ . վէնիզէլոսի այցելելով շնորհակալութիւն յայտնեց Հայկական դատը Չերմապէս պաշտպանելուն համար : Բացատրեց Պրանսա գալուն պատճառը և Կիլիկիոյ մէջ Քրիստոնէից սպառնացող վտանգը և խնդրեց , որ իր զօրաւոր ձայնը բարձրացնէ մարդկութեան թմրած խիղճը

արթնցնելու համար: Համեստութեամբ պատասխանեց — Ես փոքրիկ տէրութեան մը ներկայացուցիչն եմ. ինձմէ հզօրագոյնները կան: Ն. Սրբութիւնը անմիջապէս յարեց, թէ եւ փոքր, մեզ համար մեծագոյնը ըրիք արդարասիրութենէ թելադրուած: Մեծն ու հզօրագոյնը արդարութիւնն է, պաշտպանեցէք արդարութիւնը:

Այս միջոցին տակաւին դաշնակիցները արտօնած չէին Յունական բանակին յառաջխաղացումը: Պ. Վէնիզէլիոս Յոյն-Հայ եղբայրութեան վրայ խօսելով աւելցուց. — Հայաստան գինուորական օգնութիւն դրկելու մասին առաջարկս եթէ ընդունէին դաշնակիցները՝ դրկուելիք ուժին կէսը տրամադրելու պատրաստ էի: Արեւելքի մէջ խաղութիւնը միայն կարելի է Յոյն-Հայ տարրը զօրացնելով: Զմիւռնիոյ մէջ 100 հազար գինուոր ունիմ. եթէ ինծի ձգեն. Թուրքիոյ մէջ խաղաղութիւնը շուտով կը հաստատուի: Ֆրանսացիները պարապ տեղը Թրակիոյ մէջ երկու զօրաբաժին կը պահեն: Այդ ուժը թող կիլիկիա փոխադրեն. ես Թրակիան գրաւելու ուժ ունիմ: Այս կարեւոր (մե՞զ թէ Յունաց համար) յայտարարութենէն ետքը կիլիկիոյ Յոյներուն վրայ տեղեկութիւն ուղեց: Ն. Սրբութիւնը ապահովցուց, որ մերձաւոր տեղերու փախստական Յոյները Հաճընցւոյ քով կ'ապաստանին և կը պաշտպանուին: Շնորհակալութիւն յայտնելով հակառակ Ս. Կաթողիկոսի ընդիմութեան մինչեւ վերելեակը ընկերացաւ:

Հալէպի նշանաւոր տեօքթօն Ա. Ալթունեանի դստեր, Օրիորդ Նորաի Բողոքական՝ և խօսեցեալին Ֆրանսացի գնդապետ Պ. Շովէի կաթողիկ' պսակադրութիւնը

կատարուեցաւ Հայ-Առաքելական եկեղեցւոյ մէջ :
Ս. Կաթողիկոսը 'ի ցոյց հայրական գոհունակութեան
Նախագահեց Ս. Պսակի արարողութեան . որովհետեւ
Օր. Նորա ճանչցուած և յարգուած էր ո՛չ միայն
Հալէպի Հայ բնիկներէն՝ նաև տարագիր Հայութենէն
հազարաւոր որբերու ըրած անգնահատելի ծառայու-
թեամբ : Անձնական ձեռներէցութեամբ որբանոց մը
բացած էր պատերազմի առաջին տարին մօտաւորա-
պէս քառասուն որբերու համար . որոց թիւը հետզհե-
տէ հազարը անցաւ : Օր. Նորա պատերազմի ամբողջ
չրջանին յաջողեցաւ անձեռնմխելի պահել որբանոցը
և լիառատ մատակարարութեան աջակցեցաւ :

Ս. Պատրիարքը Լոնտոնէն նոր վերադարձած՝
Տիար Չայեանի հետ այցելութեան եկաւ Ս. Կաթողի-
կոսին , ուր ներկայ էր Տ. Գրիգորիս Մ. Վարդապետ
Պալագեանը : Պատրիարքը տեղեկութիւններ տուաւ
Լոնտոնի մէջ Հայկական խնդրոյ մասին կատարուած
գիմումներու վրայ . պատմեց Ն. Վեհափառութիւն Ժորժ
Ե .ի ունկնդրութեան արժանանալը . Լորտ Քըրքընի հետ
խօսակցութիւնը : Պատրիարքի մեկնելէն ետքը , որուն
ի պատիւը նկերացաւ մինչեւ օթէլի դուռը Տ. Գրիգորիս
Վարդապետը , վերադարձին վիշտով խօսեցաւ՝ իր մասին
Պատրիարքի պաղ վերաբերումին նկատմամբ , որով-
հետեւ ինքն ալ չորս տարիներ տարագրութեան
բոլոր դառնութիւնները կրած էր : Մերթ անօթի ,
մերթ ծարաւի . մերթ ապտակուած և նախատուած և
հետիոտն անցած տառապանքի և մահուան ուղին :
Գոնէ հարցում մը .- Ո՞ր և ինչպէ՞ս ապրեցար .—
չըրաւ :

11 .— Պօղոս Փաշայի մասնաւոր հրաւերով Ն .

Սրբութեան հետ Պ. Պղտիկեան և ես ճաշկերոյթի գացինք Ավրնու սիւ Փրեզիսան Վիլսոն, ուր հետզհետէ եկան Ս. Պատրիարքը, Տիարք Չայեան, Նէվրուզ և Ա. Չոպանեան: Սեղանին վրայ իմ տեղս էր Առաքել Պէյի կողքին: Ամբողջ խօսակցութիւննիս Ազգ. Պատմութեան վրայ էր. որչափ որ Պէյը տկար էր հայերէն խօսակցութեան մէջ, բայց պատմութեան և աշխարհագրութեան քաջածանօթ էր: Ճաշէն յետոյ յանակնկալս եկաւ Վսեմ. Նորատունկեանը և սովորական տեսակցութենէ կտքը՝ խօսքը Համագումարի վրայ դարձաւ և գալիք Պատգամաւորներու ճանապարհածախուց համար գրամի չգոյութիւնը նիւթ եղաւ: Տրտնջողներ եղան, որ Զօրավար Անդրանիկ Ամերիկայի հանգանակութիւնը, կամ գոնէ կէսը Պատուիրակութեան չը դրկեր:

Խնդրոյ առարկայ եղան հասեալ Կիլիկիա դրկուելիք երկու գործիչները. Տիարք Թահմազեան և Սասունի, երկուքն ալ համակրելի երիտասարդներ, բայց քանի որ Պատուիրակութիւնը իր լիազօր ներկայացուցիչն ունէր յանձին յարգելի Տամատեանին, ի՞նչ ընելու պիտի երթային՝ Կիլիկիան իրենց անձանօթ և իրենք Կիլիկիային: Եթէ Կիլիկիան փրկելու կ'երթային, Ֆրանսայէն մեր խնդրած ուժը չ'էին ներկայացներ, և եթէ կուսակցականները կազմելու և աղմուկները շատցնելու, արդէն, բաւական աղմկարարներ կային Կիլիկիոյ մէջ:

Շատ կարճ ժամանակի մէջ կրկին դրամական չգոյութիւնը խնդիր եղաւ, Պ. Սասունին ճանապարհածախսը Հ. Հանրապետութեան ներկայացուցիչներէն առնելով՝ արդէն մեկնած էր, Պ. Թահմազեան, երևի

Պատուիրակութեան կողմէ ղրկուելիքն էր. ճանապարհածախս չըլլալուն համար ետ մնացած էր: Առեղծուած մըն ալ այս. Հանրապետութեան ներկայացուցիչները դրամ կ'ունենան, Ազգ. Պատուիրակութիւնը դրամի շքոյութեամբ կը տագնապի:

Կիլիկիոյ կացութեան մասին տեղեկութիւն առնելու համար Ն. Սրբութիւնը Արտաքին Գործոց Նախարարութեան միջոցաւ հեռագրեց Ատանայի առաջնորդարանը:

15.— Առաւօտեան ժամը 10ին ըստ հրաւիրագրին՝ Ն. Սրբութիւնը իր հետեւորդներով պատերազմական Նախարար Պ. Անտրէ ԼըՖէրին այցելեց: Ձինւորական պատիւներով և Նախարարի կողմէն յարգանքով ընդունուեցաւ: Տեսակցութիւնը պարզ և մտերմական եղաւ: Շնորհակալութիւն յայտնեց ինձ, որ ժեներալ Բէնէլին հարկ եղած տեղեկութիւնը տուած էի. պատէն կախուած քարտէզին վրայ ցոյց տուինք Կիլիկիոյ Փրանսական ուժերուն դիրքերը և ճանապարհները, մասնաւորապէս Ուրֆան, որուն համար թիրթիրը գրած էին, — Հայերը չեն օգներ զօրաց պարենաւորման: Նախարարն ալ թուրքին երեւակայական ուժին համոզումով կը դատէր, նոյն իսկ կը կասկածէր, որ Յոյները չը պիտի կրնան Ձմիւռնիան պաշտպանել Քիւմալական յարձակման դէմ: Կիլիկիան Պրանսայի պատուոյ խնդիր ըլլալը ընդունելով մէկտեղ, նոր և մեծ արչաւախումք մը ղրկել կարելի չէր համարեր. ուժէն աւելի քաղաքականութեան ներդաշնակութեամբ յաջողիլը աւելի դրական կը նկատէր: — Ես շատ Հայ բարեկամներ ունիմ. — Վրէժխնդրութեան ակնարկելով. — Ես գիտեմ Հայերու մտայնութիւնը և բաղձանքները. —

Ն. Սրբութիւնը փափկութեամբ, բայց շատ որոշ կերպով պատասխանեց Նախարարի ակնարկութեան: Փոքր Ասիոյ զինուորական կացութեան, ուժերու համեմատութեամբ, Հայերու մտայնութեան մասին իր գաղափարը պարզելով աւելցուց. - Կիլիկիոյ Հայերը արհամարելի ուժ մը չեն, երկրի պաշտպանութեան համար Ֆրանս. զօրքերու գործակցութեամբ կարեւոր ծառայութիւններ կրնան ընել: Եթէ նոր ուժեր զրկելու դժուարութիւն կայ, միայն զէնք տուէք Հայերուն. կարող են թէ ինքնապաշտպանուիլ և թէ Ֆրանսայի պատիւը բարձր պահել: Նախարարը հարցուց. - Ո՞րքան զէնքի պէտք ունիք. Ութէն տասը հազար: Նօթագրեց. մեկնելու պահուն Ն. Սրբութիւնը ըսաւ. - Ժենեւրալ Կուրոյին, Մարնի յաղթականին ինչ աւետիս տանեմ, խոստացայ Ֆրանս. դրօշի պատիւը պահելու համար նոր ուժեր խնդրել: Վստահ եղէք այդ մասին պատասխանեց Նախարարը:

Կէսօրէն վերջը ազգայնական և Ակադեմիի անդամ Մօրիս Պարէսի գնացի, որ հանգուցեալ հօրս, Լուիֆիկ Սուպէսէրեանի բարեկամն էր: Սիրալիր ընդունելութենէ և մտերմական տեսակցութենէ ետքը Արեւելեան խնդիրներու, Սուրիոյ և Կիլիկիոյ անցուղարձի և զինուորական կացութեան մասին տեղեկութիւններ ուզեց: Ինք համոզուամով Թրքական քաղաքականութեան կողմնակից էր և էգօ սը Փարիի մէջ միշտ պաշտպանած: Պ. Պարէս կը կարծէր, որ փոքր զիջողութեամբ կը շահուէին Թուրքերը, մինչդեռ ազգայնականք կը պահանջէին ոչ միայն պատերազմէն առջի Օսմ. Կայսրութեան սահմանները. այլ նոյն իսկ Թուրանական և Իսլամական բոլոր հողամասերը: Վարչա-

կան ձեւի և երկրի տնտեսական օգտակարութեան վրայ խօսելէ ետքը ըսաւ .- Իմ կարծիքով Ֆրանսան Կիլիկիան չը պիտի թողու : Մեկնելու պահուն որ եւ է խնդրոյ մասին իր աջակցութիւնը խոստացաւ :

Երեկոյին Փարիզի Գաղութը 60 հոգինոց պատուոյ սեղան մը տուաւ Ն. Սրբութեան : Ներկայ էին Ս. Պատրիարքը, Վսեմ. Պօղոս Փաշան, Հ. Հանրապետութեան Ներկայացուցիչ Պ. Ահարոնեան, Նազլեան Գերապայծառ, Վսեմ. Նորատունկեան, Պատուիրակութեան անդամք և գաղութի երեւելիները : Գեր. Տ. Վռամշապուհ Մ. Վարդապետը իրեն յատուկ յարգանքի բառերով բանախօսութեանց դուռը բացաւ : Խօսեցան Պօղոս փաշա, Ահարոնեան, Զօպանեան և Նազլեան . Ս. Պատրիարքը հազիւ սկսաւ խօսիլ, լոյսերը մարեցան, թերեւս Գործադիր Յանձնաժողովը մոռցած էր լոյսի և խաւարի ժամը և ժամանակը կարգադրելու :

Փարիզի մէջ ածուխի պակասութիւնը հարկադրած էր ելեքտրականութիւնը խնայողութեամբ գործածելու : Նոր կարգադրութեամբ լոյսերը վառուեցան : Նախախնամական դասը ազգեցիկ էր. ճոխ և դուարթ սեղանին վրայ յանկարծական խաւարը կը յիշեցնէր տարագրութենէ դարձող խլեակներու կացը և Հայրենիքին սպառնացող խաւարը : Ս. Պատրիարքը ազդուած վայրկենական խաւարումէն՝ լուսաւորող հանգանակութեան պէտքը ցոյց տուաւ : Ն. Սրբութեան մի քանի սրտայոյզ բառերը նոյն պէտքը շեշտեցին և անմիջապէս յօգուտ Կիլիկիոյ նպաստի գրուածք մը բացուեցաւ : Ս. Պատրիարքի մտերմական մէկ խօսքը թէ Կիլիկիոյ համար գրուած չափով ևս չեմ գո-

հանար. Պոլսոյ համար աւելի պիտի տաք, առիթ տուաւ ոմանց անպատեհ յայտարարութեան.- Մենք Պոլսոյ համար չենք տար, Կիլիկիոյ կուտանք:

Պօղոս Փաշա, Տիարք Նորատունկեան և Ահաւրոնեան սեղանի վերջաւորութենէ առաջ մեկնեցան, որովհետեւ Կովկասեան Հանրապետութեանց ներկայացուցիչները ժողով ունէին իրենց մէջ վիճելի խընդիրները կարգադրելու: Պ. Ահարոնեան ներողութիւն խնդրեց Ն. Սրբութենէն, որ չէր կարողացեր այցելել, խոստացաւ այդ պարտաւորութիւնը կատարել, դժբաղդարար գրադմանց շատութիւնը այցելելու և Կիլիկիոյ եղբարց վիճակով շահագրգռուելու պարտաւորութիւնը մոռացութեան մատնեց: Մեր գործիչները իրենց հողին վրայ խօսքով և գրչով թիրեւս օգտակար կրնան ըլլալ, թէեւ վտանգի պահուն փախուստի ճանապարհը ափ առնելու ալ ընդունակ են, բայց օտար երկրի մէջ ազատ և հանգիստ կեանքը ամէն բան մոռցնել կուտայ:

Լոնտրայէն վերջ երրորդ վեհաժողովը Սան-Րէմօյի մէջ պիտի գումարուէր Արեւելեան խնդիրը վերջնականապէս լուծելու մտադրութեամբ: Ն. Սրբութիւնը փափաքեցաւ Սան-Րէմօ երթալ և ուղղակի վեհաժողովին ներկայացնել Կիլիկիոյ ժողովուրդին բաղձանքները, բայց Արտաքին Գործոց Նախարարութիւնը յարմար չը տեսաւ:

17.— Ազգ. Պատուիրակութեան Նախագահը, ինչպէս և Հ. Հանրապետութեան ներկայացուցիչը Սան-Րէմօ գնացին: Պօղոս Փաշտ մեկնելէ առաջ այցելեց Ն. Սրբութեան և աղօթքը խնդրեց:

Ատանայի հողեւոր և աշխարհական ներկայացու-

ցիչները Կիլիկիան թուրքերուն թողելու քաղաքականութեան դէմ բողոքագիր մը ղրկած էին Ն. Սրբութեան զորս իր կողմէ բողոքագիր յիշատակագրով մը Սան-Րէմոի Վեհաժողովին ղրկեց :

Ն. Սրբութիւնը իբրև Կաթողիկոս և իբրև աւանդապահ Կիլիկիոյ շիջած փառքին՝ ուզեց յարգանքի պարտաւորութիւն մը կատարել Լեւոն Ե. ի դամբանին այցելելով : Պղնձէ պսակ մը պատրաստուեցաւ այս վերտառութեամբ . — Սահակ Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ առ Լեւոն Ե. րդ Թագաւոր Հայոց . — : Այս ուխտագնացութեան հրաւիրուած էին Պատուիրակութիւնը և Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը : Երեկոյին ուշ ատեն Տիար Ճէվահիրճեան եկաւ հաղորդելու, որ Ա.զգ. Պատուիրակութիւնը, ուր ներկայ գտնուած է Ս. Պատրիարքը, յարմար չէ գտած 'ի Ահմ-Տընի ուխտագնացութիւնը քաղաքական նկատումներով : Դարեր առաջ Փարիզի մէջ հանգչող Թագաւորի մը 'ի նշան յարգանաց գերեզմանին այցելութիւնը չը կարողացանք ըմբռնել, թէ քաղաքական ի'նչ թաքուն նկատումներ կրնար ունենայ : Իցիւ թէ աւելի կենսական խնդիրներու մէջ քաղաքական այս բախը պահելու նախանձաւորութիւնը ունենայինք :

18. — Ս. Պատրիարքը պիտի պատարագէր. ուշ ատեն լուր կը ղրկէ թէ հիւանդ է : Այս մասին ալ ժողովուրդին մէջ տեղի կամ անտեղի ասուլիսներ եղան, որպէս թէ ուխտագնացութեան չը մասնակցելու, կամ հիւր Կաթողիկոսը չի յիշատակելու համար : Մենք ո'չ մէկը և ո'չ միւսը հաւանական կը համարենք :

Գեր. Տ. Վռա՛շապուհ Մ. Վրդայ .ը պատարագեց

և ծանոյց ներկայ ժողովուրդին, թէ յետ միջօրէի ժամը 4ին 'ի Սէն-Տընի Լեոն Ե.ի դամբարանին վրայ «Հոգւոց» պիտի կարդայ Ն. Սրբութիւնը: Կիլիկեցւոց ծանօթ և սիրելի Տիգրան Սան Քէլէկեանը կէսօրուայ ճաշի հրաւիրած էր Ն. Սրբութիւնը:

Ժամը 4ին օթոմոպիլներով Սէն-Տընի գնացինք, որ Փարիզէն դուրս կէս ժամ հեռաւորութիւն ունի: Կանուխէն բազմաթիւ ազգայինք համախմբուած էին: Եկեղեցւոյ մեծաւորը կիսազգեստ դիմաւորեց և ուղղակի Լեոնի դամբարանը առաջնորդեց: Ն. Սրբութիւնը ծնրադիր համբուրեց և յանուն Կիլիկիոյ Հայութեան պսակը դնելով «Հոգւոց» ըսաւ խորապէս յուզուած և հետեւեալ համառօտ ուղերձը արտասանեց:

Ո՛վ Ս. Թագաւոր, Լեոն Ե. Լուսինեան, փոշիացած մարմնոյդ կամ դատարկ դամբանիդ առջեւ երկիւղախառն մեծարանօք կը խոնարհինք, որպէս թէ ըլլայիր 'ի Սիւս, Մայրաքաղաքիդ արքունի դարպասին առիւծաբարձ գահոյիցդ վրայ, Գայլսոն 'ի ձեռին և թաղի գլուխ. կամ Սսոյ ամրակուռ և դժուարակոխ բերդիդ մէջ հաւատարիմ և անհաւատարիմ իշխաններէդ շրջապատուած՝ դիմակալելու համար Հալէպի և Եգիպտոսի քանդող և աւերող ուժին:

Ո՛վ Ս. Թագաւոր, Ռուբինեան Մեծն Լեոնի օտարատուր թագը ծանր կշռեց գլխուդ վրայ, և հազիւ կօթն ամիս վայելեցիր ժողովուրդիդ սէրն ու համակրութիւնը: Հաւատարիմ կարծուած օտարածին իշխաններէդ դաւաճանուեցար ու խռովեցաւ Մայրաքաղաքդ: Արհամարուած Հայ իշխաններդ պաշտպանեցին զքեզ. բայց նենգն ու դաւը յաղթանակեցին:

Գերի վարեցար յԵգիպտոս և տառապանքն ու տարագրութիւնը կտակեցիր ժողովուրդիդ : Սուգի և սեւի այն օրէն 'ի վեր, երբ Արքունիք և Կաթողիկոսարան սեւով պատանգուեցան, ժողովուրդդ հաւատարիմ կտակիդ՝ ապրեցաւ հալածական, տարագիր և մարտիրոսութեան մէջ այն յոյսով և հաւատքով. որ հոգիդ հանգչի յերկինս և Կիլիկիան երջանկանայ յերկրի :

Մեծաւորն ալ խօսելով՝ Հայ ազգին համար մաղթանքներ ըրաւ, Եկեղեցւոյ բոլոր մասերը պատեցանք և Ֆրանսայի թագաւորներուն դամբարանները այցելեցինք և մեկնելու պահուն յանուն աղքատաց 300 ֆրանք յանձնուեցաւ Մեծաւորին :

24.— Պօլիսէն Թայվզին հեռագրուած և Իսանէն արտատպուած էր, թէ Քէմալական չէթէները Պիլիկլի կայարանին մէջ 300 Հայ և Յոյն պաշտօնեայներ ջարդած են. կայարանի մը մէջ այս քան պաշտօնեայներ :

26.— Համագումարի անդամները հետզհետէ կը հասնէին : Պօլսէն Ամեն. Եղիշէ Արք-Եպիսկոպոս Դուրեանը և Տեօքթօս Բարսեղեանը եկած էին, և Ս. Կաթողիկոսին այցելեցին : Զինուորական վարժարանի ընկեր Տեօք. Բարսեղեանը տեսնելով շատ ուրախացայ :

Տ. Գրիգորիս Մ. Վրդպ. Պալագեանի հետ վերսայլ գնացինք : Պալատի բակին մէջ այցելուներ կային, որոնց ուշադրութիւնը գրաւեց Ն. Սրբութեան պատկառազգու տարազը, զանազան ենթադրութիւններ կ'ընէին ով ըլլալու մասին, մէջերնին թերեւս ամենէն խելօքը ըսաւ.— Շերիֆ Ֆեյսալն է, այս բացատրութիւնը կարծես ամենուն բաւականութիւն տուաւ, որովհետեւ ցրուեցան :

Հողովիկոս ԺԶ.ի պալատը գեղարուեստական հրաշակերտ մի էր ճոխ ոսկեդրուագներով, մեծ վարպետներու ձեղնանկարներով, անտառը արհեստական լիճերով, խաղաղութեան դաշնագրի հայելեաց դահլիճը, ստորագրութեան սեղանը. Հանրապետական Նախագահի ընտրութեան Խորհրդարանը, ուր մեծ Պրանսացիներու անունները, Թիերի և Կամպէթթայի թիկնաթուներու վրայ փակցուած են. արքունի եկեղեցին, Թիւալոյի պալատին մէջ արքայական և կայսերական հին կառքերու և գահաւորակներու ոսկեդրուագ ժողովածոյն, վերջապէս հին և նոր Պրանսան: 'Ի տես այս հարստութեան՝ Ն. Սրբութիւնը ըսաւ.- Այս մեծ Ազգը, զոր սիրած ենք դարերով և մեր յոյսերը իրեն կապած, եթէ Արեւելքի Քրիստոնէութիւնը իսլամական քաղաքականութեան զոհէ, իր անցեալը ուրացած պիտի ըլլայ:

Երեկոյին Ս. Պատրիարքը թելէֆոնով կը հաղորդէր՝ Պրանսացւոց Կլիկիայէն քաջուիլ սկսելնին և Այնթապի մէջ խժժութեանց տեղի ունենալը: Ատանայի հոգեւոր ներկայացուցիչները ուղղակի վեհաժողովին դիմելով խնդրած էին Քրիստոնեայնները այլուր փոխադրել:

27.— Պրանսական կարգ մը թերթեր անբարեմտութեամբ թէ թիւրիմացութեամբ, Պրանսական զօրաց Ուրֆայի թուրքերու նենդութեան զոհ ըլլալը Հայերու կը վերագրէին. որպէս թէ Հայերը ըստ առաջնոյն զօրաց ուտելիք չէին հասցուցած. Թուրքական թնդանօթներով քարուքանդ եղող Ուրֆայի մէջ Պրանսացւոց օգնելու չափ Հայեր չկային և եթէ ըլլային իսկ, չէթէները Ուրֆան պաշարած ըլլալով՝

քնականաբար Հայերը չէին կարող դուրս ելնել քաղաքէն և ուտելիք բերել: Այս յերկուրածոյ լուրը Մարաշի աղէտին հակազդեցութիւն մը ընելու համար Փարիզի մէջ դարբնուած էր, ինչպէս Բարձրաստիճան զինուորական մը ըսաւ ինձ:

Սան-Րէմոյի Վեհաժողովին տալիք որոշումներուն և այս մասին լրագիրներու տալիք տեղեկութեանց վայրկեանէ վայրկեան անհամբերութեամբ կը սպասէինք:

Վսեմ. Պօղոս Փաշան Սան-Րէմոյէ վերադարձին Ն. Սրբութեան այցելեց և մանրամասն պատմեց Վեհաժողովին մէջ Հայկական հարցի մասին եղած անցուդարձը: Կարինը Հ. Հանրապետութեան կցելու Լոնտրայի որոշումը՝ Սան-Րէմոյի մէջ թուրքերուն թողլու որոշման յանգած էր: Նախարարապետ Պ. Միլլրան Սան Րէմոյի որոշումներու մասին Երեսփոխանական ժողովին մէջ յայտարարեց, որ շատ աշխատած էր Դաշնակիցներուն մօտ՝ ի նպաստ թուրքերուն կարգադրութիւն մը ձեռք բերելու համար. բայց հաշտութեան պայմանները թուրք պատուիրակներուն տալէ առաջ յարմար չը դատեց աւելի բացատրութիւններ տալ: Սուրիոյ Մանսան Թրանսայի տրուելը յայտարարեց, Կիլիկիոյ անունը չը տալը մեծ ցաւ եղաւ մեզ: Քէ-տ'Օրսէ երթալով յանուն Ն. Սրբութեան բացատրութիւն ուղեցի, Պ. Տամփիէր խուսափողական պատասխան տուաւ.— Մենք գէշ սովորութիւն ունինք յաճախ Կիլիկիան Սուրիոյ հետ շփոթելու: Դիտել տուի, որ նոյն իսկ երեկի Թանն ալ գրած է, որ Կիլիկիան թուրքերուն ձգուած է: Թանի բոլոր գրածներուն հաւատալու չէ ըսաւ, թէ եւ յետոյ ստիպուե-

ցաւ ըսելու, որ Կիլիկիոյ մեծ մասը Ֆրանսայի, շատ
չնչին մաս մը ալ Թուրքաց թողուած է. սակայն
չուզեց քարտիսին վրայ սահմանները ցոյց տալ:

Մ Ա Յ Ի Ս

1. — Սան-Րէմոյի մէջ պատրաստուած հաշտու-
թեան պայմանները յանձնուեցան Թուրքերուն. իբրեւ
ներկայացուցիչ Հայ ազգութեան՝ Պօղոս Փաշան Դաշ-
նակիցներու շարքին ներկայ գտնուած է: Պ. Ահա-
րոնեան գործադուլի պատճառաւ կառք չը գտնելով
ուչ մնացած էր:

Այս օրուայ համար ամիսներէ 'ի վեր ամբողջ
մամուլը կը զբաղեցնէր հասարակութիւնը: Շատերը
յուր ինթադրութիւններով մեծ խռովութիւններու կը
սպասէին, գործադուլը ամիսներ պիտի տևէր: Շա-
տերը իբրեւ նախապատրաստութիւն 10—15 օրուայ,
նոյն իսկ մէկ ամսուայ պաշար պատրաստած էին:
Շնորհիւ կառավարութեան ձեռք առած կանխազգու-
շութեանց ծանր դէպքեր չը պատահեցան: Մեր օթէլի
կողմերը նոյն իսկ գործադուլ ըլլալը զգալի չեղաւ,
միայն օթէլի դուռը փոք պահուեցաւ և հիւրերը
ստիպուեցան օթէլին մէջ ճաշել: Հեռու վայրեր մի-
քանի սպանութիւններ և վիրաւորներ եղան, նաև
ձերբակալութիւններ, որոնց մէջ կային Բնկերվարա-
կան երեսփոխաններ:

Կէսօրէն յետոյ Պ. Պզտիկեանի հետ դուրս ելանք
տեսնելու և բաղդատելու համար քաղաքակիրթ
ամբոխին խենդութիւնները մերկններուն հետ:

Ժողովուրդները քիչ շատ իրարու կը նմանին ամեն տեղ, սակայն այն ժողովուրդը, որ վեհանձն, զոհողութեանց պատրաստ և քաղաքացիական քաջութիւն ունեցող զաւակներ կը ծնանի. մեծ ազգ կոչուելու արժանի է: Ահա տեսածներս. Օթոմոպիլի պաշտօնեայնորուն տեղ բարձրաստիճան պաշտօնեայներ, գրագէտներ, շատերուն կուրծքին վրայ Լեփօն ՏՕՆԿՕՐ ամէն բան աչք առած, ամբոխի կողմէն յարձակումներ և քարկոծումներ, զուարթ ու ժպտուն Շէօֆէրի պաշտօն կը կատարէին:

2.— Ամեն տեղ խաղաղ բնականոն վիճակն ստացաւ, միայն մեր խռովքը անփոփոխ մնաց. որովհետեւ Անգ. թերթերէն Ֆրանսականներ արտատպումներ ընելով՝ Ատանայի պարպումը կը գուժէին, թէ և մենք տակաւին հաւանական չէինք համարել: Շատերը կը թելադրէին որ Ն. Սրբութիւնը դիմումներ ընէ Կիլիկիոյ ժողովուրդը այլուր փոխադրելու համար. բայց միշտ ընդդիմացաւ այս մահաբոյր գաղափարին: — Եթէ մեռնիլ պէտք է, մեր հայրենի հողին վրայ մեռնինք — կ'ըսէր:

3.— Ատանայի պարպումը ստուգելու համար Ն. Սրբութիւնը Արտաքին Գործոց պաշտօնատունը գնաց: Պ. Պարտըթօն հերքեց պարպումի հրատարակութիւնները: Կիլիկիոյ մասին Սան-Րէմօյի որոշումը պարզեց.— Ատանա, Տարսոն, Մերսին, Սիս, այսինքն Ճիհանի արեւմտեան կողմը Թուրքերուն պիտի թողուի՝ փոքրամասնութեանց իրաւունքը պաշտպանելու պայմանաւ.— Ահա՛ քառամեայ աշխարհաւեր պատերազմին, միլիոնաւորներու արեան և միլիառներու

զոհողութեան արդիւնքը .— Փոքրամասնութեանց իրաւունքներուն պաշտպանութիւն .— զոր արդէն ունէին պատերազմէն առաջ :

Այս կարգադրութիւնը գոհացում կուտար թրքական քաղաքականութեան կողմնակիցներուն և ընկերվարական երեսփոխաններուն , որ կարելի եղածին չափ խնայողութիւն ընել և օտար երկիրներ արշաւախումբեր չը դրկել կը պահանջէին : Արեւելեան քաղաքականութեան վրայ իրենց մտայնութիւնը այս էր , ինչպէս օր մը Թանի Սմբագրապետ Պ . Հերպերտ բացատրեց ինծի տեսակցութեան մը պահուն .— Զինադադարի սկիզբը Եւրոպայի քաղաքականութիւնն էր թուրքերը կարելի եղածին չափ դէպի արեւելք քշել . բայց զինադադարի սկիզբը անմիջապէս զինաթափ չընելով՝ այնպիսի կացութիւն մը ստեղծեցին , որ հակառակ առջի գաղափարին՝ ամէն գնով աշխատելու ենք դէպի արեւմուտք քաշել : Յիշուած պատճառները թէեւ իրենց կշիռը ունին Ֆրանս . քաղաքական ուղղութեան մէջ . բայց իրական և էական պատճառն է Ազգաց քաղաքական մրցակցութիւնը : Ֆրանսա և Իտալիա հաշտ աչքով չէին նայեր Անգղիոյ տեղաւորման Պոլսոյ մէջ : Առջիններուն շահերը կը պահանջէին , որ թրքական խնդիրը իր վերջնական լուծումը չստանար , իսկ Անգղիոյ շահը անմիջական կարգադրութիւն կը պահանջէր . ո՛ր տեսակէտին ճիշդ ըլլալը մենք չենք կարող զատորոշել . բայց այս հակամարտութենէ տուժողն էր Արեւելքի Քրիստոնէութիւնը :

Ն . Սրբութիւնը այս ճամբորդութենէն օգտուիլ ուզելով՝ երկար տարիներէ 'ի վեր ունեցած փափաքը գործադրեց այցելելով Հայ գրականութեան և մտա-

ւորականութեան վառարանը, Ս. Ղազար, իր Հայրապետական ողջոյնն ու օրհնութիւնը տալու և քաղաքական աննպաստ մթնոլորտէն իր սրտին մէջ կուտակուած կսկիծը հանգչող մեծ մտքերու դամբարաններուն վրայ թափելու :

4. — Երեկոյեան ժամը 10ին մինչեւ կայարան — ողջ երթի — եկան Գեր. Հ. Պալագեան, Տիարք Զ. Պլտիկեան և Տեօքթօս Ալլահվէրտիի որդին : Մեկնեցանք 'ի վենետիկ :

5. — Ժամը 12ին հասանք Իտալական սահմանը Մօսան : Անցագրերու և պակաժներու աչքէ անցնելու և քննելու գործողութիւնը թէեւ շատ երկար և տաղտկացուցիչ է, բայց և շատ կանոնաւոր : Ուղեւորները առանց աստիճանի, տարիքի և սեռի կողք կողքի կը շարուին, զիրար հրմշտկել, իրարու նեղութիւն տալ, կամ իրարմէ առաջ անցնելու փորձեր չը կան : Իւրաքանչիւր ոք յոտին՝ ամենայն երկայնամրտութեամբ իր կարգին կը սպասէ ազատելու համար այդ փորձութենէն : Շնորհիւ Ժան-Տարքի սրբացուցման մենք դիւրին ազատեցանք. որովհետեւ քահանայի մը հետ ժանտարմա մը եկաւ և մեր անցագրերը առնելով մեզ առաջնորդեց ճաշասրահի մասնաւոր սենեակ մը, ուր Ֆրանսական 12 Արք-Եպիսկոպոսներ ճաշ կ'ընէին : Լիլի Արք-Եպիսկոպոսը՝ այժմ Փարիզի Արք-Եպիսկոպոս պատուոյ աթոռը նստած էր, ելաւ և անմիջապէս Ն. Սրբութեան հրամացոց : Արեւելքի՝ մասնաւորապէս Կիլիկիոյ մասին հետաքրքրուեցան : Տըրուած բացատրութեանց վրայ ամէնքն ալ ցաւ յայտնեցին տիրող քաղաքական ուղղութեան մասին : Սոքա

Հոռմ կ'երթային Ժան-Տարքի սրբացուցման կրօնական հանդիսութեանց մասնակցելու :

Մօտանէն մեկնելով Թուրինօ հասանք . ուր մի քանի ժամ մնալէ ետքը երեկոյեան ժամը 7ին շարունակեցինք ճանապարհնիս : Ն . Սրբութիւնը հանգստացնելու համար յաջողեցայ Սալոն վակոն մը ճարել , աւելի ճիշդը Թրքական պախտիւր յաջողեցաւ , որ Եւրոպայի մէջ աւելի սովորական և պարարտ է :

6.— Առաւօտեան ժամը 8ին հասանք ըստ մեղապարտ Յակոբ դպրի ի բաղան վեհեմ , զոր Ն . Սրբութիւնը Գորտաքաղաք անուանեց : Նետուեցանք գօնտլի մը մէջ , անցանք ու անցանք կամըրջակներէ , ծուռ ու մուռ ջրային փողոցներէ , քերեցինք հսկայ պալատներու բորբոստնած , կամ մամուապատ ստորոտները և վերջապէս հասանք Մօնրէ Բարլօ օթէլը . լուացուեցանք , ճանապարհի թոզերէն մաքրուեցանք և նախաճաշեցինք : Առանց հանգիստ առնելու նորէն գօնտլի պէտք ունեցանք եւ ուղղակի Ս . Ղազար պատուիրեցինք . կէս ժամէն հասանք վանքի նաւակայքը : Հայ և Հայասիրտ Հայրերը 'ի տես Հայկական վեղարին՝ անականկալի եկան : Նաւակէն չելած 'ի ձայն կոչնակի համախմբուեցան և առաջնորդեցին ընդարձակ սրահ մը , ուր համախումբ և համաշունչ եղբայրութիւնը որոշեալ ժամերուն ամեն տեսակ և լեզուի թերթերու ընթերցմամբ կը պարապին :

Ամէնքն ալ սրտագին սիրով ընդունեցին և ողջունեցին Ն . Սրբութիւնը կարօտակէզ աջահամբոյրներով և հայրենաբաղձ հետաքրքրութեամբ ցանկալի կիլիկիոյ վրայ հարցումներ ըրին իբրեւ

երամակորոյս կռուներէն . հեծեծանք և արտասուք իրար խառնուեցան . Հայրենիքի Որբերէն հաւաքուած ընծայացուներ աջահամբոյրի եկան . հայրական յորդորներով և խրատներով քաջալերեց , որ ապագայի վերականգնումի պարտաւորութեան պատրաստուին :

Հայրենիք - կիլիկիայի կարօտը լիուլի ըմբոշխնելու համար խնդրեցին , որ մի քանի օր պատուէ զիրենք , բայց միայն մի օր մնալ խոստացաւ :

Նախ այցելեց երկրորդ Մեսրոբին , Մեծին Մխիթարայ դամբարանը , « Հոգւոց » ըսելով՝ ուխտաւորի մը յարգանօք ծնրադիր համբուրեց : Այցելեց անմահ հեղինակաց , Չամչեանէն մինչեւ Աւարայրի Պլպուլին կիսանդրիները , որ քանդակուած են դամբարանի արտաքին երեսին վրայ : Գրատուներ շատ մաքուր և շատ կանոնաւոր դասակարգութեամբ կը պահպանուի ընդ հսկողութեամբ Ն . Սրբութեան վաղածանօթ Հ . Սարգիս Բարսեղեանի : Հապճէպով կարեւոր կտորները աչքէ անցուց և աւելի ճոխ գտաւ որակով Երուսաղէմի ժողովածուէն : Աչքէ անցուց եկեղեցական սպասները և զգեստները , որ մաքուր դարակներու մէջ գուրգուրտ խնամքով զետեղուած են , թէեւ բազմաճոխ և հարուստ չեն , բայց բաւական են : Ս . Հազարի փառքը կը կազմեն Գրատուներ մեղուաջան աշխատասիրութեամբ գրասէր Հայրիրուն և Տպարանը , զոր նախկին փայլուն և գործոն վիճակին հասցնելու ամեն ջանք կը թափեն : Բայց աւանդ , Հայութեան պարծանքն եղող այս հաստատութիւնն ալ իր ներքին պառակտումի և ախտաւորութեան նշանները սկսած էր ցոյց տալ : Վանահայր Աբբան , Գերերջանիկ կիւրեղեան , կամայ թէ ակամայ գիւղ քաշուած էր . հակառակ ներ-

քին սահմանադրութեան՝ Փոխանորդը նշանակուած էր ուղղակի Հռոմէն, որուն դէմ խուլ՝ բայց իրաւացի արտունջներ սկսած էին: Վերջապէս այս տեղ ալ Հայկական կեանքը վիրաւոր գտանք և մեր արդէն վիրաւոր սրտի կոտտանքը կրկնապատկուեցաւ:

Տակաւին Ս. Ղազարէն չը մեկնած՝ այս պատմական այցելութիւնը ամբողջացնելու համար «Բազմավէպ»ի 1920 Յուլիս ամսաթիւէն կ'արտագրենք:

ՍԱՀԱԿ Բ. ԿՂԹՈՂԻԿՈՍ ԿԻՂԻԿԻՈՅ

ՎԵՀԱՓԱՌԻ ՕՐԸ՝ Ի Ս. ՂԱԶԱՐ

« Գարնանավայել գեղեցիկ առաւօտ մ'էր Մայիս 6ը:

« Վանքի դրան կոչնակը տարածամ հնչեց: - Այդ տեղի կ'ուռնենայ՝ ի Ս. Ղազար, երբ միաբանութեանս անդամներէն մին հեռու աշխարհներէ տուն կը դառնայ, ինքը վանքին կարօտ, վանքը իրեն: - Այդ տեղի կ'ուռնենայ, երբ եկեղեցական բարձրաստիճան անձ մը այցի գայ միաբանութեան: Այդ տեղի կ'ուռնենայ երբ թագաւորազն անհատներ տեսնելու կուգան Մխիթարայ «Դրախտիկ»ը: - Այդ պարագաներուն մէջ Մեծաստանիս դրան կոչնակը խօսքն ուղղելով վարդապետներուն կ'ըսէ «Ուշագրաւիչ առիթ մը կայ, վար հրամեցէք»:

« Տարւոյս շրջանին մէջ՝ մէկը այն յորդ զգացումներէն, որ մեր սրտերուն դռնակը յաճախ կը բաբախէ կարօտի մուրճիկով, է անակնկալելիքը մեր քաղցր Հայրենեաց աւետաւոր լուրերուն:

« Կոչնակը տարածամ հնչեց . . . : Արդեօք ո՛ր սիրելին, կամ ո՛ր վսեմափայլն եկաւ, կը խորհիմ ու վար իջնել կը փութամ՝ թերի թողլով նամակ մը կարեւոր:

« Զղջալու ոչինչ կայ: Գրեթէ ճշմարիտ անակնկալ

մը՝ որուն գաղտնիքը (դեռ պատերազմական խանգարումներուն հետեւանօք) չէին յաջողած բանալ մեզ՝ ոչ շաբաթով յառաջ տպագրուած ազգային մէկ երկու լրագիրները և ոչ ալ Մեծ. Տխար Պղտիկեանի Փարիզէն առ մեզ ուղղած հեռագիրը թէ՛ «Ն. Վ. Սահակ Բ. Կաթողիկոսը մեկնեցաւ դէպի Ս. Ղազար :»

« Բարի գալստեան մեր յարգանքները մատուցանելով վանքին «Ճեմարան»ը կ'առաջնորդենք՝ ուր և ընտանեկան շրջանակ մը բուրբելով կը խօսինք՝ գլխաւորապէս և բնականաբար՝ Հայի ներկայ քաղաքական և բարոյական կացութեանց մասին : Ն. Վեհափառութեան իրազեկ պատասխանները առհասարակ տխրութեամբ մը համակուած էին, քան թէ ուրախութեամբ : Եւրոպացիները ընդունայն խօսքերով խաբեցին մեր Պատուիրակութիւնը . . . Խօսի առատութիւն, գործի՝ ժլատութիւն : Ահա այդ եղած էր - յետ բազմաթիւ մեծամեծ պաշտօնեաներու հետ տեսակցած ըլլալու - համոզումը Ն. Վեհափառութեան :

« Այդ ժամուն գինքը տեսնող օտարազգի խօսակից մը՝ պիտի հարցնէր անպատճառ. «Մի՞թէ այս պատկանելի ծերունիին երեսը ծիծաղով ծաղկիլ բնաւ չի՞ գիտեր :

« Բայց մենք լաւ կ'ըմբռնէինք անոր անժպիտ երեսին արդարակորով իրաւունքները :

« Աւաղ . . . :

« Նա՛ արցունքի հովիտներէն անցած էր : Նա իւր սեւաթոյր հագուստներուն տակ՝ սգասարսուռ բիւրցաւերու ստուերովը թախծալից սիրտ մը ունէր անշուշտ : Անագորոյն մանգաղը մահուան՝ որ կիլիկիոյ հովիտներուն մէջ, սարերու և դաշտերու վրայ բիւ-

րաբիւր անմեղներ հնձեց, չէ՞ որ չի հեռանար քաջ
Հովուապետի մտքի հայեացքէն: Ի՞նչ զարմանք թէ նա
վիշտերու բեռան տակ հեծեծէ հայրաբար... իւր
խնամքին յանձնուած հարիւր ոչխարներու իննսուն
և ինը կորսուած արդէն... որչափ գուրգուրանքով
գէթ հարիւրերորդը փրկելու համար չի՞ սրտմաշիր...:

«Կէս դիշերանց հասեր է վենետիկ և պանդոկ մը
իջեւաներ: Երբ կ'աճապարենք իւր պայուսակները
գտնելու, կ'իմանանք որ առաջին անգամ ըլլալով
գալուստը 'ի վենետիկ փութանակի պիտի մեկնի:

«Ինչո՞ւ եկեր է ուրեմն, երբ չէ եկած չնաշխար-
հիկ վենետիկը հանդարտօրէն տեսնելու, և ո՛չ ալ
իբր պաշտօնական անձ մը՝ Լոնտոնէն կամ Փարիզէն
աւետիքի ստոյգ լուր մը բերելու: Նա ուխտի եկած է
'ի Ս. Ղազար: Նա իւր բաղձալին կ'որոնէ: Ո՞ւր
եղիք զՂազարոս կը հարցնէ... ո՞ւր է հանգստարանը
ՄիտիթԱՐԱՅ, - գայն համբուրելու եկած եմ... տապանը
այն մեծ մարդուն, որ իւր Հայրենեաց վերածնու-
թեան առաքեալը եղաւ:

«Տարիներէ 'ի վեր» ունեցած սրտին ջերմ փափա-
քը վերջապէս լրացած կը տեսնէ: Ն. Վ. գոհ է:—
Ահաւասիկ շիրիմը երանաշնորհ Մխիթարայ: Եկեղեցւոյ
բեմին գիրկը՝ անպաճոյճ տապանին վրայ խոնարհած
իւր Ուխտը կատարեց:— Հապա Հայր Ալիշանի գերեզ-
մանն ո՞ւր է: Այցելեց Վանքին գերեզմանատունը, որ
կը գտնուի պարտէզի մէջ, կղզիիս հարաւ-Արեւելեան
կողմը՝ եկեղեցիին որմին կից:

«Հ. Ղեւոնդ Ալիշան կը ննջէ 7րդ հանգստա-
րանի մէջ՝ որու կապարիչն ունի յատկանիշ անմահ
ննջեցեալին բարձրաքանդակ դիմանկարը: Ն. Վ.

վայրկեան մը լուռ աղօթելէ զկնի կրկնեց . - Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի :

* *

« Լանքի սեղանատան որմերը կը զարդարեն յարգի իւղանկարներ , զորս յետ դիտելու , Մխիթարայ կոչուած սանդուխներէն վեր բարձրանալով թանգարան կը մտնենք . այս փոքրիկ միջավայրը կեդրոնն է Մեծ գրատան եւ Լորտ Պայրընի սենեակին . վերջնոյս մէջ ըստ սովորութեան , կը նշանակեն այցելուները իրենց անունները . այդ նպատակին համար կը պահուին հոն երեք կարգի տետրակներ :

« Ո ս կ ե գ ի ր ք » ին մէջ Ն . Վ . դրոշմեց հետեւեալ սոցամանդիկ խօսքերը .

« Աւերի եւ արիւնի ճանապարհով հասայ Հայ Գրականութեան Վառարանը 'ի Ս . Ղազար , ուր վրշտակոծ հոգիս պահ մը սփոփուեցաւ եւ կազդուրեցաւ ' նոր եւ անձանօթ վիշտերու դիմելու համար : Ափուփանքիս լիաշուրթն օրհնութեամբ կ'օրհնեմ Հաստատութիւնս եւ յարատեւութիւն կը մաղթեմ 'ի մխիթարութիւն եղերարող Ազգիս :

1920, Մայիս 6

ՍԼԷԱԿ Բ . ԿԹ . ԿԻԼԻՆԻՍՅ

« Այդ պատկառելի ստորագրութեանը տակը պիտի կարդաք դուք նաեւ իւր Մեծ . ճանապարհորդակցին անունը . ՎԱՀԱՆ Լ . ԽՈՒՊԷՍԷՐԵԱՆ

ԿԻԼԻԿԻՈՅ ՃԵՊԷԼ ՊԵՐԷՔԷԹԻ ՓՈՒ ԿԱՌԱՎԱՐԻՉ

7 . — Նախաճաշէն ետքը սրտայոյզ ողջագուրանքով և թաց աչքերով բաժնուեցանք : Մենք յուզուած էինք՝ տեսնելով օտար ամփանց վրայ օտար մթնոլորտի տակ , Հայրենիքէն հեռու այդքան տոհմասիրութիւն . իրենք ալ կը փղձկէին այն մտածումով , որ տառա-

պանքի երկրէն եկած, նոր և անակնունելի տառապանքներու հնոցը պիտի վերադառնայինք:

Վանքի Գոնտուղով և երկու հայրերու ընկերակցութեամբ Ս. Մարկոսի հրապարակը ելանք. այցելեցինք Ս. Մարկոս, որ հարստութեան և ճարտարարուեստի հրաշալիք մ'էր: Փարիզի Նօթր-Տամը գեղարուեստի քտրակոյտ մ'է. Ս. Մարկոս նոյնչափ գեղարուեստական ոսկեկոյտ մ'է: Աւագ դրան վրայ զետեղուած են արոյրէ երկու հսկայ ձիեր, որոնք պատերազմի ժամանակ Հռոմ տարուած ու վերադարձուած էին: Աւանդաբար կ'ըսուի, որ Հայոց Տրդատ թագաւորին նուէրն է. հսկայ նուէր հսկայ Նուիրատուն արժանի: Այցելեցինք եկեղեցիին կից եկեղեցին շինել տուող Տօթին պալատը լի գեղարուեստական ճոխութեամբ: Այս հրապարկին մէջ Ամերիկացի տիկիներն Ն. Սրբութեան վեղարէն և պատկառազդու սքեմէն հմայուած՝ երկիւղածութեամբ միջնորդութիւնս խնդրեցին լուսանկարն առնել: Շատ գոհ մնացին իրենց փափաքին իրականացումով:

Նոյն Հայրերու ուղեկցութեամբ այցելեցինք Մուրատ-Ռաֆայէլեան հռչակաւոր վարժարանը, որ Ազգին տուած է սիրուած բանաստեղծներ, անուանի հայագէտներ, բանասէրներ, ելեւմտագէտներ և խմբագիրներ: Շէնքը վաղեմի Տօթերու արքայավայել պալատ մ'է, բայց դժբաղդաբար աշխարհաքանդ ընդհանուր պատերազմը խարխլած է կրթական այս նուիրական հաստատութիւնը: Զինադադարէն յետոյ իբրեւ 'ի մեռելութենէ յարուցեալ սկսած է կենսաւետիլ շնորհիւ միաբանութեան և շնորհիւ Տնօրէնին, Հ. Վարդան Հացունիի, որուն խոհ սկանութիւնը, խոհեմութիւնը և կրօ-

նականի մը պարտադրուածէն աւելի պարկեշտութիւնը
ինքնին գործնական կրթութիւն մ'է : Հաստատութեան
առատ ճաշը վայելեցինք Հայաստանի քարուքանդ
թոնիրին մէջ պատրաստուածին չափ համեղութեամբ :
Համեղագոյն էր սիրաբոյր սեղանակցաց սրտակցու-
թիւնը : Նոր հաւաքուած ուսանողները Հայրենիքի
ցաւերուն գիտակ և հաղորդ , նոր Արշալոյսներու յու-
սով լեցուն՝ մերթ կը ժպտին , մերթ կը թախծոտին և
յաճախ զուարթօրէն կը կայտունն :

Կէսօրէն յետոյ վարժարանի գոնտոլով և ուսանող
Գոնտոլավարներով մեկնեցանք 'ի կայարան : Մեկնե-
լու նշանին վրայ սրտակաթ հրաժեշտ և սրտագին
շնորհակալութիւն : Այժմ Կիլիկիոյ Միջերկրականի
արեւելքէն՝ Վենետիկի Հայ Միջերկրականներուն , 'ի
մասնաւորի երջանկայիշատակ Մուրատ. Ռաֆայէլեանի
Սաներուն անգամ մ'ալ կրկնել ն . Սրբութեան արտօ-
նութեամբ հայրական ողջոյնն ու օրհնութիւնը : Եղէք
կրթութեան և գիտութեան զինուորներ , քաջ ծովա-
գէտներ և ծովագնացներ , ապագայ Հայրենիքը պէտք
պիտի ունենայ ձեզի : Յերկիր ինկած ցորենի հատի-
կին նման մեռած ենք այսօր , բայց կը հաւատանք
թէ կ'անցնին սառոյցք և սառնամանիք , կ'անցնի
մեռելատիպ ձմեռը և կուգայ կենսանորոգ Գարունը .
կը ծաղկին Հայրենի այգիները , կը ծաղկազարդուն
նունենիները և նշենիները , կը բուրումնաւետին Հայ-
րենի վարդն ու կակաջը և ցորենի մեռեալ հատիկները
կը ծլարձակին և կ'ատոքանան 'ի հասկին :

Հասանք Փատուա ընկերակցութեամբ Հ. Ալէք-
սիանոս Արապկերտցւոյ . հիւրընկալուեցանք վանատու-

նը ջերմիկ մտերմութեամբ : Մեծաւորը Հ. Գանիէլ Ստեփանոսեան Պոլսեցի, այր պարկեշտ և հեզաբարոյ . երկրորդ Հայր մը . Արիտասարգէս Գասգանտիլեան Տրապիզոնցի, թէեւ ծաղիկ երիտասարդութիւնը անցուցած՝ ժիր, գործունեայ և ծաղկասէր, որոց ջուրն ու խնամքը հօր մը գուրգուրանքով ժամ ու ժամանակին կուտար . երբեմն ալ երիտասարդական աւիւնով Հ. Բազրատունիէն և Հիւրմիւլեաններէն հատընտիր կտորներ կ'արտասաներ . երրորդն էր մեզ ընկերացող Հ. Ալէքսիանոսը : Բարի-դալուստի եկան տան և չորս երիտասարդներ, շրջանաւարտ Մուրատ Ռաֆայէլեանի և անոր հաշուով համալսարանի դասընթացից հետեւող, իւրաքանչիւրը իւր սիրած ճիւղին . աշխոյժ, ուսմանց սիրահար և Հայրենիքի ցաւերուն բաժնակից : 'ի Փարիզ վերադառնալէ ետքը Ն. Սրբութեանէն արտօնութիւն խնդրեցին 'ի նպաստ կիլիկիոյ հանգանակութիւն ընել, որուն արդիւնքը հետզհետէ զրկեցին : Հայրենիքի մէջ ցաւերու անորակելի տեսակներուն տակ ծեր թէ երիտասարդ, մտաւորական թէ անմիտ քիչ թէ շատ այլասևուուած են, բայց գաղթականութեանց մէջ սէրը աւելի ջերմ, անկեղծ և զգացումները մաքուր են : Փատուայի Ուսանողներուն շնորհակալութիւն կարօտ ազգակիցներէն և մաղթանք յառաջադիմութեան :

Ճ.— Տեղական կառքով բարեյիշատակ Մ. Խերեանի ագարակը գնացինք, Լիսորա, ուր կային հանգուցեալին քոյրը, Տիկին Թագուհի և որդեգիրը համեստափայլ Օր . Հովիտիմէ - Աշխէն և իբրեւ հիւր օրիորդ Արիիարեան : Որչափ մենք՝ առաւել ևս նոքա ուրախացան, որ Հայութենէ զուրկ անապատին մէջ

յանակնկալս արցունքի և արիւնի լին, կիլիկիայի կաթողիկոսը կը հիւրընկալէին: Երկու հանգիստ գիշերներ անցուցինք հայկական եւ նահապետական հիւրասիրութեամբ: Անուշ եւ անմոռանալի յիշատակաւ վերադարձանք Փատուա եւ ուղղակի գնացինք վանատուն, մեր ընտանի Օթեւանը:

10.— Ուղղակի Փարիզ երթալու մտադրութեամբ ժամը 10^{1/2}ին Փատուայէն մեկնեցանք. կառաչարին մէջ վակոնլի չը կար, թէեւ վենետիկ երթալուն պախաշիշով տեղ գտած էինք, առաջին վակոնի մը մէջ հազիւ կարողացանք տեղաւորել Ն. Սրբութիւնը. ես ոտքի վրայ մնալով հանդերձ Ամերիկացիի մը հետ վէճի բռնուեցանք: Ժամը 7^{1/2}ին Միլան հասանք. գործադուրը ընդհանրացած՝ ստիպուեցանք ակամայ Միլանի հիւրն ըլլալ: Շատ դժուարութեամբ ինքնաշարժ մը գտանք և օթէլ մը տանելու պատուէր տուինք: Մարդը իտալերէն բաներ մը ըսել կ'ուզէր զոր չհասկցայ:

Միլան իտալիոյ նշանաւոր քաղաքներէն մէկն է զարդարուած իտալական նուրբ ճաշակով եւ հոյակապ շէնքերով. բայց չէի կարող հասկնալ մեծ քաղաքի մը փողոցները ամայի, խանութներն ու զբօսավայրերը անժամանակ փակուած ըլլալուն պատճառը: Այս տարտամ խորհրդածութեամբ անունը չի յիշուած օթէլի մը առջեւ կանգ առինք. դուռը գոց էր եւ երկու վինուորներ սլահակ կանգներ էին: Կարսոն մը դռնակէն գլուխը դուրս հանելով.— Տեղ չի կայ.— ըսաւ: Տասնէն աւելի օթէլներ այցելեցինք եւ միեւնոյն պատասխանը լսեցինք: Շէօֆէրն ալ սկսաւ բմբոստանալ.— Գիշեր եղաւ ճաշի պիտի երթամ. չեմ կարող զձեզ

մինչեւ առաւօտ պտտցնել .— : Կէս ֆրանսերէնով եւ
կէս օ վերջաւորութեամբ իբր իտալականով մար-
դը համոզեցինք որ մի ուրիշ օթէլ տանի , այնու-
հետեւ կ'արձակենք զինքը : Գնացինք և հոն ալ տեղ
չը գտանք : Տնօրէնէն խնդրեցի որ երկու թիկնաթու-
ներ տայ : - Թիկնաթուներն ալ վարձուած են եւ ձեզի
կերակուր չունիմ : - Ուզեցի օթէլ փնտռելու պաշտօնս
չարունակել , բայց կառապանը ուժգնօրէն կ'ընդդիմա-
նար : Այս դժուարութեանց առջեւ Տնօրէնը թոյլատրեց
մեր գոյքերը ներս առնել և Ն . Սրբութեան թիկնաթու
մը տուաւ միայն նստելու պայմանաւ՝ մինչեւ ես ու-
րիշ տեղ մը գտնելու աշխատիմ : Ծանօթ Հայերուն
թելեֆօն ըրի , ոչ մէկն իր տեղն էր : Նորէն դուրս
ելայ և գրեթէ Միլանի բոլոր օթէլները գլուխ զարկի
ժամերով : Յուսահատ վերադարձիս կրկին օթէլ Մէթ-
րոփոլ հանդիպեցայ և շատ աղաչեցի տնօրէնին . - Հիւ-
րը Պատրիարք ըլլալուն երկու թիկնաթու , բարձ ,
վերմակ և կերակուր կուտամ . - ըսաւ : Կարկեղոնի յաղ-
թողի մը պէս Ն . Սրբութեան վազեցի և կառք նըս-
տելով օթէլ Մէթրոփոլ եկանք . գործադուլի պատճառաւ
կարսոն և սպասաւոր չկար . ստիպուեցայ պակաժնե-
րը քաջաբար վերցնել և ներս տանիլ : Ճաշելու համար
ճաշարան գնացինք , ծառայող չըլլալուն Տնօրէնը
փրփրած էր . ճաշացուցակ ուզեցի , խստութեամբ . -
Ատանկ բան չի կայ , ինչ բերենք այն պիտի ուտէք . -
պատասխանեց : Ճաշերնիս էր սալաթա , կտոր մը
ապուխտ և պտուղ . ախորժակով կերանք , որովհետև
փողոցը մնալու վտանգէն ազատած էինք . թէև աթու-
ներու վրայ պիտի գիշերէինք : Ժամանակը անցած
էր , դրացի աթուակալները անուշ անուշ կը քնանային :

Տնօրէնին խոստացած բարձ ու վերմակը ուզեցինք . մարդը պահ մը խորհելէ և պաշտօնակցի մը հետ խորհրդակցելէ ետք ըսաւ .— Պատրիարքին համար 3 յարկ 61 թիւ սենեակ մը պիտի տամ բաղնիքով . չեմ ուզեր որ անհանգիստ ըլլայ : Այս մարդավայել տնօրէնութեան վրայ շատ ուրախացանք . պայուսակները ուսամբարձ վեր բարձրացանք և հանգստաւէտ գիշեր մը անցուցինք :

Հետեւեալ առաւօտ սրահին մէջ յանակնկալս ազգակիցներու կը հանդիպիմ , որ Հայերէն կը խօսին . ուրախութիւնս անոնք միայն կրնան չափել , որ օտարութեան մէջ նմանօրինակ հանդիպումներ ունեցած են : Զ Ռիւսացի ծանօթ Իփլիկճեանները և ուրիշ ազգայիններ էին : Միլանի ազգայիններէն Տիար Կ . Տիլսիզեանը այցելութեան եկաւ :

12 .— Լսեցինք , որ Էֆսփօքս մը պիտի ելնէ ժամը 6ին , որ թէեւ վակոնլի չունէր , լաւագոյն սեպեցինք ժամ առաջ հեռանալ՝ թերեւս մեզ համար միայն անհիւրընկալ Միլանէն : Մեր գօմբարտըմանին մէջ Անդղիացի ամուլ մը և տարիքը առած օրիորդ մը կային մարդաշող բնաւորութեամբ՝ հակառակ անգղիական սառն անտարբերութեան :

Զուիցերիայէն կ'անցնէինք : Այս երկրի բնական գեղեցկութեան մասին շատ բան լսած և կարդացած էի , բայց տեսածս շատ գերազանց էր լսածէս և կարդացածէս : Իտալիոյ սահման Մաժօրա լճէն մինչև Ֆրանսական սահմանը բնութեան գեղեցկութիւնը գիտելով չեն յոգնիր մարդուն աչքերը : Ստեղծագործութիւնը բան մը խնայած չէ և մարդուն աշխատութիւնն ալ նոր և հմայիչ գեղեցկութեամբ մը

պսակած է : Կառաշարը կը սուրայ, աստուածային և մարդկային աշխատութեան հրաշալիքը Սինէմայի Ֆիլմի պէս աչքերուս առջեւէն կը թռչին . բայց միտքս ալ կը թռչի 'ի Տաւրոս և յԱմանոս, լեռնային Կիլիկիա . Հաճըն, Չէյթուն, Վահկա, Հասան-Պէյլի, Տէօրթեօլ, Պէյլան, Սօվուգ-Օլուխ, Աթըզ և Էօքպէզ, որոնք աստուածատունկ դրախտներ էին . այլ աւա՛ղ, հիմա եղած են աւազակներու և հայակեր բորենիներու որջեր և հայ Մարտիրոսներու գերեզմանոցներ : Այսպէս զմայլանքով և նախանձավառ խոհերով անցանք Խտալիայէն և Ֆրանս . Չուցերիայէն . Սահմանագլուխներու վրայ անցագրերու և պակաժներու քննութիւնը անհրաժեշտ է, հաւասարապէս տաղտկացուցիչ թէ՛ ճամբորդներուն և թէ՛ քննիչներուն : Մեր անցագիրը իբրեւ դիւանագիտական՝ Ֆրանսական պաշտօնեայները շատ քաղաքավարութեամբ կը քննէին, իսկ Խտալացի, մանաւանդ Չուլիցերիացի պաշտօնեայք շատ կոպտավարկը վարուէին : Մարդ չէ կարող ըմբռնել, որ Չուլիցերիոյ նման բնական գեղեցկութեամբ երկրի մը ժողովուրդը այդքան անքաղաքավար ըլլայ : գուցէ անօրէն երկրի բնակներուս օրէնքի խիստ պահպանութիւնը կոպտութիւն կը թուի :

13.— Առաւօտուն կանուխ Փարիզ հասանք . տրուած հեռագիրը թրքական ոճով թղթատարով դըրկուած ըլլալուն՝ անշշուկ մեր օթէլը գնացինք :

Թէեւ Կիլիկիայի աւետաւոր լուրերուն յուսով եւ կարօտով կը դառնայինք, դժբաղդաբար 'ի նպաստ մեզ քաղաքականութեան մէջ նորութիւն չը գտանք, ընդհակառակն Կիլիկիայէն միշտ աղէտի լուրեր կը հասնէին՝ ընդհանրապէս Անգ . Թերթերէ հաղորդուած ,

մերթ Հաճընի անկումը կը գուժէին, մերթ Ատանայի եւ Այնթապի պարպումը, միւս կողմէն Հ. Հանրապետութեան վիճակն ալ վարդապոյն չէր :

Այս անճար կացութեան ճար մը գտնելու համար Ազգ. պատուիրակութիւնը բացառիկ ժողով մը գումարելու պէտք տեսած էր, որուն ներկայ եղան Ն. Սրբութիւնը, Ս. Պատրիարքը, Պօղոս Փաշան եւ Պ. Ահարոնեանը : Վեհաժողովի քարտուղարութիւնը Սան-Րէմօյի դաշնագրէն մէկ մէկ օրինակ հաղորդած էր, ինչպէս բոլոր շահակից Պետութեանց, նոյնպէս Հ. Հանրապետութեան եւ Ազգ. Պատուիրակութեան հակառաջարկներ ներկայացնելու համար. մասնաւոր Յանձնախումբեր կազմուեցան այս թեմիկ ուսումնասիրութիւնը ընելու եւ լուրջ հակառաջարկներ կազմելու : Խնդիրը բաւական դժուար էր, որովհետեւ մեր կրկին Պատուիրակութիւնք, թէեւ մեծ մասամբ կարեւոր եւ կարող գործիչներէ կազմուած բայց թեմիալիսն չէին. առանց վիրաւորելու նպատակ ունենալու ըսեմ նաեւ, անտեղեակ երկրի պահանջներուն՝ չէին կարող որոշել, թէ ի՞նչն է օգտակար եւ ինչը վնասակար : Դաշնագիրը լոկ սահմանի ճշդումին չէր վերաբերեր. տնտեսական, վնասուց հատուցման եւ ուրիշ շատ կարեւոր խնդիրներ կը շօշափէր եւ այս ամենուն նրբութեանց թափանցող անդամներ կը պակսէին :

Լոնտոնի Վեհաժողովը Ազգ. Պատուիրակութենէն Տաճկա-Հայաստանի նահանգներուն պատերազմէն առաջ տնտեսական վիճակին եւ Պետական հասոյթներուն վիճակացոյցը ուզած էր. մերինները շուարած էին. որովհետեւ այնչափ տարրական աշխատութեան

մը փաստաթուղթերը ունենալու կանխամտածութիւնը ունեցած չէին : Հարցումի հեռագիրներ զարկին Ռսկան և Նորատուենկեան էֆէնտիներուն, բայց չեմ կարծեր թէ գոհացուցիչ պատասխան մը յաջողեցան ձեռք բերել :

Ն. Սրբութիւնը կը մտահոգէր աւելի Սան-Րէմոյի 1920 Մայիս 18ի որոշումը. որով Կիլիկիան երկուքի կը բաժնէր. Սուրիոյ սահմանակից. կամ լեռնային Կիլիկիան Պրանսայի և դաշտայինը թուրքերուն թողելով : Այս առթիւ Դաշնակից պետութեանց բողոքագրեր (6) ղրկեց :

Հոնտոնի Հայ. գաղութը փափաքելով Ն. Սրբութեան այցելութիւնը վայելել, իրենց և Մանչէսթրի Հոգեւոր Տեսչին թելադրած էին գրաւոր հրաւեր ուղղել :

19.— Երեկոյին Պատուիրակութեան կողմէ Տեօքթօր Նէվրուզեանը եկաւ խնդրելու Ն. Սրբութենէն, որ Ատանայի մէջ Պատերազմական Ատեանի յանձնուած Տիարց վահան Փորթուգալեանի և Եփրեմեանի համար ժեներալ Կուրոյէն հեռագրով ասպետական Պրանսայի արդարասիրտութիւնը խնդրէ :

Այս մասին Մարսիլիայէն վասպուրականի բազմարդիւն Ուսուցչապետ և ազատաշունչ Խմբագիր Մկրտիչ Փորթուգալեան հայրական գորովոտ տողերով Մյս. 18ին նոյն խնդիրը ըրած էր (7) : Ն. Սրբութիւնը չի վիտնալով հանդերձ ծանրագոյն պատժապարտութեան պատճառը արդէն պատրաստուած հեռագիրը ստորագրեց : Երբ Ատանա վերադարձանք պատահութիւնը ունեցայ յանցապարտութեան պատճառը վաւերական աղբիւրէ լսել և գրի առնել (8) :

20. — Առաւօտեան ժամը Յին Պուլտնիյի գծով ճամբայ ելանք՝ ուղեկցութեամբ Գեր. Պալագեանի և Պ. Պզտիկեանի և երեկոյեան ժամը 7 ինչ Լոնտրա հասանք ։ Կայարան եկած էին Լոնտոնի տեղեկատու դիւանին պետ Պ. Մալքում և քարտուղար Պ. Սաֆրաստեան և ուրիշ ազգայիններ ։ Բարեբաղդութիւն ունեցայ ընդառաջ եկողներուն մէջ տեսնելու հանգուցեալ Հօրսորդեգիրը՝ Պ. Նշան Տիրացուեան Ձէյթունցին, վաղածանօթ Ն. Սրբութեան ։ Որչափ Լոնտոն մնացինք, անբաժան մնաց և օգտակար եղաւ պատրաստակամ ծառայութեամբ ։

Չորրէն փողոց Վաւիկերրն օթէլ առաջնորդուեցանք . Հոգ. Տեսուչ Ա.բէլ Վրդպ. Մանչէսթրէն ուշ հասաւ և ուղղակի օթէլ եկաւ Բարի-գալուստի ։ Յիշեալը Գէորգեան Ճեմարանի շրջանաւարտ՝ Չուլցերիոյ մէջ բարձր ուսման հետեւած էր, կը խօսէր Պրանսերէն, Գերմաներէն և կարճ ժամանակի մէջ ինքնաշխատութեամբ անգղիարէն ։ Անգղիական բարձր Հոգևորականութեան հետ ունեցած սերտ յարաբերութեամբ յաջողած էր, հակառակ Լոյս Ճորճի չկամութեան՝ Բէնտրպլըրիի Արք.Նպիսկոպոսին միջնորդութեամբ Ն. Վեհափառութիւն Ճորճ Ն.ի ընդունելութեան արժանացնել Ս. Պատրիարքը ։

22. — Եկեղեցւոյ նորընտիր Հոգաբարձութեան անդամք՝ Տիարք Ներսէս Կիւլպէնկեան, Միհրան Կիւտէնեան և Քէհէեան Ն. Սրբութեան ներկայացան ։ Տեղեկութիւն տուաւ Վարդապետը, որ սեպհական եկեղեցւոյ մը շինութեան կ'աշխատին և կարեւոր տեղ մ'ալ գնած են ։ Շատ գոհունակութեամբ լսելով սփոփարար տեղեկութիւնը և գաղութին բարեպաշտական մտադրութիւնը՝ օրհնեց

Պատ. Հոգաբարձութիւնը և յորդորեց, որ յօգուտ եկեղեցւոյ շինութեան ջանքերնին կրկնապատկին: Խնդրեցին, որ յառաջիկայ կիրակին Ս. Պատարագ մատուցանէ 'ի հոգեւոր մխիթարութիւն և օրհնէ Գաղութը:

Հետզհետէ շատ մը ազգայինք և Հայասէր Անգլիացիներ այցելութեան եկան: 'ի մասնաւորի շնորհակալութեամբ յիշել պարտք կը համարիմ Պոլսոյ Անգլ. դեսպանատան երբեմնի Երէց Գեր. Տըկլաս, որ բարեւիրաբար կարեւոր տեղերու և հաստատութեանց այցելելու առաջնորդեց:

Ն. Արքութիւնը լսած էր, որ յարգելի Գաղութը թէյասեղան տալու մտադրութիւն ունի. շատ յորդորեց, որ զուր և անօգուտ ծախսերէ զգուշանան. որովհետեւ Ս. Պատրիարքին ալ թէյասեղան, կամ ճաշասեղան տուած էին և ահագին գումարի մը ծախսուիլը կը խօսուէր: Գաղութը շուզեց այ՛ պատուասիրութիւնը զանց ընել:

28.— Ոթէլ Պարլրբօնի մէջ թէյասեղան տրուեցաւ: Ներկայ էին խուռն բազմութեամբ երկսեռ հրաւիրեալներ: Գրիգորիս և Աբէլ Մ. Վրդպ.ները ճառեր խօսեցան: Ներկայներու փափաքանաց վրայ Ն. Արքութիւնն ալ հաճեցաւ խօսիլ, զոր յիշողութեանս ներածին չափ յառաջ կը բերեմ:

«Դուք ապրելով մտքի, խօսքի, գաղափարի ազատ աշխարհի մէջ, բնական է, որ սպասէք շնորհակաշկանդ զգացումներուն համապատասխան խօսքերու: Սակայն մի՛ մոռնաք, որ մենք կուգանք աւերի ու արիւնի աշխարհէն, ուր միտքն է կալանաւոր, խօսքը շղթաներով պրկուած, և լեզուն եթէ ո՛չ այժմ

գոնէ մերձաւոր անցեալին մէջ բռնութեան և ճնշու
մի տակ օտար և խորդ լեզուի փոխուած է. ուստի
մի քանի անժուր և անլի խօսքերս զՁեզ թող չը
հիասթափեն :

«Սեղաններու շուրջ համախմբութիւնները, զոր
դուք փափկանկատութեամբ պատուասիրութիւն կ'ան-
ուանէք, ես կ'ըսեմ գործի աշխարհին մէջ ժամանակի
կորուստ և ծանր բեռ մ'է, զոր Հոգեւորականներս
արդարութիւն գտնելու երազանքով մեր թափառումնե-
րուն մէջ ձեր ուսերուն վրայ կը դնենք : Եթէ համամիտ
չը գտնուէի հին իմաստասէր բարոյախօսի մը առածին
«Պատիւն 'ի պատուողն է եւ ոչ 'ի պատուեալն.»-
Ծանր խղճահարութիւն մը պիտի տանէի վերագարծիս :

«Եթէ մտքի ու յիշողութեան տկարութեամբ վա-
րակուած ըլլայի՝ պահ մը մոռնալով անցեալը իր բո-
վանդակ արհաւիրքներով, տարագրութիւնը իր սար-
սափներով եւ մարտիրոսութիւնը արեան գետերով,
Մեծն Ռիտանիոյ մայրաքաղաքին մէջ շրջապատուած
զուարթ և ժպտադէմ համազգայիններէ՝ երջանկու-
թեան վայրկեաններ պիտի վայելէի. զլացուած է և
այդ դուզնաքեայ ոչ երջանկութիւնը, այլ մտքի
խաղաղութիւնը. քանի որ եղեունի անցեալը եւ անոր
ծնունդն եղող ախտաժէտ ներկան դրոշմուած են
մտքիս և յիշողութեանս մէջ : Ըսուած է, արտասուքն
ու կոծը սիոփանք են վշտակոծ սրտերուն. բայց
մշտահառաջ ողբերը՝ նոյն իսկ պողպատեայ նկարագիր
ունեցող ազգերուն անգամ հոգեկան կորովը կը ջլա-
տէ. ուստի եթէ դադրեցնենք լացն ու կոծը, մոռնա-
լու չինք անցեալը. անցեալ չունեցողը ո՛չ ներկայ և
ոչ ապագայ ունի :

«Անցեալի ամպամած պատկերներուն մէջ կ'ընդ-
նշմարեմ լուսաշող և գեղածիծաղ արշալոյսներու ցոլ-
քեր, որոնց գլխաւորն է ընդհանուր ազգի դարաւոր
երկունքի, եթէ ոչ ամբողջովին, գոնէ մասնակի
իրականացումը, այն է Հ. Հանրապետութիւնը և Հայ-
կական հռազոյնի ծածանումը ալեւոր Մասիսի վրայ :
Մի՛ զարմանաք, եթէ կատարեալ իրականութիւն ըսե-
լու տեղ երեւոյթ ըսեմ միլիոնաւորներու արեան գին
եղող այդ վտիտ ծնունդը : Որովհետեւ երեխայի ծը-
նունդը, եթէ ապրի, ապագայ հասուն մարդու երե-
ւոյթն է : Ծնողաց կամ խնամակալներու զթոտ և
գուրգուրալիբ հոգածութենէն կախում ունի երեխա-
յութիւնը մանկութեան, պատանեկութեան, երիտա-
սարդութեան և կատարելութեան թեւակոխել տալու :
Այսպէս և մեր նորածին Հանրապետութիւնը պէտք
ունի բովանդակ ազգի գուրգուրանքին : Անձնական և
նեղմիտ կուսակցական նկատումներ մէկ կողմ թողլով՝
մէկ սիրտ բոլորունք այս մանկան շուրջը և անոր
զարգացման ամէն ջանք և խնամք չը խնայենք :

Սփոփարար երեւոյթներէն է Հայ գաղթականութեան
աւանդական, կամ առհաւական յարգանքը առ Հոգե-
ւորականս, ինչպէս ներկայ համախմբութիւնը ապա-
ցոյց է առ եկեղեցին Ձեր որդիական սիրոյն : Դարե-
րու ընթացքին եկեղեցւոյ և եկեղեցականաց կատա-
րած շինարար գերը Ազգին գոյութիւնը պահպանելու
մասին՝ արհամարհել և իբրև հինցած զգեստ մէկ կողմ
նետել, Քրիստոնեայ աշխարհի մէջ մեր կրօնական
սնանկութիւնը ցուցադրելէ զատ՝ մեր գոյութիւնը
վտանգել և Հայ անունը պատմութեան կտակել է :
Լեհաստանի Հայ գաղթականութեան կորուստը անհեր-

քելի վկայութիւն է մայրենի եկեղեցւոյ գրկէն հեռա-
նալու տխուր և ցաւագին հետեւանաց :

Սփոփարար է ներկայ համախմբութիւնը ուրիշ տե-
սակէտով , Հայը անմիաբան է . սովորական , քիչ մ'ալ
նախատական ըսուածքին հերքումն է : Մտքէս անգամ
չեմ անցներ , որ նահատակ կիլիկիոյ կաթողիկոսը
տեսնելու սոսկ հետաքրքրութիւնն է . որ Ձեզ մեկտե-
ղած է . մանաւանդ կը փափաքիմ և կը հաւատամ
թէ միշտ համասիրտ , համաշունչ և համերաշխ էք
Ազգ . շահերուն 'ի պաշտպանութիւն և անձնական ես
ու կամք կը զոհէք ընդհանուր եսին ու կամքին :

Սփոփարար երեւոյթ է Հայ գաղթականութեան
կրօնա-կազմակերպութիւնը , օտարէ փոխառնուած ,
կամ պաշտամանց համար արտօնուած եկեղեցիի տեղ
սեպհական եկեղեցի ունենալու ձեռնարկը և իրա-
կանացնելու ջանքերը , Հոգե . Հովուի պէտքը , գտնել
և պահպանելը , Պատ . Հոգաբարձութեան և ընդհանուր
Միութեան կազմութիւնք ապացոյցներ են , որ Հայը
ամենուրէք իր հոգեկան և բարոյական ուժերը կը
քաղէ եկեղեցւոյ վառարանէն . որ դարերով հովանա-
ւորեց մայրական աղապատանքով , հաւատքով և յու-
սով ապրեցուց թէ' հայրենի երկրին եւ թէ օտարու-
թեան մէջ :

Խօսք մ'ալ ուղեւորութեանս մասին : Երբեմն հար-
ցնողներ կ'ըլլային . Եւրոպա ճամբորդելու փափաք
չունի՞ք : Լռին պատասխանս պաղ ժպիտ մ'էր . որով-
հետեւ գերեզմանը Եւրոպայէն աւելի մօտ կը տեսնէի .
մանաւանդ վստահ Ազգ . Պատուիրակութեան և անոր
հայրենանուէր Նախագահին , որ տարիներէ' ի վեր մայ-
րաքաղաքէ մայրաքաղաք , ա ը դ ա ը ա ս է ը Պետու-

Թեանց դռնէ դուռ Ազգին ցաւերը կը ներկայացնէ և դարման կը խնդրէ : Սակայն Մարաշի աղէտը, որուն մերձաւորապէս 15,000 Հայեր զոհուեցան և Կիլիկիոյ քնաջնջում սպառնացող վտանգը՝ պարտաւորեցին զիս նոր պանդխտութեան, գերեզմանէն յերոպա, վերապրող ժողովուրդին կեանքը ապահովելու :

Եկայ Երոպա՝ ուղղակի Ֆրանսայի դիմելու համար իբրեւ մանտադերի . բանիւ եւ գրով պարզեցի ողբերգական կացութիւնը եւ վերահաս վտանգը, որ հաւասարապէս կը սպառնայ եղբրաբաղդ Հայութեան եւ Ֆրանս . պատւոյն : Հաւաստիքներ տրուեցան գրով եւ խօսքով եւ այն օրէն 'ի վեր կը լսենք թէ նոր ուժեր կը զրկուին Կիլիկիա :

Փարիզի պատուական Հայերը մեր ուղեւորութեան բուն նպատակին վրայ անակնկալ մը աւելցուցին՝ ինքնաբերաբար հանգանակութիւն մը բանալով 'ի նպաստ վերապրող խլեակներուն : Չը կարծէք թէ նոյն մտքով եկած եմ Լոնտրա . պարզ այցելութեան եւ շնորհակալութիւն յայտնելու համար եկած եմ . որովհետեւ գոհութեամբ լսած եմ, որ ազգային ամեն պէտքերու համար առատապէս նուիրատուած էք . որուն մէկ մասն ալ անշուշտ Կիլիկիոյ կարօտներուն բաժին եղած կ'ըլլայ : Շնորհակալութեան եւ գոհութեան հաշուեյարդարութեան կարգին կարելի չէ մոռնալ Մեծն Բրիտանիոյ և Ամերիկայի նիւթական և բարոյական օգնութիւնները, որով 'ի Միջագետս, 'ի Սուրիա, 'ի Պաղեստին և յեգիպտոս բիւրաւոր Հայեր մահուանէ ազատեցան :

Գուցէ կարծէք թէ այս բազմատեսակ օգնութեամբ Հայոց քանդուած տուները շինուեցան, Հա-

յուն մերկութիւնը ծածկուեցաւ և կարօտութիւնը խա-
պառ անհետացաւ, ոչ, ընդհակառակն նոր աղէտները
նոր պէտքեր ծնան: Պատմութեան նոր էջ մը աւել-
նելու համար նոր պէտք մը յիշեմ, որուն քանակն
ու որակը դուք կըռեցէք և չափեցէք: Ֆրնտըճագցիք,
որոց Ամերիկեան Նպաստամատոյցը եզներ տուած
էր վար ու ցանք ընելու և օրապահիկնին պատրաս-
տելու համար.— Մեզի եզ պէտք չէ, հաց պէտք չէ
ըսին, մենք խոտով ապրելու վարժուեցանք. մեզի
զէնք տուէք մեր կեանքը, դաւակները և ընտանեկան
պատիւը պաշտպանելու համար:

Զէնքի փրկութեան հաւատացող չեմ. մեր յեղա-
փոխականները երեսուն տարիներ այդ փորձը ըրին և
միշտ վրայ տուին և ազգին վիճակը աւելի դառնացաւ.
մանաւանդ տարազրութեան շրջանին կեդրոնին մեր դի-
մումներուն, որ տարագիրք գտնուած տեղերնին մնան,
և տեղէ տեղ փոխադրելու տաժանքը խնայուի, պա-
տասխան ստացանք. Ֆրնտըճագի դէպքին վրայ կա-
րելի չէ դարձնել գաղթականութիւնը («կիւ. կակիծ.»
էջ 200:)

« Ողջոյն շնորհակալեաց և օրհնութեան »

30.— Հայկական պաշտամանց յատկացեալ Անդ-
լիական մայրապետներու եկեղեցւոյն մէջ պատարագեց
և քարոզեց ըստ փափաքանաց ժողովրդեան. ներկայ
էր Գեր. Մատթէոս Նպիսկոպոս Ինճէեանը: Կէս օր-
ուայ ճաշին կիւլպէնկեան Տիար Պատրիկ հրաւիրած էր:

Արդէն ըսինք, որ Ն. Սրբութիւնը Լոնտրայի մէջ
քաղաքական որեւէ նպատակ չունէր, մանաւանդ Ազգ.
Պատուիրակութեան ծանուցուած էր.— Կիւլիկիոյ հա-

մար պէտք է ուղղակի Ֆրանսայի պէտք է դիմել. — ։
Բայց կը փափաքէր մի քանի Հայասէր անձնաւորու-
թիւններ տեսնել, շնորհակալութիւն յայտնելու հա-
մար, ինչպէս Ճէյմս-Պրայս, Կլատսդնի որդին և
Քէնթրպրիի Արք-Եպկս .ը, սակայն արձակուրդի պատ-
ճառաւ ցրուած էին . Ճէյմս-Պրայս Սպանիա գնացած
էր՝ Բարձրաստիճան Հոգեւորականութիւնն ալ Եօրքի
Եպիսկոպոսի ձեռնադրութեան գնացած էին ։

31. — Հայասէր Երեսփոխան Սըր Ուիլհէյմի կար-
գադրութեամբ կէսօրէն յետոյ ժամը 4ին Արտաքին
Գործոց Նախարարութեան խորհրդական Համաֆէրտին
այցելեց, ուր կը գտնուէր Ասիական գործերով զբա-
ղող պաշտօնեան ։ Մեզ ընկերացած էին Գեր. Պա-
լագեան և Պ. Տիրացուեան ։ Ն. Սրբութիւնը շնոր-
հակալութիւն յայտնեց Մեծն Բրիտանիոյ ըրած նիւ-
թական և բարոյական աջակցութեանց համար և ապա
կոյտ ճորճին յանձնելու համար գիր մը տալով
ըսաւ, ներկայ գրութեան դէմ կը բողոքեմ Սան-Քէմօ-
յի կարգադրութեան դէմ, որով Կիլիկիան երկու մասի
բաժնած է, մին Ֆրանսայի և միւսը . դաշտային
Կիլիկեան, ուր քրիստոնեայք աւելի շատ են, Թուր-
քաց թողլով ։ Տրուած զանազան հարցումներուն բա-
ցատրութիւններ տալէն յետոյ՝ Ասիական գործոց պաշ-
տօնեայն պաղ կերպով ըսաւ . — Ինչո՞ւ Երեւան չէք
երթար . — Ն. Սրբութիւնը պատասխանեց . — Ինչո՞ւ
և ինչպէ՞ս . Հայը դարերով Կիլիկիոյ մէջ հաստատ-
ուած, կեանքով ու արիւնով սեպհականութեանց տէր
եղած է, որո՞ւ ձգէ երթայ ։ Ինչպէս կարելի է թողուլ
Կաթողիկոսական Աթոռ մը, որ ութն դարերէ 'ի վեր
գոյութիւն ունի ։ Ես Դաշնակիցներէն անկարելին չեմ

պահանջեր . Կիլիկիոյ անբաժանելիութիւնը և վարչական այնպիսի ձեւ մը , որուն տակ բոլոր ազգաբնակչութիւնք , Քրիստոնեայ և Իսլամ , եղբայրաբար ապրին եւ խաղաղ բարգաւաճումով յառաջագիմեն : Խորհրդականը ըսաւ . — Նկատողութեան առնելու համար երկու կարեւոր կէտերը արձանագրեցի , — քաղաքակրթական պատրանք : Ն . Սրբութիւնը աւելցուց , չեմ կարծեր որ Սան-Րէմօյի որոշումները վերջնական են . միակ խնդիրս է , Մարաշի նման Կիլիկիոյ Հայութիւնն ալ անպաշտպան չը թողուլ :

Հրաժեշտ առնելով մեկնեցանք եւ թաւական երկար պտոյտ մը ըրինք , այցելեցինք Վիգթորիա - Ալպէր Միւզէլումը , ուր ամեն ինչ հատընտիր , մանաւանդ Պարսկական կապերտները եւ գորգերը հաղուագիւտ եւ հիանալի են :

Յ Ո Ւ Ն Ի Ս

1 . — Ս . Պօղոս եկեղեցին այցելեցինք առաջնորդութեամբ Գեր . Տըկլասի : Մեր ճարտարապետական շէնքերու աւերակները որքան նուիրական են մեզ համար , բայց քաղաքակրթութեան կամ կրօնական գերաշխարհային հրայրքի արդիւնք հսկայ գործերուն 'ի տես չը սքանչանալու համար՝ պարզապէս քարացած ըլլալու է : Մեծ գործերը մեծ հանճարներու երկանց ծնունդ են : Սգիպտոսի Փարաւոնները թող քնանան Կիզէի անթափանցելի բուրգերուն մէջ , իսկ Պօղոս Առաքեալ իր քարոզութեան չափ բարձր Լոնտրայի Ս . Պօղոս եկեղեցւոյն մէջ դարուց 'ի դարս թող փառաբանուի :

Հարիւրաւոր սանդխամատերով բարձրացանք
գմբէթի վանդակորմը, ուր գմբէթի տրամագիծը քը-
սան մեթրէն աւելի է: Հակագիր երկու կողմը մէկմէկ
հոգի, մերձակայ երկրորդի մը չը լսուելու համար եթէ
խօսակցիլ ուզեն, խօսողը բերանը պատին խօսի այն-
պէս, որ առնթերակից մը չը լսէ՝ հակառակ կող-
մի մարդը ականջը պատին կը լսէ այնքան որոշ, որ
կարծես պատին ետեւ, կամ մէջը մէկը կը խօսի:
Ըլլայ արձագանքի անդրադարձում կամ գիտական
պատճառ մը, նոր այցելուին համար զարմանալի է:

Եկեղեցւոյ ստորայարկը դամբարաններ են Անգղ.
նշանաւոր զօրավարներու, ծովակալներու, ինչպէս
Վիլիմսթոն-Նելսն, որոց մի առ մի յարգանօք այցելե-
ցինք: Գիր. Տըկլաս պատին մէջ զետեղուած քառա-
կուսի քարի մը առջեւ կեցած բացատրեց.— Եկեղեցին
չինոզ ճարտարապետին համար ալ ուզեցին հոյակապ
դամբան մը շինել. շատ մտածեցին ու շատ ծրագիր
կազմեցին. 'ի վերջոյ այս որոշումին եկան.— Ծար-
տարապետին դամբան ըլլայ իր գլուխ գործոց եկեղե-
ցին.— Աւելցուց... կը մաղթեմ որ Հայ Ազգին վերա-
կենդանացումին համար աշխատողներուն պսակն ու
պատիւը իրենց կառուցանելիք ազգային շէնքը ըլլայ:
Ինչ խորհրդաւոր մաղթանք և խրատ մեր կարգ մը
փարասէր և փառասէր գործիչներուն, որ գործի չըս-
կսած՝ վարձք պահանջող գործաւորներու պէս պատիւ
ու գովեստ կ'ակնկալեն և դժբաղդաբար երբեմն ալ
գիտակցութեամբ կամ անգիտակցութեամբ իրենց ժա-
մանակաւոր փառքին համար Ազգին շահերը կը
վտանգեն:

2.— Կէսօրէն յետոյ ժամը Չին մեկնեցանք 'ի

Մանչէսթըր, ուր Հոգեւոր Հովիւը կանխաւ գնացեր էր պէտք եղած կարգադրութիւնը ընելու համար: Ժամը 7ին հասանք. ընդառաջ եկած էին ազգայինք, 'ի գլուխ որոց Պագրճեան Տիար Մարքո. պատուականագոյն Հայը և գաղթականութեան ոգին: Առաջնորդուեցանք Միսլեմ Օթէլը: Երեկոյեան ընթրիքին մասնակցեցան տասնի չափ ազգայինք: Ժամը 11ին հրատեչտ առին և մենք ալ հանգստացանք:

4.— Կէսօրուայ ճաշէն յետոյ Տիար Մարքոն թէյի հրաւիրեց իր գիւղը, որ Մանչէսթրէն բաւական հեռու է: Սեպհական օթօմոպիլով երկար պտոյտէ մը յետոյ հասանք տունը՝ շրջապատուած պարտեզով, ճոխ և ակնապարար ծաղկաստանով և գալարիքով. մինչեւ ժամը 9 հաճոյական ու մտերմական ժամանց մ'ըրինք:

Տեարց Փորթուգալեանի և Եփրեմեանի համար Փարիզէն ժեն. Կուրոյին տրուած հեռագրին պատասխանը (9) Մանչէսթրի մէջ ստացուեցաւ:

5.— 'ի պատիւ Ն. Սրբութեան թէյասեղան տրուեցաւ. նեոկայ էր ընտրելագոյն երկսեռ բազմութիւն մը: Ծառեր արտասանուեցան և Ն. Սրբութիւնը ըսաւ.— Ազգ. զանազան պէտքերուն համար շատ տուած էք. շատ շնորհակալ եմ, հետեւաբար չեմ ըսեր թէ ի՞նչ պիտի տանիմ. այլ թէ ի՞նչ պիտի պատասխանեմ, երբ վերագարձիս հարցնեն, — Մանչէսթրի մեր եղբայրներէն ի՞նչ բերիր: Դիւրացուցէք տալիք պատասխանս: Անմիջապէս ստորագրութիւն բացուեցաւ և Տիար Մարքոն 500 Անգ. ոսկի ստորագրուեցաւ, և բոլոր ներկայները ըստ կամաց և ըստ կարողութեան իբրեւ պարտաւորութիւն չը զլացան: Երեկոյեան ընթրիքին Մարզուանցի Տիար Գամպէրեանը հրաւի-

րեց : Իր բարեկիրթ զաւակաց մաքուր հայերէն խօսելէն և երգելէն գոհ մնալով Ն. Սրբութիւնը՝ Մանչեսթրի մեջ Հայաստան անուանեց : Տիար Գամպէրեան, պատերազմի միջոցին իբրև ներկայացուցիչ Ազգին մեծ ծառայութիւններ մատուցած է :

6. — Ժողովուրդի փափաքանաց համաձայն պատարագեց և օրհնեց : Առաջին անգամ ըլլալով հայրապետական պատարագի արժանաւորիլը՝ շատ մխիթարուեցաւ ժողովուրդը : Տիար Մարքոն կէս աւուր ճաշին հրաւիրեց իր տունը, սեղանակից էր գաղթականութեան գործոն անդամներէն Տիար Արմենակ Քէհէեան, Պէյրութէն վաղածանօթ Ն. Սրբութեան : Թէյն ալ այն տեղ ընդունելով սիրալիր շնորհակալութեամբ մեկնեցանք :

7. — Երեկոյեան ընթրիքին հրաւիրուած էր Տիար Գնաճեանէ : Տիկին Գնաճեան, դուստր հանգուցեալ Յ. Նուրեանի, ճոխ սեղան մը պատրաստած էր. ամիսներով կարօտցած արեւելեան փիլիաւը ախորժանօք վայելեցինք :

8. — Լոնտրա վերադարձանք և ծանօթ Վաւիկըրըն օթէլը իջանք. երեկոյին բաւական ազգայինք բարի-գալուստի և ողջ-երթի եկան. որովհետեւ երկրորդ, կամ երրորդ օրը պիտի մեկնէինք : Ն. Սրբութիւնը օրհնեց թէ ներկայները և թէ՛ համայն գաղութը :

9. — Տիար Մալէզեան Գահիրէէն հեռագրած էր Ազգ. Տեղեկատու Պիւրոյին Ց ամսաթուով. - Այնթապի մէջ Ֆրանսացուց յաղթութիւնը սխալ է, Թուրքերը կացութեան տէրն են. Ֆրանսացիք Այնթապի Հայութիւնը կը տեղափոխեն : Առաջին կարաւանը 5000

հողի, որոց 1000ը որբ. գէպի Քիլիս ճամբայ ելած է :
Հաճընէն լուր չը կայ.— : Ն. Սրբութիւնը Թելադրեց
որ մէկ օրինակը Արտաքին Գործոց նախարարութեան
յանձնեն, օրինակ մ'ալ մեղ տուին Պօղոս Փաշային
տալու համար :

10.— Առաւօտեան ժամը 11ին մեկնեցանք Տուվ-
րը-Գալէի գծով և երեկոյեան ժամը 7ին Փարիզ հա-
սանք : Պակաժներուն մէջ իմ պակաժս կը պակսէր,
կորուստներու առաջինը չէր. անդ տեղ ակամայ մէկ
մէկ բան կը ձգէի : Բնաւ փնտուտութի չեղայ : Երեք
օր վերջը եկաւ զիս գտաւ : Թուրքիոյ և Եւրոպայի
տարբերութիւնը այս է, հոն կը գողնան, հոս կո-
րուստը ինքնին կու գայ :

Չորս օր առաջ նամակով մեր վերադարձը ծա-
նուցեր էինք Օթէլ Տէ-տէօ-Մոնտի Տնօրէնին, որպէս
զի Ն. Սրբութեան համար արարթըման մը պատրաս-
տէ : Օթէլ հասնելնուս պէս իմացուց, որ ըստ մեր
երկրորդ հեռագրին Յունիս 12ին կը սպասէին մեզ
եւ երկայն հեռագիր մը ցոյց տուաւ Պարսիկ իշխանի
մը կողմէ քաշուած : Ստորագրողի անունը Սահակ
անուան մօտ էր. այս նմանութիւնը պարտաւորեց
որ Տ. Պլտիկեանի հետ ուրիշ օթէլի մը մէջ զիշե-
րենք :

13.— Ն. Սրբութիւնը եկեղեցի գնաց եւ այս
բնաբանով քարոզեց.— Եկայք շինեացուք Ս. զխորա-
նըն լուսոյ, քանզի 'ի սմա ծագեաց մեզ լոյս 'ի Հայ-
աստան աշխարհի.— Հ. Հանրապետութիւնը Հայաս-
տանի լոյսը անուանեց եւ յորդորեց որ անկախութեան
խորանի շինութեան ատաղձ եւ լոյսը վառ պահելու

համար իւղ հասցնել ամեն Հայու պարտաւորութիւնն է :

Այս օրերուս Սան-Րէմօյի Արեւլ. խնդրոց կարգադրութեան դէմ Ֆրանսայի մէջ հոսանք մը առաջ եկած էր : Արդէն Թուրքերը նոր պայմանաժամեր ուզելով՝ իրենց մահաւճիւղը ստորագրելէ խուսափելու միջոց մը էր : Ֆրանսայի խմբակ մը Պաղեստինը և Մուսուլը անգլիական մանտային տակ դրուելուն շատ կը շահագրգռուէր : Թուրքերը ամեն օր Մուսուլի խնդրով կ'ըզբաղէին : Դաշտային կիլիկիան ալ Թուրքերուն Թողելէն շատ դժգոհ էին : Այս խմբակին պարագլուխն էր Պ. Պրիան, որ Արտաքին Գործոց Յանձնաժողովին անդամ էր և ամեն պատեհիւ թէ հրատարակութեամբ և թէ Երեսփոխանական բեմէն Սաքս-Փիքոյի համաձայնութիւնը կը պաշտպանէր : Բօմիքի Տիւնլիքս որ ազդեցիկ անդամներ ունէր, բողոք և յիշատագրեր կուտար կիլիկիոյ, Մուսուլի և Պաղեստինի մասին Ֆրանսայի զիջումներուն համար : Այս կացութենէն մենք ալ օգտուիլ ուզելով երկու յիշատագրեր, տեղեկութիւններ և նօթեր պատրաստելով ցրուեցինք բոլոր Երեսփոխաններուն, Մերակուտականներուն և Արեւելեան խնդրով հետաքրքրուող հոսանքներուն : Շատերէն շնորհակալեաց նամակներ ստացանք օգտուած ըլլալնին յայտնող : Ընդդիմադիրներու ձայնը այնքան զօրացաւ, որ կառավարութիւնը պարտաւորեցաւ երեսփոխանական Յանձնաժողով մը ղրկելու որոշում տալ՝ խնդիրը տեղւոյն վրայ ուսումնասիրելու :

20 .— Երեկոյեան ժամը 5ին նախկին նախարար Տընի-Քօչէն, մեծ Հայասէրը, այցելութեան եկաւ Ն. Սրբութեան : Խօսակցութեան նիւթը տիրող քաղաքա-

կանութիւնն էր : Չինադադարէն 'ի վեր Արեւելքի մէջ Ֆրանսայի դարաւոր ազդեցութեան կրած մեծ հարուածը վիշտ պատճառեց ծերունիին : Մանրամասն բացատրութիւն ուզեց Կիլիկիոյ վերջին դէպքերուն և ձեռք առնուելիք միջոցներու մասին : 1918ի համաձայնութիւնը իր Նախարարութեան ժամանակ կնքուած էր, զոր ակնարկելով ըսաւ .— Մենք այն ատեն Արեւելեան խնդիրը ուրիշ կերպով լուծած էինք .— : Նախարարապետը պիտի տեսնեմ և ձեզմէ առած տեղեկութեանց վրայ ուշադրութիւնը պիտի խնդրեմ : Ն . Սրբութիւնը փափաք յայտնեց Պ . Պրիանը տեսնելու : Տընի-Քօչէն խոստացաւ այդ տեսակցութիւնը կարգադրել կամ իր տունը հրաւիրելով Պ . Պրիանը և կամ ուղղակի Պ . Պրիանի տան մէջ :

Պ . Պրիան թէեւ կառավարութեան անդամ չէր բայց իրեն հետ տեսակցիլը բաւական դժուար էր : Նոյն իսկ Պ . Նիթթի, Իտալիոյ Նախարարապետը Փարիզ եկած միջոցին ուզած էր Պ . Պրիանի հետ տեսնուիլ, բայց որովհետեւ ինքը Նախարարապետ էր, ըստ փրօթոգոլի չէր կարող անոր ոտքը երթալ . միւս կողմէն Պ . Պրիան ալ չը գիշաւ Պ . Նիթթիի ոտքը երթալ, որով փափաքուած տեսակցութիւնը տեղի չունեցաւ : Ն . Սրբութիւնը՝ իր ժողովուրդին կեանքը ապահովելու համար այս երկար ուղեւորութիւնը յանձն առած էր, փրօթոգոլի նրբութիւնները նկատի առնելու պէտք չունէր, բաւական էր, որ յաջողէր իր նպատակին մէջ :

28 .— Այնթապի կաթ . փոխանորդ Արժ . Տ . Ներսէս Թաւուզճեան Յունիս 1 ամսաթիւ նամակաւ 'ի միջի զանազան տեղեկութեանց գանգատ կ'ընէր Ռօպէր-Տը-

քէի և Մուստաֆա Քէմալի միջև կնքուած քսանօրեայ զինադադարի այն պայմանին դէմ, որով Այնթապը թուրք իշխանութեան կը յանձնուէր: Այս նամակը Ֆրանսերէնի թարգմանելով մէկ մէկ օրինակ դաշնակից պետութեանց և կարեւոր անձնաւորութեանց զրկուեցաւ:

23. — Ն. Սրբութիւնը ժամը 11ին Ավրնիւ Գիւպիւր Պ. Պրիանի այցելելու ունկնդրութիւնը ընդունած էր: Ժամը 10ին Սորհրդարան գնացինք Երեսփոխան Քէսթէր-Լընայնի այցելելու, որ Հայերուն ծանօթ դէպք մըն էր Հայկական դատի պաշտպանութեամբ: Յարգալիր ընդունելութենէ ետքը խօսքը անմիջապէս Կիլիկիոյ կացութեան վրայ դարձաւ: Լընայն Հայաստանի խընդիրներուն և կացութեան տեղեակ կ'երեւէր: Կիլիկիոյ վրայ խօսելով ըսաւ. — Չեմ կարծեր որ Պրանսան առանց որոշ երաշխիքներ առնելու՝ մօտ օրէն թողու և քաշուի (երրորդ դամբանական Կիլիկիոյ) . թէև Գրանսան ծանր պարտաւորութիւններով ծանրաբեռնուած է: Ն. Սրբութիւնը Այնթապի Հայերուն վերջին կռիւներու մէջ ցոյց տուած քաջութիւնը և Հաճընցւոց կորովի ինքնապաշտպանութիւնը յիշելով աւելցուց. — Եթէ Հայկական կամաւոր գունդեր կազմուին վստահելի և ընդհանուրին համակրութեան արժանացած Հայ զինուորականի մը (Անդրանիկ) առաջնորդութեամբ և Գրանսական հրամանատարութեամբ՝ օգտակար և միանգամայն Գրանս . զինուորին կարեւոր աջակցութիւն մը կ'ըլլայ: Պ. Լընայն ըսաւ. — Թերևս կառավարութիւնը կը զգուշանայ առիթ չը տալու թուրքերուն նոր գրգռումի և ջարդի: Բաց 'ի այդ մեր առաջին փորձը լաւ արդիւնք չը տուաւ: Կիլի-

կիայէն վերադարձող զինուորականները Հայ զինուորին կարգապահութեան լաւ վկայութիւն չը բերին և կարծեմ վերջին դէպքերուն ալ անոնք քիչ մը առիթ տուին : Ն. Սրբութիւնը պատասխանեց .— Մասնաւոր դէպքերը ընդհանրացնելու չէ՛ , ամեն բանակի մէջ առաւել կամ պակաս անկարգապահներ կը գտնուին : Հայ զինուորը , որուն հայրը , մայրը , եղբայրներ և քոյրերը յոշոտուած են , արդար վրէժխնդրութեամբ լի զգացումի մեծ զոհողութիւնով իր պարտքը կատարեց : Հայ Լէգէոնական մը իր գունդով առաջին մուտքին յՌտանա՝ փողոցին մէջ յանակնկալս իր միամօր զաւկին կը հանդիպի , մինչդեռ կը կարծէ եղեր , որ բոլոր պարագայներուն հետ սպաննուած է : Կը լռեցնէ հայրական կարօտակէզ սէրը , առանց յուզման կը շարունակէ ճանապարհը և մեծաւորէն արտօնութիւն չառած չը գար փարելու իր հոգեհատոր զաւկին , ասկէց աւելի սրտաշարժ կարգապահութիւն կ'ըլլա՞յ : *

Եթէ Հայ Լէգէոնականք ակնկալուածին չափ օգտակար չեղան , պատճառը անկարգապահութիւնը չէր : Պաղեստինի ճակտին վրայ ոչ միայն կարգապահութեամբ , այլ աննման անձնուիրութեամբ ցոյց տուին կիրթ պատերազմիկի գերազանց յատկութիւնը . բայց կիլիկիոյ մէջ իր կազմակերպութեան նպատակին հակառակ՝ տարբեր նպատակի գործածուելը բնականաբար ապարդիւն պիտի ըլլար :

*) Խօսքի և խոստումի կարգապահութիւն .- Արդարութեան և ոճիրի միջև համաձայնութիւն չը կայ .- 'ի լուր աշխարհի պատգամող և թուրք պատուիրակութեան երեսին գոռացող Քլէմանսօն , ձեր վագրը , Ազգ . Պատուիրակութեան կողմէ անվնաս միջադէպէ մը նեղացած՝ արդարութիւն խնդրող Պօլոս Փաշան չընդունելով՝ երկիցս Ահմէտ Ռիզան կ'ընդունի ու կիլիկիան թուրքերուն թողուլ կը խոստանայ :

Ֆրանս . Կառավարութեան Բարձր Գումիսէր ժորժ-
Բիքօ , Ն . Սրբութեան քանիցս կրկնած էր , Հայ Լէ-
գէտնականք ապագայ Հայկական բանակին ողնասիւնը
պիտի ըլլան և իրենց գրաւած տեղերը Հայաստանի
պիտի միացուին .— Բայց զինադադարէն յետոյ
դաշնակիցներու անհամաձայնութիւնը այս խոստում-
ները մոռցուցին , ամեն բան նոր փոփոխութեանց
ենթարկուեցաւ , որով Ֆրանս . կառավարութիւնը
ինքզինքը հակասութեան մէջ դրաւ՝ Հայ Լէգէտնակա-
նով , տաճկական քաղաքականութիւն մշակելուն : Նպա-
տակս չէ Ֆրանսական քաղաքականութիւնը քննա-
դատել , այլ ըսել միայն , որ այդ նպատակին համար
Հայ զինուորի գործածութիւնը հակասութիւն էր . որով-
հետեւ Կիլիկիոյ մէջ Հայ զինուորի ներկայութիւնը
կը գրգռէր Թուրքերը և առիթ կ'ըլլար Թուրքաց յա-
նիրաւի ամբաստանութեանց , թէ Ֆրանսան Հայերու
ձեռքով խժոժութիւններ կը գործէ . մինչդեռ իրա-
պէս Հայերն էին , որ Թուրքերու խժոժութեանց զոհ
կ'ըլլային , ինչպէս Մարաշի 15,000 ողբացեալ նահա-
տակները :

Պ . Լընայն ուշադրութեամբ մտիկ ըրաւ և Կիլի-
կիոյ մասին ըրած հարցումներուն պատասխանները
լսեց : Ն . Սրբութիւնը Այնթապի նամակին մէկ օրի-
նակը յանձնեց և Պ . Լընայն խոստացաւ նախարարա-
պետը տեսնել և Երեսփոխանական Ժողովին մէջ խօ-
սիլ Կիլիկիոյ մասին : Այս խոստման վրայ շնոր-
հակալութեամբ հրաժեշտ առնելով մեկնեցանք :

Ըստ ժամագրութեան Ավրնիւ Գլեպէր Պ . Պրիանի
տունը գնացինք . անմիջապէս առաջնորդուեցանք աշ-
խատութեան սենեակը : Տունը աչքառու պարզու-

Թեամբ կահաւորուած էր : Ֆրանսայի պերճախօսութեան մեծ վարպետը և քաղաքական մեծ դէմքը յարգալիր մեծարանօք ընդունելով ըսաւ .— Ուրախ եմ Հայոց Կաթողիկոսը ընդունելու պատիւը վայելելու : Հազիւ նստած և զմեզ ներկայացուցեր էր Ն. Սրբութիւնը՝ Պ. Տընի-Քօշէն եկաւ : Ն. Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնելով՝ որ այս տեսակցութեամբ պատենութիւն տրուեցաւ իրեն մեծանուն Ֆրանսացի մը ճաննալու : Բացատրեց ուղեւորութեան և ուղղակի Ֆրանսայի դիմելու պատճառները , Կիլիկիոյ ճրգնաժամային վիճակը բոլոր մանրամասնութեամբ , անխտիր բոլոր Քրիստոնէից սպառնացող վտանգը և ըստ որոշման Սան-Րէմօյի՝ Ֆրանսայի Կիլիկիայէն քաշուելուն նիւթական և բարոյական մնասնելը : Այս ամենը պաշտպանելու համար Ձեր Վսեմութենէն կը խնդրեմ, որ պաշտպանէք Կիլիկիոյ դատը յօգուտ Ֆրանս. և հայկական շահերուն : Ֆրանսայի բարոյական և նիւթական շահերուն միակ ապահովութիւնն է , որ Կիլիկիան ամբողջութեամբ Ֆրանսայի մանտային ենթարկուի : Բոլոր ազգաբնակութիւնք վայելելով Ֆրանս. մեծ ազգի քաղաքակրթիչ ներկայութիւնը և հովանաւորութիւնը՝ դարերէ 'ի վեր երազուած բարօրութեան շրջան մը պիտի սկսի և քրիստոնայք իրենց ուշիմութեամբ և ընդունակութեամբ Արեւելքի մէջ Ֆրանսական պատիւը միշտ բարձր պիտի պահեն :

Ն. Սրբութեան այս պերճախօս պատճառարանութիւնները երկու մեծ Ֆրանսացիք խորին ուշադրութեամբ լսեցին , և մասնաւորապէս Պ. Պրիան յուզման և զայրոյթի նշաններ ցոյց կուտար .— Ես կառավա-

րութեան մէջ չեմ ըսաւ, բայց ձեռքէս եկածին չափ կ'աշխատիմ, որ Արեւ. խնդրոյն կարգադրութեան մէջ Ֆրանս. շահերը լաւ պահպանուին: Ես կնքեցի 1916ի համաձայնութիւնը, որուն համաձայն կիլիկեան լայն հողամաս մը Ֆրանսայի կը մնար: Այն ատեն Հայ Ներկայացուցիչները, որ Հայաստանի մէջ Ռուսիոյ մանտային չէին փափաքիր, ինձ ըսին — Որչափ կարելի է Հայաստանի մեծագոյն մասը Ֆրանսայի մանտայի տակ առնուի. ասոր համար մինչեւ Տիգրանակերտ և Սեբաստիա մեր գօտիին մէջ առի և այս հողամասերը Ֆրանսայի հովանաւորութեան տակ ինքնավարութեամբ պիտի կառավարուէին: Ես իմ քաղաքականութիւնս պաշտպանած կ'ըլլամ՝ կիլիկեան դատը պաշտպանելով: Արդէն շատ անգամ նախարարապետը հրաւիրեցինք բացատրութիւններ տալու. միշտ կ'առարկէ, որ կիլիկիան պաշտպանելու համար 100000 զինուոր պէտք է և թէ Մուսթաֆա Քէմալ շատ զօրաւոր է, այս պատճառաւ պէտք տեսանք կիլիկիան թուրքերուն թողուլ:

Պ. Պրիան ըսաւ. — Նախարարապետի առարկութեանց դէմ կրնա՞ք մեզ տարերքներ տալ: Պ. Պզտիկեան ալգաբնակութեան և տնտեսական Սթաթիստիք տուաւ, որուն վրայ Պ. Պրիան Տընի Քօչէնի դառնալով բացականչեց. — Այսպիսի հող մը կարելի՞ է ձեռքէ հանել: Արդէն մենք որոշեցինք, որ Ռորհրդարանը Յանձնախումբ մը ղրկէ՝ յառաջ քան վերջնական կարգադրութիւնը՝ տեղւոյն վրայ քննութիւններ կատարելու: Զարմանալի է, որոշումներ կուտան և ոչ ոք տեղեկութիւն ունի խնդրոյն կարեւորութեան վրայ:

Պ. Պրիան հարցուց Ն. Սրբութեան, կարելի՞ է

որ Խորհրդարանի Արտաքին Գործոց Յանձնաժողովին ներկայանաք և Կիլիկիոյ մասին տեղեկութիւններ տաք . որովհետեւ Ձեր Սրբութիւնը և Ձեր հետեւորդները աւելի հեղինակութիւն ունիք Կիլիկիոյ մասին խօսելու : Ն . Սրբութիւնը պատասխանեց - Շատ ուրախ պիտի ըլլամ , եթէ այդ միջոցաւ կարողանամ փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել Ֆրանսայի :

Դժբաղդարար փափաքուած ունկնդրութիւնը չը հաճեցաւ տալ Յանձնաժողովը :

Խոստացածս տեղեկագիրը Պ . Պրիանին ղրկեցի՝ Յունիս 25ին թէ՛ Պ . Պրիան և թէ՛ Լընայն իրենց խոստման համաձայն Երեսփ . Ժողովին մէջ Արտաքին Գործոց պիւտճէի վիճարանութեան առթիւ 'ի նպաստ Հայոց , 'ի մասնաւորի Կիլիկիոյ մասին ընդարձակ և պերճախօս ճառեր արտասանեցին և իրենց համակիրներու ջերմ շնորհակալեաց արժանացան :

Կէսօրին Պուլվար Տեզ Իթալիէնի վրայ Մարաշի տեղեկատու դիւանի պետ Պ . Հերնոնին պատահեցայ յանակնկալս : Հարազատ եղբայր մը տեսնելու չափ ուրախացայ զինքը առողջացած տեսնելով : Մարաշի մէջ շատ բարեկամ էինք և Հայերուն միշտ համակիր ցոյց կուտար զինքը : Նոյն իսկ միշտ կ'ըսէր . — Ես Հերմոն Խըրլագեան եմ . Որովհետեւ Խըրլագեան դերդաստանը բոլոր Ֆրանսացիներուն արքայավայել ընդունելութիւն կ'ընէր և դուռներնին միշտ բաց էր անոնց առջեւ : Պ . Հերնոն միշտ գաղափարակից էր մեզ և միակ փափաքն էր բանակէն վարչութեան անցնիլ : Թէ Պ . Անտրէն , Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչ , և թէ ես իր մասին նպաստաւոր տեղակագիրներ տուած էինք և կեդրոնը լաւ տրամադրուած էր

իր մասին : Մարաշի աղէտին ծանր կերպով վիրաւորուեցաւ : Ժեներալ Տիւֆիոյի և Գոլոնէլ Պրեմոնի բարեացակամութեամբ պատուոյ Լէգէոնի արժանացաւ :

Տեսութեանս առաջին վայրկեաններուն կարծեցի թէ Հայերուն համակիր, կամ Խըրլագեան Հերնոնն է, սակայն յուսախար եղայ. իբրեւ հին բարեկամներ, գոնէ իմ կողմանէ, կարօտանօք համբուրուեցանք : Պատմեց քաղաքականութեամբ զբաղուիլը, Գոնֆերանսներ տալը, և Պատերազմական Նախարարութեան մէջ պաշտօն ունենալը եւ անդամակցութիւնը Գօմիթէ Տիւֆիլիզսին : Այս ամենը պատմելէն ետքը յանկարծ ըսաւ. — Վահան, քեզի բան մը ըսե՞մ. մենք շատ սխալած ենք, պէտք էր ամեն գնով Թուրքերը սիրաշահէինք : Ապշահար երեսը կը նայէի. այս մարդը ամէն բանի տեղեակ էր և գիտէր, որ հակառակ Ֆրանս. Իշխանութեանց վեհանձնութեան և բարեկամական վերաբերմունքին՝ Թուրքերը միշտ թշնամական դիրք բռնեցին : Ֆրանսացւոց ժամանումէն օր մը վերջը վինուոր մը սպաննեցին. գիշեր մը նոյն իսկ իր վրայ կրակ ըրին և իր քովի Ալճերացի պահակը ատրճանակով սպաննեց չարագործը : Գոլոնէլ Սէնդ Մարիի Թուրք գպրոցականներուն ղրկած շաքարները ետ վերադարձուեցան նախատական բառերով : Այս ամենուն գիտակ Հերնոնը Թուրքերը սիրաշահած չըլլալնին սխալ կը համարէր, որովհետեւ իր մորթը ազատած էր Թրքական գնդակէն :

Ձիս առաջնորդեց Կրօմն փողոց Գօմիթէն, ներկայացուց հոն գտնուող անդամներուն և ընդհանուր Քարտուղարին : Քիչ յետոյ կիլիկիայէն նոր վերադար-

ձող Տեօրթեօլի կառավարիչ Պ. Սէժուռնէն և ուրիշ երկու սպայներ ալ եկան : Քօմիթէի անդամները շատ կը հետաքրքրուէին և ահագին աշխատանք կը թափէին՝ կիլիկիան իբրև Ֆրանսա . հող պահպանելու : Ինծի ալ հարցումներ ըրին և պէտք եղած պատասխանները տուի . Սպայներն ալ իրենց լաւագոյն տպաւորութիւնները պատմեցին և վերջին դէպքերէն Արեւելքի մէջ Ֆրանսայի Բրեսրիժին կրած մեծագոյն հարուածը մթագոյն կերպով պատկերացուցին : Պ. Սէժուռնէն ըսաւ . — Մեր բրէսթիժը վերջին դէպքերէն չը մնաստուեցաւ : Անգլ. լաւ սպառազինուած հսկայ բանակին առընթեր՝ մեր անբաւական և գէշ զինուած բանակին Արեւելք ոտք դրած օրէն Ֆրանսայի դարաւոր համբաւը իր հմայքը կորսնցուց . իսկ Սուրիա մեր Սպայներէն ոմանց ընտանեկան շրջանակի մէջ անպատշաճ եւ անքաղաքավար վարմունքը մեր համակիրներուն վրայ գէշ ազդեց եւ թշնամիներուն ձեռքը զէնք եղաւ հակաֆրանսական փրփուականաբար :

Մեր բարեկամ Հերնոն մեծ մարգարէի մը պէս կը խօսէր . — Մարաշի աղէտէն առաջ ամեն բան նախատեսած եւ միջոցներ թելադրած էի , բայց մտիկ ընող չեղաւ : Սակայն գոնէ ես գիտէի , որ Մարաշ եղած ատեն տարբեր լեզու եւ տարբեր միտք ունէր : Աւելի զարմացայ , երբ ըսաւ . — Ես գուշակեցի եւ Խալահիէ գալու ատեն Քօմանտան Մորպիոյին ըսի , պիտի տեսնէք , որ Հայերը մեր վերագարծը արգիլելու համար դիմումներ պիտի ընեն եւ մեր նահանջէն ճ օր ետքը այդպիսի հեռագիր մը եկաւ : *)

*) Տես կանխաբանին թիւ (1) :

Պ. Սէժուռնէն պատասխանեց. - Ես ալ հայերուն տեղն ըլլայի նոյնը պիտի ընէի. որովհետեւ մեր Մարաշ երթալէն առաջ հանգիստ էին. մենք գնացինք և 15 հազարէ աւելի զոհեր տուին :

Քօմիթէի անդամներէն ոմանք զէնքի ուժով եւ ոմանք քաղաքականութեամբ կիլիկիան պահելու կողմնակից էին. մէկն ալ ըսաւ. - Եթէ կառավարութիւնը մեծ գումարով մը գլխաւ Մուսթաֆա Քէմալին զրկէ, ըստ ամենայնի վստահ եմ, որ զայն կը սիրաշահիմ և կիլիկիան Պրանսայի համար կ'ապահովեմ. բայց ես այլևս կիլիկիա չեմ ըսեր, Փոքր Հայաստան կ'անուանեմ, որովհետեւ վերջին պատմական անունն է եւ աւելի ընդարձակ : Կը զարմանամ, որ հայկական կեդրոնները Թուրքաց կը թողուն և թրքաբնակ տեղերը մեզ կը ձգուին. ի՞նչպէս կարելի է Սիս, որ Փոքր Հայաստանի մայրաքաղաքն էր, Թուրքերուն թողուլ :

Ապա խալամական վտանգին վրայ խօսելով հետեւեալ կարճ պատմութիւնը ըրաւ. - Այս տարի քրննական պտոյտի համար Ալէքրիայի ներսերը ուղեւորեցայ : Տեղական առաջնորդ մը ունէի, յորմէ չէի յուսար, որ իր շրջանակէն դուրս բանի մը վրայ տեղեկութիւն կամ գաղափար ունենար : Օր մը հարցուց. - Պարոն, ստո՞յգ է որ Պոլիսը Սուլթանէն պիտի առնեն եւ մեր երկիրը անոր նուէր պիտի ընեն : Այս հարցումը գլխաւ շատ զարմացուց. Ափրիկէի խորերը տղէտ անապատցիի մը մէջ անգամ համխալամական գաղափարը տեղ բռնած էր : Հարցուցի - ո՞ր տեղէն լսած էք. - Ամբողջ երկրին մէջ կը խօսուի - եղաւ պատասխանը : Այդպիսի բան չը կայ ըսի - Նոյն լսկ եթէ Պոլիսը Սուլթանէն առնեն, Պրանսան պարտաւոր

չէ այս երկիրը : Սուլթանին նուիրելու : Ափրիկեցին տխուր դէմքով ըսաւ . - Այն ատեն անիրաւութիւն կ'ըլլայ և հետեւանքը գէշ :

Երկու օր վերջ մեծ գօնֆէրանս մը պիտի ըլլար , ներկայ ըլլալու համար հրաւիրուեցայ . բայց ուրիշ տեղ ժամադրուած ըլլալուս չընդունեցի : Երբ Ատանա հասայ , Գօլօնէլ Պրեմօնին պատմեցի Հերնոնին այլափոխութիւնը : Աշխարհի մէջ պակաս չեն այսպիսի մարդիկ ըսաւ . և իրեն յատուկ ժպիտով մը մօրուքը խառմշտկեց :

24. — Արտաքին Գործոց պաշտօնատուներ գնացինք . Պ . Պարժըթօն առաջնորդեց Գամերերի պաշտօնատեղին . սովորական տեսակցութենէ ետքը ըսաւ Ն . Սրբութիւնը . - Կիլիկիա դառնալու ժամանակը հասաւ . եկայ շնորհակալութիւն յայտնելու Ֆրանսական կառավարութեան տուած հաւաստիքներուն համար եւ կրկնելու թէ հայոց սէրն առ Ֆրանսա անկեղծ է եւ Արեւելքի մէջ միակ տարրն է , որ իր շահը Ֆրանսայի շահէն չի բաժներ եւ նախանձախնդիր է Ֆրանսա . պատուոյն : Կը հաւատանք եւ շնորհակալ ենք հայերու զգացումներէն , կարելին պիտի ընենք անպաշտպան չը թողլու : Շատ մը առարկութիւններէն ետքը հազիւ բերնէն փախցուց . - Առ այժմ Ատանայէն չը պիտի քաշուինք քաղաքական պոտճառներով . միակ յուսադրիչ խօսքն էր Պ . Գամերերի : Ն . Սրբութիւնը բաղձանք յայտնեց , որ Ֆրանսայի ներկայութիւնն 'ի Կիլիկիա տեւական ըլլայ . մասնաւոր նամակով Այնթապի նամակին թարգմանեալ մէկ օրինակը յանձնելով՝ հրատեչտ առինք :

Պօլսէն Թայլզին Յունիս 20 ամսաթուով հաղոր-

դած էին, Հայերը Ֆրանսայի աջակցութեամբ Ամանոսի մէջ Հանրապետութիւն հռչակած են ընդ Նախագահութեամբ Պ. Ռուբէնեանի. թան արտատպած էր Յունիս 24 և թիւ 21513, իսկ «Պալքանեան Մամուլ»ը աւելի մանրասն գրած էր: Ամանոսի վրայ գաղափար չունեցողները, նաև Պատուիրակութեան անդամներէն ոմանք ծայրայեղորէն խանդավառուած էին, բայց մենք թէ անտարբեր էինք և թէ կը ծիծաղէինք: Ամանոսի, նախնեաց Սեաւ Լեռանց կուրծքերուն և փէշերուն վրայ ցրցքնուած մի քանի աւաններ, գիւղեր և գիւղակներ կան, ինչպէս Տեօրթ-եօլ, Էօզէրլու, Էքպէզ, Պաղչէ, Հարունիյէ, Լափաճլը, Հասան-Պէյլի, Քէլլէր, Ինթիլի, Գզըլ-Աղաճ, Պէյլան, Օսմանիյէ և Իսլահիյէ, որոց մէջ միայն Տեօրթ-եօլ 1895ի և 1909ի Ատանայի Չարդին ինքնապաշտպանուեցաւ: Այս բոլոր աւաններուն, գիւղերուն և գիւղակներուն բնակչութիւնը տարագրութեան շրջանին կոտորակուած էին, մանաւանդ երիտասարդները և այր մարդիկ, հիմա հազիւ 10-12 հազարի կը հասնին՝ մեծ մասամբ պառաւներ և որբեր: Այսքան սակաւթիւ բնակչութեամբ Հասարակապետութեան հռչակումը լրջմտութեան արդիւնք չէր կարող ըլլալ: Արդէն Հասան-Պէյլիցիք Ֆրանսական ուժերուն հետ թօփրաք-Գալէ քաջուած էին, ոչ Հանրապետութիւն և ոչ Թագաւորութիւն երազած էին: Սուտը որ միշտ մնասակար է, աւելի աղէտալի կ'ըլլայ, երբ հնարողը առաջին հաւատացողն ըլլայ:

Այս որոշ և անկարելի բանին համար կ'առաջարկեն Ն. Սրբութեան, որ Արտաքին Գործոց պաշտօնատունէն հարցնէ և իրողութիւնը իմանայ. Ն.

Արքութիւնը զգուշացաւ այդպիսի սխալ քայլ առնելէ, որ բոլորովին օտար և երկրին անձանօթի մը գաղափարը տուած պիտի ըլլար: Սակայն Պատուիրակութիւնը, կամ խանդավառուողներէն, առանց համբերելու որ իրականութիւնը ինքնին պարզուէր, փափաքուած հարցումը ըրին և Արտաքին Գործոց Պաշտօնատուներ ապշութեան մատնեցին:

Ատանայի նորընտիր Ա.գգ. Միութեան կողմէ զըրկուած Սսեցի Պ. Գրիգոր Թեւլալեանը եկաւ Փարիզ: Բազմաթիւ ծանօթ և անձանօթ պատուիրակներուն վրայ մէկն ալ աւելցաւ: Փարիզ հասնելէն երկու օր վերջը

26.— Ն. Արքութեան ներկայանալով իրեն յանձնուած պաշտօնի մասին տեղեկութիւն տուաւ: Ուղղակի Պատուիրակութեան յանձնարարուած էր կիլիկիոյ կացութեան ամենավերջին տեղեկութիւնները տալու: Որոշ ծրագիրն էր պետական անձնաւորութեանց հետ տեսակցիլ և գոնֆերանսներով Ա.գգ. պատմութիւնը և գրականութիւնը Եւրոպացիներուն ճանչցնել: Հազար ոսկի ճանապարհածախսէն զատ Պատուիրակութեան մօտ ա լեքրը քր գրեթէ ունէր:

Պ. Թեւլալեանի պաշտօնը միշտ գաղտնիք մնաց մեզ համար. նոյն իսկ երբ Ատանա վերադարձանք, հարցուցինք Ա.գգ. Միութենէն և Տիար Մ. Տամատեանէն. առաջինը խուսափողական պատասխան տուաւ, իսկ երկրորդը իր կամքին հակառակ ըլլալը յայտարարեց: Կը յարգեմ Պ. Թեւլալեանը, բայց կը զարմանամ Ա.գգ. Միութեան նեղմտութեան վրայ: Որովհետեւ կիլիկիոյ բաղձանքները ներկայացնելու և կարելիութեան սահմանին մէջ իրաւունքներ պաշտպանելու համար

Ս. Կաթողիկոսէն աւելի հեղինակաւոր անձնաւորութիւն մը կարելի չէր ըլլալ և իրաւասու ալ չէր: Միւս կողմանէ Ա. տանայի ծանօթ Գերդաստանի մը պատկանող, Պ. Պզտիկեան, համալսարանական և վկայեալ իրաւագէտ, ամենուն վստահութեան արժանացած և Համագումարին անդամակցելու համար միաձայնութեամբ ընտրուած և մեզմէ առաջ Փարիզ հասած էր առանց ծախսի սակարկութիւն ըրած ըլլալու:

Այս պարագային Ազգ. Միութիւնը փափկանկատ ըլլալու էր, որով ազգին դրամն ալ խնայած կ'ըլլար: Շատ ալ զարմանալի չեմ գտներ, նկատելով որ մեր ազգայինճիւղերը, նոյն իսկ կուսակցականք այն մտայնութեամբ տարուած են, իբրև թէ Եւրոպայի մէջ մեր գործիչները հրաշքներ կը գործեն: Թերեւս այս պատճառաւ նորընտիր Ազգ. Միութիւնը իր կուսակցութենէն անդամ մը, Պ. Թելլալեանին, այդ պատիւը տուած էր, որ Պոլիս, Զմիւռնիոս բաւական մնալէ ետքը, աւելի քան մէկ ամիսէն Փարիզ հասաւ, որով իր բերած նոր տեղեկութիւնները հինցած և սխալ էին: Ըստ Թելլալեանի Հաճըն անձնատուր եղած էր, մինչդեռ վեց ամիս ետքը այդ եղերերգութիւնը տեղի ունեցաւ. Սիս պարպուած և Ամանոսի Հանրապետութիւնը հաստատուած էր, որ ինչպէս տեսանք բնաւ գոյութիւն ունեցած չէր:

Մարաշի ողբերգական նահանջը, ապա Այնթապի և Ռերֆայի շրջանին մէջ զօրասիւնով արշաւանք կատարող Գոլոնէլ Նորմանը նոր Փարիզ վերադարձած ըլլալով:

27. — Ն. Սրբութեան այցելութեան եկաւ: Թէեւ Կիլիկիոյ մէջ ինձի հակառակ էր և շատ անգամ անա-

խորժ դէպքեր պատահած էին մեր միջեւ և շնորհիւ Պ. Պրեմոնի և Ժեներալ Տիւֆիոյի արդարասիրութեան, հազիւ ազատած էի պատերազմական ատեանի յանձնուելու վտանգէն. երբ օթէլի սրահին մէջ առաջին անգամ իրարու հանդիպեցանք, շատ սիրալիր եղաւ տեսակցութիւննիս: Անցեալը բոլորովին մոռցուած էր: Գոլոնէլ Նորման, իբրեւ լաւ և քաջ զինուորական միշտ յարգելի եղած է. համոզումներուն մէջ հաստատամիտ, միայն երբեմն գէշ թելադրանքներէ կը տարուէր:

Գոլոնէլ Նորման տեղեկութիւններ տուաւ կիլիկիոյ և Սուրիոյ կացութեան մասին, և պատմեց Փարիզ գալէն 'ի վեր զինուորական և քաղաքական անձնաւորութեանց հետ ունեցած տեսակցութիւնները: - Կը վարմանամ ըսաւ, որ հոս թուրք ուժին մեծ կարեւորութիւն կուտան, մինչդեռ ես թէ կիլիկիոյ և թէ Սուրիոյ մէջ կատարած զինուորական գործողութեանց միջոցին որ եւ է լուրջ ընդդիմութեան չը հանդիպեցայ. - Թէյ կ'առնէինք, ձեռքի դանակը կարագին մխելով ըսաւ. - Ահա այսքան դիւրին է թուրքին յաղթել: Ինծի թրքասէր կ'ըսեն, եթէ պէտք տեսնէք Ատանայի մէջ թուրքաց հետ կռուելու ինծի լուր տուէք. - և. Սրբութիւնը պատասխանեց. մեր նպատակը չէ' թուրքին հետ կռուիլ, այլ երկրի խաղաղացումը և կեանքի ապահովութիւնը:

Գոլոնէլը հազորդեց մեզ քաղաքական շրջանակի մէջ տիրող մտայնութիւնը: Եթէ Ժեներալ Կուրօ Շէրիֆ Ֆէյսալի դէմ զինուորական յարձակողականի սկսէր՝ ուժերու պէտք պիտի տեսնուէր, թերեւս Ատանան և Տարսոնը պարպեն: Բայցինքը ըսած է - Մեր մեկ-

նումի պահուն Հայերը չեն ջարդուիր, բայց մեր վերադարձին անպատճառ կը ջարդուին: Այս պարագան ուշադրութեան առարկայ ընելու ջանքերը պատմեց:

Գողոնէլ Նորման Ատանայի կառավարչութենէն մեկնելուն առթիւ Ա.զգ. Միութիւնը թէյասեղանով պատուեց զինքը և այս առթիւ ճառով մը իր այցելած, մասնաւորապէս Այնթապի Հայերուն աշխատասիրութիւնը ներբողած էր: Այս մասին Ն. Սրբութիւնը շնորհակալութեան նամակ (10) մը ուղղած էր, որուն թարգմանութիւնը հրատարակուեցաւ «Տարոս»-ի 1919 Դեկտեմբեր 30 թուոյն մէջ:

Փարիզէն չը մեկնած որոշուած էր Ն. Սրբութեան ներկայութեան Համագումարի արտասովոր նիստ մը ընել, մասնաւորապէս Կիլիկիոյ խնդրոյն համար կարծիքներու փոխանակութեամբ քաղաքական վերջին փուլերուն համաձայն ուղղութիւն մը բռնելու նպատակաւ: Ժողովին կը նախադահէր Վսեմ. Նորատունկեանը և Պ. Չօպանեան 'ի բացակայութեան Պօղոս Փաշայի՝ Ա.զգ. Պատուիրակութեան տեղեկաբերի պաշտօնը կը կատարէր: Առանց որոշ գաղափարի ժողովականներէն շատերը կարծիքներ յայտնեցին. Վսեմ. Նորատունկեանը իր քաղաքական Օրիանքասիօնը յառաջ բերաւ առանց ըսելու, որ անպատճառ ընդունելի էր, միայն իրեն նման փորձ դիւանագէտի մը վայել առաջարկ էր: Միեւնոյն ատեն ժողովականները ընդունեցին, որ ընդհանուր քաղաքականութեան ուժեղ հոսանքին դէմ մեր համեստ ուժը և միջոցները անբաւական են՝ Ա.զգի բաղձանքներուն համեմատ վիճակ մը ստեղծելու: Ն. Սրբութիւնը նկատեց. - Ա.զգը իրական կամ անիրական շատ բան կ'ակնկալէ

Պատուիրակութենէն , որովհետեւ ամեն բան ընելու կարող կը կարծէ : Չը գիտեմ , ինչ բանէ ներշնչուած այս գաղափարը կազմած է , որ թէ՛ օգտակար և թէ՛ վնասակար է . օգտակար է որ միշտ լաւագոյնին կ'ակնկալէ , վնասակար՝ որ երկար յուսադրութենէն յետոյ իրական արդիւնք մը չը տեսնելով՝ կ'սկսին քանգատներն ու տրտունջները , տեղի և անտեղի խժժանքները և գործիչներու կամքի և կորովի տկարացումը : Պ . Զօպանեան յանուն պատուիրակութեան ըսաւ որ Պատուիրակութիւնը որոշ ուղղութիւն և հրահանգներ դրկած է իր ներկայացուցչին , բայց դժբախտաբար օրը օրին Պատուիրակութիւնը իրազեկ պահած չէ կիլիկիոյ իրադարձից :

28.— Գեր . Տ . Վռամշապուհ Ծ . Վրդպ.ը Ն . Սըրբութեան եւ Ամեն . Դուրեան Սրբազանին հրաւեր տուաւ պտոյտի մը 'ի Ահն Գլու . մոռցուած չէինք Հ . Պալքանեան , Պ . Պզտիկեան եւ Խա : Մտերմական և զուարճախառն ժամեր անցուցինք : Դուրեան Սրբազան իր բոլոր ընտիր յատկութիւններուն հետ հայրական եւ մտերմական վարուելակերպով կեանքի եւ անմեղ զրօսանքի գերազանց մարդը կը ներկայանայ : Սրբազանի լուրջ սրախօսութիւնները և Հ . Պալպեանի երբեմն յաջող և երբեմն անճրկող պատասխանները զուարճութեան նիւթեր էին : Զերմագին շնորհակալութիւն Հ . Վռամշապուհին , որ մռայլ և ցաւոտ օրերնուս մէջ զուարթ և անմոռանալի օր մը վայելելու պատեհութիւն ընծայեց :

Երեկոյեան Ն . Վսեմութիւն Պօղոս Փաշան այցելութեան եկաւ : Ն . Սրբութիւնը ցաւ յայտնեց Փաշայի հրաժարականի մասին . - Առողջական վիճակս

պարտաւորեց այս քայլն առնելու. ըստ ամենայնի գոհ եմ և շնորհակալ Համագումարի յայտնած վստահութենէն : Ն. Սրբութիւնը խնդրեց, որ ըսի-ըսաւնե-րու կարեւորութիւնն չը տայ, որոնք սեւ նախանձու արդիւնք են և հաճի շարունակել իր ազգանուէր պաշտօնը :

Ըստ ժուռնալի հրատարակութեան Ատանայի մէջ Հայերը թուրքերուն հետ կը կռուին, որպէս թէ Հայերէն ու թուրքերէն զատ գրաւող իշխանութիւնն չը կայ, երկու ցեղեր սանձարձակօրէն և ըստ կամս իրարու հետ կը չափուին :

29.— Մեծայարգ Տիարք Քէլէկեան և Ներսէսեան Սաները այցելութեան եկան : Ներսէսեան Սան Պարսկական նախկին Հիւպատոս և մեծահարուստ Հայ մ'է, Պրանսական շրջանակներու մէջ շատ ծանօթ և քաղաքական անձնաւորութեանց հետ մտերմական յարաբերութիւններ ունի : Պատերազմական Նախարարը իր բազմաթիւ բարեկամներէն մէկն է : Մեծ համբաւ հանած է յաճախ օտարներուն տուած իր ճօխ հացկերոյթներով :

Ներողութիւնն խնդրեց որ ճամբորդութեան պատճառաւ չէր կարողացիր ցարդ այցելութեան պարտքը կատարել և որ և է ծառայութիւն մատուցանել : Առատ գանգատներ ըրաւ, որ Պատուիրակութիւնը չէ ուզած օգտուիլ իր ազգեցութենէն և իր քաղաքական թելադրանքներուն հետեւիլ :

Ներսէսեան Սան հակառակ Քէլէկեան Սանի լաւատեսութեան՝ այն կարծիքն ունէր, որ Պրանսացիք մօտ օրէն կիլիկիան պիտի պարպեն : Երեկոյթի մը մէջ ըստ Ներսէսեան Սանի՝ Պատերազմական Նախարարը

խօսելով Ս. Կաթողիկոսի այցելութեան մասին, շատ գովեստով արտայայտուած էր իր վրայ թողած տպաւորութեան համար: Գոված էր նաև Պ. Սուպէսէրեանը իբրեւ լուրջ ու խելացի երիտասարդ: Այդ երեկոյթին մէջ իբրեւ Հայ հպարտութիւն զգացի Նախարարի գովեստներէն: Երանի՛ թէ Կիլիկիոյ Հայ կարօտներուն գովութեան և օրհնութեան ալ արժանանար նպաստի կարեւոր գումարով մը:

30. — Ճամբորդութեան պատրաստութեամբ անցուցինք: Վերջին անգամ Արտաքին Գործոց Պաշտօնատունը գնացի բոլոր պաշտօնեայներէն հրաժեշտ առնելու, մանաւանդ Տիար Նշան Գալըպճեանէն, որ միշտ պատրաստակամութիւն ցոյց տուած էր իր Պիւրոյին մէջ մեր կարգադրելիք գործերուն համար. հաղորդեցի նաև Ն. Սրբութեան ողջոյնն ու օրհնութիւնը:

Փարիզէն չը մեկնած Ն. Սրբութիւնը Պ. Նախարարապետին, որ Սփա կը գտնուէր շնորհակալութեան հեռագիր մը ուղղեց Ֆրանսական Կառավարութեան տուած դիւրութեանց և եղած պատուասիրութեանց համար:

Յ Ո Ւ Լ Ի Ս

1. — Երեկոյեան մեկնեցանք Փարիզէն. Ողջերթի եկած էին Վսեմ. Պօղոս Փաշան, Ֆրանս. Կառավարութեան կողմէ Պ. Գալըպճեան, Տիգրան Սան, Պատուիրակութեան անդամները, 2. Գրիգորիս Պալագեան և Գերապատիւ Վռամշապուհ Մ. Վարդապետը: Ն. Սրբութիւնը ամենէն հրաժեշտ առաւ, ամենուն

չնորհակալութիւն յայտնեց և օրհնեց : Ժամը 8,25ին
գնացքը շարժեցաւ և բազմաժխոր զիշեր մը անցու-
ցինք :

2.— Առաւօտեան ժամը 11ին ողջամբ Մարսիլիա
ժամանեցինք : Կայարան եկած էին Միութեան Ատե-
նապետ Տիար Սաաթճեանը և Պ. Քարտուղարը : Առաջ-
նորդուեցանք Սիլվանիս օթէլը, ուր հետզհետէ այցե-
լութեան եկան ազգայինք :

3.— Կէսօրէն յետոյ եկեղեցւոյ Հոգարարձու Տ.
Յ. Կարապետեան օթօմոպիլով Ն. Սրբութիւնը պտոյ-
տի տարաւ, Մարսիլիոյ նշանաւոր տեղերը, հրապա-
րակները և փողոցները տեսնելու պատեհութիւն
տալով :

Թէեւ Մարսիլիոյ Հայ գաղութը համեմատաբար
հին է և ունեցած կարող և գործունեայ հովիւներ,
բայց պէտք չէ զգացեր սեպհական եկեղեցի ունենա-
լու : Նաև ըսել պէտք է, որ Մարսիլիոյ գաղութը հա-
մեմատաբար միւս գաղութներուն հարուստ անդամներ
ունեցած չէ. եթէ աւելցնենք, որ կրօնական ոգիով ալ
աղքատ մնացեր է, շատ որոշ և պարզ կ'ըլլայ սեպ-
հական եկեղեցի ունենալու պէտքին պակասութիւնը :

4.— Ս. Պատարագին ներկայ գտնուեցաւ Ն.
Սրբութիւնը : Բաւական դժուար վերելքով ելանք
վարձուած փոքրիկ սենեակ մը, որ թէեւ եկեղեցւոյ
յարմարութիւն չունէր, բայց ձեւակերպեր էին.
որքան փոքր, այնու հանդերձ կիսով չափ դատարկ
էր. ապացոյց դատարկ հողիներու : Համառօտ քարոզ
մը խօսեցաւ այս բնաբանով. - Յազատութիւն կոչեցեալ
էք. եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինեցի-
'ի սլատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք մի

միանց : Մեր ազատութեան և անկախութեան հիմը դրուած է Հ. Հանրապետութեամբ , կը բաղձամ , որ այդ ազատութիւնը չըլլայ - 'ի պատճառս մարմնոյ .- Այսինքն անձնական փառքի և բարձի պատուանդան չըլլայ , այլ սիրով և համերաշխութեամբ իրարու և ազգին ծառայելու նուիրական պարտք մը : Սիրոյ վրայ չը հիմնուած ազատութիւնը շատ աւելի մնասակար է քան օտար իշխանութեան լուծը : Իցիւ ձայնս հասնէր ամեն Հայերուն կրկնելու Առաքեալին զգուշացուցիչ յորդորը : Ամեն օրէնք , ամեն պարտք և իրաւունք և ամեն ազատութիւն մէկ խօսքի մէջ ամփոփուած են .- Ընկերը անձին պէս սիրել .- Ապա եթէ զմիմիանս խածատիցէք , զգուշ լերուք , գուցէ 'ի միմիանց սատակիցիք .- : Եթէ սիրելու տեղ զիրար նախատենք , զիրար ամբաստանենք և իրարու միս ուտենք , ազատութիւնը կ'ըլլայ մեր գերեզմանը :

Պատարագէն յետոյ Տիար Մինրան Թէքէեան ճաշի հրաւիրեց : Քաղաքէն բաւական հեռու արուարձանի մը մէջ սեպհական տուն ունի , ծովահայեաց և շրջապատուած դալարազուարճ պարտէզով : Այս ջերմ հիւրասիրութիւնը զգացուց մեզ , որ տակաւ կը մօտենանք մեր բնիկ երկրին և Հայկական նահապետական սովորոյթին : Մինչեւ երեկոյ անձանձրոյթ ժամանակ անցուցինք : Տիար Թէքէեան այսքանով կարօտը չը լիացնելով՝ ամսի Յին ալ հրաւիրեց տեսակցելու և հին ու նոր յիշատակներ պրպտելու : Հայկական սկիհի ծածկոց մը անհարազատ ձեռքերով մինչեւ Լոնտրա ճամբորդած էր և 'ի վաճառ հանուած : Տ. Թէքէեան տեսնելով յիշատակարանին մէջ իր ազ-

գատտհմին անուը՝ պահանջուած գինը տալով առած
և իբրեւ նուիրական մասունք դարակի մը մէջ եւ
փականքի տակ խնամքով կը պահէ : Ն . Սրբութիւնը
փափաքեցաւ տեսնել եւ յիշատակարանը կարդալ :
«Յիշատակ է ծածկոցս այս թէքէեան մհի . Գէորգին եւս
նորին հանգուցեալ մհի . կողակից Մարիամին եւ որդ-
ւոցն մհի . Բարսեղին եւ մհի . Սիմաւոնին եւ մհի .
Գրիգորին եւ Պ . Յակոբին , որ ետ 'ի կեսարիայ 'ի
դուռն Ս . Աստուածածնին . Թուին Հայոց ՌՄԻԲ (1773) : »
Տիար Միհրան յիշատակագրի մհի . Գէորգին թոռան թոռն
կ'ըլլայ ըստ այսմ . Գէորգ - Բարսեղ - Մուրատ - Քերովբէ -
Միհրան : Ն . Սրբութիւնը յիշատակարանը կարդալէ յետոյ
աւելցուց . Ահա հրաշալի փաստը , որ կենդանի հաւատ-
քին նուէրը թէեւ գողցուի , թէեւ ծովեր եւ ցամաքներ
անցնի , բայց չը կորսուիր :

Պ . Թէքէեանի մասանց տուփին մէջ հին տպագ-
րութիւն մ'ալ տեսանք .- Գիրք վայելուչ եւ հարկաւոր
հանուրց Հայկազունեաց բարեսիրաց , յորում աղիւսակ
գրոց տարեկանաց :

«Պարզատոմար մշտնջենական համաձայնութեանց
ամսոցն Ազարիայ ընդ Յունաց : 'ի Հայրապետութեան
Տեառն Յակոբայ ամենից Հայոց կաթողիկոսի :

«Տպագրեալ 'ի գործարանում Սրբոյէջմիածնի եւ
Սրբոյն Ստեփանոսի զօրավարին 'ի Մարչէլիա , թուին
Քրիստոսի 1675 : »

5.— Տ . Յ . կարապետեան տարաւ զմեզ երեկոյին
Փասեալ ըսուած ճաշարանը եւ Մարսիլիոյ Պոյապէս
կերակուրով պատուասիրեց եւ թէյն ալ իր տանն առ-
նելու խնդրեց : Թէ՛ ինքը եւ թէ՛ Տիկինը չափազան-
ցօրէն գոհ մնացին , որ Ս . կաթողիկոսը հաճեցաւ

պատուել զիրենք : Մարտիրոս գաղութին մէջ Տ. Կարապետեանը երկրորդը եղաւ, որ հայկական հիւրասիրութիւնը իրրեւ պապենական աւանդ պահպանած էր :

7. — Ուղեկցութեամբ Ազգ. Միութեան Ատենապետին եւ այլ ազգայնոց Սեփեմա շոգենաւը գնացինք որ Մեսաժեի Մարտիրոս ընկերութեան քառյարկանի ճոխապէս զարդարուած և կատարելագործուած նաւն էր : Ֆրանս. Կառավարութիւնը երթուվերադարձին թէ՛ Ն. Սրբութեան և թէ ինձ Կապիկէ յատկացուցած էր : Նաւը լեցուն էր Սուրիոյ բարձր դասակարգի ընտանիքներով և Ֆրանսական բազմաթիւ սալայներով :

Պատուիրակութեան կողմէ կիլիկիա դրկուած կամ իբր օգնական Պ. Տամատեանի Տ. Գուրգէն Թահմազեանը կ'ընկերանար մեզ : Մանրաբարոյ, Փարիզի իրաւաբանական համալսարանի շրջանաւարտ, լուրջ հրապարակագիր մ'էր : 1914ին կամաւոր արձանագրուած ըլլալով Ֆրանս. բանակին՝ ձախ թեւը վտանգուած էր. վերջերը Ազգ. Պատուիրակութեան տեղեկատու Պիւրոյին անդամ էր. Օգոստոս 5 ախի հետեւանօք կիլիկիոյ ստացած կացութիւնը առիթ չը տուաւ գործնական կեանքի մէջ ինքզինքը ճանչցնել :

13. — Առաւօտուն կանուխ Ալեքսանրիոյ նաւահանգիստը մտանք : Առաջնորդ Գեր. Թորգոմ Ա. Եպիսկոպոսը քահանայի մը ընկերակցութեամբ կայարան եկաւ : Յետ քննութեան անցագրերու նաւէն ելանք և ուղղակի եկեղեցի առաջնորդուեցանք : Վերջապահ յարարողութենէն ետքը Առաջնորդարան ելանք : Հետզհետէ ազգայինք - բարի գալուստի - եկան և բաւական հանգիստէ վերջ օթէլ Սալօ գնացինք, ուր Ն. Սրբութիւնը հիւրն էր վսեմ. Արմենակ Պէյ Կամ-

տարականին : Կիլիկիացի ծանօթ բարեկամներէն Տիարք Մ . Գազազեանց և Մելքի Գըլըճեանը տեսայ : Վերջինը Ատանայի ջարդէն 'ի վեր տեսած չէի . շատ ուրախացայ , որ ուշիմութեամբ և անխոնջ աշխատութեամբ գոհացուցիչ դիրք մը շինած էր : Ն . Արքութիւնը ընկերակցութեամբ Գեր . Թորգոմ Արբազանի Կաթսարական Պէյին գնաց շնորհակալութիւն յայտնելու , որ Ազգ . գործերու մէջ միշտ առաջինն եղած է զուարթառատ նուիրատուութեամբ :

16 . Խռովեալ ծովով Փոքր-Սալիս հասանք բաւական կանուխ և մինչեւ երեկոյ մնացինք : Տ . Թահմազեանին հետ քաղաք ելանք : Ն . Արքութիւնը քարդ մը տուած էր Պ . Մասրաֆին , որ փութաց յայցելութիւն :

17 . — Եռամսեայ ուղեւորութենէ զկնի ողջամբ հասանք 'ի Պէյրութ առաւօտեան ժամը Տին , յետ քննութեան անցագրերու ցամաք ելանք : Ազգայինք ընդ առաջ եկած էին : Ս . Կաթողիկոսը ամենքն ալ օրհնութեամբ ողջունելով՝ Տ . Օ . Մազլումեանի հետ մեկնեցաւ օթէլ Րուսեալ , ուր հազիւ յաջողած էր սենեակ մը պատրաստել տալ . Տ . Թահմազեան Պարոնին հիւր եղաւ . ես ալ մեծ մօրեղբօրս , Հանի Փաշա Կիւլպէնկեանին հիւրն եղայ :

Կը յուսայինք Պէյրութի մէջ Կիլիկիոյ մասին որոշ և ստոյգ տեղեկութիւններ առնել , դժբաղդաբար նոյնքան անորոշ եւ պզտոր , որքան Եւրոպայի մէջ կըլսէինք :

Ն . Արքութիւնը Ազէքսանդրիայէն հեռագրով շնորհաւորած էր Ժենեւրալ Կուրոն Յուլիս 14ի Ազգ . Տօնին առթիւ , որուն պատասխանը տրուած էր Ազէքսանդրիա և զոր Գ'ըր . Թորգոմ Եպիսկոպոս Պէյրութ վերադարձուց :

18. — Ժեներալ Կուրօն ամբողջ սպայակոյտով Ալէյ տեղափոխուած էր . երեկոյին ուշ ատեն Գոլոնէլ Նիէճըր այցելութեան գալով հաղորդեց , որ Ն . Սրբութեան Աղեքսանդրիայէն տուած հեռագիրը այսօր ստացած էր Ժեներալը և յանձնարարած՝ որ գայ յանուն Նորին Վսեմութեան բարեւելու ողջամբ վերադարձը :

Ն . Սրբութիւնը խնդրեց Գոլոնէլէն իր յարգանքը մատուցանել Ժեներալին և միանգամայն ըսել որ անձամբ տեսնել կը փափաքիմ զինքը : Խոստացաւ թէլէֆօն ընել Ալէյ և պատասխանը հաղորդել :

22. — Այնթապէն եկած Ամերիկեան որբերուն այցելեց : Տնօրէնին տեղեկատուութեան համաձայն Սուրիոյ մէջ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը 1500 որբեր ունի : Շնորհակալութիւն յայտնեց և որբերը օրհնեց : Այնթապէն նոր փոխադրուած Ազգ . Որբանոցի որբերն ալ մասամբ հոն էին . մաս մ'ալ ձիւնիէ փոխադրուած էին , ուր պէտք եղած պատրաստութիւններէն յետոյ՝ մնացեալ հարիւր որբերն ալ պիտի փոխադրուէին :

Գոլոնէլ Նիէճըր իր սպան զրկած էր իմացնելու , որ վաղը կէսօրուայ ճաշին Ժեներալը Ն . Սրբութեան կը սպասէր :

23. — Հօ-Գոմիսէրութեան օթոմոպիլով Ն . Սրբութիւնը Գեր . Խաղ Մ . Վրդպ . ը և զիս առնելով՝ որոշեալ ժամուն Ալէյ գնաց :

Պէյրութէն Ալէյ միշտ վերելք է և ծովու հաւասարութենէն 2000 ոտքի չափ բարձր : Ա , Գրոցնկարագրութեամբ հմայուած մէկը Լիբանանի ընդհանրապէս լերկ ու անջրդի բարձունքները տեսնելով կը հիասթափուի : Տեղ տեղ նոր հասցուցած թթենիներ և մատաղատունկ մայրենիներ և ձիթենիներ , յարմար

տեղեր այգիներ Լիբանանի զարդն ու դալարիքը կը կազմեն, գոնէ Պէյրութէն 'ի Դամասկոս, կամ 'ի Հալէպ ճանապարհը այսպէս է: 'Ի զուր անցորդը աչքը չորս կողմը կը յածէ տեսնելու համար այն նշանաւոր և հսկայ մայրիները, սոսիները և թեղողները, որ Սողոմոն Տաճարի շինութեան համար Տիւրոսի Քիրամ Թագաւորէն կ'ընդունէր: Այցելողներ կը հաւաստին, որ այդ հնամենի ծառերէն կը գտնուին Թրիփօլիի բարձունքներուն վրայ:

Վաթսուն տարուայ կէս անկախութեան շնորհիւ շինուած խճուղիները նշանաւոր են. ամէն գիւղ ըլլայ խոր հովիտներու մէջ, կամ լեռանց կուրծքերուն և կատարներուն վրայ. իրարու կապուած են խճուղիներով: Երթեւեկը դիւրին և հաճոյալի է կառքով կամ օթօմոպիլով: Եկեղեցիներու և Հոգեւորականաց շատութիւնը՝ ժողովուրդը աղքատ պահած է. կարեւոր տեղերը և անտառները եկեղեցիներուն, կամ վանքերուն են: Աչքառու են գիւղական կանոնաւոր և խոշոր շէնքերը, որոնք յԱմերիկա վաստկուած տուարներով շինուած են. սակայն քառամեայ պատերազմի միջոցին արհեստական սովը 172000 լեռնականներու մահուան պատճառ ըլլալով՝ այդ շքեղ տուներու շատերէն ո՛չ ծուխի բարձրացումը և ո՛չ գիշերը ճրագի լոյս կը տեսնուի:

Գրեթէ մէկ ժամէն Ալէյ հասանք: Ժեներալի պաշտօնատեղին ամենաբարձր կատարի մը վրայ շրջապատուած է ակնապարար և ճոխ դալարիքով: Ընդունելութիւնը շատ պատուալիր եղաւ. ճաշի միջոցին խօսակցութիւնը ճամբորդութեան և Փարիզի գեղեցկութեան մասին էր: Ժեներալը հետաքրքրութեամբ կ'ու-

զէր հասկնալ Ն. Սրբութեան կրած տպաւորութիւնը իր
Հայրենիքի մասին: Երբ Ս. Կաթողիկոսը ըսաւ. - Փարիզ
այնքան մեծ է ճոխութեամբ, գեղարուեստով և քա-
ղաքակրթութեամբ, որ նոր այցելուն ինքզինք կը
մոռնայ, կամ կը կորսնցնէ. Ֆրանսացին ճանաչելու
համար Փարիզը տեսնելու է: Ժեներայը ըսաւ. - Փարիզ
աշխարհի մեծագոյն քաղաքը չ'է, բայց անոր մարդա-
սիրութեան ոգին և անձնութիւնը գերազանցող
չը կայ: Նոյն իսկ եթէ Ֆրանսայի միւս տարրեր քա-
ղաքները երթամ, տարբերութիւնը կը գգամ. հոգիս
իրեն պէտք եղած սնունդը չառներ. ես Փարիզցի եմ:
Ճաշէն վերջ խօսակցութիւնը աւելի լուրջ հանգամանք
տաւաւ: Ն. Սրբութիւնը նախ շնորհակալութիւն յայտ-
նեց ժեներային, որ շնորհիւ ըրած կարգադրութեան
և յանձնարարութեան հանգիստ ճամբորդութիւն ու
կեդր. Կառավարութիւնէն լաւ ընդունելութիւն գտաւ:
Պատմեց իր տեսակցութիւնները Նախագահին, Նա-
խարարապետին, Պատերազմական Նախարարին և
Արտաքին Գործոց զանազան պաշտօնէից հետ և
առած խոստումները: Ժեներայը Սան-Րէմոյի դաշնա-
գրութիւնը ակնարկելով հարցուց. - Ձեզի չի հաղորդե-
ցի՞ւ Կիլիկիոյ մասին եղած որոշ կարգադրութիւննե-
րը. - Էսած ենք եղած համաձայնութիւնը. որ
անգործադրելի է, որովհետեւ Թուրքերը չը պիտի
ընդունին և գործադրելու ոչ կամք և ոչ միջոց ունին:
Պ. Գամերեր հրաժեշտ առնելու միջոցին ըսաւ. - Կի-
լիկիոյ պարպումը յետաձգուած է. - Այս մասին տա-
կաւին որ եւ է հրաման չառի ըսաւ ժեներայը, չեմ
գիտեր թէ դաշնագրութիւնը պիտի գործադրուի թէ
ոչ, ըստ իս մեռեալ դաշնագրութիւն մըն է. իսկ
Անգարայի ըմբոստներուն դիրքն ալ անորոշ է. բայց

միշտ աչքի առաջ ունենալու ենք այդ դաշնագրի գործադրութեան հաւանականութիւնը : Ն . Սրբութիւնը ըսելով թէ այսպիսի կարգադրութիւն մը անկարելի է , որ կիլիկիցիք ընդունին , նկարագրեց պարպումի պարագային Քրիստոնէից դէմ ըլլալիք խժոժութիւնները և անտնտեսագիտութիւն համարեց կիլիկիայի նման քարերը և հարուստ երկրի մը լքումը : Ժեներալը կիլիկիան պարպելու մասին իր անհամաձայնութիւնը յայտնելով ըսաւ .- Այդ կարգադրութիւնը ընողը կառավարութիւնն է , որուն հրամանները , կամ հրահանգները գործադրելու պարտաւոր եմ : Դուք լաւ գիտէք որ մեծերը շատ կարեւորութիւն չեն տար իրենց ստորագասներու գաղափարներուն , մանաւանդ երբ հեռու ըլլան կեդրոնէն : Ս . կաթողիկոսը ըսաւ .- Ֆրանսա եղած միջոցիս ուրախութեամբ նկատեցի , որ Ձեր թելադրութիւնները մեծ կշիռ ունէին կեդր . կառավարութեան որոշումներուն վրայ : Ձիս շատ կը պատուէք , ըսաւ Ժեներալը . մեծ կարեւորութիւն կ'ընծայէք անձի . սակայն վստահ եղէք , որ մեր անձնական գաղափարները որ եւ է կարեւորութիւն չունին :

Սոսքը դարձաւ կիլիկիոյ զինուորական կացութեան : Ժեներալը հաւաստեց , որ մօտ օրէն կարելի պիտի ըլլայ պաշարումը վերցնել : Մեծ վստահութիւն ունիւմ Ա . զօրաբանակի հրամանատար Ժեներալ Տիւֆիոյի վրայ : Ն . Սրբութիւնը ցաւ յայտնեց իր աթոռանիստ քաղաքի , Սսոյ պարպումին համար և փափաք յայտնեց անմիջապէս կիլիկիա վերագառնալու : Ժեներալը յանձնարարեց մի քանի օր ալ Զահլէ անցնել և երբ Աստանայի շփոթ վիճակը պարզուի , ձեր վերագարձի ժամանակը կը հաղորդեմ :

Ժեներալը նպաստաւոր կերպով կ'արտայայտուէր
Կիլիկիոյ Հայ Կամաւորներուն Ֆրանս. բանակին գործակցութեան մասին, պայմանաւ որ կարգապահ ըլլան եւ վրեժխնդրութեան ու անձնական շահերու ետեւէ չըլլան: Ձեռնով եկող բենամիին զեռնով պատասխանելու խաղաղ բնակչութեան չը դպչիլ: Ժեներալի այս նպաստաւոր տրամադրութիւնը մեզ համար նորութիւն մ'էր, որովհետեւ գիտէինք թէ Պէյրութի Սպայակոյտը միշտ հակառակ էր հայկական կամաւոր - Սուլթանու կազմութեան: Այս փոփոխութիւնը կը պարտինք Ժեներալ Տիւֆիոյի և Գոլոնէլ Պրեմոնի ջանքերուն: Ժեներալ Կուրոյի այս նոր տրամադրութիւնը՝ Կիլիկիոյ ներքին անցուդարձերուն տեղեակ եղողները միայն կրնան գնահատել: Երանի թէ մեր գործիչները, որ կ'աշխատին անշուշտ մեզ համար նպաստաւոր դիրք մը ստեղծելու, կարենային օգտագործել այս գաղափարը:

Երկու օր առաջ Ժեներալը Շէրիֆ-Ֆէյսալի վերջնագիր մը տուած էր, թէ ըստ Սան-Րէմոյի համաձայնութեան Սուրիոյ Մանսան Թրանսայի տրուած է: Ն. Սրբութիւնը փափագ յայտնեց Դամասկոս այցելել: Ժեներալը պաղարեամբ և ինքնավստահ կերպով րուաւ. - Ձինուորներս Անտի-Լիբանան են. կը յուսամ թէ միքանի օրէն Սուրիոյ որ և է մէկ քաղաքը երթալ դիւրին պիտի ըլլայ: Նոյն հաւաստիքը տուաւ նաև Կիլիկիոյ մասին, քիչ ժամանակէն Կիլիկիա ալ պիտի խաղաղի:

Շէրիֆական Կառավարութիւնը Դամասկոսի և Հալէպի Հայութիւնը ջարդելու սպառնալիք ըրած էր, եթէ յարձակող Ֆրանս. ուժերուն մէջ Հայեր գտնուէին: Պէյրութի Ազգ. Միութեան խնդրանքին վրայ Ն. Սրբութիւնը հաղորդեց Ժեներալին այս ցաւալի պա-

րագայն, որոյ մասին հաւաստիքներ տուաւ, թէ Քրիստոնէից պաշտպանութեան համար ամեն միջոց ձեռք առնուած են և Սուրբոյ մէջ Հայ զինուորներ չը պիտի գործածուին :

Գիշերեցինք Ալէյ :

26. — Երկրորդ օրը Չահլէ երթալու համար Ժեներալը օթօմոպիլ մը տրամադրեց : Պարոնը ըստ իր խոստման Պէյրութէն եկաւ և միասին Համտուն գնացինք և գիշերեցինք : Երկրորդ օրը անվտանգ Չահլէ հասանք և Օթէլ Կասրիւն իջանք՝ վաղածանօթ Ն. Սրբութեան օրով հետեւ պատերազմի միջոցին, 1917ին ամսոյ մը չափ այդ օթէլի հիւրն եղած է Ճէմալ Փաշայի կարգադրութեամբ և կառավարական ծախսով :

Այս տեղ պարտք կը համարենք մի քանի տողով ծանօթացնել Տիար Օ. Մազլումեանը, որ առհասարակ Պարոն պատուանունով ծանօթ է : Հալէպի մէջ իր հարազատին, Պ. Արմէնի հետ անձնական և հռչակ հանած օթէլ ունենալով, և ազգ. գործերէ բնաւ չը խուսափելով՝ ծանօթ էին ոչ միայն մերայնոց և Հալէպի բազմաթիւ բնակչութեան, նաև Հալէպէն անցնող ամեն թուրք բարձրաստիճան պաշտօնէից և Եւրոպացի և Ամերիկացի ճամբորդներուն : Հասարակութիւնը երկու Հարազատները մեծ եւ փոքր Պարոն կը կոչէ : Տարագրութեան շրջանին եթէ Հալէպ Հայոց գերեզմանատունը եղաւ օրական երկու հարիւր մեռեալ ընդունելով իր ծոցը, Պարոններու օթէլը տղի ապաստանի եղաւ : Ով ցաւ և յոյս մը ունենար, հոն կը գիտէր և Պարոններէն մին կամ միւսը հնար եղած չափով ցաւերը կը մեղմէին և յոյսերը կ'իրականացնէին : Ի վերջոյ զո՛հ եղան իրենց անվերապահ բարեսիրու-

թեան և տոհմասիրութեան և հազիւ թուրք բարեկամներու, 'ի մասնաւորի Ճէմալ Փաշայի խորհրդով ինքզինքնին Չահլէ ձգեցին և ազաւեցան Տիգրանակերտի արիւնոտ ուխտագնացութենէն: 'ի Չահլէ իբրև տարագիր համակիրներու նոր շրջան մը ստեղծեցին. փախստական Հայերուն ըստ բնածին սովորութեան օգնութիւններ և ծառայութիւն ընելէ չը դադրեցան:

Ն. Արքութիւնը ժեներալի ընծայած դիւրութեամբ հեռագրեց Ատանայի Առաջնորդարանը՝ ողջամբ վերագարծն 'ի Պէյրութ և ընդհանուր ժողովուրդն օրհնելով՝ յանձնարարեց Առաջնորդին իր յարգանքը նուիրել ժեներալ Տիւֆլիոյի և Գոլտնէլ Պրեմոնին:

Չահլէ հասնելնուս երկրորդ օրը, ինչպէս ժեներալ Կուրօն վստահութեամբ ըսած էր՝ Ֆրանս. Բանակը ջախջախիչ հարուած մը տուաւ Շէրիֆ Ֆէյսալի նորակազմ բանակին, և Շէրիֆը փախուստով ազատեցաւ: Այս յաղթանակը ուրախացուց Ֆրանսայի բոլոր բարեկամները, և Արեւելքի մէջ Ֆրանսայի փրկարիժը բարձրացուց: Ն. Արքութիւնը շնորհաւորական գրով իր խնդակցութիւնը յայտնեց բարեմաղթութիւններով:

30.— Ն. Արքութիւնը մտադրած ըլլալով անպատճառ Կիլիկիա վերադառնալ՝ Ալէյ իջանք վերջին այցելութիւն մը տալու ժեներալին: Յաղթանակը կրկին շնորհաւորելով՝ մաղթեց, որ Կիլիկիոյ մէջ ալ նոյնպէս վճռական հարուած մը տրուի ըմբոստներուն, որով պարելի ըլլայ խաղաղ ժողովուրդին տնտեսական և երկրագործական աշխատութեան նուիրուիլ: ժեներալը շնորհակալութիւն յայտնելով ըսաւ. - Նոր ուժեր կը զրկեմ Կիլիկիա գրաւման գիծը լայնցնելու, կը յուսամ, որ մօտ օրէն ինչպէս Սուրիոյ, նոյնպէս Կիլիկիոյ որ քաղաքը ուզէք պիտի կրնաք երթալ: Այս

խօսակցութեան միջոցին թիկնապահներէն մին թուղթ մը բերաւ, զոր ժեներալը կարգալու համարներողութիւն խնդրեց. ապա խնդալով ըսաւ. - Բարեբաղդ զուգագիպութիւն, այս գրութիւնը շատ ուրախալի լուր մը կուտայ: Տարսոն քաղաքը որ պաշարուած էր և յուսահատ վիճակի մէջ՝ Ատանայէն օգնող զօրասիւն մը Եէնիճէի կողմերը զօրաւոր ընդդիմութեան մը հանդիպելով՝ թշնամիէն 250 դերի կ'առնէ եւ 400 է աւելի մեռեալ ձգել տալով կը յաջողի Տարսոնի պաշարումը վերցնել եւ պարկեմաւորել: Այս թուղթը իբրեւ յիշատակ ձեզ կուտամ:

Նորէն խօսք բացուեցաւ Սան-Րէմօյի համաձայնութեան եւ ընդհանուր քաղաքականութեան վրայ: Ժեներալը ըսաւ. - Պատերազմի միջոցին եւ գինադագարին սկիզբը մեծ Պետութիւնները ընդարձակ մեծ Հայաստան մը կազմելու տրամադիր երեւցան եւ այդ ուղղութեամբ թելադրանքներ եւ յոյսեր տուին, բայց դժբաղդատաբար այն տէրութիւնը, որուն վրայ յոյս դրուած էր Հայաստանի կազմութեան, օգնելու մասին՝ հիմա անոր զինուորները Ովկիանոսէն անդին կը գրտնուին: Անգլիան ուրիշ կողմեր դրադած է եւ անտարբեր կը կենայ. Ֆրանսան միակ մնաց այս ծրագիրը գործադրելու. բայց այն ալ իր բարեացակամութեան հակառակ՝ իրաց ներկայ կացութեան մէջ անկարող է Հայոց ամեն բաղձանքներուն գոհացում տալ: Լաւ գիտէք, որ այս ահուկի պատերազմին ծանրագոյն բեռը Ֆրանսայի ժողովուրդը կրեց: Մի՛ կարծէք սր մեր արդի ուղղութիւնը անբարեացակամութեան արդիւնք է: Պատերազմէն վերջ դժբաղդաբար իրերը այնպէս դասաւորուեցան, որ Ֆրանսան պարտաւոր-

ուեցաւ Համաձայնականաց ծանր կարգադրութիւնը
ընդունիլ: Այսու հանդերձ ամեն պարագայի մէջ
Ֆրանսան Հայերու իրաւունքները պիտի պաշտպանէ,
և Թուրքերը խելօքցած՝ ջարդ տեղի չը պիտի ունե-
նայ: Ըստ առաջնոյն պիտի ապրիք Թուրքաց հետ. չեմ
ըսեր, որ վարդապոյն վիճակ մ'է այս, չէ՛:

Ն. Սրբութիւնը ուրիշ առթիւ ըսածը կրկնեց, -
Մանաւանդ զինադադարէն՝ ի վեր ստեղծուած կադու-
թիւնը աւելի անհնարին դարձուց Հայուն համար Թուր-
քի լուծին տակ մնալ: Ես այն խորին համոզումը ու-
նիմ, որ կիլիկիոյ ժողովուրդը այսօր չէ վաղը պի-
տի վայելէ Ֆրանսայի պաշտպանութիւնը և անոր
հովանաւորութեան տակ անխտիր բոլոր ցեղերը պիտի
վայելեն արդարութեան և քաղաքակրթութեան բա-
րիքները: Ժ՛ններալը ըսաւ. - Ես ալ ձեզի չափ կը փա-
փաքիմ, բայց ինչ որ ըլլայ այդ երկրին նակասագիրը՝
ըլլայ Ֆրանսայի մանսային, կամ բուրժ վերիւսանութեան
եւ կամ նոյն իսկ Հայկական Կառավարութեան սակ, ևս
այն համոզումը ունիմ, որ Հայ եւ Թուրք վրեժխնդրու-
րիւնը աւելի անխտելու է դուրեցնել: Ես ժեներալ Տիւֆիոյի
տեղեկատուութեան վրայ ընդունեցի Հայ Կամաւորնե-
րու գործածութիւնը կիլիկիոյ մէջ, կ'ուզեմ որ Ֆրանս.
և հայկական արիւնը միասին հոսի (որպէս թէ Մա-
րաշի 15000 Հայերու արիւնը բաւական չէր), բայց
դժբաղդաբար Հայ Կամաւորները շատ անկարգապան կը
զսնուին և աւելի անձնական շահու և վրէժխնդրու-
թեան համար կ'ուզեն գործածել իրենց յանձնուած
Ֆրանս. զէնքերը և այս ուղղութեամբ փոխանակ օգ-
տակար ըլլալու, իմ զինուորներուն գործը կը դժուա-
րացնեն: Ձեր երկիրը շատ հարուստ է, այդ պատ-

ճառաւ ոչ դուք կ'ուզէք լքել և ոչ ալ թուրքերը, ուրիմն թուրքերուն հետ միշտ կ'ոխուով ապրելէն լաւագոյն է հաշտ ապրիլ:

Ն. Սրբութիւնը իր սովորական մեղմ և փափուկ եղանակաւ ժեներալին պատասխանելով մէկ տեղ՝ կիլիկիա վերադառնալու փափաքը կրկնեց: Ժեներալը յանձնարարեց մի քանի օր ալ սպասել, մինչեւ մօտ օրէն Ատանայի ճանապարհը բացուի: Սուրիոյ մէջ մեր յաջողութիւնը իր արձագանքը պիտի ունենայ: Հաճրնի կացութիւնը ժեներալի ուշադրութեան յանձնեց, որ թէև կ'ընդդիմանայ, բայց պաշարի մասին կը նեղուի:

Պէյրութ վերադառնալու համար ժամանակը ուշ էր, գիշերեցինք Օթէլ Պահար, ուր Լիբանանի հին և նոր հարուստները եկած՝ գիշեր ցերեկ թղթախաղով կ'անցնէին. հազարաւոր սօկիներ կամ կը կորսնցնէին և կամ ունեցածներուն վրայ կ'աւելցնէին. պարելով, երգելով և միլիոններով կը զբօսնուին անհոգ և աներկիւղ շնորհիւ վերջին յաղթութեամբ աւելի զօրացած Ֆրանսայի: Նախանձամբ խորհրդածութիւնը, զոր Զուլիցերիոյ բնական գեղեցկութիւնը ներշնչած էր, հոս վերակրկնուեցաւ մտքիս մէջ և սրտէս հառաչախառն պոռթկաց. - Բաղդազուրկ Հայ Ազգ:

31. — Առաւօտ կանուխ Պէյրութ իջանք և Օթէլ Պահար առաջնորդուեցանք, ուր Պարոնը կանխաւ յարկաբաժին մը պատրաստել տուած էր Ն. Սրբութեան համար: Բաղաքական յարափոփոխ կացութեան պատճառաւ Եւրոպայէն նպաստաւոր լուրեր չէին գար, ամենէն որոշ և ստոյգ լուրն էր, Սան-Րէմօյի դաշնագրերին, շատ մը կարեւոր փոփոխութեամբ Սէվրի մէջ,

Թուրք Պատուիրակութեան կողմէ ընդունուիլը :

Կիլիկիայէն ուղղակի և անուղղակի հասնող լուրերը այլակերպ, հակասական և չափազանցեալ էին : Տեղակալ Շիշմանեան 5000 հոգինոց լաւ կազմակերպեալ և զինուած խումբ մը ունի, Տարսոնի պաշարումը վերցնող զօրասիւնին յաջողութեան մէջ մեծ բաժին ունին Հայ Կամաւորները : Այս քաջալերական եւ յուսատու լուրերէն Պէյրութի Ազգ. շրջանակաց մէջ ոգեւորութիւնը մեծ էր : Բարեկամներէս մին, անունը տալ չեմ ուզեր .- Ժամանակն է կ'ըսէր, որ տ'Անունցիոյի պէս ընենք, մեր ուժերը համախմբենք եւ անկախութիւն հռչակենք : Իսկ մենք իբրեւ տեղեակ մեր իսկական ուժին եւ տրամադրութեանց՝ այս լուրերը նուազագոյն չափով կ'ընդունէինք :

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

8.— Այնթապի Ազգ. Որբանոցը, որ կը մատակարարուի Գահիրէի Որբախնամէն, և ամբողջովին ծիւնիէ փոխադրուիլ եւ տեղաւորուելէ ետքը՝ Ն. Արքութիւնը այցելեց եւ շատ գոհ մնաց տիրող մաքրութենէն, կարգապահութենէն և տարուած խնամքէն՝ շնորհիւ Տնօրէն Տ. Ազգարոս Ապրիլիկեանի :

10.— Ն. Արքութիւնը Մերսինէն իրազեկ մտերիմէ մը նամակ առաւ, որուն մէջ ներփակեալ էր Ատանայի ընդհանուր Բրիտանիոց կողմէն ֆրանս. կառավարութեան յանձնուած Օգոստոս 4ի յիշատակագիրը, որով Ֆրանսայի մանտայի տակ կիլիկեան անկախութիւն կը հռչակէին : Աւելի յուսադրական եւ քաջա-

լերական էր նամակի յաւելուածը թէ - Գոլոնէլ Պրէմոն
լաւ տրամադրութեամբ յիշատակագիրը ընդուներ և
անմիջապէս փոխանցեր է ժեներալ Կուրօյին : Կիլի-
կիոյ քաղաքական կացութիւնը շատ յոյս չէր ներշն-
չեր անկախութեան յայտարարութեան նպաստաւոր
վախճան մը ունենալուն . 1. որովհետեւ ընդհանուր
քաղաքականութիւնը նպաստաւոր չէր . 2. որովհետեւ
Կիլիկիոյ մէջ մեզի համար նպաստաւոր կացութիւն մը
ստեղծելու որ եւ է լուրջ աշխատանք տարուած չէր :

11. — Ն. Սրբութիւնը հեռագրով ունկնդրութիւն
խնդրեց ժեներալէն . 1. Յիշատակագրի բարեացակամ
ընդունելութեան համար Կիլիկիոյ ընդհանուր Գրխատո-
նէից շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը մա-
տուցանելու . 2. Որոչ և մանրամասն տեղեկութիւն
առնելու . 3. ժեներալի տրամադրութիւնը շօշափելու :
Ունկնդրութեան պատասխանը ուշացաւ :

14. — Ատանայէն հետզհետէ անախորժ և տար-
տամ լուրեր սկսան գալ : Լեւոն եղբօրմէս նամակ ա-
ռի , որուն մէջ մանրամասն տեղեկութիւն կուտար թէ՝
Տ. Տամատեանի կազմած Նախարարութիւնը՝ երկու
կամ երեք կառ. քերով կ'երթայ կը գրաւէ կառավա-
րութիւնը . մի քանի վայրկեան ետքը սուրիններով
դուրս կը հանուի . Քրանս . կառավարութեան հետ
յարաբերութիւնը խզուած է : Օր մը վերջը Տ. Սասու-
նի և Տեօքթօս Չաւուշեանը եկան Մերսինէն և մի-
լենոյն տեղեկութիւնները հաստատեցին :

16. — Ժեներալը նամակով կ'ըսէր - Չեմ ուզեր
մինչև Ալէյ ելնելու յոգնութիւն տալ ձեզ , ես 17ին ,
կէսօրէ վերջ Պէյրութ պիտի իջնեմ , կառավարական

Պալատին մէջ կը տեսնուինք :

17. — Որոշեալ ժամանակին կառավարական Պալատը գնացինք : Ժեներալը մէկ ժամէն աւելի ուշացաւ . գալուն պէս Ն . Սրբութիւնը ընդունեց և ներողութիւն խնդրեց ուշանալուն համար : Մեր վերջին տեսակցութենէն ետքը Ժեներալը յաղթական մուտք ըրած էր 'ի Դամասկոս , այս առթիւ շնորհաւորեց Ն . Սրբութիւնը : Իմ մուտքս շատ կարեւոր և դժուար չէր ըսաւ . դժուարը զօրքին մուտքն էր : Շատ գոհ մնացի Դամասկոսի այցելութենէս , ժողովուրդի և կառավարութեան կողմէ ջերմ ընդունելութիւն գտայ : Աւելի գոհունակութիւն պատճառող պարագայն այն եղաւ , որ 25 տարիէ 'ի վեր Դամասկոսի մէջ հաստատուած Ֆրանսացի Մայրապետներուն հիւանդանոցին այցելութենէս երբ դուրս ելայ , ժողովուրդը ջերմապէս ծափահարեց : Ինձ համար այս ապացոյց մ'էր , որ Ֆրանսայի և իր զաւակաց մարդասիրական ոգին և ջանքերը այս երկրի ժողովուրդի կողմէն պնահատուած էր :

Ոստակցութիւնը բուն խնդրոյն դառնալով՝ Ն . Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնեց , որ Օգոստոս 4ի յիշատակագիրը Ֆրանսա . Իշխանութիւնք յուսադրական բարեացակամութեամբ ընդունած են : Այնուհետև ինչ դարձաւ և ինչ վախճան ունեցաւ , չեմ գիտեր : Եթէ Ձեր վսեմութիւնը հաճի լուսաբանութիւններ շնորհել , երախտապարտ պիտի մնամ :

Ժեներալը պատասխանեց - Դժբաղդաբար լաւ լուրեր չունիմ Ձեր Սրբութեան տալու : Ժամանակէ մը ի վեր Ատանայի Հայոց գործերը վարող Պ . Տամատեանը ծայրայեղութենէ տարուելով՝ առանց

դառն իրականութիւնը նկատի առնելու երեւակայութեամբ կը գործէ : Սա ճշմարիտ է, որ կիլիկիոյ մէջ կռիւներուն այսքան սուր հանգամանք առնելուն գըլխաւոր պատճառը Հայ և Թուրք ատելութիւնն է : Հայերը մեր զինուորներուն օգնելու տեղ՝ անոնց գործը կը դժուարացնեն : Մեր զօրքը այս բանը տեսնելով չը պիտի ուզէ կռուիլ Հայերուն համար, որ իր կողմանէ զոհողութիւն չ'ուզիր ընել :

Յուլիս 24ին Տարսոնի պաշարումը վերցնելու համար Ատանայէն ելնող գոլոնին Հայերը խոստացան 1500 կռուող տրամադրել և սպայակոյտը ըստ այնմ ծրագիրը պատրաստեց . բայց մեկնելու պահուն 17 հոգի ներկայացան . կրնաք երեւակայել մեր զինուորներուն զայրոյթը : Այսպէս կռուելէ . կազմակերպուելէ և կարգապահութենէ խաւսափողներուն՝ Պ . Տամատեանի պէս վարիչներ կ'ելլեն կիլիկեան անկախութիւն կը հռչակեն Ֆրանսական մանտայի տակ և կը յայտարարեն, որ մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը պիտի պաշտպանեն : Բաց աստի, օգոստոս 5ին գրաւող Ֆրանս . Հրամանատարութեան առանց տեղեկութիւն տալու քանի մը անձինք կ'երթան կառավարութիւնը կը գրաւեն . բայց շնորհիւ Ժեներալ Տիւֆլոյի ձեռք առած խոհական միջոցներուն՝ առանց ծանր միջադէպի այս կատակերգութիւնը վերջացած է : Կը մտածեմ, եթէ մեր բանակը հոն չըլլար, ի՞նչ պիտի ըլլար խեղճ Ժողովուրդին վիճակը . գոհ եմ որ Ժողովուրդը լաւ վարմունք ունեցած է այս միջոցին :

Ժեներալի ծանր առարկութեանց պատասխանելու և Ատանայի ձախաւեր անցու դարձը պաշտպանելու համար Ն . Արբութեան դիրքը շատ փափուկ էր . որով-

հետեւ չէինք գիտեր իսկապէս Օգոստոս 5ի կատարուած իրողութեանց ազդակները . չէինք գիտեր խոստացուած 1500ին տեղ միայն 17 հոգի ներկայանալու պատճառը :

Ունկնդրութիւնը Օգոստոս 4ի յիշատակագրի առթիւ խնդրուած էր , եթէ ոչ , պէտք էր սպասէինք 4էն յետոյ պատահածներու մանրամասնութեանց : Ն . Սրբութիւնը ըսաւ .- Ձեր վսեմութիւնը վստահ թող ըլլայ , որ Հայերը ինչ որ ընեն և գործեն , Ֆրանսայի և անոր ներկայացուցիչներուն դէմ անհամակրութեան և անհաւատարմութեան ամենամեծն ընող մը ոչ կ'ընեն և ոչ մտքէ կ'անցնեն : Նոյն իսկ ծայրայեղ կարծուած կամ քիչ մը չափազանցօրէն որակուածներն անգամ ամեն յոյս Ֆրանս . պաշտպանութեան վրայ դրած են . կը կրկնեմ և կը խնդրեմ , որ այս մասին վստահ ըլլաք : Ես և ինծի հետ ազգիս Ղեկավարները հակառակ են թուրքերուն դէմ վրէժխնդրական արարքներու . բայց նաև անխուսափելի է , որ խառնաշփոթ կացութենէ օգտուիլ ուղղուելու գտնուին , իբրև սովորական և բնական երևույթ ամեն տեղւոյ և ազգի համար : Ընդհանրապէս Հայերը կը ջանան կարելիութեան սահմանի մէջ օժանդակ հանդիսանալ Ֆրանս . քաջարի գինուորին : Այս մասին թէ Ձեր վսեմութեան և թէ կեդրոնական Իշխանութեան առաջարկներ ըրած եմ : Ձեմ գիտեր թէ ինչո՞ւ խոստացուած ուժը չէ տրամադրուած , միայն կ'ենթադրեմ , գինուորական կարգապահութիւն և կազմակերպութիւն չունենալով՝ թերևս նշանակուած կարճ պայմանաժամին չեն կարողացեր 1500 կամաւորներ մէկտեղել : Գալով Օգոստ . 5ի կառավարութիւնը գրաւելու խակութեան , ես ալ Ձեր

Վսեմութեան հետ կ'ըսեմ, որ եղածը կամ մ'է : Ժողովուրդի անտարբեր և լաւ վարման պէս Հոգեւոր Պետերուն վրայ ալ վստահութիւնս զօրաւոր է : Ժեներալը անմիջապէս յարակցեց . Ասլանեան վարդապետն ալ ծայրայեղներէն կը տարուի - : Բոլորովին նոր ու զարմանալի էր այս յայտարարութիւնը . մինչդեռ ոմանց կողմէ կը քննադատուէր Ասլանեանի Ֆրանսացւոց կատարեալ վստահութեան արժանացած ըլլալը, ինչպէս վերջը Ժեներալ Տիւֆիոնն ալ հաստատեց բարւոք վկայութեամբ :

Ն. Սրբութիւնը ըսաւ, եթէ կիլիկիա երթալու հնարաւորութիւն ըլլար, ամեն բան տեղւոյն վրայ ստուգելով՝ ըստայնմ հարկ եղած յորդորները կուտայի : Պարաթաշի ճանապարհը նոր բացուած էր, Ժեներալը յարմար չը դատեց մտադրուած ճամբորդութիւնը : Եթէ հաւանիք ըսաւ Ն. Սրբութիւնը, Պ. Սուպէսէրեանը զրկեմ, որ թէ պէտք եղած թղթերը տանի և թէ այնտեղէն որոշ տեղեկութիւններ բերէ : Ժեներալը հաւանեցաւ եւ ըսաւ .- Երթալու օրը կ'իմացնեմ, որովհետեւ Պարաթաշ միայն զինուորական նաւեր կ'երթեւեկէին : Վահանի վերադարձին կրկին տեսնելու խոստումով մեկնեցանք :

Ն. Սրբութիւնը պէտք եղած գրութիւնները (10, 11, 12, 13) պատրաստեց ուղեւալ թէ Պրանս . Իշխանութեանց եւ թէ մերայնոց :

22.— Պ. Ահարոնեան Փարիզէն կը հեռագրէր Ն. Սրբութեան՝ Թրքական հաշտութեան դաշնագիրը ստորագրուած է . Հ. Հանրապետութեան կողմէ մենք ալ ստորագրեցինք : Այս պարագայն իբրև նշան Հանրապետութեան ճանաչման Ն. Սրբութիւնը հեռագրով (14) շնորհաւորեց :

Ատանայէն իբրև պատուիրակ եկան Տեառք Միհրան Պոյաճեան և Տեօք. Գրիգորեան, Պէյրութի Ազգ. Միութեան ուղղեալ Պ. Տամատեանի յանձնարարագրերով, որպէս զի Միութիւնը ազգու միջամտութեամբ կարողանայ Հօ-Քօմիսէրին ներկայացնել, բացատրելու համար, որ Օգոստոս 5ի աքթը, թէև սխալ, Թրանսան դժուարութեան մէջ ձգելու նպատակաւ չէր, այլ միայն տեղի չը թողլու Թրքական իշխանութեան վերադարձին: Ն. Արքութեան ալ եկան, որ Ժեներալին ներկայանալու օգնէ: - Ժողովուրդիս կեանքը փրկելու համար պէտք եղածը ըրած եմ և պիտի ընեմ ըսաւ Ն. Արքութիւնը առանց Ձեր գալուն և գիտութեան, Ժեներալին հետ վերջին խօսքերն իս եղաւ, վերստին տեսնուիլ յետ Պ. Սուպէսէրեանի վերադարձին:

23. Ժեներալի Սպայներէն մին եկաւ հաղորդելու, որ պատրաստ ըլլամ 25ին մեկնելու Իրանիս գինուորական նաւով: Նաևուն համար պէտք եղած թղթերը, և Ժեներալ Տիւֆիոյի ուղեալ թղթածրար մը յանձնելով մեկնեցաւ:

25.— Առաւօտուն կանուխ նաւ իջամք, որ շատ անմաքուր էր և լեցուն Սենեկալցի գինուորներով: Ազգ. Պատուիրակութեան կողմէ Ատանայի հիւանդանոցին իբրև բժշկապետ զրկուած Տեօք. Չաւուշեանը ուղեկից էր Իսկէնտէրուն ելնելու համար: Հինգ օրէն հասանք Գարաթաշ: Առաջին անգամն էր որ կը տեսնէի կիլիկեան այս փոքրիկ նաւահանգիստը, ուր ոգևորութիւնը մեծ էր, որովհետև ամիսներով պաշարուած Ատանացիները իբրև բանտէ ազատած հոս խուժած էին:

Բարեկամներէս Գափիթէն Գութէ ֆինանսի նախ-

կին Տնօրէն , Գարաթաշի գաւառին զինուորական կառավարիչ կարգուած էր . սիրալիր ընդունելութեամբ հիւրասիրեց զիս : Ծնողքէն , քրօջմէն և քեռայր Տեօք . Սէթեանէն նոր լուրեր տուի : Փարիզ եղած միջոցիս Տեօքթօսի հրաւիրանօք գիշեր մը իրենց մնացած էի :

31 . — Կէսօրէն վերջ օթօմոպիլով մեկնեցայ և երեկոյին ուշ ատեն Ատանա հասայ : Ն . Սրբութեան Առաջնորդին ուղեալ նամակք և ժողովուրդին ուղեալ կոնդակը Գեր . Ասլանեան Վարդապետին յանձնեցի պէտք եղած տեղեկութիւններով : Այնուհետեւ ժեներալ Տիւֆիոյի , Գօլոնէլ Պրէմօնի և Պ . Տամատեանի նամակները յանձնեցի հետզհետէ :

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1 . — Պ . Տամատեանը առաջին անգամը չէր , որ կը տեսնէի , իր Կիլիկիա ժամանումին առթիւ անգամ մը Օսմանիայէն եկայ իրեն այցելելու և անկարեւոր ու անձնական խնդրոյ մը համար , որուն Ա.զգ . գոյն տուած էին , խնդրելու որ էապէս անկարեւոր խնդիրներով չը զբաղին Ա.զգ . շրջանակները և Ֆրանս . կառավարութեան հետ ձկտում յառաջ չը բերեն : Լրջութեամբ խորհողի և լաւ խօսողի տպաւորութիւնը ըրաւ վրաս և շատ ուրախ եղայ , որ այսպիսի անձնաւորութիւն մը կանչուած էր Ա.զգ . քաղաքական գործերը ղեկավարելու , որովհետեւ անկէ առաջ ղեկավարողները թէեւ բարեացակամ , բոլորովին անփորձ , իրականութեան անտեղեակ և յաճախ պարագայներէ ազդուելով ծայրայեղութեան կը մղուէին . որով Ֆրանս . Իշխանութեանց վստահութիւն չէին ներշնչեր :

Պ . Տամատեանի և Տեօք . Ղազարոսեանի բժշկա-

կան առաքելութեան ժամանու՛մը նոր շրջան մը բացաւ Ֆրանքո-Հայկական յարաբերութեանց համար, որ դժբաղդաբար երկար չը տեւեց: Պ. Տամատեանին խոնարհաբար թելադրեցի, միշտ Ա.տանայի մէջ չը մնալ, երբեմն պտոյտներ ընել կիլիկիոյ զանազան մասերուն մէջ, ծանօթանալ երկրին և ժողովուրդի հոգեբանութեան և տրամադրութեանց ու պէտքերուն: Այս խոնարհ թելադրանքս անհետեւանք մնաց, ամեն գիւղի և գիւղակի մէջ ինքնաբոյս Միութիւններ կազմուեցան, որոնք գլխաւոր ազդակները եղան Ազգ. գործերը ղեկավարելու: Առաջին տեսակցութենէս յետոյ թէեւ մի քանի անգամ ալ տեսնուեցայ, բայց յաճախ տեսնելու պատահութիւն չէի՝ ունենար պաշտօնատեղւոյս հեռաւորութեան պատճառաւ. այնուամենայնիւ հեռուէ հեռու միշտ կը հետեւէի կատարուած գործութեանց և ցաւելով կը տեսնէի գործերուն տակաւ նսեմանայը, որովհետեւ Ղեկավարները կ'առաջնորդուէին ամբոխավարներէ:

Պ. Տամատեանը ըստ առաջնոյն զուարթ էր և վերջին դէպքերէն բնաւ ազդուած չէր: Ն. Սրբութեան նամակը կարդալով՝ եղած ակնարկութեան թէ-Իբր Պատուիրակութեան ներկայացուցիչ պէտք չէր պարագլուխ ըլլալ Օգոստոս 5ի պետական հարուածին - Ես իբր պարզ Տամատեան մասնակցած եմ և կը սնդէր, Օգոստոս 5ի աքթը իբր նուիրագործումն ազգ. պատուոյ և դատի, ամէն Հայ, Կաթողիկոս և Պատուիրակութիւն պէտք է պաշտպանէին, նոյն իսկ եթէ ժողովուրդէն հազարաւորներու կեանքը և պատիւը զոհուէր: Այս ծայրայեղութիւնը չենք տար դիւանագէտ Տամատեանին, այլ յեղափոխական Տամատեանին: Մեր քա-

զաքական գործիչները մեծաւ մասամբ Համիտեան
րէժիմի սարսափներուն ծնունդ յեղափոխականներ են ,
որ ազատութեան իտէալով ներշնչուած՝ կարեւոր ծա-
ռայութիւններ ըրած են նուիրումով , բողոքներով և
փրոփականտով և ուժի վրայ հիմնուած քաղաքակա-
նութեամբ զբաղած չլլալով՝ զինադադարէն յետոյ իբր
պետական ազգ մեր իրաւունքները պաշտպանելու
ծանրագոյն գործը թողելու էին քաղաքական բարդ և
բազմակնճիռն նրբութեանց հմուտ և ձեռնհաս անձ-
նաւորութեանց : Տամատեան իր փարթիին ամենէն
լուրջ և թափանցող միտքն էր . կարող էր աւելի օգ-
տակար ըլլալ , եթէ պաշտօնին և անձնական կորովա-
մտութեանը վրայ հաստատ և անյողդողդ մնար :

2 .— Ժամը 11ին հակակշռի ընդհանուր վարիչ
Գօլոնէլ Պրեմոնին երթալով՝ Ն . Սրբութեան նամակը
յանձնեցի : Գօլոնէլը հիւանդութենէ նոր ելած յոգնած
վիճակ մը ունէր : Ձիս տեսնելով շատ ուրախացաւ .
հետաքրքրութեամբ լսեց տուած տեղեկութիւններս :
Մանաւանդ ուրախացաւ Պ . Գամերերի յայտարարու-
թեան վրայ թէ . - Կիլիկիան պարպելու որոշումը յետա-
ձգուած է- այսու կը զօրանար Կիլիկիան պահելու իր մղած
պայքարը : Դառնապէս գանգատեցաւ , որ Ղեկավարներու
չըջանը իր վրայ վստահութիւն չունի և անխոհեմ ա-
րարքներով՝ հայերուն նպաստաւոր կացութիւն մը
ստեղծելու ջանքերս կ'ամլացնեն և զիս գէշ դրութեան
մը կ'ենթարկեն : Կէս օրէն վերջ ժամը 5ին միասին
ժեներալին երթալու պայմանով մեկնեցանք :

ժեներալը ժամը 5ին ընդունեց մեզ . ներկայ էր
և Սպայակոյտի պետը : Յանձնեցի Ն . Սրբութեան նա-
մակը . 'ի Պէյրութ ժեներալի կողմէ մեզ յանձնուած

Թղթածրարը վերջին պահուն ևստանա մեկնող օդանա-
ւով ղրկեցին, յորմէ իմ ժամանումիս տեղեակ էր:
Եւրոպայի, ՚ի մասնաւորի Փարիզի մէջ տեսածներս և
յսածներս պատմեցի, զոր հետաքրքրութեամբ լսեց:
Պէյրուսի մէջ Ն. Սրբութեան Ժեներալ Կուրօի հետ
տեսնուած միջոցին՝ Ժեներալի յայտարարութեան վը-
րայ թէ - Նոր ուժեր պիտի ղրկեմ - քիժիժաղով ըսաւ -
Տակաւին նոր բան մը չը տեսանք:

Վերջին գէպքերը Ժեներալ Տիւֆլոյ իրեն յատուկ
փափկութեամբ և բարեացակամութեամբ կը գատէր,
միայն կը գանգատէր, որ լրջութենէ գուրկ էր վեր-
ջին ծայրայեղութիւնը: 1500 կամաւորներու խոստումը
հարեանցիօրէն ակնարկելով ըսաւ. - Նայեցէք, մեր
ներկայ զինուորական ուժը՝ Հաճըն օգնութեան ղրկելու
անբաւական է և Պօզանդիի մէջ գերի լինած Ֆրանսի-
զօրքը չը կարողացանք ազատել:

Հայերը առաջարկեցին, որ իրենք Հաճնոյ ա-
զատութեան համար 2000 հոգինոց խումբ մը պիտի
կազմեն. դո՛հ եղայ և աջակցութիւն խոստացայ, բայց
առաջ ուղեցի հասկնայ իրենց կազմակերպութեան
եղանակը: Հարցուցի - Ո՞վ պիտի հրահայէ այս խում-
բին. - Դեռ պիտի որոշենք պատասխանեցին: - Ի՞նչ է
ձեր կազմակերպութեան ծրագիրը. - Այն ալ վերջէն
կը պատրաստենք ըսին: - Այս 2000 հոգիները պա-
րենաւորելու համար ի՞նչ միջոցներ խորհած էք և կամ
երազիի ի՞նչ կազմակերպութիւններ ունիք. - Առ այժմ
չունինք և այդ բաները տեղւոյն վրայ կը կարգադ-
րուին: Տեսնելով որ արշաւախումբին կազմութիւնը
օրինաւոր հիմերու վրայ դրուած չէ, իբրև զինուո-
րական չէի կարող որ և է աջակցութիւն ընել: Այժմ

Թէեւ կը շարունակեն այդ գործը, բայց չեմ յուսար
թէ յաջողին: Որովհետեւ կուսակցականները չեն հա-
մաձայնած Հրամանատարի մը մասին և մինչեւ հիմա
հազիւ մի քանի հարիւր հոգի արձանագրուած են:
Փեներալը ճաշասրահ հրաւիրելով պատուասիրեց զմեզ
ըմպելիներով և ժամը 8,30ին մեկնեցանք Գոլոնէլին
հետ:

3 — Երկրորդ անգամ Ազգ. Միութեան գնացի,
որովհետեւ առաջին անգամ ոչ ոք գտայ. ներկայ էին
Ատենապետ Տեօք. Մնացականեանը, Հոգեւոր պետերը
և անգամ ք: Նախ շնորհաւորելով ուրախութիւնս յայտ-
նեցի, որ հակառակ տիրող սարսափին և սպառնացող
վտանգին՝ թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ Ղեկավարներու մե-
ծամասնութիւնը բարձր պահելով իրենց բարոյական
կորովը՝ երկիրը թողած քաշուած չեն:

Ն. Սրբութեան ուղեւորութիւնը, դիմումները,
տրուած յոյսերը և քաղաքական ներկայ կացութիւնը
մանրամասնօրէն պատմեցի և բացատրեցի: Ըսի. -
Ինչպէս բոլոր պատերազմիկները, նոյնպէս և մենք
մեր բազմաքննութեան իրականացման մէջ յուսախար-
ուեցանք: Պատերազմը մարդիկներուն ուզած օրը եւ
ուզած տեղէն կը սկսի, բայց շատ անգամ հետեւանքը
ակնկալուածին հակառակը կ'ըլլայ մարդկային խոր-
հուրդներէն անկախ, ուստի յուսահատելու չենք:
Զգացումով գործելէ աւելի Ազգին իսկական շահը
նկատի ունենալով՝ ստեղծուած պարագայներուն հա-
մապատասխան նոր ուղղութիւն մը որդեգրելու ենք:
Եւրոպան մեր գիտցած առաջի Եւրոպան չէ, այն ալ
յուզնած է. ամօքելու շատ ցաւեր և բժշկելու շատ
վերքեր ունի: Պատերազմէ առաջ Եւրոպան երբ իր

ուժը անվթար և իր միլիառները անհաշուելի էին , մեր լացն ու կոծը մտիկ ընելու տրամադիր էր և իրենն ու շաղրութիւնը գրաւող խնդիրներն ալ ոչ այնքան բազմակնճիւռն ու բազմաթիւ էին . իսկ հիմա նոր կազմուած ազգերու եւ կառավարութեանց խնդիրներ , դաշնակիցներու միջեւ կարգադրուելիք եւ ներքին հրատապ խնդիրներ եւ ասոնց հետ մէկտեղ Պօլշէվիկեան վտանգը ծանրաբեռնած են Եւրոպան . շատ միամիտ ըլլալու ենք կարծելու , որ Եւրոպան իր շահուն վերաբերեալ խնդիրները թողու եւ Հ . Հանրապետութեան ու Կիլիկիոյ Քրիստոնէութեան բաղձանքները իրականացնելու աշխատի :

Սան - Րէմօյի դաշնագրին Սէվրի մէջ ստորագրուելուն եւ Կիլիկիան մեծաւ մասամբ թուրքիոյ թողլու որոշման գրեթէ անտեղեակ էին մերինները : Հարցուցի .- Թրքական գերիշխանութիւնը պիտի ընդունի՞ք . . Ո՛չ , պատասխանեցին միաձայնութեամբ .- Եթէ Ֆրանսական ուժերը քաշուին , սեպհական ուժերով պիտի կրնա՞ք արգիլել թուրքերուն մուտքը . Միաձայնութեամբ ըսին . . Պատրաստ ուժ մը շունինք . միայն Կարապետ Աշըգեան ըսաւ .- Մենք մինակ կըրնանք մեր երկիրը պաշտպանել . որով իր ընկերներուն ծիծաղը շարժեց : Ուրեմն ամենքդ ալ կ'ընդունիք , որ թուրք կառավարութեան վերադարձը Հայոց համար մեծ աղէտ մ'է , որուն հետեւանքները նոյն իսկ չենք կարող երեւակայել : Հետեւաբար մեզ կը մնայ կազմակերպուիլ եւ կարեւոր ուժ մը ներկայացնել , որուն յաջողութիւնը իրախում ունի կարգապահութենէ և Ֆրանսացւոց հետ լաւ յարաբերութիւն մշակելով վստահութիւն գրուելէ : Առենապետը և անդամներէն ոմանք

ըսին - միշտ կը ջանանք Ֆրանսացւոց հետ լաւ յարաբերու-
թիւն մշակել և չկայ Հայ մը, որ հակառակը մտած է, միայն
մեր գործերը եւ խօսքերը սխալ կը մեկնուին : Ժենե-
րալ Տիւֆիոյի եւ Գոլոնէլ Պրեմոնի մեր մասին տածած
համակրութիւնը յիշելով աւելցուցի .- Գոլոնէլ Պրէմոն
կեդր . Իշխանութենէն կը քննադատուի իբրեւ Հայ-
կական քաղաքականութիւն մշակող : Երբեմն փոքրիկ
անհասկացողութիւններ ծանր հետեւանքներ կ'ունե-
նան . դիրքերնիս շատ փափուկ է , աշխատինք օգտու-
իլ Գոլոնէլ Պրեմոնի վարչութենէն : Այս երկար խօ-
սակցութեան իբրեւ վերջաբան ըսի .- Պէտք է բարե-
կամներուն յարգանքը եւ թշնամիներուն պատկառան-
քը շահիլ : Մեկնեցայ պատրաստակամութիւն յայտ-
նելով օգնել իրենց , որքան Ատանայի մէջ կը գտնուիմ :

Տեսակցեցայ բոլոր բարեկամներուս եւ Օգոստոս
Տի նախարարներուն հետ . ամենքն ալ կ'ընդունէին,
որ շատ սխալներ գործուեր են , բայց ոչ ոք պատաս-
խանատուութիւն յանձն կ'առնէր : Վաղածանօթ Տեղա-
կալ Շիշմանեանին այցելեցի իր սպայակոյտին մէջ .
ամբողջ ուժը կը բաղկանար 300 հոգիէ , մեծ մասամբ
16-17 տարեկան պատանիներէ եւ մէկ քանի կին-
աղջիկներէ : Ատանայի մէջ թուրք մնացած չէր բացի
մի քանի պաշտօնեայներէ : Շատ բաներ լսեցի զլուխ-
նին մէկ մէթրէն բարձր ոչխարամորթ գլխարկ կրող
հերոսներու մասին , որ լիաթոշակ ամսականով զինուո-
րական կարեւոր գործողութիւններ յանձնառած պար-
տաւորութեան հակառակ՝ ձմերուկի եւ ցորենի վաճա-
ռականութեամբ եւ անասունի գողութեամբ պարա-
պած էին : Այս անկարգութեանց պատասխանատուու-
թիւնը յանձն առնող չը կար թէ եւ , ըստ իս անոնցն

էր, որ ժողովուրդը ամբոխավարութեան մղեցին եւ վերջը առաջքը չը կրցան առնել:

'Ի կիլիկիա ներկայութենէս օգտուիլ ուզելով կը փափաքէի նախկին պաշտօնատեղիս՝ Ճէպէլի-Պէրէքէթ քաւառը այցելել եւ շնորհաւորել ու քաջալերել Օսմանիյէի Հայաւթիւնը, որ 7 ամիսներ քաջաբար կռուեցաւ շատ գէշ եւ աննպաստ պայմաններու տակ եւ թշնամի գերազանց ուժերու դէմ: Մէկ կողմէն պարտաւոր էի շուտով Պէյրութ վերադառնալ, միւս կողմէն բարեկամներ ըսին. որ երկաթուղիի երթեւեկը կանոնաւորուած չէ. երբեմն 15-20 օր սպասել պէտք կ'ըլլայ, որով հակառակ փափաքիս չը կարողացայ Օսմանիէ երթալ. գոնէ քաղած տեղեկութիւններս շատ գոհացուցիչ եւ մխիթարական էին, որովհետեւ կուսակցական պայքար չունէին եւ ոչ ցուցամուլութիւն: Մաւրատ Ռաֆայիլեան Վարժարանի նախկին ուսանող Հարիւրապետ Պ. Հրանտ Մալոյեան. իբրեւ կատարեալ գինուոր՝ յաջողած էր կարգապահութեան ոգին մտցնել ժողովուրդին մէջ, որով իր հրամանին տակ կիրթ գինուորներով կռուած էր: Ճրանս. գինուորական ուժի Հրամանատարն ալ շատ օգնած է առատ ռազմանիւթով: Պատերազմէն յետոյ երբ թուրքերը անձնատուր կ'ըլլան, լաւ ընդունելութիւն կ'ընեն եւ կը կը կերակրին. արժանապատութիւն վիրաւորող եւ ասելութիւն գրգռող պոռոտ խօսքերէ կը զգուշանան:

4.— Գոլոնէլ Պրեմոնի հետ տեսակցութեան մը միջոցին՝ անպաշտօն կերպով յանձնարարեց հաղորդել Պ. Տամատեանին, որ երկու կողմերու շահուն համար կիլիկիան թողու եւ երթայ, որովհետեւ իբրեւ քաղաքական ներկայացուցչին հետ այլեւս չենք կարող

յարարերութիւն ընել: Կատարեցի այս յանձնարարութիւնը: Պ. Տամատեան շատ կը զարմանար, որ Պրանսան չըմբռնէր իր քաղաքականութեան ոգին և կիլիկիան խնդիրը չորդեգրէր իր տեսութեան համաձայն՝ ըստ ամենայնի նպաստաւոր Պրանսայի շահերուն: - Ես կ'ուզեմ Պրանսայի ծառայել: Մենք Հայերու միջավայրէն ազդուելով կասկածոտ ժողովուրդ մը եղած ենք. ամենապարզ խնդիրներուն խորհրդաւոր ձեւեր կուտանք, և շատ անգամ բարեկամական անկեղծ խորհուրդներուն և թելադրանքներուն մէջ յետին մտքեր կը տեսնենք: Պ. Տամատեան զարգացումով և յեղափոխական փորձառութեամբ թէեւ մեծ Հայ մ'է, բայց ցեղին առաւելութեանց հետ համեմատաբար թերութիւններէն ալ զերծ չէ:

Քաղաքական գաղափար մը յղանալու համար մեծ տաղանդի պէտք չը կայ. ամեն Հայ կրնայ Կասպից ծովէն մինչեւ Միջերկրական երևակայական Հայաստան մը կազմել, կամ Կիլիկիոյ մէջ Հայկական անկախութիւն և կամ Քրիստոնէական ինքնավարութեան գաղափարը յղանալ, ինչպէս Այգաս-Լորէնը մերազրաւելու գաղափարին համար պէտք չը կար Քլէմանսո, կամ Բուանքարէ մը ըլլալ, ամենատգէտ Պրանսացին անգամ այդ գաղափարով տողորուած էր: Արժէքը տեսականութեան վրայ չէ, այլ գործադրելի միջոցները իրականացնելուն մէջ կը կայանայ: Այս խորհրդածութիւնը ընելէն յետոյ Պ. Տամատեանի խանարհարար ըսի: - Իբրեւ գիւտնազիտական պաշտօնեայ պէտք է աւելի իրականութեան հետեող ըլլալ:

Յ. — Հօ. Գումիսէրութեան հրամանով Գոլոնէլ Պրեման պաշտօնանկ եղաւ. նոր շրջան մը կը սկսէր կի-

լիկեան վարչութեան մէջ : Կիլիկեան խնդիրը 'ի նպաստ Հայութեան կարգադրուելու առիթը յետ գինադադարի Փարիզի մէջ կորսնցնելէ ետքը՝ Կիլիկիոյ մէջ ալ ներկայացուած առիթը կորսնցուցած կ'ըլլայինք : Մեր խելօքներէն շատերը ուրախացան այս փոփոխութեան վրայ, բայց իրականապէս մեծ չարիք մը պիտի ըլլար մեզ համար՝ եթէ բարեբաղդարար ժիներալ Տիւֆիոյի բարեացակամութիւնը չըլլար և վարչութեան ղեկը չստանձնէր Գոմանտան Հասլերը, որ Գոլոնէլ Պրեմոնի բարեկամ և համակարծիք էր . կ'աշխատէր Կիլիկիոյ մէջ Ֆրանսայի հովանաւորութիւնը պահպանել :

13. — Ժենեւրալ Տիւֆիոյի գնացի - մնաք բարեաւրսելու ն . Սրբութեան նամակին պատասխանը (15) տուաւ : Քաղաքին մէջ նոր զրոյցներ կային, թէ Ֆրանս . ուժերը պիտի քաշուին, այս տարածայնութեան ստոյգ, կամ անստոյգ ըլլալու հարցումիս ժիներալը պատասխանելով ըսաւ .- Այդ լուրերը անհիմն են . ուրիշ լուր մ'ալ կը շրջի քաղաքին մէջ . ևս օթօմօպիլի արկած մը անցուցեր եմ և մէկ ոտքս կոտրուեր է . ահա դուք ալ կը տեսնէք, որ բան մը չունիմ : Հրաժեշտ առնելով մեկնեցայ :

Պ . Տամատեանին գնացի - մնաք բարով - ի , զիս տեսնելուն պէս ըսաւ .- Լաւ է , որ տակաւին հոս էք : Պէյրութ հասնելուդ պէս Վեհափառին ըսէք , որ քաղաքականութեամբ չզրադի , որովհետեւ դիւանագիտական նրբութիւններուն չը կրնար թափանձել . անգիտակցաբար սխալ քայլեր կ'առնէ : Պատրիարքարանէն նոր նամակ առի , որով կ'աւետուի , թէ Ֆրանսայի Արտաքին գործոց Նախարարութիւնը Պօղոս Փաշան

հրաւիրելով և լաւ ընդունելութիւն ընելով առաջարկեր է, որ ժեներալ Անդրանիկը կիլիկիա երթայ և Հայկական բանակ մը կազմելով՝ կրցածին չափ հողեր գրաւէ: Փրանս. կառավարութիւնը բարոյական և նիւթական աջակցութիւն կը խոստանայ: Տեսէք ինչե՛ր կ'անցնին կը դառնան . . . :

Այս լուրը ինձ համար անակնկալ մը էր. Փարիզէն նոր վերադարձեր էի և Հօ-Գոմիսէրութեան տրամադրութիւնը գիտէի, ասկէ զատ յուսադրիչ պաշտօնական և կէս պաշտօնական սուտեր լսած էինք. այնու ամենայնիւ Պատրիարքարանէն ստացուած նամակը չուզեցի ուրիշներու կարգին դասել: Պ. Տամատեանին ըսի. - Վայրկեան մը ընդունինք, որ այս առաջարկը լուրջ ըլլայ. ասոր մէջ նորութիւն մը չեմ տեսներ: Մենք այս իրաւունքը արդէն ունինք, եթէ կարողանանք կազմակերպել և պատկառելի ուժ մը մէջտեղ բերել: Պրանս. իշխանութիւնք պատրաստ են միշտ օգտագործել զայն և փոխադարձաբար օգնել անոր: Արդէն այդ նպատակաւ Շիշմանեանի հրամանատարութիւնը հաստատուած է և նոյն իսկ վերջերս ալ 5000նոց Հայ ուժ մը պատրաստելու արտօնութիւն տրուեցաւ: Ի՞նչ եղաւ արդիւնքը . . . : Ոչ կրցանք կազմակերպուիլ և ոչ կարողացանք վստահութիւն ներշնչել տեղական իշխանութեանց: Ինչուք թէ Պ. Միլրանի և Պօղոս Փաշայի միջեւ համաձայնութիւն մը կընքուեցաւ, ո՞վ պիտի գործադրէ. բնականաբար այստեղի գինուորական իշխանութիւնք: Եթէ ասոնց հետ փոխադարձ գիշողութեամբ հասկացողութեան չը գանք՝ ամեն ծրագիր և համաձայնութիւն ապարդիւն կը մնան: Նոյն իսկ Տէրութիւններ իրարու հետ դաշնագիրներ

կը կնքեն, բայց գործադրութեան ատեն չակնկալուած դժուարութեանց կը բաղխին: Պ. Տամատեան շատ ոգեւորուած էր նամակի պարունակութենէն:

15.— Ասլանեան Վարդապետին ալ այցելելէ ետք ճամբայ ելայ դէպի Գարաթաշ. ճանապարհին յանկարծակի անձրեւի բռնուեցայ և լաւ մը թրջուեցայ: Գարաթաշ գիշերեցի, երկրորդ օրը ծովը փրփրած էր: Ըստ կարգադրութեան Կառավարչին Մերսին գնացող թորփիլանաւի մը չը կրցայ հասնիլ:

17.— Առագաստանաւով Մերսինը ելայ. գինուորական Կառավարիչ Գոմանտան Գուլէին այցելեցի, որ Էքամածօրի մէջ եղած միջոցիս իմ շէնս էր և Գոյունէլ Պրէմոնի հաւատարիմներէն: Կացութեան վրայ երկար խօսեցանք: Գոմանտան Գուլէ տիպար և համակրելի գինուորական մ'է՝ սիրուած ամեն դասակարգէ, 'ի մասնաւորի Հայ շրջանակներու հետ լաւ յարաբերութեան մէջ եղած է միշտ:

'ի պատիւ Մերսինի Հայութեան ըսենք, որ միշտ գովելի վարմունք ունեցած է և Ղեկավար շրջանակը, ինչպէս Ազգ. Միութեան Ատենապետ՝ Տիար Գրիգոր Զելվէեան յաջողած է ամեն կերպով Ֆրանս. իշխանութեանց վստահութիւնը գրաւել: Ամեն տեղ Ֆրանսական իշխանութիւնք Հոգեւոր Պետերէն պատ ուրիշ հեղինակութիւն չէին ճանչնար և Ազգ. Միութիւն անունէն կը խրտչէին, Մերսինի մէջ Ազգ. Միութիւնը կարողացաւ մինչև վերջը յարաբերութիւնը պահել Ֆրանս. իշխանութեանց հետ:

Նոյն օրը խտրվական Պորիլա շոգինաւով մեկնեցայ. նաևս մէջ մեր բարեկամ Տեօք. Ա. Ալթունեանին հանդիպեցայ, որ Հալէպէն կուգար Իսկէնտէ-

րուն Սովուզ-Օլուխ երթալու : Իսկէնտէրուն , Հասքի-
յէ , Թրիփօլի հանդիպելէն յետոյ Սեպտ . 20ին Պէյ-
րութ հասայ : Ն . Սրբութիւնը Զահլէ գնացած էր ,
ուղղակի մեծ մօրս եղբօր՝ Հաճի Փաշային տունը գնա-
ցի , ուր երկու օր հիւանդ պառկեցայ :

23.— Զահլէ ելայ . Ն . Սրբութիւնը Պաալպէք
գացած էր և երեկոյին ուշ վերադարձաւ :

24.— Հայկական նուագահանդէս մը կազմակեր-
պուած էր ղեկավարութեամբ Իւվէզեանի . Պէյրութէն
օդափոխութեան եկող բաւական հայ ընտանիքներ կա-
յին . Պարօնը , Կիւլպէնկեան , Շահպաղեան , Հալարապետ-
եան և այլն : Ինչպէս ամեն խնդրոյ , նոյնպէս նուագա-
հանդէսին առթիւ բաւական լէճ և վիճարանութիւն
եղած էր : Պէտք է եղեր ժողով ընել և ընդհանուրի որո-
շումով կազմակերպել . Ազգ . արժանապատուութեան հա-
կառակ . . . : Վերջապէս յաջողած էին պատրաստել . մեծ
և ընտիր բաղմութիւն մը ներկայ գտնուեցաւ , ընդհան-
րապէս օտարներ , լաւ տպաւորութեամբ մեկնեցան :
Օթէլի մէջ Հայկական երաժշտութիւնը ոչ միայն գո-
վեստի նիւթ եղաւ , այլ յաճախօրդները և տեղացի
արաբ ժողովուրդը Հայկական երգեր սկսան երգել . նոյն
իսկ օր մը շատ զարմացայ , որ կովարած տղայք Սոնա
Սար կ'երգէին :

Գիշերը ուշ ատեն Ատանայէն պատուիրակութիւն
եկաւ Գեր . Տ . Եղիշէ Եպիսկոպոսի Նախագահութեամբ ,
Տեարք Կ . Քէշիշեան և Կ . Նալպանտեան՝ յանուն
Ազգ . Միութեան Ն . Սրբութիւնը Ատանա տանելու :

26.— Տիարք Զօպանեան և Թահմազեան Փարի-
զէն եկան . Զօպանեան Պատուիրակութեան կողմէ զըր-
կուած էր Հօ-Գումիսէրութեան բացատրութիւններ տա-

լու և Պրանքո - Հայկական յարաբերութիւնը սերտա-
ցնելու : Ն . Սրբութեան յանձնարարական բերած էր
աջակցութիւնը չը զլանալու համար :

27 .— Ն . Սրբութիւնը նամակով ժեներալին յայ-
տնելով թէ Սուպէսէրեանը Ատանայէն վերադարձեր՝ և
Կիլիկիայէն Պատուիրակութիւն մը եկած է , ունկնդրու-
թիւն և Պ . Չօպանեանը ներկայացնելու հաւանութիւնը
խնդրեց : Նոյն երեկոյն Պէյրութ հասնող շոգենաւին մէջ
Ազգ . Միութեան անդամներէն գրուած նամակ մը հասաւ ,
որով կ'իմացնէին Ազգ . Միութեան անդամները ,
Շիշմանեան և մի քանի ուրիշ գործիչներ Կիլիկիայէն
դուրս հանուած , և շատ մը գաղթականներ Գարա-
թաշ բերուած են Պոլիս փոխադրելու համար և Ախը
վերագրուելու և Հանքը ազատելու համար պատ-
րաստուած 300 կամաւորները զինաթափ ըրած են Գո-
լունէլ Գափիթրալի գործի գլուխ անցնելուն պէս : Հա-
կակչուի մեծ և փոքր պաշտօնէից փոփոխութեան մէջ
'ի նպատակով Հայոց քաղաքականութեան փոխուելուն՝
երազատեաներուն երազը կատարուեցաւ :

Գոլունէլ Գափիթրէլը Ատանա չը գնացած՝ 'ի Չահ-
լէ մասնաւորապէս այցելած էր խնդրելու Ն . Սրբու-
թեանէն իր հեղինակութիւնը 'ի գործ դնել , որ դաշնա-
դրութիւնը գործադրելու պարագային Հայերը դժուա-
րութիւն չը հանեն : Ն . Սրբութիւնը պատշաճ առար-
կութիւնները և պատասխանները տալէ զատ ըսած էր .-
Դուք Կիլիկիան թուրքիոյ պիտի յանձնէք առանց
պարտադրելու , որ իր յանձնառութիւնները կատարէ :
Հանքիցիք շատ կանուխէն հեռագրով յայտարարեցին ,
որ Ֆրանս . Դրօշը պաշտպանելու և մեռնելու հա-

մար կը կռուին, ինչո՞ւ չըսուեցաւ իրենց, որ այդ զոհողութենէն վազ գան, քանի որ որեւէ օգնութիւն ընելու միջոց եւ մտադրութիւն չունէին, ես ինչպէս հիմա ըսեմ, որ անձնատուր եղէք: Գափիթըրէլը որոշ պատասխան չէր կարողացած տալ այս բանաւոր յայտարարութեան:

29.— Շնորհաւորական հեռագրեր զրկեց նորընտիր Նախագահ Միլլրանին և Նախարարապետ Պ. Լէյկի: Ես ալ միեւնոյն օրը կիլիկիոյ մասին պատրաստած տեղեկագիրս զրկեցի ժեներալ Կուրոյին: Այնթապի կաթ. փոխանորդ Տ. Ներսէս Քհնյ. Թաւուզճեանը եկած էր Այնթապի մասին տեղեկութիւն տալու: Ն. Սրբութիւնը 1000 եգպ. ոսկի նպաստ զրկեց Այնթապ՝ Հալէպի Ա.զգ. Միութեան միջոցաւ:

Հ Ո Կ Տ Ե Մ Բ Ե Ր

5.— Ժեներալէն ունկնդրութեան պատասխանը ուշացաւ. առաջին նամակը Պ. Չօպանեան յանձնած էր Օրսոնասի մը: Կորսուած ըլլալու կասկածանքով թիկնապահ տեղակալ Ժաքէին գրելով՝ հարցուցի նամակին հասած ըլլալը: Չօպանեան և Թահմաղեան Ալէյ գնացած էին Բօպէր տը Քէն տեսնելու համար: Ժեներալէն շնորհակալութեան նամակ մը ստացայ զրկած տեղեկագրիս մասին, զոր ժեներալ Տիւֆիոյին զրկած էր:

8.— Կէսօրուայ միջոցին Զահլէի կառավարութենէն լուր տրուեցաւ, որ վաղը կէսօրէն յետոյ ժամը 4ին պիտի ընդունէր ժեներալը Ն. Սրբութիւնը:

9.— Ալէյ գնացինք և օրիկ Պահար իջանք, ուր

գտանք Տեարք Չօպանեան, Թահմազեան և Շիշմանեան: Որոշեալ ժամուն ժեներալին գացինք. ունկնդրութիւնը մեզի հաղորդուած միջոցին Պ. Չօպանեանի անունը յիշուած չէր, ուստի չընկերացաւ մեզի. այս պարագան թիկնապահ Սպային հաղորդեցի. որ ժեներալի աշխատութեան սենեակը մտնելէն ետքը ըսաւ, Չօպանեանի անունը անպատճառ մոռացութեամբ յիշուած չէ: Կուր զրկեցինք և եկաւ. անմիջապէս հրաւիրուեցանք ժեներալին, ուր ներկայ էր Բոպէրտը Քէն: Ն. Սրբութիւնը Չօպանեանը ներկայացուց, որ Տընի Քօչէնէն ժեներալին ուղղուած յանձնարարական նամակը յանձնեց: Ժեներալը Ն. Սրբութեան որպիսութիւնը հարցուց: Չահլէի մէջ հանգիստ ըլլալը յայտնելով աւելցուց. - Առիթէն օգտուելով մի քանի օրուայ համար Դամասկոս գնացի. ճանապարհին յուզումով տեսայ Ֆրանսայի զինուորներուն գերեզմանները և օրհնեցի անոնց յիշատակը: Ժեներալը շնորհակալութեամբ ըսաւ. - Երբ Կիլիկիա վերադառնաք շատ աւելի գերեզմաններ պիտի տեսնէք Ֆրանսացիներու: Թէ՛ Ն. Սրբութիւնը և թէ՛ Պ. Չօպանեան պատշաճ կերպով պատասխաններ տուին:

Ն. Սրբութիւնը շարունակեց. - Պ. Սուպէսէրեանը պէտք եղած տեղեկութիւնները բերաւ, նաև Եղիշէ Եպիսկոպոսի առաջնորդութեամբ Կիլիկիայէն պատուիրակութիւն մը եկաւ իմ միջոցաւ երկրին կացութիւնը պարզելու և ընդհանուր Քրիստոնէից բաղձանքները ներկայացնելու: Ուրախ եմ որ կանխաւ տուած հաւաստիքներս կը հաստատեն: Կիլիկիոյ մէջ բոլոր Հայերը համակիր և հաւատարիմ են Ֆրանսայի, միակ բաղձանքնին է ընդ միշտ վայելել Ֆրանսայի հովանա-

ւորութիւնը և հոգատարութիւնը : Այս մասին համա-
 ձայն և համամիտ են Ֆէլանները և հակա - Քէմալական
 թուրքերը : Մեծ աղէտ պիտի ըլլայ , եթէ Ֆրանսացիք
 քաշուին և Քրիստոնեայները մնան Քէմալականներու
 ճանկերուն տակ : Պ . Չօպանեանն ալ նոյնը կրկնեց և
 աւելցուց .- Եթէ Կիլիկիոյ մէջ անախորժ դէպքեր պա-
 տահեցան , Չեզի պէս Պատուիրակութիւնն ալ ցաւե-
 ցաւ և պախարակեց : 'Ի հաստատութիւն՝ Սէվրի դաշ-
 նագրութենէ վերջ Պատուիրակութեան Դաշնակիցներու
 մատուցած յիշատակագրին մէկ օրինակը յանձնեց
 ժեներալին , որով Պատուիրակութիւնը շնորհակալու-
 թիւն յայտնելով Դաշնակիցներուն , որ Սէվրի դաշնագրով
 Հայաստանի անկախութիւնը ապահովուած է , կը խնդրէ ,
 որ Կիլիկիոյ Հայութեան ապահովութեան ալ միջոց մը
 ստեղծուի՝ զարգանալու և բարգաւաճելու Ֆրանսայի
 հովանաւորութեան տակ : Պ . Չօպանեան երկայն և յան-
 կուցիչ եղանակով պատկերացուց Հայերու բաղձանքը ,
 և կրած յուսախարութիւնը , Սէվրի դաշնագրին
 անգործողութիւնը և թուրքերուն վերագարծով
 Հայոց համար ստեղծուելիք ահաւոր կացութիւնը :

ժեներալը երկայն մտիկ ընելէ վերջ ըսաւ .- Մենք
 դաշնագիր մը ստորագրած ենք և պարտաւորուած՝ մեր
 ստորագրութիւնը յարգել . բայց նաև բարոյական
 պարտաւորութիւնն իս է որոշ երաշխիքներ առնել .
 Քրիստոնէից կեանքի և ինչքի ապահովութեան հա-
 մար , արդէն այդ նպատակաւ փոքրամասնութեանց
 իրաւունքները պաշտպանելու յօդուածներ դրուած են :
 Հայերը պէտք չէ որ խոչընդոտ ըլլան մեր գործերուն :
 Բոպէր - տը Քէն , որ միշտ լուռ մտիկ կ'ընէր , ըսաւ .-
 Հայերը ամեն ջանք կ'ընեն , որ մենք մեր որոշում-

ները չը գործադրենք և կը կարծեն որ հակառակ մեր կամքին կրնան խնդիրը իրենց ուզած ձևով կարգադրել. բայց համոզուած եղէք, որ ինչ ալ ընեն, չեն կարող մեր ուղղութեան և որոշումներուն ազդել:

ժեներալը ըսաւ. - Հայերը ծայրայեղ ընթացք մը բռնելով՝ անգիտակցաբար Քեմալականներուն կ'օգնեն, որոնց ուզածն է երկիրը միշտ խառնակ պահելով մեզ յոգնեցնել: Յիշեց նաեւ - Հայերը պատճառեզան Յուլիս 10ի դէպքով՝ Թուրքերուն քաղաքէն հեռանալուն: Ն. Սրբութիւնը ըսաւ, որ առած տեղեկութեամբս Թուրքերը դուրսէն առնուած հրամանի մը վրայ քաղաքը լքած են. եթէ Ատանայի մէջ Հայերէն վախնալով փախան, Ճիհանի Թուրքերը ուրկէ՞ վախնալով փախան, ուր հազիւ երեք հարիւր Հայեր կան: Գալով Թուրքերուն վերադարձը դիւրացնելու խնդրոյն, ուրախ կ'ըլլանք խաղաղ ժողովուրդի գալուն, Քրիստոնեայ և Թուրք խաղաղ ժողովուրդը դարերով իրարու հետ ապրած են, այսուհետեւ ալ պիտի ապրին: Հայերը կառավարութեան ոչ մէկ գործին հակառակած չեն:

ժեներալը ըսաւ. - Միակ յուսալից բանը որ կրնամ ըսել այս է, - ժեներալ Տիւֆիոյ կը տեղեկագրէ, որ կիլիկիոյ մէջ նոր հոսանք մը սկսած է. լաւ նկատի առէք, ոչ թէ միայն Քրիստոնեայք, արաբ և Թուրք տարրերն ալ տեղական ինքնավարութիւն կը պահանջեն: Այս տեղեկութիւնը անմիջապէս Արտաքին Գործոց Նախարարութեան հաղորդեցի, թէիւ որոշ հրահանգ մը չառի. բայց Նախարարապետը շատ հետաքրքրական կը գտնէ այս շարժումը: Նայեցէք, ասիկա տակաւին մեծ ծաւալ չունի, երբ հեզզհեզե այս

պահանջը ընդարձակուի, այն ասե՛ն կարգադրութիւն մը
ընել կարելի կ'ըլլայ: Մենք շատ դժուարութիւն կը
քաշենք Մեծին-Լիբանանու կառավարութեան բոլոր
տարրերը իրարու հետ միացնելու. ձերն ալ անանկ
կ'ըլլայ: Յաջողելու համար պէտք է, որ երկիրը խա-
ղաղ վիճակ ստանայ և տարրերը իրարու հետ հաշտ
ապրին:

Պ. Չօպանեան խնդրեց ժեներալէն զօրավար Անդ-
րանիկի մասին խօսիլ: Ռօպէր տը Քէն ձեռքերը սեղա-
նին զարնելով. - կ'աղաչեմ Պ. Չօպանեան այդ խնդի-
րը մի բանաք. որովհետեւ շատ ցաւած եւ զայրացած
եմ: Այս խնդրոյն մէջ բնաւ ուղիղ չը գտնուեցաք:
Լաւ գիտէք որ Փարիզ եղած միջոցիս Պօղոս Փաշայի
աղաչանքին վրայ և անոր հաճելի ըլլալու համար
պարզ անհատի մը հանդամանքով ժեներալ Անդրանի-
կի հետ տեսնուեցայ և իր գաղափարները առի հե-
տաքրքրութեան համար, բայց առաջուց պայման դրած
էի, որ պաշտօնական հանդամանք չը տրուի այս տե-
սակցութեան և Հայ լրագիրներն ալ պիտի զգուշանա-
յին որևէ բան հրատարակելէ: Դժբաղդաբար զօրա-
վար Անդրանիկ սենեակէն դուրս չեղած՝ բոլոր Հայ
լրագիրներուն հաղորդուած էր, որ իբր թէ մենք
խնդրած ենք Զօրավարէն կիլիկիոյ մէջ Հայկական
բանակ մը կազմել և գործել ըստ կամս: Ինչպէ՞ս կա-
րելի է ձեզ հետ լուրջ բանի վրայ խօսիլ. Ատանայէն
պաշտօնական տեղեկագիրներ կ'առնենք, թէ այս սուտ
տարածայնութիւնը մեծ բաժին ունի Հայ Վարիչ
չըջանակին վերջին ծայրայեղ ընթացքին մէջ:

Պ. Չօպանեան կացութիւնը փրկելու և ժեներալը
համոզելու համար իր բոլոր կարողութիւնը 'ի գործ

դրաւ : Զօրավար Անդրանիկ Հայերու վրայ ունեցած հեղինակութեամբ և գինուորական տաղանդով օգտակար կրնայ ըլլալ թէ՛ երկրին և թէ Ֆրանսայի ժեներալը ըսաւ .- Ներկայ քաղաքականութեան մէջ անկարելի է զօրավարին ներկայութիւնն ՚ի Կիլիկիա եւ չի կրնար օգտակար ըլլալ :

Երբ Պ . Զօպանեանը կը ջանար Անդրանիկի դատը պաշտպանել, ես ցաւագին զարմանքով յիշեցի Պ . Տամատեանի միամիտ հաւատքը և խանդավառութիւնն Պատրիարքարանի նամակի պարունակութեան մասին, զոր չեմ ուզեր կրկնել և չեմ ալ ուզեր պահել, թէ Հայկական խնդրոյ մասին կանխաւ կազմած համոզումս վերահաստատուեցաւ . - Մեր գործերն ու քայլերը միշտ յարաշարժ գետնի վրայ դրուած են :

Ն . Սրբազնութեանն ՚ի Կիլիկիա վերադարձը որոշուեցաւ : Հիմա գինուորական գործողութիւններ կան ըսաւ ժեներալը, երբ լրանան տեղեկութիւն կուտամ և այն ատեն կը մեկնիք . չեմ ուզեր, որ թնդանօթներու որոտումին մէջ իյնաք : Հրաժեշտի պահուն Պ . Զօպանեան ներկայացուց Պ . Թահմազեանը, որ դուրսի սրահը կը սպասէր : Ժեներալը անմիջապէս ճանաչեց, որ կամաւոր գինուորական մ'է Արեւել . ճակատի, շատ գոհունակութեամբ ընդունեց :

Մեր մեկնելու պահուն Բօպէր տը Քէն մէկ կողմ առնելով Զօպանեանը ըսաւ .- ըսելիքներ ունիմ քեզի : Պահ մը վերջը եկաւ միացաւ մեզի պանդոկին մէջ : Հարցուցի . Ի՞նչ խնդիր է . - Զօրավար Անդրանիկի խնդիրը, առանց Ֆրանսայի հաւանութեան այսքան ազմուկ հանեցիք, և նոյն իսկ Պատրիարքարանը խարեցիք, կամի վրայ կամ մը աւելցուցիք՝ Զօրավարը Յունաստան և Իզմիր

զրկելով : Ոչ ոքի համար գաղտնիք մը չէ , որ Յու-
նաստանի ներկայ քաղաքականութիւնը ամեն մասամբ
հաճելի չէ Ֆրանսայի . ինչեր չեն կարող ենթադրել
այս ուղեւորութեան մասին : Դուք որ եկած էիք Հօ-
ֆոմիսէրութեան հետ յարաբերութիւնը բարւոքելու ,
այս խնդրանքով ձեր ներքինը հրապարակեցիք : Լե-
ւոն Մկրտիչեանի գործն է այս , պարապ տեղը Զօրա-
վարը Մանչէսթրէն և զիս ալ Փարիզէն կանչեց հեռա-
գրով և ըսաւ .- Հայերը Կիլիկիոյ մէջ անկախութիւն
հռչակած են . ըլլալիքը եղաւ . ես ալ խօսք տուի
Ժններալ Կուրոյի հետ խնդիրը կարգադրել և այս
պատճառաւ Անդրանիկի խօսքը բացի :

Ն . Սրբութիւնը այս գիշեր Այն էլ Աեիսե գիւղը ,
լուսանկարիչ Պօն-Ֆիս Արրահամ Կիրակոսեանի հիւրը
եղաւ : Այս ընտանիքը իբրև Երուսաղէմացի վաղա-
ժանօթ էր և Պ . Արրահամը աչակերտած էր Ն . Սրբ-
ութեան . այս պատճառաւ գուրգուրտ վերաբերմունք
ունէին և Օգոստոս 7ին հրաւիրմամբ մէկ շաբաթի չափ
հիւրասիրուած և շատ գոհ մնացած էր , միայն ամենօր-
եայ մառախուղէն դժգոհ էր որ թէ՛ Պէյրութը և թէ՛ Ալէյ ,
կէս ժամ հեռաւորութեամբ կը ծածկէր տեսութենէ :

10 .— Պէյրութ իջանք սպասելու Ժններալին տա-
լիք վերջին տեղեկութեան : Պ . Զօպանեան նոր ուն-
կնդրութիւն խնդրած էր , որ մինչեւ 20 պատասխանը
ուշացաւ :

22 .— Պ . Զօպանեանը ուշ ատեն վերադարձաւ
Ալէյէն և հաղորդեց որ Ն . Սրբութեան ճամբորդու-
թեան դժուարութիւնները հարթուած են :

23 .— Կիլիկիայէն եկող պատուիրակութիւնը
մեկնեցաւ Օմպրիա շոգենաւով և Ն . Սրբութիւնն ալ

կէսօրէն յետոյ Ալէյ ելաւ ժեներալին, -մնաք բարեաւ -
ըսելու: Հոն իմանալով որ երկրորդ օրը ժեներալն ալ
ճանապարհորդ է 'ի Գամասկոս, բարի ճանապարհ
մաղթեց: ժեներալը ըսաւ, որ նամակ դրկած է իմաց-
նելու համար, որ վաղը շոգենաւ կայ Գարաթաշ մեկ-
նելու: Նամակը մեզ հասած չէր: Այն գիշեր Պահար
օթէլին մէջ Հօ-Գոմիսէրու թեան հիւրն եղանք և երկ-
րորդ օրը կանուխ Գոմիսէրու թեան տրամադրած օթօ-
մոպիլով Պէյրութ մեկնեցանք և ուղղակի Պ. Չ. Պզտիկ-
եանին իջանք և ճաշը ընելէ յետոյ շոգենաւ գնացինք
ընկերակցութեամբ Պ. Պզտիկեանի, Չօպանեանի և
Թահմազեանի: Շոգենաւը դինուորական փոքրիկ նաւ
մ'էր: Սաղաղ ծովով եւ գրեթէ 24 ժամէն Մերսին
հասանք եւ կառավարական շոգեմակոյկով յանակնկալս
ցամաք ելլելով՝ եւ առանց առաջնորդի ուղղակի Պ.
Միսաք Քէշիշեանի տունը գնացինք: Բոլոր ազգայինք
զարմացան մեր ըրած, բայց չը մտածուած անակնկա-
լին վրայ, մենք ալ զարմացանք, որ մեզմէ առաջ,
ամսոյս 23ին, ճամբայ ելնող պատուիրակները Մերսին
հասած չեն:

Հետզհետէ բարի-դալուստի եկան ազգայինք եւ
Ֆրանսացի կառավարիչ Պ. Գուլէն, որ յանուն ժենե-
րալ Տիւֆիոյի շնորհաւորեց Ն. Արքութիւնը: Կիլիկիոյ
հողին վրայ ստք դրած օրերնիս սեւ օր մը եղաւ. ո-
րովհետեւ թէեւ երկրայական՝ ոմանց բերնին մէջ
չշուկ մը կար, դիւցազն Հաճընի հոգեհարսուռ անկ-
ման եւ բնաջնջման շշուկը կամ գուժը: Չը հաւատա-
ցինք, բայց կասկածը խռովեց ուրախութիւննիս: Ընթ-
րիքէն յետոյ Պ. Մ. Շալվարճեան իր տունը տարաւ
Պ. Պզտիկեանը եւ Թահմազեանը, Պ. Ն. Պիլպիլեանը

Պ. Զօպանեանը, ես հօր-եղբօրս Տիար Պօղոսին հիւր եղայ եւ Ն. Սրբութիւնը Պ. Մ. Քէշիշեանենց մնաց :

26.— Առաւօտեան ժամը 7,30ին շոգենաւ մեկնեցանք, որովհետեւ տակաւին Մերսին-Ատանա ճանապարհը բացուած չէր : Շոգենաւ չը հասած բաւական հեռուէն տեսանք, որ պատուիրակ - հրաւիրակները դէպի ցամաք կը մակուկավարեն . բաւական ծիծաղեցանք սակայն վերջը մեր ճամբորդութիւնն ալ ոչ միայն ծիծաղելի, այլ վտանգաւոր եղաւ :

Շոգենաւը չը մեկնած՝ ցամաքէն լուր զրկած էին թէ կարող ենք հասնիլ միասին ճամբորդելու համար : Նաւը ծին ճամբայ պիտի ելնէր, բայց մի քանի ժամ մեկնումը յապաղեց, ուստի պատասխան տրուեցաւ, թէ կարող էք հասնիլ : Կատարուելիք գործողութիւնք արգելք կ'ըլլան ժամանակին հասնելու . մակոյկ կը նստին գալու, մեր շոգենաւը կը մեկնի, որով կը պարտաւորուին ցամաք վերադառնալ :

Ժամը 11ին ճամբայ ելանք Գարաթաչ երթալու համար . ծովը հետզհետէ զայրագինօրէն բարձրացաւ . նաւը չը կրցաւ խարսխել. ճանապարհը շարունակեց դէպ 'ի Իսկէնտէրուն :

27.— Առաւօտեան ժամը 7ին Իսկէնտէրուն հասանք եւ ուղղակի եկեղեցի գացինք, Ազգայինք հետըզհետէ բարի-գալուստի եկան : Կէսօրուայ ճաշին Պ. Հայկ Պալեանը պատուասիրեց : Այցելուցինք Կառավարիչ Գոլոնէլ Սանսիէ, ազնիւ Ֆրանսացիին, որ խոստացաւ անմիջապէս կարգադրել մեր ճամբորդութիւնը Տեօրթ-Սօլի վրայով : Երեկոյեան ժամը ծին փոխադարձ այցելութեան գալով Կառավարիչը՝ ըրած կարգադրութիւնը հաղորդեց : Երկրորդ օրը երկու օթոմո-

պիլներով կէս օրէն հաքը ժամը 4ին Տեօրթ-Եօլ պի-
տի երթայինք և հոն գիշերէինք . երրորդ օրը Տեֆո-
վիլով էրգին և և այն տեղէն երկաթուղիով Ատանա :
Երեկոյեան Ազգ . Միութեան Ատենապետ , Պ . Սարգիս
Խաչատուրեանի տունը ընթրեցինք , Ն . Սրբութիւնը հոն
գիշերեց մինչ Իսկէնտէրուէն մեկնելնիս . մեր ըն-
կերները՝ Պ . Ժօզէֆ Այվազեանի , իսկ ես Պ . Ղազար
Տատուրեանի տունը :

28 .— Հեղեղանման անձրիւ սկսաւ և մեր ճամ-
բորդութիւնը յետաձգեց , ասոր վրայ աւելցաւ ոմանց
ազգայնոց կողմէ Պ . Չօպանեանի եղած դիտողութիւնը ,
թէ , անխոհեմութիւն է Տեօրթ-Եօլի ճամբով երթալ , որով-
հետեւ ճանապարհը լեցուն է չէթէներով : Եթէ օթում-
պիլով երթայինք՝ Պ . Չօպանեան չը պիտի ընկերանար
մեզ , որով համաձայնեցանք նոյն իսկ առաջաստանա-
ւով ճամբորդել :

Միջկուսակցականք երեկոյթի հրաւիրեցին Ն .
Սրբութիւնը՝ պայմանական խօսք տուաւ , - Եթէ չը ճամ-
բորդէինք . - Դարձեալ փոթորկալից և հեղեղանման
անձրիւ սկսաւ , որով ազատեցանք կառավարութեան
կարգադրած ճամբորդութենէն և առաջաստանաւ ալ
չը գտանք : Եղած հրաւերին գնացինք , փոթորիկ
մ'ալ հոն փրթաւ : Ազգ . Միութեան 'ի պաշտօնէ հրա-
ւեր ղրկուած չըլլալուն՝ Հնչակեանք հրաժարած էին
մասնակցութենէ : Այսքան աննշան պատճառով եղած
պառակտումէն չախորժելով՝ անմուանալին Հերեան
և Պ . Գրիգորը հրաւիրակ ղրկուեցան : Եկան Հնչակ-
եանք պաղ երեսով . իսկ Միութեան Ատենա-
պետը պառկելու պատրաստուած ըլլալուն չէր կարո-
ղացեր գալ : Երեկոյթը հետզհետէ ջերմ մթնոլորտ մը

ունեցաւ և ամենքս ալ ուրախ տրամադրութեամբ և
զոհ սրտով մեկնեցանք :

29. — Միշտ երթալու խորհուրդ , բայց միջոցը
կը պակսէր : Երեկոյեան ընթրիքի միջոցին Պ . Պզտիկ-
եան երկտողով մը կը հաղորդէր .- կէս գիշերին Գարա-
թաշ երթալու պատրաստ նաւ կայ .- Որոշեցինք երթալ
եթէ կառավարութեան կողմէն դժուարութիւն չը հան-
ուէր : Յրուած կայքերը և ընկերները հազիւ ժողովե-
ցինք նաւահանգիստը , ծովը խաղաղ էր . ժամը 12ին մեկ-
նեցանք և անմնաս հասանք . նաւուն անունը թէ և մեծ .-
Աննիպատ - բայց խկապէս փայտէ անձու կոյտ մ'էր ,
ո՛չ սանդուխ և ո՛չ զամառա ունէր , համարեայ զլտոր-
ուելով մէջը խնկանք : Ամեն ոք կէս գիշերուայ խոր քու-
նով կը խորդար , բաւական ատեն ոտքի վրայ մնացինք
խոր լռութեան մէջ , որովհետեւ կանխաւ պատուիրուած
չէր . նաւապետը երկօրեայ ալիկոծութենէն անքուն
մնալով կը քնանար : 'ի վերջոյ բացօդեայ մէկ մէկ
տեղ սեղմուեցանք և թիարանի դատապարտուածներ
րու գիշեր մը անցուցինք : Մովը կարծես մեզմէ չա-
խորժեցաւ , զայրալիր զարթնում մը ունեցաւ եւ մինչեւ
առաւօտ օրօրուելով չը թողուց , որ աչքերնիս փակենք :

30. — Առաւօտեան ժամը 4ին հասանք Գարաթաշ .
ծովը հետզհետէ խաղաղեցաւ , նաւակով ծովեզերքին մօտ
իջանք , բայց շալակով ցամաք ելանք : Ատանացի ծա-
նօթ բարեկամներ , Տիարք Տիգրան Թաթէոսեան և
Նազարէթ Մարգարեան օթոմոպիլներով առաջնորդե-
ցին մեզ Միւտիրին պաշտօնատունը : Կառավարիչ Պ .
Գութէ բարի-գալուստի եկաւ եւ կէսօրուայ ճաշին
հրաւիրեց . նոյն օրը մտադիր էինք մեկնիլ և երկտո-
ղով տեղեկութիւն տուինք Ատանա , բայց Ատանայէն

չուտ վերադառնալու խօսք տուող շօֆէօրները
չը վերադարձան, որով ընդ առաջ եկողները 'ի զուր
երկար սպասելով քաղաք վերադարձեր էին: Երեկոյին
փառաւոր ճաշտուաւ Միւտիրը, որուն ներկայ գտնուե-
ցաւ Պ. Գութէն Ն. Արքութեան հրաւերով:


Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր

1. — Նախաճաշէն ետքը ժամը Տին մեկնեցանք.
քաղաքին մօտերը ընդառաջ եկան Պ. Տամատեանը,
Առաջ. Փոխանորդը, Ռուբինեան Ակումբի անդամնե-
րէն և բաւական ազգայինք: Հանդիսաւոր մուտ-
քով եկեղեցի գացինք, ուր սովորական արարողութե-
նէ ետքը Առաջնորդարան ելանք: Բաւական հանգստէ
յետոյ՝ առաջնորդուեցանք Ռուբինեան Ակումբը, ուր
մինչեւ յարմար բնակարանի մը պատրաստուիլը մէկ
շաբաթի չափ պահուասիրուեցաւ ևւ շատ գոհ մնաց:

Յետ ութնամսեայ բացակայութեան Ն. Արքութիւնը
ողջամբ վերադարձաւ իր սիրելի և տառապակոծ
Հօտին գլուխը:



ՅԱԻԵԼՈՒԱԾ



Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Մ

1. Տեա Կանխարան

Ատանատա Էրմէնի Կաթողիկոսըղընա

Հատիսէի զաիլէ միւնասիպէթի իլէ պին-
լէրճէ Էրմէնիլէր թէլէֆ օլունտը, ֆրանսըզլարըն
րիւճաթընը միւթաագըպ հէօքիւմէթ ի օսմանիյէնին
րաֆէթի սայէսինտէ մուհաֆազա տլթընտա ալըն-
տըք. միւթէսարըֆ պէյ հազրէթլէրի ասայըշըն թէ-
էմինինէ ֆէվզ էյ աոտէ չայըշմագտա, անճագ ֆրան-
սըզլարըն ավտէթի իլէ իհթիմալ հայաթըմըզ թէ հ-
լիքէյէ մաարուզ գալաճաղընտան, թէշէպպիւսաթ ը
սիյասիյէ իճրասը իլէ իշպու իհթիմալըն պէհէմ հալ
րէֆաղընը ինսանիյէթ նամընա իսթիրհամ էյլէրիզ:

Էրմէնի Մուրախասը

Էրմէնի Կաթողիկ Մուրախասը

ԲԱՀԻՊ ԻԱԶԱՏՈՒՐ

ԱՐՓԻԱՐԵԱՆ

Բրօթիսթանիթ Բէիսի

ԱՐՐԱՀԱՄ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

1920, Մարտ 5

Մարտ 2

Մագած դէպքի հետեւանօք հազարաւոր Հայեր
կորսուեցան. ֆրանսացիներու նահանջով Օսմանեան
կառավարութեան մարդասիրութեան շնորհիւ պաշտ-
պանութեան տակ առնուեցանք: Նորին վսեմութիւն
Կառավարիչը անդորրութիւնը պահպանելու համար
վերջին ծայր կ'աշխատի, մինակ ֆրանսացիներու
հաւանական վերադարձը կեանքերնիս վտանգի տակ
պիտի դնէ. յանուն մարդասիրութեան կը խնդրենք
որ պէտք եղած դիմումները կատարելով այս հաւա-
նականութեան առաջքն առնէք:

Ա. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ

ԻԱԶԱՏՈՒՐ ՎՐԴ.

ԱՐՓԻԱՐԵԱՆ

1920 մարտ 5

Մարտ 2

2.- 52 1

LE GÉNÉRAL GOURAUD

Beyrouth, le 12 Mars 1920

Monseigneur ,

Je suis heureux de mettre à votre disposition mon yacht l'«Albatros».

En exprimant à Votre Béatitude mes vœux pour la haute mission qu'Elle va remplir en Occident, je me permets de lui exposer combien j'ai été surpris d'apprendre que les Arméniens de Cilicie ne rendaient pas justice aux efforts faits par la France pour les protéger.

Je suis convaincu qu'il ne peut s'agir que d'une minorité exaltée ou ignorante et que l'élite de la masse de la Nation Arménienne ne peut méconnaître que si la France n'a pu partout arriver à sauver les Arméniens des massacres, elle a pourtant généreusement versé le sang de ses soldats et réussi ainsi à sauver beaucoup des vôtres.

Je vous prie, Monseigneur, d'agréer l'expression de ma très haute considération.

Gouraud

ԶՕՐԱՎԱՐ ԿՈՒՐՕ

Պէյրուս, 12 Մարտ 1920

Ձերդ Սրբազնութիւն,

Երջանիկ եմ որ կրնամ Ձեզի տրամադրել
«Ալպաթրոս» գրօսանաւս:

Յայտնելով Ձերդ Սրբազնութեան իմ մաղ-
թանքներս՝ Արեւմուտքի մէջ կատարելիք իր բարձր
առաքելութեան, թոյլ տրուի ինձ յայտնել թէ որ-
քա՛ն զարմացած եմ լսելով՝ որ Կիլիկիոյ Հայերը ըստ
արժանւոյն չեն գնահատեր այն ճիգերը, զոր ֆրան-
սան ըրած է զիրենք պաշտպանելու համար:

Ես համոզուած եմ թէ տգէտ, գրգռուած փոք-
մասնութեան մը մասին է խօսքը, եւ Հայ Ազգի ընտ-
րանին, ինչպէս նաեւ անոր ամբողջութիւնը չեն ան-
գիտանար, որ եթէ ֆրանսան չը կրցաւ ամենուրեք
Հայերը ազատել կոտորածներէն, սակայն վեհանձնօ-
րէն թափեց իր զինուորներուն արիւնը եւ այսպէսով
կրցաւ ազատել Ձերիններէն շատերը:

Կը խնդրեմ որ ընդունիք, Սրբազան, իմ ամենա-
բարձր համարմանս հաւաստիքը:

Ստորագր.

3.- 52 7

Paris, le 31 Mars 1920

SAHAG II. Catholicos des Arméniens de Cilicie

à

Son Excellence Monsieur MILLERAND

Président du Conseil, Ministre des Affaires
Etrangères de la République Française

PARIS.

Excellence,

En notre qualité de Catholicos du Siège Séculaire de la Cilicie et avec la conviction profonde d'un homme qui a une confiance absolue sur la générosité de la France, de cette France qui n'a jamais manqué de faire un beau geste devant le recours de ceux qui ont cherché refuge et asil dans son sein, de cette France soutien et protecteur des faibles et le propagateur des idées de liberté et des principes de justice à travers tout le monde et tout les âges, et malgré notre vieillesse et l'état précaire de nos forces physiques épuisées et ruinées par de longues souffrances sans précédent, nous avons cru de notre devoir de venir en France, à qui l'occupation de la Cilicie est confiée, pour exposer la situation affreuse qui y règne.

De crainte de dérober à votre Excellence les heures précieuses et de la troubler dans ses préoccupations importantes, pour ne pas causer des en-

nuis et créer des émotions à la Noble et Chevaleresque Nation Française et l'affliger, nous nous éviterons de faire le récit du sang, des tueries et du crime quotidien. Mais nous exposerons seulement ce que nous considérons urgent et nécessaire pour prévenir le fléau imminent que toutes les indices précurseurs font prévoir.

Lorsque le Général GOURAUD, ce glorieux soldat de la France glorieuse, nous a demandé à Beyrouth le but de notre voyage, notre seule et sincère réponse fut : « Servir la France et prier la métropole de renforcer les forces françaises en Cilicie ». Il est superflu et inutile de dire que ce service est étroitement lié avec la sécurité de tous les Chrétiens de la Cilicie, en général, et de la population arménienne, en particulier, population déjà décimée périodiquement à travers les âges et menacée dans son existence même par les récents massacres.

Quand même que le mouvement nationaliste turc soit dirigé contre tous les chrétiens sans distinction, pourtant les publications d'une certaine presse turque et des programmes et des propagandes secrets démontrent que les Turcs considèrent comme ennemis principaux les Français et les Arméniens seulement, dont la preuve certaine et irréfutable ; les tristes événements de Marache et des environs; le massacre, sans merci et sans distinction des soldats français et des Arméniens, le blocus de Zeïtoun et Hadjine la menace de

plonger toute la Cilicie dans le feu et dans le sang.

Pour éviter et prévenir en partie ces dangers, de différents moyens sont proposés, dans des circonstances différentes, aux autorités locales qui les a pris en considération. Mais le moyen le plus efficace et le plus sûr, c'est de ne pas faire crédit à la fausse amitié des différentes races musulmanes et d'avoir une confiance absolue sur les chrétiens et surtout sur les Arméniens qui n'ont fait et ne feront jamais aucune distinction entre les Français et les Arméniens qui est le seul élément dont les intérêts vitaux sont confondus avec ceux de la France, qui est la seule race prédestinée en Cilicie pour le rôle d'intermédiaire entre les idées de progrès et de civilisation, la culture occidentale et l'Orient.

La cause principale de la haine et de l'inimitié des turcs contre les Arméniens toujours, et, durant la guerre surtout a été leur esprit de progrès et l'amour de la grande sympathie qu'ils nourrissaient envers les grandes démocraties occidentales, surtout envers la France. Pendant la guerre non seulement les hauts fonctionnaires turcs mais même les consuls allemands demandèrent souvent pourquoi les nouvelles des victoires françaises faisaient sourire et irradier les visages Arméniens et celles des succès allemands les faisaient attrister. Il était bien naturel que nous ne pourrions pas oser répondre directement que l'amour et la sympathie des Arméniens envers la France n'est

ni d'hier ni d'aujourd'hui, mais ils leur sont légués des siècles anciens, des jours et de l'époque des Croisades. Lorsque l'Europe entière était envahie des désirs et de l'élan juste de sauver la Terre-Sainte, les princes arméniens de Cilicie et surtout toute la population arménienne des montagnes et des plaines ciliciennes ont démontré leur élan et leur attachement au christianisme et à la cause de la civilisation en offrant leur collaboration aux croisés.

Il n'est pas nécessaire d'ailleurs d'aller si en arrière dans les profondeurs de l'histoire et de recourir à ces données historiques pour y puiser la preuve de ces vérités. Voilà les récents événements de Marache où les Arméniens ont lutté non seulement pour se défendre eux-mêmes, mais aussi pour l'honneur du drapeau français. Voici le télégramme adressé par les Arméniens de Hadjine par lequel une poignée d'Arméniens, qui cernés par les bachibozouks et les bandes de Moustafa Kémal, et décidés à lutter jusqu'au dernier moment imploraient les autorités françaises d'Adana de leur envoyer du secours et des renforts et n'oubliaient d'ajouter avec un accent sublime que, dans le cas contraire - ils étaient décidés à mourir avec la gloire pour l'honneur de la France.

Ainsi donc, les Arméniens de la Cilicie sont liés à la France encore une fois par le prix de leur sang et ce sang écoulé pour la cause commune a consolidé leur solidarité pour la tâche

grande et responsable qu'ils ont à remplir dans cette région à présent et à l'avenir.

Monsieur le Ministre, c'est poussé par ces sentiments de solidarité et par la conscience de responsabilité que nous prenons la liberté d'attirer la haute attention du Gouvernement de la République Française sur la situation délicate existante en Cilicie et de le prier :

1°.- D'avoir une confiance absolue sur la sincérité et la fidélité des Arméniens;

2°.- De respecter l'esprit de civilisation adopté par les Arméniens et conservé par eux au prix de leur sacrifice des millions d'âmes et de ne pas les considérer pareils et égaux, au point de vue de culture et de sentiments, aux éléments musulmans criminels et destructeurs;

3°.- De renoncer définitivement à cette idée dont aux conséquences tristes nous sommes témoins ; que les Turcs peuvent être des amis des Français en Cilicie;

4°.- De réorganiser la gendarmerie avec l'élément chrétien, attendu que l'expérience quotidienne nous démontre la trahison des gendarmes musulmans qui désertent avec les armes françaises et se rallient aux bandes nationalistes turques.

5°.- D'envoyer de nouveaux renforts pour sauver toute la Cilicie de devenir le théâtre de nouveaux crimes et des toeries humaines ainsi que pour sauver le prestige séculaire de la France en Orient qui est en jeu en ce moment et il y a

nécessité de relever ce prestige.

S'il existe difficulté pour l'envoi et le sacrifice de nouvelles forces, veuillez ordonner qu'on arme les Arméniens sous la surveillance des officiers français et qu'on reconnaisse la nécessité de leur collaboration. Je garantis le Gouvernement de la République Française que les Arméniens considèrent comme une gloire la mort sous le drapeau français que de se laisser prendre aux avances vénimeuses des Turcs que ceux ci ne perdent aucune occasion de faire pour les éloigner des Français.

Monsieur le Ministre, si notre mission en France est couronnée du succès au profit de l'honneur de la France et à l'avantage de la malheureuse nation arménienne, nous rentrerons en Cilicie avec la satisfaction du devoir accompli et nous passerons le reste de nos jours en priant pour la gloire et la grandeur de la France.

Veuillez agréer, Monsieur le Ministre, l'assurance de nos considerations les plus distinguées.

SAHAG II. Catholicos des Arméniens
de Cilicie

Բարիզ, 31 Մարտ 1920

Սահակ Բ. Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ
Առ

Ն. Վ. Պ. ՄԻԼԸՌՈՒԱՆ, Նախարարապետ եւ Արտաքին
Գործոց Նախարար Ֆրանսա. Հանրապետութեան
Բարիզ

Վսեմափայլ Տէր,

Կիլիկիոյ դարաւոր Աթոռին Կաթողիկոսի հան-
դամանքով, ե խորապէս համոզուած վեհանձնութեանը
Ֆրանսայի, որ միշտ հաճոյական վերաբերում մը ու-
նեցած է հանդէպ անոնց, որ իր ծոցին մէջ ապաստան
փնտռած են. այն Ֆրանսային որ բոլոր դարերու եւ
ամեն երկրի մէջ նեցուկն ու պաշտպանը տկարներու եւ
ազատութեան գաղափարներուն ու արդարութեան
սկզբունքներուն խորհրդանիշն եղած է, ե որուն ար-
տօնուած է Կիլիկիոյ դրաւումը, կը գլխենք այդ
Ֆրանսային, հակառակ մեր ծերութեան ու աննա-
խընթաց տատապանքներէ մեր քայքայուած առողջու-
թեան, պարզելու համար այն ահաւոր խտտութիւնը
որ կը տիրէ այժմ Կիլիկիոյ մէջ :

Զերդ Վսեմութեան կարեւոր դրադմունքին արդելք
չըլլալու, ե անոր թանկագին վայրկեաններուն խնայե-
լու երկիւղածութեամբ, ինչպէս նաև տաղտուկներ
ե յուզումներ չի պատճառելու. համար ազնիւ եւ ասպե-
տական Ֆրանսա. Ազգին, պիտի զգուշանամ ամենար-
եայ ոճիրին, թափուած արեան եւ սպանդին պատմու-
թիւնը ընելէ : Այլ միայն պարզել՝ ինչ որ անհրաժեշտ
եւ ստիպողական կը նկատենք, արդիւիւր համար ան-

միջական այն պատուհասը , որուն նախընթաց նշանները
կը տեսնենք արդէն :

Երբ Զօրավար Կուռօ , փառապանծ Ֆրանսայի
փառաւոր Զինուորը , Պէյրուսի մէջ հարցուց մեր
ճամբորդութեան նպատակը , մեր միակ ու անկեղծ
պատասխանը եղաւ . - Մառայել Ֆրանսայի , և խնդրել
մայրաքաղաքէն որ Կիլիկիոյ գրաւման ուժերը ստուա-
րացնէ - : Աւելորդ և անօգուտ է ըսել՝ թէ այս պարա-
զան սերտօրէն կապուած է Կիլիկիոյ բովանդակ քրիս-
տոնէութեան ապահովութեան , և ի մասնաւորի Հայ
Ժողովրդեան , որ տարիներու ընթացքին պարբերաբար
կոտորակուած է և ներկայ Չարդերով ալ նոյն իսկ իր
դոյութիւնը վտանգի տակ է :

Արչափ որ թրքական ազգայնական շարժումը
ուղղուած ըլլայ անխափ քոյոյ քրիստոնէից դէմ , և
սակաջն թուրք մամուլի մէկ մասին հրատարակութիւն-
ներն ու գաղանի ցրուած կարգ մը ծրագիրներ ու
թուուցիկներ , կը հաստատեն որ թուրքերը իբր զլիա-
ւոր թշնամի կը նկատեն միայն Ֆրանսացիներն ու Հա-
յերը . Մարաշի և շրջակայից դժբախտ պատահարները ,
անագորոյն և առանց խտրութեան Չարդը հայ և Ֆրան-
սայի զինուորներու , Զէյթունի և Հաճրնի պաշարում-
ները , և սպառնալիքը հուրի և արեան մատնելու բո-
վանդակ Կիլիկիան՝ անհերքելի ապացոյցներն են այդ
մտայնութեան :

Այս վտանգները մատամբ կասեցնելու , տարբեր
պարագաներու մէջ գանազան միջոցներ առաջարկուած
են տեղական իշխանութեանց , և որոնք նկատի ալ
առնուած են . բայց ամենէն ազգու և ամենէն ապա-
հով միջոցն է՝ հաւատ չընծայել կեղծ բարեկամութեանը

զանազան խառն ցեղերուն և բացարձակ վատահուժիւն ունենալ քրիստոնեաներուն և մանաւանդ Հայերուն վրայ :

Հայը երբեք խտիր դրած չէ և չպիտի ալ դնէ Ֆրանսացիին և հայուն միջև . Հայը միակ տարրն է , որու կենսական շահերը կը նույնանան Ֆրանսայի կենսական շահերուն հետ , և Հայը նախասահմանուած միակ ցեղն է Կիլիկիոյ մէջ իբր միջնորդ ծառայելու ընդմէջ Արեւելքի և Արեւմտեան մշակոյթին , քաղաքակրթութեան և յառաջագիւտութեան դադափարնելուն :

Թուրքերուն ատելութեան դիտաւոր պատճառը առ Հայս միշտ՝ և մանաւանդ ընդհանուր պատերազմի օրերուն , այս վերջիններուն յառաջդիմասէր ոգին , արեւմտեան մեծ աւաճապար պետութեանց և մասնաւորաբար Ֆրանսայի հանդէպ ունեցած սէրն ու համակրութիւնն են : Պատերազմի ընթացքին ոչ միայն բարձրատիճան թուրք պաշտօնատարներ , այլ նոյն խակ Գերման Հիւպատոսներ կը հարցնէին յաճախ թէ - Ինչո՞ւ հայ գէմքեր կը ժպտին և կը ճառագայթեն Ֆրանսական յաղթանակի լուրերուն վրայ , և կը տխրին Գերման յաղթանակներէն : Շատ բնական էր , որ վերապահ գանուէինք բացէ ի բաց ըսելու թէ Հայերուն սէրն ու համակրութիւնը հանդէպ Ֆրանսայի ո՛չ երէկ ու ո՛չ ալ այսօր ծնունդ առած է , հապա իրենց կտակուած է հին դարերէն , Սաշակիրներու օրերէն ու շրջանէն : Երբ բովանդակ Եւրոպան Սուրբ Տեղիքը ազատելու արդար խոյանքովն ու փափաքովը կը սարսուար , Կիլիկիոյ Հայ իշխանները եւ մանաւանդ լեւնային ու դաճճային Կիլիկիոյ Հայ բը .

Յակչուքիւնք ապացոյցը տուին իրենց խանդին եւ յարումին քրիստոնէութեան ու քաղաքակրթութեան դատին իրենց օժանդակութիւնը բերելով Սաչակիրներուն :

Այս ճշմարտութիւնները փաստելու համար պէտք էր կայ դարերն ու պատմութիւնը քրքրելու :

Ահա Մարաշի երէկեան դէպքերը, ուր Հայերը կռուեցան ոչ միայն ինքզինքնին պաշտպանելու, այլ նաև Քրանսական դրօշին պատիւը : Ահա Հաճընի Հայերուն կողմէ ուղղուած հեռագիրը, ուր Մուսթաֆա Քէմալի հրոսակներէն ու պաշրպօզուքներէն պաշարուած բուն մը Հայեր, վճռած են կռուելու մինչեւ վերջին վայրկեանը . կը խնդրեն Ատանայի Պրանս . Իշխանութիւններէն օգնութիւն եւ օժանդակութիւն, եւ չէին մտնար աւելցնելու վսեմ շեշտով մը թէ, հակառակ պարագային « իրենք վճռած են փառքով մեռնել Պրանսայի պատիւին համար » :

Այսպէս ուրեմն Կիլիկիոյ Հայերը անդամ եւս կապուած են Պրանսայի իրենց արեան գնովը, ու հատարակաց դատին համար թափուած այդ արիւնը ամբարապնդած է իրենց համերաշխութիւնը այն մեծ ու պատասխանատու գործին մէջ, զոր պիտի կատարեն ներկային ու ապագային, այս շրջանին մէջ :

Պարոն Նախարար, համերաշխութեան այս զգացումներէն ու պատասխանատուութեան գիտակցութենէն մշուած՝ կը համարձակինք Պրանս . Հանրապետութեան կատարութեան բարձր ու շաղրութիւնը հրաւիրել Կիլիկիոյ ներկայ փափուկ կացութեան, եւ խնդրել որ .

1 . Ունենայ բացարձակ վստահութիւն Հայերուն

անկեղծութեան և հաւատարմութեան վրայ :

2. Յարգութի քաղաքակրթական այն ոգին , զոր Հայերը ձեռք բերած և դարերէ ի վեր պահած են ի դին միլիոնաւոր զոհերու , և երբեք չնկատել զանոնք զգացումի և մշակոյթի տեսակէտէն հաւատարեւման ոճրագործ և աւերիչ միւսուլուման տարրերուն :

3. Միանգամ ընդմիջտ հրաժարիլ այն գաղափարէն թէ թուրքերը կրնան բարեկամ ըլլալ Ֆրանսացւոյ կիլիկիոյ մէջ , գաղափար՝ որուն ախուր հետեւանքներուն ականատես վիաներն ենք :

4. Վերականգնել Ռատիկան-զինուորութիւնը քրիստոնեայ տարրով , որովհետեւ հանապազօրեայ փորձառութիւնը ցոյց կուտայ մեզ դաւաճանութիւնը միւսուլուման ռատիկան-զինուորներուն , որոնք դասալիք կ'ըլլան միանալու ազգայնական թուրք հրտախումբերուն՝ տանելով իրենց հետ Ֆրանսական զէնքերը :

5. Նոր օգնական ուժեր դրկել , խնայելու համար կիլիկիան ոճիրներու և սպանդներու նոր թաար ըլլալէ և փրկելու համար մանաւանդ դարաւոր հմայքը Ֆրանսայի՝ Արեւելքի մէջ , հմայք՝ որ ներկայիս վտանգուած է , և պէտք ունի բարձրացուելու :

Եթէ դժուարութիւններ կան նոր օգնական ուժերու առաքումին և նոր զոհողութիւններուն յանձնառութեանց համար , բարեհաճեցէք հրամայել , որ Ֆրանսական Սպաներուն հսկողութեան տակ գինեն Հայերը և ընդունին անոնց գործակցութեան անհրաժեշտութիւնը : Կը վստահացնեմ Ֆրանս . Հանրապետութեան Կառավարութիւնը թէ Հայերը փառք կը նկատեն Ֆրանսական դրօշին տակ մեռնիլը , քան թէ ըսել թրքական խտտմնալից , բայց թուհաւոր առաջարկ-

ները՝ Ֆրանսացիները հեռացնելու նպատակաւ :

Պարոն Նախարար, եթէ մեր առաքելութիւնը ի Ֆրանսա պսակուի յաջողութեամբ, ի շահ Ֆրանսայի պատուոյն և յօգուտ դժբաղդ Հայ Ազգին, պարտականութիւնս կատարած ըլլալու գոհունակութեամբ պիտի վերադառնանք Կիլիկիա, ու մեր օրերուն մնացեալները պիտի անցնենք աղօթելով Ֆրանսայի մեծութեան և փառքին համար :

Հաճեցէք ընդունիլ, Պարոն Նախարար, ամենաբարձր համարմանս հաւատովքը :

Ը.Ա.ՀԱԿԻ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՈՑ ԿԻՂԻԿԻՈՅ

4.- 52 10

Paris. le 1^{er} Avril 1920

SAHAG II. Catholicos des Arméniens
de Cilicie

à

Son Excellence Monsieur Paul DESCHANEL
Président de la République

Palais de l'Elysée.

Excellence,

L'amabilité que Votre Excellence a eue en nous accordant audience aujourd'hui nous a infiniment obligé.

Nous sommes sûr et certain que toute la population arménienne de Cilicie sera très touchée, comme nous, de ce grand honneur que vous venez de lui faire en la personne de son Chef Spirituel et de cette marque solennelle de sympathie que la France lui démontre par l'intermédiaire de son digne Représentant.

Nous profitons de cette occasion propice pour présenter encore une fois, à votre Grande Nation nos hommages et nos sentiments de reconnaissance, en y joignant ceux de notre peuple, que des liens traditionnels si solides attachent à Elle.

Les paroles prononcées aujourd'hui par Votre Excellence, et hier par l'Honorable Président du Conseil, Ministre des Affaires Etrangères de votre Gouvernement, nous ont beaucoup réconforté; c'est un indice de plus que la France qui s'est intéressée toujours au sort de la Nation Arménienne, s'intéressera à son développement et à sa prospérité dans l'avenir.

Bénié soit donc la France dont, pour la grandeur et pour les succès, nous ne cesserons pas de prier tout le reste de nos jours.

Veuillez agréer, Monsieur le Président, l'assurance de nos considérations les plus distinguées.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie.

Բարիւղ, 1 Ապրիլ 1920

Սահակ Բ. Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ

առ

Նորին Վսեմութիւն Պ. ԲՕԼ ՏԷՇԱՆԷԼ

Նախագահ Հանրապետութեան

Էլիզէի Պալատ

Վսեմափայլ Տէր,

Այսօր ունեցնողութիւն մը շնորհելու Ձեր վսեմափայլութեան բարեացակամութիւնը զմեզ անհունա շնորհապարտ թողուց :

Վստահ ենք ու համոզուած որ, Կիլիկիոյ բովանդակ Հայ բնակչութիւնն ալ մեզ նման, շատ պիտի զգացուի այն մեծ պատուէն, զոր դուք ըրիք իրեն, յանձին իր հողեւոր Պետին, և այն համակրանայ հանդիսաւոր արտայայտութենէն, զոր Ֆրանսան ցոյց կու տայ իրեն իր արժանընտիր Ներկայացուցչին միջոցաւ :

Այս պատեհ առիթէն կ'օգտուինք անդամ մը ևս ներկայացնելու համար Ձեր մեծ Ազգին մեր ակնածանքն ու երախտադիտական զգացումները, անոնց միացնելով նաև նման զգացումները մեր ժողովուրդին, որ կապուած է Ֆրանսային աւանդական և հաստատուն կապերով :

Ձերդ վսեմութեան կողմէ արտասանուած խօսքերը , և անոնք զորս երէկ ըսաւ Պատուարժան Վարչապետն ու Արտաքին Գործոց Նախարարը Ձեր կառավարութեան , մեզ շատ կազդուեցին . իբրև ապացոյց որ Ֆրանսան միշտ հետաքրքրուած է Հայ Ազգի ճակատագրով , հիմակ ալ կը հետաքրքրուի իր ներկայի ապահովութեանը , և պիտի հետաքրքրուի նաև իր զարգացումովն ու բարգաւաճումովը ապագայի մէջ :

— Օրհնեալ ըլլայ Ֆրանսան , որուն մեծութեան և յաջողութեանց համար աղօթելէ չպիտի դադրինք մեր կենաց բովանդակ մնացեալ օրերուն մէջ :

Հաճեցէք ընդունիլ , Պ . Նախագահ , ամենարարձր մեծարանացս հաւատարիքը :

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱԹՈՂՈՍԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻՒԿԻՈՅ

5. - 52 12

Paris, le 2 Avril 1920

SAHAG II, Catholicos des Arméniens
de Cilicie

à

Monsieur Léon BOURGEOIS

Ancien Président du Conseil, Président du Sénat.

Monsieur le Président,

Venu ici pour demander l'aide du Gouvernement français pour la population arménienne menacée par les Turcs en Cilicie, je viens d'avoir la satisfaction dans mes entrevues avec M^r le Président de la République et M^r le Président du Conseil de recevoir l'assurance que tout le possible sera fait pour conjurer le danger.

Je serais heureux, Monsieur le Président, de pouvoir avant de quitter la capitale de la noble France, vous présenter mes hommages, comme l'apôtre illustre de la Société des Nations et à un des généreux amis de la cause arménienne.

Veuillez agréer, Monsieur le Président, l'assurance de ma haute considération.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

Բարիզ, 2 Ապրիլ 1920

Սահակ Բ. Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ
առ.

Պ. Լէոն ՊՈՒՐԺՈՒԱ:

Նախկին Վարչապետ, Նախագահ Մերակոյտի

Պարոն Նախագահ,

Հոս եկած ըլլալով Ֆրանսոսական Կառավարութեան օգնութիւնը հաշուելու Հայ ժողովրդեան համար, որ Կիլիկիոյ մէջ թուրքերուն կողմէ սպառնալեաց տակ կը գտնուի, Հանրապետութեան Նախագահի և Վարչապետին հետ ունեցած տեսակցութիւններուս գոհունակութիւնը ունեցայ հաւատով քննի ստանալու թէ ամէն կարելին ի գործ պիտի դրուի վտանգը հեռացնելու համար:

Երջանիկ պիտի ըլլայի, Պարոն Նախագահ, սղնուսական Ֆրանսոսի Մայրաքաղաքէն մեկնելէ առաջ, Ձեզի ներկայացնելով իմ յարգանքներս, իրրեւ, մեծանուն առաքեալին Ազգերու Ընկերակցութեան և Հայկական դատին վեհանձն քարեկամներէն միոյն:

Հաճեցէք ընդունիլ, Պ. Նախագահ, բարձր համարմանս հաւատով քր:

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ ԿԻԼԻԿԻՈՅ

SÉNAT

Cabinet

du

Président



Paris, le 3 Avril 1920

Monsieur Léon BOUGEOIS

Président du Sénat,

à

Sa Grandeur SAHAG II.,

Catholicos des Arméniens de Cilicie.

J'ai l'honneur de remercier Votre Grandeur des sentiments qu'Elle a bien voulu m'exprimer et j'aurais été heureux de recevoir sa visite, mais je dois quitter Paris demain accompagnant a Nice M. le Président de la République, et je ne serai de retour que vendredi prochain.

J'espère que Votre Grandeur sera encore à Paris à cette date et qu'il me sera ainsi possible d'avoir avec Elle l'entretien qu'elle désire.

Je prie Votre Grandeur d'agréer l'assurance de ma haute considération.

Léon Bourgeois

ԾԵՐԱԿԱՅՏ

Նախագահական դիւան

Բարիզ, 3 Ապրիլ 1920

Պարոն Լէօն Պուրժուա
Նախագահ Մերակոյտի
Առ Ն. Օծուժիւն ՍԱՀԱԿ Բ.

Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ

Պատիւ ունիմ շնորհակալութիւններ յայտնելու Ձեր Օծուժեան այն զգացումներուն համար, զորս բարեհաճած էք յայտնելու առ իս, և երջանիկ պիտի ըլլայի ընդունելով Ձեր այցելութիւնը, բայց ստիպուած եմ վաղը մեկնիլ Բարիզէն, ընկերակցելով Հանրապետութեան Նախագահին ի Նիս, և յառաջիկայ Սերբաթ մ'աչն պիտի կրնամ վերադառնալ :

Կը յուսամ որ Ձերդ Օծուժիւնը մինչ այդ Բարիզ պիտի ըլլայ տակաւին, ու այսպէսով կարելի պիտի ըլլայ ինձի ունենալ այն անսակցութիւնը որուն փափաքող է :

Կը խնդրեմ հաճեցէք ընդունիլ բարձր համարմանս հաւատարմութիւնը :

ԼԵՈՆ ՊՈՒՐԺՈՒԱ

52 12.

Ministère RÉPUBLIQUE FRANÇAISE
des
Affaires Étrangères

Direction Politique

le 9 Avril 1920

Monseigneur,

Vous avez bien voulu me remettre à la date du 31 Mars un mémoire sur la situation actuelle de la Cilicie et sur les circonstances qui vous ont décidé à venir vous-même en France pour exposer les graves inquiétudes des Arméniens de cette région.

J'ai pris connaissance de cette communication avec une attention toute particulière. Je tiens à renouveler l'assurance que la France entend se départir moins que jamais dans les conjonctures actuelles de sa politique traditionnelle à l'égard des Arméniens et qu'elle se préoccupe de prendre toutes les mesures propres à assurer leur sécurité.

Veuillez agréer, Monseigneur, les assurances de ma haute considération.

A. Millerand

Sa Sainteté
Monseigneur SAHAG II. Catholicos
des Arméniens de Cilicie
Hôtel des Deux-Mondes
P a r i s

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ
Նախարարութիւն

Քաղաքական Տեսչութիւն

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Բարիզ, 9 Ապրիլ 1920

Սրբազան ,

Դուք բարեհաճած էիք ինձի յանձնելու Մարտ 31-ին յիշատակագիր մը ի մասին Կիլիկիոյ ներկայ կացութեան , և այն պարագաներուն՝ որոնք Ձեզի մղեցին անձամբ Ֆրանսա գալու , այդ շրջանի Հայերուն ծանր մտահոգութիւնները պարզելու համար :

Այդ հաղորդագրութեան ծանօթացայ մասնաւոր ուշադրութեամբ մը , և կ'ուզեմ անգամ մը ևս կրկնել հաւատարիքը թէ , ներկայ իրադարձութեանց մէջ , Ֆրանսան մտադրած է երբէք չի շեղիլ իր աւանդական քաղաքականութենէն հանդէպ Հայերուն , ու ան կը պրաղի անոնց ապահովութիւնը հաստատող բոլոր միջոցները ձեռք առնելու :

Հաճեցէք ընդունիլ , Սրբազան , բարձր համարմանս հաւատարիքը :

Ա . ՄԻԼԸՌԱՆ

Ն. Ս. Օժուիթիւն

Ս Ա Հ Ա Կ Բ .

Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ

Օթէլ «Տէօ - Մօնտ»

Բ ա ռ ի զ

٤٩ 24

Paris, le 3 Avril 1920

Son Excellence Monsieur NITTI
Président du Conseil Suprême
San - Remo

Publications et déclarations d'après lesquelles Cilicie serait considérée territoire ayant caractère turc et que suzeraineté et drapeau turcs y seraient conservés ont causé grande émotion parmi 275000 chrétiens de Cilicie sans distinction de race et de rite.

Craignant responsabilité devant générations présentes et futures je suis forcé de joindre ma voix à celle de la population chrétienne de Cilicie et d'attirer attention du Conseil Suprême que chrétiens ont toujours formé majorité dans cette région et que même après diminution des chrétiens par massacres équilibre n'est pas rompu entre populations chrétiennes et musulmanes et que même ombre d'une suzeraineté nominale laissera porte ouverte aux difficultés alimentant espérances des nationalistes turcs.

Or, je prie conseil Suprême de prendre en considération vœux de population chrétienne qui est seul élément en qui civilisation peut s'appuyer et qui après tant de martyrs et de sacrifices n'acceptera jamais suzeraineté ottomane sous quelle forme qu'elle soit.

SAMAG II.
Catholicos des Arméniens de Cilicie

Բարիչ, 3 Ապրիլ 1920

Նորին Վսեմութիւն Պ. Ն.Թ.Թ.Ի

Նախագահ Գերագոյն Խորհուրդի

Սան - Ռէմօ

Հրատարակութիւններն ու յայտարարութիւնները, որոնց համեմատ Կիլիկիան պիտի նկատուի թրքական հանգամանք ունեցող հողատաւ և ուր պիտի պահուին թրքական դրօշն ու գերիշխանութիւնը, մեծ յուզում պատճառեցին Կիլիկիոյ 275000 Քրիստոնէից, առանց ցեղի և դաւանանքի խտրութեան :

Ներկայ և ապագայ սերունդներուն առջև պատասխանատու չը մնալու համար ստիպուած եմ իմ ձայնս ալ միացնելու Կիլիկիոյ Քրիստոնէեայ բնակչութեան ձայնին, և խնդրելու Գերագոյն Խորհուրդին ուշադրութիւնը այն իրողութեան վրայ, որ Քրիստոնէեայները միշտ մեծամասնութիւն կազմած են այս հողամասին վրայ, նայն իսկ ջարդերու հետեւանօք անոնց կրած նուազումին իսկ բերումով՝ չէ խախտած համեմատութի. նը Քրիստոնէեայ և Իսլամ բնակչութեանց մէջ, և անուանական գերիշխանութեան մը նշոյլն իսկ բաց դուռ պիտի թողու դժուարութիւններու, որոնք պիտի գորացնեն թուրք ազգայնականներու յոյսերը :

Կը խնդրեմ ուրեմն որ, Գերագոյն Խորհուրդը նկատողութեան առնէ բաղձանքը Քրիստոնէեայ ժողովուրդին, որ միակ տարրն է իւրեւ յենարան քաղաքակրթութեան, և որ այդքան զսնդութիւններէ և մարտիրոսապարտութենէ յետոյ երբեք չպիտի ընդունի թրքական գերիշխանութիւնը, ինչ ձեւի տակ ալ ըլլայ ան :

Ս Ա Հ Ա Կ Ր .

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՑ

6. - 52 47

Paris, le 3 Mai 1920

A Son Excellence
Monsieur le PRÉSIDENT
du Conseil des Ministres
et Ministre des Affaires Etrangères.

Excellence,

Les assurances données pour la sécurité des Arméniens de Cilicie avaient tranquillisé notre âme meurtrie. D'après les dernières nouvelles, la situation sanglante reste inchangée et de nouvelles tueries et massacres laissent toute la population chrétienne dans l'effroi.

Ourfa, qui fut démolie pendant la guerre et une grande partie de la population anéantie et dont les quelques survivants y étaient retournés depuis l'armistice, est laissée de nouveau aux mains des Turcs.

Hadjin se défend depuis longtemps par ses propres moyens, sans avoir aucun espoir de secours de l'extérieur.

Sis se défend par ses moyens locaux.

Féké est occupé par les Turcs.

La population chrétienne de Harounié et de Baghtché s'est repliée sur Adana, naturellement en laissant de nouvelles victimes.

Missis est menacé.

Les gares de Bilémédik, Khatch-Kiri et Kélébeg du chemin de fer Bagdad furent brûlées et les fonctionnaires chrétiens massacrés.

C'est sur ces évènements épouvantables, pendant que la population chrétienne, qui espérait une solution réelle de la part des Puissances protectrices de la Justice, en apprenant qu'en récompense des crimes et de la résistance insolente contre la civilisation, on laisse la Cilicie sous la suzeraineté des Turcs, les survivants de cette population martyre de l'idéal supplient qu'on veuille bien leur désigner un endroit sûr et leur épargner de nouveaux supplices, endroit où nous puissions attendre avec notre population la Pitié et la Justice de Dieu.

Veillez agréer, Excellence, l'assurance de ma haute considération.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

Son Excellence Monsieur MILLERAND,
Président du Conseil des Ministres
: et Ministre des Affaires Étrangères.

Բարիզ, 3 Մայիս 1920

Նորին Վսեմութիւն

Պարոն Վարչապետ և Նախարար Արտաքին Գործոց

Վսեմափայլ Տէր,

Կիւլիկիոյ Հայերուն ապահովութեան համար տրուած հաւաստիքները հանդարտեցուցած էին մեր վերաւոր հոգին: Վերջին լուրերու համաձայն եղերական կացութիւնը անփոփոխ է, և նոր ջարդեր ու սպանդներ բովանդակ Քրիստոնեայ բնակչութիւնը սարսափի ենթարկած են:

Ուրմիա, որ քարուքանդ եղաւ պատերազմի ընթացքին և որուն բնակչութեան մեծ մասը բնաջինջ եղաւ, ու հազիւ մաս մը վերապրողներ հոն դարձած էին, զինադադարէն ասդին դարձեալ թուրքերուն յանձնուած է:

Հանրն երկար ժամանակէ ի վեր ինքզինքը կը պաշտպանէ իր իսկ միջոցներով, առանց արտաքին աջխարհէն որևէ օգնութեան յոյս ունենալու:

Սիս կը պաշտպանուի տեղական միջոցներով:
Վահկայ գրաւուած է թուրքերէն:

Հարունիյէի և Պաղչէի քրիստոնեայ բնակչութիւնը Ատանա քաջուած է, բնականաբար նոր զոհեր տալով:

Միսիս սպառնալեաց տակ կը գտնուի :

Պաղտատի երկաթուղագծին Պելէմէտիք, Սաչքերի և Քէլէպէք կայարանները հրդեհուած և քրիստոնեայ պաշտօնեաները ջարդուած են :

Այս զարհուրելի իրողութեանց հանդէպ, երբ մանաւանդ Քրիստոնեայ ժողովուրդը Արդարութեան պաշտպան Պետութիւններէն արդար լուծում մը կը սպասէր, լսելով որ ի վարձ ոճիրներուն և անպարկեշտ դիմադրութեան ընդդէմ Քաղաքակրթութեան՝ Կիլիկիան կը դրուի թրքական վերջխանութեան տակ, խտիալի մարտիրոս այս ժողովրդեան վերապրողները կը խնդրեն, որ բարեհաճին ցոյց տալ իրենց ապահով վայր մը և խնայուի իրենց նոր տանջանքներ, վայր մը, ուր կարենայինք սպասել աստուածային Արդարութեան ու զթութեան :

Հաճեցէք ընդունիլ Վսեմափայլ Տէր, ամենաբարձր համարմանս հաւաստիքը :

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՈՅ ԿԻՆԻԿԻՈՅ

6.- 52 47

Paris, le 19 Mai 1920.

Monsieur le Président,

Les souffrances quotidiennes des survivants arméniens de Cilicie et notamment la menace de leur extermination totale, m'ont obligé de venir adresser un appel à la France chevaleresque.

Je n'ai pas demandé la justice que les Puissances de l'Entente ont promise pendant la guerre aux peuples opprimés et particulièrement aux Arméniens, je n'ai pas parlé des droits historiques que le peuple arménien possède en Cilicie, mais considérant les intérêts de la France comme les nôtres, j'ai sollicité la sécurité de la vie des Arméniens et la défense de l'honneur de la France.

Malgré les assurances qui nous ont été données, nous apprenons malheureusement que les troupes françaises vont évacuer Adana, sacrifiant les intérêts présents et futurs de la France, et avec eux, les débris décimés du peuple martyr, car des dizaines de milliers d'Arméniens, mettant leur espoir sur l'esprit de Justice et de liberté de la France, sont venus se rassembler à Adana.

Plus grave encore et plus alarmante est la décision du Conseil Suprême, qui divisant la Cilicie en deux sections, unit à la Syrie, sous la pro-

tection française, toute la région se trouvant à l'est du Djihoun, c'est-à-dire une partie importante de la Cilicie montagneuse. Cet arrangement ruine économiquement la Cilicie, bouleverse l'histoire séculaire, et de plus déchire en deux la population arménienne de cette contrée, sépare les membres d'une même famille et les rend étrangers les uns aux autres. Au nom d'un droit consacré par les siècles, je proteste contre cet arrangement et je prie la France généreuse de garder sous sa protection la Cilicie une et indivisible.

Veillez agréer, Monsieur le Président, l'assurance de ma haute considération.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

A Son Excellence

Monsieur MILLERAND

**Président du Conseil des Ministres
et Ministre des Affaires Etrangères.**

Բարիզ, 19 Մայիս 1920

Պարոն Նախագահ,

Հանապազօրեայ տառապանքը կիլիկիոյ վերապրող Հայութեան և ի մասնաւորի անոնց ամբողջական մնաջնջումին սպառնալիքը, զիս ստիպեցին որ գամ կոչ մը ուղղելու Ասպետական Պրանսայի :

Ես չի խնդրեցի այն արդարութիւնը զոր Համաձայնական Պետութիւնները խոստացան պատերազմի ընթացքին կեղեքուած ժողովուրդներուն և ի մասնաւորի Հայերուն, ես չի խօսեցայ այն դարաւոր իրաւունքներու մասին, զորս Հայ ժողովուրդը ունի կիլիկիոյ մէջ, բայց Ֆրանսայի շահերը մերիններն ալ նկատելով, խնդրեցի Հայերու կեանքի ապահովութիւնը, և պաշտպանութիւնը Պրանսայի պատւոյն :

Հակառակ մեզի տրուած հաւաստիքներուն, կը տեղեկանանք դժբալգաբար, որ Ֆրանսական զօրքերը պիտի քաշուին կիլիկիայէն, զոհելով Պրանսայի ներկայ և ապագայ շահերը, և անոնց հետ, տասանորդուած խլեակները մարտիրոս ժողովուրդին, տրուած ըլլալով որ տասնեակ հազարաւոր Հայեր, Պրանսայի արդարադատ և ազատասէր ոգւոյն վստահելով, եկած հաւաքուած են Ատանա :

Աւելի ծանր և աւելի յուսաբեկող է գերագոյն խորհուրդի որոշումը, որ բաժնելով կիլիկիան երկու հատուածի, Ֆրանսական պաշտպանութեան տակ Սու-

րիոյ կը միացնէ Ճիհուռնի Արեւելեան կողմի բովանդակ շրջանը, այսինքն լեռնային Կիլիկիոյ կարեւոր մէկ բաժինը: Այս կարգադրութիւնը տնտեսապէս կը մեռցնէ Կիլիկիան. վեր ի վայր կը շրջէ դարաւոր պատմութիւնը, և ասոնցմէ զատ երկուքի կը բաժնէ Կիլիկիոյ Հայութիւնը, իրարմէ կը զատէ նոյն ընտանիքին անդամները, և գանոնք իրարու օտար կը դարձնէ: Յանուն դարերէ նուիրագործուած իրաւունքի մը կը բողոքեմ այս կարգադրութեան դէմ, և կը խնդրեմ վեհանձն Պրանսայէն իր պաշտպանութեան (հովանաւորութեան) տակ պահել մի և անբաժանելի Կիլիկիան:

Հաճեցէք ընդունել Պ. Նախագահ, բարձր համարմանս հաւաստիքը:

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱՐՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՅ

6. - ٤٩ 47

Paris, le 19 Mai 1920

Monsieur le Président.

Ayant appris que d'après le traité turc la Cilicie a été morcelée en deux parties dont l'une va être replacée sous la souveraineté turque et l'autre sera annexée à la Syrie, j'ai cru, en ma qualité de Chef Spirituel des Arméniens et de Titulaire du siège du Catholicossat de Cilicie, de mon devoir de faire quelques remarques au sujet de ce règlement.

1.— La Cilicie est depuis de nombreux siècles une région ayant un caractère arménien:

a).— Le premier Etat, dans le sens juridique du mot, constitué sur le territoire de la Cilicie a été un état arménien; c'est la dynastie des rois arméniens «Roupinien» qui y a régné en toute souveraineté, jusqu'à l'invasion des mamelouks.

b) — Jusqu'à la veille de la guerre, la majorité de la population de Cilicie a été arménienne. C'est par le moyen des conversions forcées, des immigrations des Turkmènes, des Tcherkesses et d'autres peuples musulmans du Caucase et de la Roumélie et des massacres réitérés que le régime turc a travaillé à diminuer le chiffre des Arméniens et à bouleverser ainsi l'équilibre des populations. Malgré ces artifices mêmes, si l'on fait un recensement juste et équitable, si on exclut du chiffre total celui de la population du sandjak de Itchel (Selefké) qui ne doit pas figurer dans

les limites de la Cilicie et si on prend en considération le chiffre des Arméniens de Cilicie qui sont disséminés aux quatre coins du monde et qui attendent anxieusement, pour rentrer dans leurs foyers, le rétablissement d'une régime garantissant leur sécurité, on constatera que les Turcs ne forment pas du tout une majorité. Il faut prendre aussi en considération ceci que toute la population musulmane montagnarde de Cilicie est une population de race arménienne convertie à l'Islam par le fer et le feu; une étude, même superficielle, constatera sa physionomie et ses traditions arméniennes.

2°.- La Cilicie forma un tout économique indivisible: les deux parties séparées se complétant économiquement, ce serait priver une partie des ressources naturelles et économiques de l'autre et entraver la collaboration solidaire de la population arménienne de Cilicie pour le développement et la prospérité de l'ensemble du pays.

3°.- La Nation Arménienne qui avait déjà trop souffert en donnant plus d'un million de victimes pour la cause des Alliés et qui vient de souffrir encore une fois à Marache et dans d'autres localités de la Cilicie, ne méritait pas qu'elle fût oubliée dans la solution de la question cilicienne, que cette région, connue sous le nom de Petite Arménie, fût divisée en deux parties. Elle a démontré par la part que ses volontaires ont prise dans les combats de la Palestine et dans l'occu-

pation de la Cilicie qu'elle était digne de voir ses aspirations prises en considération. D'ailleurs, les hommes d'Etats Alliés ont déclaré solennellement qu'ils sera mis fin à la souveraineté turque au sud du Taurus.

Or, vu ces considérations, ce serait une injustice de morceler la Cilicie en deux parties et de créer ainsi une nouvelle Pologne. Etant sûr de l'équité et de la justice des Puissances Alliées, j'aime bien espérer que le Conseil Suprême ne consacrerait pas définitivement cette injustice et voudra bien reviser le règlement concernant la Cilicie en y instituant un régime spécial sous la protection de l'une des Puissances Alliées - par exemple la France - un régime sous lequel toutes les nationalités, sans distinction de race ni de religion, puissent jouir de leurs droits naturels et politiques et travailler solidairement pour la prospérité de la Cilicie.

Veillez agréer, Excellence, l'assurance de ma haute considération.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

Monsieur le Président du Conseil
du Gouvernement de S. M. Britannique

Բարիզ, 19 Մայիս 1920

Պարոն Վարչապետ,

Տեղեկագրած ըլլալով որ թրքական դաշնագրին համաձայն Կիլիկիան երկուքի կը բաժնուի, որոնցմէ մէկը պիտի դրուի դարձեալ թրքական գերիշխանութեան տակ, ու միւսն ալ պիտի կցուի Սուրիոյ՝ որպէս Հոգեւոր պետի Հայոց և գահակալի Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին, իմ պարտականութիւնս համարեցի կարգ մը դիտողութիւններ ընել այդ կարգադրութեան մասին:

1.— Կիլիկիան բաղմաթիւ դարերէ ի վեր հայկական նկարագիր (հանգամանք) ունեցող հողամաս մըն է:

ա.) Կիլիկիոյ հողին վրայ հաստատուած առաջին պետութիւնը, բառին իրաւագիտական առումով, հայկական պետութիւն մը եղած է՝ «Ռուբինեան» Հայ Թագաւորնիրու հաստատութիւնը, որ իշխած է հոն կատարեալ գերիշխանութեամբ, մինչեւ Մէմլուքներու արշաւանքը:

բ.) Մինչեւ պատերազմին հռչակուիլը, Կիլիկիոյ բնակչութեան մեծամասնութիւնը Հայ էր: Բոնի դաւանաւիժութիւններու, Չէրքեզներու, Թուրքմէններու և այլ Կովկասեան ու Ռումէլիի իսլամ ցեղերու ներգաղթին, ինչպէս նաև կրկնուած ջարդերու միջոցովն է, որ թուրք վարչութիւնը ջանաց նուազեցընել Հայերու թիւը, ու խախտել այսպէսով բնակչութեանց մէջ գոյութիւն ունեցող համեմատութիւնը: Բայց, հակառակ այս մեքենայութիւններուն՝ եթէ

սրդար և անկաշառ մարդահամար մը ըլլայ, եթէ բնակչութեան ամբողջական թիւէն դուրս ձգուի «Իչ-իլի» բնակչութեան թիւը (Սելեւկեան սանճաք) որ պէտք չէ մաս կազմէ կիլիկիոյ, և եթէ նկատի առնուի թիւը այն կիլիկեցի Հայերուն, որոնք ցրուած են աշխարհի չորս ծայրերը, ու անձկութեամբ կը սպասեն իրենց հանգստութիւնը ապահովող վարչաձեւի մը հաստատման, իրենց օճախները դառնալու համար. կարելի պիտի ըլլայ հաստատել, որ թուրքերը երբէք մեծամասնութիւն չեն կազմիր: Պէտք է նաեւ նկատի առնել որ լեռնային կիլիկիոյ բովանդակ իսլամ բնակչութիւնը Հայ ցեղն է, հուրով ու սուրով իսլամացած: Նոյն իսկ մակերեսային ուսումնասիրութիւն մը պիտի հաստատէ այդ ժողովրդեան Հայկական դիմադիծը և Հայկական աւանդութիւնը. (սովորոյթ, բարք):

2.— կիլիկիան կը կազմէ տնտեսական անբաժանելի միութիւն մը, բաժնող երկու մասերը զիրար կը լրացնեն տնտեսապէս: Այս ձեւով մէկ մասը պիտի զրկուէր միւսին բնական և տնտեսական հարստութեանց աղբիւրներէն, ու երկրին ամբողջութեան զարգացումին ու բարգաւաճման ձգտող հայ ժողովրդեան համերաշխ գործակցութիւնը արգելքի պիտի հանդիպէր:

3.— Հայ Ազգը որ չափէն աւելի տառապած էր, մէկ միլիոնէն աւելի զոհեր տալով Դաշնակիցներու դատին, և որ անգամ մը ևս կը տառապի Մարաշի և կիլիկեան այլ վայրերու մէջ տեղի ունեցած դէպքերով, պէտք չէր մոռցուեր կիլիկեան հարցին լուծման միջոցին, և այն հողամասը որ ճանչցուած է

իրբե փոքր Հայաստան, երկու մասի բաժնուէր: Պա-
ղեստինի կռիւներուն և Կիլիկիոյ գրաւումի միջո-
ցին, իր կամաւորներուն բերած մասնակցութիւնովը
այն ապացոյցը տուաւ թէ արժանի էր որ նկատի առ-
նուէին իր բաղձանքները: Եւ արդէն, Դաշնակից
Պետական անձնաւորութիւններ հանդիսաւորապէս
յոյտարարած են թէ՛ վերջ պիտի տրուի թրքական
գերիշխանութեան Տարոսի հարաւային կողմը:

Այս բոլոր նկատողութիւնները աչքի առաջ ունե-
նալով, անարդար պիտի ըլլար Կիլիկիան երկու կտու-
րի բաժնել, այսպէսով սակզծելով նոր Բոլոնիա մը:
Վստահ Դաշնակից Պետութեանց արդարութեան և
ուղղադատութեան, կը սիրեմ յուսալ, որ Գերագոյն
Սորհուրդը վերջնականօրէն չպիտի նուիրագործէ
այս անարդարութիւնը և պիտի բարեհաճի կրկին
նկատի ունենալ Կիլիկիոյ վերաբերող կարգադրութիւ-
նը, հոն հաստատելով մասնաւոր վարչաձեւ մը դաշ-
նակից պետութեանց միոյն հովանաւորութեան ներքե
ուր բոլոր ազգայնութիւնները, առանց ցեղի և կրօն-
քի խտրութեան կարեւոր վայելել իրենց բնական
և քաղաքական իրաւունքները, և համերաշխօրէն
աշխատին Կիլիկիոյ բարգաւաճումին համար:

Հաճեցէք ընդունիլ, Պարոն Նախագահ, բարձր
հաճարմանս հաւաստիքը:

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱՐՈՂԻԿՈՍ ՀԱՅՐԾ ԿԻԼԻԿԻՈՅ

Պարոն Վարչապետ
Բրիտանական Կառավարութեան

7. էջ 47

Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

„Ա Ր Մ Է Ն Խ Ա“

Լ ր ա գ ր ի ն

Մ Ա Ր Ս Ե Յ Լ - Ֆ Ր Ա Ն Ս Ա

Մ ար ս է յ Լ, 18 Մ ա յ ի ս 1920

Վ ե հ ա փ ա ու

Տ. Ս ա հ ա կ Բ. Կ ա թ ող ի կ ո ս

Տ ա ն ն Կ ի լ ի կ ի յ յ

Բ ա Ր Ի Ղ

Վ ե հ ա փ ա ու Տ է Ր ,

Թ է կ ե Ա տ ա ն ա գ ա ն ու ող եր կ ու զ աւ ա կ ն եր է ս , Վ ա հ ա ն է ն և Լ եւ ո ն է ն , առ ա ծ ս վ եր ջ ի ն ն ա մ ա կ ն եր ը , որ ո ն ք ա պր ի լ 16 ա մ ս ա թ իւ ը կ ը կր ն ն , կ ՚ ի մ ա ց ն ն ն մ ի ա յ ն թ է գ որ ծ ո վ Մ ի ս ի ս գ ն ա ց ա ծ է ի ն , ու ը կ է Ա տ ա ն ա վ եր ա դ ա ր ձ ա ծ կ ն ա յ ժ մ և ող ջ առ ող ջ կ ն . բ ա յ ց ու ը ի շ ա ղ բ իւ ը ն եր է (Ա ռ ձ ա գ ա ն ի Բ ա Ր ի Ղ ի թ իւ 3 և Մ ա յ ի ս 12 և Ա զ գ ա յ ի ն Պ ա տ ու իր ա կ ու թ ն ն է ն ս տ ա ց ա ծ ս Մ ա յ ի ս 14 ա մ ս ա թ իւ ն ա մ ա կ է մ ը) կ ը տ ե ղ ե կ ա ն ա մ որ Վ ա հ ա ն ն ու Լ եւ ո ն ը ի բր եւ Ֆր ա ն ս ա ց ի ս պ ա յ ն եր Հ ա յ կ ա մ աւ ուր խ ու մ բ եր ի հ ետ մ ի ա ս ի ն Մ ի ս ի ս ղ ը կ ու ե լ ո վ ա յ ն տ ե ղ ի հ ա յ եր ը ա գ ա տ ա ծ և իր ե ն ց կ ե ա ն ք ը վ տ ա ն գ ե լ ո վ ճ ա ն ա պ ա ր հ ի ն 2000 ի չ ա փ չ է թ է ն եր ի յ ար ձ ա կ ու մ ն եր ի ն գ ի մ ա դր եր և յ ա ջ ող եր կ ն փ ա խ ս տ ա կ ա ն Հ ա յ եր ը հ ա ս ց ն ե լ Ա տ ա ն ա . բ ա յ ց Մ ի ս ի ս ի գ ի ն ու ուր ա կ ա ն հր ա մ ա ն ա տ ա ր ը որ իր ա պ ի կ ար ու թ ե ա ն եր ե ս է ն՝ գ ու ց է ն ուր է ն չ է թ է ն եր ի կ ո տ ուր ա ծ ի ն պ ի տ ի ե ն թ ա ր կ է Ր խ ե ղ ճ հ ա յ եր ը , առ ն ա խ ս ա ն ձ ու յ ա ն ձ ն ա ծ է Վ ա հ ա ն ուր ղ ի ս պ ա տ իր ա ղ մ ա կ ա ն ա տ ե ա ն ի ն , ա մ բ ա ս տ ա ն ե լ ո վ թ է առ ա ն ց իր հր ա մ ա ն ի ն ա յր ե լ տ ու ա ծ է մ ի ք ա ն ի գ իւ ղ եր . թ է կ ե ա յ դ գ իւ ղ եր գ ա տ ա ր կ ու ա ծ է ի ն թ իւ ը ք ժ ող ո վ ու ը ը է ն և չ է թ է ն եր ի ու ջ մ ի ա յ ն դ ա ր ձ ա ծ է ի ն ա յ դ ճ ա ն ա պ ա ր հ ի վր ա յ , որ ը մ ա ք ը ի լ և ա պ ա հ ո վ ե լ կր ց եր է Վ ա հ ա ն :

Արդարադատ կառավարութիւն մը ոչ թէ պատժի, այլ մեծ պատուի և վարձատրութեան կ'արժանացնէր թշնամիին դէմ այդպիսի հերոսական գործ կատարողները ինչպիսիս պատմուած է «Արձագանք Փարիզի»-ի մէջ. սակայն մենք ցաւով կ'իմանանք որ, փոխանակ պատուի ու փառքի . . . ծանր պատժի արժանի գործ մը կ'ուզեն ներկայացնել թիւրք արիւնարբու չէթէների դէմ Հայերի և Ֆրանսացիների ինքնապաշտպանութիւնը: Տարակոյս չունիմ Ֆրանսական կառավարութեան արդարադատութեան վրայ. բայց որովհետեւ կառավարութիւնը հեռուն գտնուելով շատ տեղեակ չերեւիր կիլիկիայի մէջ անցած դարձածէն և ապիկար ու նախանձոտ պաշտօնատարներ կրնան մնասել օրդիլիս և կառավարութիւնն ալ շփոթեցնել սխալ տեղեկութիւններ տալով, կ'աղաչեմ որ Ձեր Վեհափառութիւնը շնորհ ընէ անսխալ ազդու դիմումներ ընելով Պատերազմական Նախարարին և Վարչապետ Պ. Միլլըրանին բացատրել եղելութիւնը և չթողուլ որ Վահանը զոհ երթայ թիւրքամու դարձած և դիտմամբ թէ անհասկացողութեամբ, Հայերը կիլիկիայի մէջ թիւրքերին ջարդել տալու քաղաքականութեան ծառայող մի քանի պաշտօնատարներին:

Ինչպէս ըսի վերեւ, Վահան ինծի ոչինչ գրած էր այս մասին. ընդհանրապէս նա չգրեր ինձ այդպիսի բաներ. բայց Գահիրէի Ազգային Միութիւնը հեռապրած է եղեր Բարիզ մեր Ազգային Պատուիրակութեան՝ որմէ կրնայ այս մասին տեղեկութիւններ ստանալ Ձեր Վեհափառութիւնը ի հարկին:

Վստահ լինելով ընդհուպ ստանալու Ձեր ապահովիչ գրութիւնը, կը խնդրեմ ընդունիլ, Արքայան Տէր, կանխապայտ Երախտադիտական զգացումներ իսկեւ և օրդիլական ամենախորին յարգանքներս:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ministère RÉPUBLIQUE FRANÇAISE
des
Affaires Étrangères

Direction Politique

Paris, le 30 Mai 1920

Monseigneur,

Le Haut-Commissaire de République en Syrie vient de faire parvenir à mon Département le télégramme suivant qui vous est destiné:

«Pour Mgr. Sahag:

Votre Sainteté peut avoir toute confiance dans l'esprit d'équité de la justice française; il est impossible de ne pas laisser suivre son cours à une affaire aussi grave qui a provoqué dans le pays le plus vif émoi et à laquelle il est indispensable de donner une suite judiciaire».

Ce télégramme répond à celui que Vous avez adressé au général Gouraud le 20 mai dernier.

Veillez agréer, Monseigneur, les assurances de ma haute considération.

Pour le Président du Conseil
Ministre des Affaires Étrangères et P. O.

Sa Sainteté
Monseigneur SAHAG II. Catholicos
des Arméniens de Cilicie
Hôtel des Deux-Mondes

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
Նախարարութիւն

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քաղաքական Տեսչութիւն

Բարիզ, 30 Մայիս 1920

Վեհափառ ,

Հանրապետութեան Սիւրիոյ Բարձր Գոմիսէրը
Նախարարութեանս զրկած է հետեւեալ հեռագիրը որ
Ձեզ ուղղուած է :-

« Սահակ Կաթողիկոսին համար :

« Ձեր Վեհափառութիւնը կրնայ կատարեալ վըս-
տահութիւն ունենալ Ֆրանսական արդարադատու-
թեան արդար ոգւոյն վրայ . անկարելի է ընթացք չի
« տալ այնպիսի ծանր խնդրի , մը որ երկրին մէջ բուռն
« յուզում պատճառեց և որուն անհրաժեշտ է դատա-
« րանական հետեանք ընծայել : »

Այդ հեռագիրը կը պատասխանէ անցեալ մայիս
20ին Զօրավար Կուռօին ուղղած Ձեր հեռագրին :

Հաճեցէք ընդունիլ , Վեհափառ , բարձր ակնա-
ծութեանս հաւաստիքը :

Ի դիմաց Նախարարապետ
Արտաքին գործոց Նախարարին

Ն. Ս. Օծութիւն

Ս Ա Հ Ա Կ Բ .

Կաթողիկոս Հայոց Կիլիկիոյ

Օթէլ «Տէօ - Մօնտ»

52 63

Paris, le 22 Juin 1920

Monsieur le Président,

J'ai l'honneur de présenter à Votre Excellence ci-joint le contenu en résumé d'une lettre datée du 1^{er} Juin et adressée d'Aïntab.

Je vous prie de vouloir bien la prendre en considération et ordonner le nécessaire pour venir à l'aide d'une population en détresse, qui n'a pas d'autre faute que d'être chrétienne et de lutter héroïquement contre les hordes barbares pour la défense de sa vie et de son honneur, ainsi que pour la cause de la civilisation et pour l'honneur du drapeau français.

Veuillez agréer, Monsieur le Président, l'assurance de mes considérations distinguées.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

A Son Excellence
Monsieur MILLERAND
Président du Conseil
Ministre des Affaires Etrangères
P A R I S

Բարիզ, 22 Յունիս 1920

Պարոն Վարչապետ,

Պատիւ ունիմ ներփակ յղելու Ձեզ, Այնթապէն զրկուած Յունիս 1 թուականով նամակի մը ամփոփոյքը :

Կը խնդրեմ որ նկատի առնէք զայն, և հրամայել անհրաժեշտ միջոցներ օգնութեան հասնելու համար օրհասի մէջ գտնուող ժողովրդեան մը, որուն միակ յանցանքն է Քրիստոնեայ ըլլալը, ինչպէս և իր կեանքին ու պատուին պաշտպանութեան, և քաղաքակրթութեան ու ֆրանսական դրօշին պատիւին համար հերոսաբար պայքարիլն է բարբարոս հորդաներու դէմ :

Հաճեցէք ընդունիլ, Պարոն Վարչապետ, բարձր համարմանս հաւաստիքը :

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻՂԻԿԻՈՅ

Ն. Վսեմութիւն

Պ. ՄԻԼԸՆԻՆ,

Վարչապետ եւ Նախարար

Արտաքին Գործոց

Բ ար ի զ

Ց. էջ 47

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՏԵԱՆ

«1920 Մարտին՝ Հաճըն պաշարուած և Սիս պաշարուելու վտանգին տակ էր :

«Ֆրանսական Իշխանութիւնը համաձայնութեամբ Տիար Տամատեանի՝ որոշեց Սիսի մէջ համախմբել Հայ կամաւորական ուժեր, որոնք պիտի փորձէին Հաճընը փրկել : Ֆրանս. Իշխանութիւնը յանձն առած էր կամաւորներուն տալ հրացան, փամփուշտ և զանազան մթերք :

«Այդ խումբերուն ուղեգիծն էր Միսիսի ճամբան : Միսիսի մէջ կար Ֆրանս. երկհարիւրեակ մը, որուն հրամանատարը կ'արտօնէր Միսիսէն դէպի Սիս մեկնելու :

«Առաջին խումբը Չանկալեանի հրամանատարութեամբ անարգել Սիս կը հասնի. նոյնպէս Չրդ խումբը Պօղոս Դուր-Սարգիսեանի հրամանատարութեամբ : Այս խումբէն 5—6 ձիաւորներ անձանօթ պատճառով մը կ'ուզեն վերադառնալ Ատանա. թումուլու բերդին մէջ Չէթէներէն յարձակման կ'ենթարկուին և 'ի միջի այլոց կը սպաննուի Պօղոս Քէշիշեան : Այս դէպքը որոշապէս ցոյց կուտար, թէ Չէթէները որոշած էին այլևս ճանապարհը կտրել :

«Երրորդ խումբը կարապետ Կէօյտէրէլեանի և Ռուբէն Հերեանի հրամանատարութեամբ, մօտաւորապէս 200 հոգի, ճանապարհ ելաւ. թումուլուի մօտերը կրակի կը բռնուի և բաւական դիմադրելէ վերջ խառնակ վիճակով Միսիս կը վերադառնայ : Այս լուրը թէ-

լէֆոնով կ'իմացուի Ատանա և մեծ յուզման առիթ կ'ըլլայ, մանաւանդ հայկական շրջանակներու մէջ :

«Մարտ 28ի առաւօտուն Գնդ. Պրէմոն կը կանչէ Վահան Փորթուզալեանը և կը հրամայէ զինուորական Սպայի համազգեստ հագնիլ և երթալ Միսիս կարգը վերահաստատելու և խումբին հրամանատարութիւնը ստանձնելու : Տիար Վ. Փորթուզալեան հրամանը կը կատարէ և Կ. Կէօյտէրէլեան և 45ի չափ զինուորութեան անընդունակ կամաւորներ Ատանա կը վերադարձուին. մնացածները Փորթուզալեանի ղեկավարութեամբ և Միսիսի Ֆրանս. Հրամանատարի, Գափիթէն Տը Պութէի բարեհաճ օգնութեամբ զանազան մարզանքներ կ'ընեն փոքր 'ի շատէ վարժուելու համար :

«Ապրիլ 2ին Միսիս կը հասնի 4րդ խումբ մը, մօտաւորապէս 65 ձիաւորներու Եփրեմեանի հրամանատարութեամբ. երկու խումբերը կը միանան : Այս ուժերու ներկայութիւնը թշնամիին լրտեսները գործի մղած էր, որոնք սկսած էին վստալ գիւղին շուրջ ձիհանի կառավարիչ Լէօթընան Առիկէի անգիտակից քաջալերութեամբ :

«Հարկը կը ստիպէր երկար չմնալ Միսիս : Գնդ. Պրէմոն Միսիս զրկած էր Լեւոն Փորթուզալեան եւ երկու լէգէօնականներ իբր օգնական Վ. Փորթուզալեանի :

«Ապրիլ 3ին Վ. Փորթուզալեան Ատանա կը մեկնի և կը տեսնուի Գումանտան Հասլէրի հետ, Պևտ Գնդ. Պրէմոնի սպայակոյտին. որ կը խոստանայ մի քանի հազար փամփուշտ և 10 օրուան ուտելիք և դրամ ղրկել :

«Ապրիլ 5ին Փորթուզալեան կը վերադառնայ Մի-

սիս. Եփրեմեանի հետ համաձայնութեամբ կ'որոշէ նոյն երեկոյին մեկնիլ 'ի Սիս և գրաւել Թոււլու բերդը, որ ըստ վերջին լուրերու թշնամիին ձեռքն էր և կը փակէր Սիսի ճամբան :

«Գափիթէն Տը Պութէն հաւանութիւն կու տայ ծրագրին և անոր իրականացումը դիւրացնելու համար հրացանի ուժեր (V. B.) կուտայ և կը հրամայէ, որ իր գումարտակէն գնդացիներու սեկցիոն մը այն գիշեր դիրք բռնէ Չագալ-Տէրէի առջեւ կամաւորներու աջը ապահովելու համար : Մի քանի կամաւորներ Միսիս կը մնան երկրորդ աւուր հասնելիք միթերքը Թոււլու տանելու յանձնառութեամբ :

«Խոււմը ըստ որոշեալ ծրագրին՝ Ապրիլ 5ի կէս գիշերին կը մեկնի. հետեւակները Փորթուգալեանի հետ կանգ կ'առնեն Խան-Տէրէ ու ձիաւորները իբր յառաջապահ՝ Եփրեմեանի հետ կը հասնին Թոււլու : Տասնակ մը կամաւորներ մագլցելով բերդը կը մտնեն և դատարկ կը գտնեն : Ըստ կանխորոշ համաձայնութեան ատրճանակի երեք հարուած կ'արձակեն իբր լրատուութիւն :

«Թոււլուի գիւղին մէջ գիշերող խոււմ մը Չէթէնի կռահելով գիշերուայ անցքը՝ արշալոյսին կը սկսին կրակել բերդը : Չիաւոր կամաւորները կը յարձակին գիւղին վրայ և Չէթէները փախուստի կը մատնեն, և եղեգեայ մի քանի դատարկ տուները կրակի կուտան : Կռիւը կը շարունակուի դաշտին մէջ : Սուրհանդակ մը բերդի գրաւումը կ'իմացնէ Տիար Փորթուգալեանի 'ի Խան-Տէրէ, որ սպառնալիքի տակ էր, թշնամիին գնդակները կը սուլէին : Մինչ Փորթուգալեանը դիրքերը կը բռնէ, Պ. Հերևան փորձ կամաւորներով

կը հետախուզէ շրջակայ գիւղերը, ուրկէ գնդակները կուգային: Գիւղերը որ դատարկուած էին բնակչութենէ ու կահ կարասիքէ, Չէթէներուն իբր ապաստան և մթերանոց կը ծառայէին, կը սկսին այրիւ պայթիւններու մէջ ու Չէթէներու ռազմամթերքը օդը կ'ելնէ:

«Վահան Փորթուգալեան անմիջապէս սուրհանդակ մը կը ղրկէ Միսիո Գափիթէն Տըպութէին իմացընելու Թոււմլուի գրաւումը և խնդրելու, որ Ատանայէն հասնելիք ուտեստ և ռազմամթերք անմիջապէս Թոււմլու ղրկուին, ուր պիտի հաստատուի և մնայուն զօրք պիտի ձգէ դէպ 'ի Սիս երթալէ առաջ:

«Փորթուգալեան իրապէս իր կամաւորներով կ'երթայ Թոււմլու և կը միանայ Եփրեմեանին: Չինուորները հանգիստ կ'առնեն նախազգուշութիւններով հակայարձակման պատահականութեան հաւանականութեամբ:

«Ճիհանի Ֆրանս. կառավարիչ Լիէօթընան Առիկէն*) որ թրքական քաղաքականութեան կը հետեւէր, Ճիհանէն կը տեսնէ դաշտին վրայ բարձրացող ծուխը և անմիջապէս կը հեռագրէ Գուլօնէլ Պրեմոնին, թէ հայ կամաւորները կ'այրեն թրքական գիւղերը, ուր ինքը յաջողած էր վերադարձնել! Ժողովուրդը և կը պահանջէ ետ կանչել կամաւորները և Ճիհանի մէջ կը յայտարարէ, որ հայ կամաւորները ետ պիտի կանչուին և անոնց շէֆերը պիտի պատժուին:

*) Լիէօթընան Առիկէն մի քանի ամիս վերջը թիւրք գնդակին գոհ կ'ըլլայ ու հայ Լէգէօնական մը Առիկէի մարմինը վերաւոր և մահամերձ կը յաջողի բերել Ֆրանսական զիմերու մէջ: Արդարութեան ի'նչ տարօրինակ և անըմբռնելի խաղ:

«Կէսօրէն վերջը ձիաւոր Չէթէներ, մեծ մասամբ ճիհանի շրջակայ գիւղացիներէն, կը սկսին շրջիւ թուճուռի մօտերը և երկուստեք հրացանաձգութիւն կ'ըլլայ. մերինները մէկ զոհ կուտան:

«Իրիկուան մօտ Միսիս ղրկուած սուրհանդակը անվնաս վերադառնալով՝ հրաման կը բերէ Ատանայէն մասնաւորապէս ղրկուած Գափիթէն Տրօմառէն, որ յանուն Զօրավարին կամաւորները անմիջապէս ետ կանչէ. նոյնպէս կ'իմացնէ, որ Գաբիթէն Տրօմառը Ատանայէն հասած ռազմամիջերքի և ուտեստի պաշարին առաքումը արգիլած է:

Վ. Փորթուգալեան պատերազմական խորհուրդ կը կազմէ և կ'որոշուի հետեւեալ գիշերը վերադառնալ Միսիս: Փամփուշտները սպառելու մօտ էին եւ հազիւ մէկ օրուան ուտելիք մնացած էր: Հետեւեալ օրը Չէթէները հաւանօրէն քաջալերուած՝ կը սկսին վխտալ և խրամատներ փորել, որպէս զի մերայինք ծուղակի մէջ թակարդեն: Կռիւը կը սաստկանայ և հազիւ մութը կոխելուն կը դադրի:

«Գիշերուայ 9½-ին ըստ կանխորոշ կարգադրութեան՝ կամաւորները կը լքեն իրենց դիրքերը և կը խմբուին բերդին ստորոտը. խոր լռութեան մէջ կատարեալ կարգապահութեամբ ճամբայ կ'ելլեն դէպ 'ի Միսիս:

«Կէս ժամ քալելէն ետքը յանկարծ մութին մէջ կրակի կը բռնուին դարանակալ թշնամիէն: Սեւ մութին մէջ սեւագոյն կռիւը կը սկսի: Մեծ մասը Փորթուգալեանի և Նփրեմեանի հետ 'ի գին կորուստներու կը յաջողի անցնիլ և Միսիս հասնիլ: Դժբաղդաբար վերջապահ 35—45 հոգի Տիար Լեւոն Փսրթու-

գալեանի հետ թիւրամացութեամբ, իբր թէ հրաման տրուած է վերագառնալ 'ի Թումշու, ուր խիստ պաշարուածի կ'ենթարկուի :

Տեարք Փորթուգալեան և Եփրեմեան՝ Գափիթէն Տրումառի կողմէն հսկողութեան տակ կ'առնուին և կը հարցաքննուին . կամաւորները գինաթափ կ'ըլլան և ամենը միասին Ատանա կը ղրկուին, ուր Փորթուգալեան և Եփրեմեան Պատերազմական Ատեանին առջեւ կ'ամբաստանուին իբր հրդեհիչ և շարագործական միուրեան անդամներ :

«Մինչ այս, Թումշուի բերդին մէջ կեւոն Փորթուգալեանի հետ մնացածները յուսահատական ճիգով կը կռուին երկու օր անօթի ծարաւ : Տեսնելով որ օգնութիւն չի գար, գիշեր մը անշշուկ կ'անցնին թշնամի գիծերէն և Միսիս կը հասնին :

«Գատավարութիւնը կը շարունակէ . Միսիսի հրամանատար Գափիթէն Տը Պութէն նախ կ'ուրանայ, թէ ինքը լուր ունէր կամաւորներու մեկնումի մասին . բայց իր ձեռքէն զրաւոր փաստ մը կը ներկայացնէ վ. Փորթուգալեան և Գափիթէնի անճիշտ վկայութիւնը կը պարզուի :

«Մայիս 5ին Չորավարը ազատ կ'արձակէ Տիար Փորթուգալեանը . իսկ Եփրեմեանը և երկու կէզէոնականներ, Սիմոնեան և Վէքիլեան, կը հրամայէ յանձնել Պատերազմական Ատեանի, որ կազմուած էր իսկապէս կռուող Սպայներէ . հակառակ իր նախապահ կանի ցոյց տուած կողմնակցութեանց՝ անպարտ կ'արձակուին նախ Եփրեմեան և ապա Սիմոնեան և Վէքիլեան :

Թրքասիրութեամբ ձախողուած արշաւանքի բոլոր մանրամասնութեանց կը հետեւէին Սսեցիք և մեծ յոյսերով եւ ոգեւորութիւններով լեցուած էին, որուն յաջորդեց ՉախՉախումը յոյսերու եւ անիրականալի ծրագիրներու :

8. էջ 77

Պարոն Գնդապետ ,

Դեկտեմբեր Ցին Հայ Ա.զգ . Միութեան սրահին մէջ Ձեր արտասանած ճառը , որուն մէն մի բառը Ֆրանսայի ասպետական ոգին կը ցոլացնէր , մեծ հաճոյքով կարդացի «Կիլիկիա» թերթին մէջ :

Ճշմարիտ ու անկեղծ բարեկամի Ձեր յատկանշումը սրտէս փրթած կտորի մը պէս սրտիս մէջ դրոշմուեցաւ :

Ինչպէս դուք շողոքորթ բարեկամ մը չէք , նոյնպէս հայութիւնն իր սրտագին բարեկամութիւնը առ Ֆրանսա ու Ֆրանսացին շողոքորթութեամբ չը շարեր , որուն ապացոյցն է ամեն անախորժ դէպքի Հայուն դէմքի անժպիտ մռայլումը . Հայը կեղծել չգիտէ . պէ՞տք է աւելցնել , որ Հայուն դարաւոր մարտիրոսութիւնը արդիւնքն է շողոքորթելու անընդունակութեան :

Հայուն համար անցեալը իր բոլոր արհաւիրքներով գերեզմանուած է . եթէ գերեզմանները վրէժխնդրութեան վառարաններ ըլլային , այսօր շատ ցեղեր ապրելու իրաւունքէն զրկուած ըլլալու էին :

Ներկան ալ Հայը չխանդավառեր , ցորչափ բաղդորոշ կեանք մը չապահովեր , Հայը իր բովանդակ կեանքը , իր բոլոր յոյսերը ծրարեր է Գնդապետ Պրէմօնի անվերապահօրէն յայտարարած «Ապագայ»ին մէջ :

Ձեր մագին շնորհակալութիւն , որ այդ ցանկալի ապագային , ըստ Ա. Գրոց «Աւետեաց երկրին» հասնելու միակ ու անվրէպ ճանապարհ ցոյց կուտաք մեծ Ֆրանսացիին , Պ. Քլէմանսօյի պատգամած «Աշխատանք»ը :

Հայը որչափ տառապանքի , նոյնչափ աշխատութեան տոկուն է . դարերով անվհատ աշխատած է առանց իր աշխատանքի պտուղը վայելելու . աշխատած է ուրիշի փառքին ու բարգաւաճումին համար , և դուք Ձեր քննական պտոյտով կը ցուցադրէք տարագրութենէ նոր վերագարծող Հայուն աշխատութեան բազմաճիւ արտադրութիւնը , և կ'արձագանգէք Հայ կորովալիր բազուկներուն Արեւի ծագումէն մինչ ի մուտը կռանելու աղմուկն ու ժխորը :

Ձեր բարեկամական վկայութեան վրայ սիրտս հպարտութեամբ լցուած՝ չեմ ուզեր իմ կողմանէ բառ մը անգամ աւելցնելու այն խղճամիտ երկիւղածութեամբ , թէ մի գուցէ նսեմացնեմ հմուտ արհեստաւորին իմաստուն ճարտարութեամբ կազմած Հայ Աշխատանքին լուսաշող պատկերը :

Ձեռք մուցած ու չի պիտի մոռնանք մերը մեզի տալու Ֆրանսայի վեհանձն փոխատուութիւնը : Ամեն Հայու ուխտավայրն է Աէն-Տընին , ուր կը հանգչի կիւլիկոյ վերջին ու տարաբաղդ Հայ թագաւորը , Լեւոն Ե . , Սչին թագաւորի Չապէլ քրոջ և Տըլիպոլսի կոմս Ամորի Լուսինեանի թուր : Պատմական այս պարագան Ֆրանսայի և Հայուն խնամիական և արեւակցական կապը կը շեշտէ , որուն վրայ աւելցնեմ նաև թէ , Երուսաղէմի առաջին թագաւորին՝ Պաղտին Ա . ի թագուհին Արտա , Թուրքիան թորոս Իշխանի , կամ ըստ

Եւրոպացի ուղեգրաց Լէրանց Իշխանի աղջիկն էր :

Սակայն այսօր Ֆրանսացւոց և Հայոց միջեւ եղած կապը աւելի նուիրական է, քան խնամիական կապը, այն է մտքի ու սրտի, մանաւանդ ի պատիւ Ֆրանսայի Արեւելեան ճակտին վրայ հանգչող Հայ հերոսներու արեան կապը :

Մենք Ֆրանսայէն «Նոր Լեւոններու» փոխատուութիւն չենք սպասեր, որովհետեւ չունինք Հայ Իշխանուհի Արտաներ, Զապէլներ ու Ֆիմիներ. մենք Ֆրանսայէն «Ապագայ» կ'ուզենք, որ ընդմիշտ կապուած պահէ մեր սիրտն ու հոգին Ազատութեան Հայրենիքին, Ֆրանսայի, և դարուց ի դարս Հայ բերաններուն կրկնել տայ «Կեցցէ Ֆրանսան» :

Այս մի քանի վտիտ տողերը հաճեցէք ընդունիլ ոչ միայն իբրև արտայայտութիւն շնորհակալեաց, այլ ի բարօրութիւն Ֆրանսայի հանապազօրեայ աղօթքներուս առհաւատչեայն :

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՂԻԿԻՈՅ

10. 52 101

Monsieur le Général,

A mon retour et lors de ma première entrevue avec S. E. le Général Gouraud, j'ai été réellement heureux de l'entendre faire vos éloges et manifester une sincère confiance en votre estimable personne.

Js suis porté à croire que les incidents désagréables d'Adana vous ont fatigué et diminué, en partie, la confiance que vous avez eue en la malheureuse Nation Arménienne; mais en même temps je sais que vous êtes le légitime fils de cette Nation et de cette Patrie qui a ébranlé la base de ce monde et du sein de laquelle a jailli la Révolution qui a créé la gratitude universelle.

Les Arméniens, d'ailleurs tous les chrétiens de la Cilicie, qui ont été grace aux français libérés d'une servilité plusieurs fois séculaire, feraient naturellement des essais pour constater, si les entraves qui les ligotèrent durant des siècles n'ont pas atrophié les aptitudes élémentaires requises. Les enfants qui commencent à marcher ont souvent des faux-pas qui ne font que déclancher la risée de la tutelle et augmenter sa compassion.

Veuillez agréer, Monsieur le Général, l'expression de ma plus haute considération.

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

Պէյրութ 21 Օգոստ. 1920

Պ. Զօրավար ,

Իմ վերադարձիս , երբ առանձինն տեսակցութիւն ունեցայ Ն. Վ. Զօրավար Կուրօյի հետ , իսկապէս երջանիկ եղայ անկէ լսելով գովասանքը Ձեր հասցէին և անկեղծ վստահութիւնը Ձեր յարգելի անձին հանդէպ :

Ես կը կարծեմ որ Ատանայի անհաճոյ դէպքերը զՁեզ յոգնեցուցին , ու մասամբ պակսեցուցին այն վստահութիւնը զոր կը տածէիք դժբաղդ Հայ Ազգին հանդէպ , - Բայց միանգամայն գիտեմ , որ դուք արժանաւոր զաւակն էք այն Ազգին ու Հայրենիքին , որ այս աշխարհը իր հիմերէն սարսեց , և ծոցէն ցայտեց յեղափոխութիւնը , որ տիեզերքի երախտագիտութիւնը վաստկեցաւ :

Հայերը , ինչպէս նաև Կիլիկիոյ բոլոր Քրիստոնեայները , որոնք շնորհիւ Փրանսացիներու դարաւոր ստրկութենէ մը ազատեցան . բնական է որ ընէին փորձեր՝ տեսնելու համար թէ դարերով գիրենք կաշկանդող կապանքները արդեօք բթացուցած են իրենց բնատուր կարողութիւնները : Ոտքի ելլող մանուկներն ալ երբեմն անկուճներ կ'ունենան , որ իրենց պաշտպանին խնդուք միայն կը պատճառեն և անոր հանդէպ ունեցած գորովը կ'աւելցնեն :

Հաճեցէք ընդունիլ , Պ. Զօրավար , ամենաբարձր համարմանս հաւաստիքը :

Ս Ա Հ Ա Կ Բ .

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՑ

LE GÉNÉRAL DUFIEUX

Adana, le 3 Septembre 1920

Saint Père,

Je vous remercie vivement de la lettre que vous avez eu l'amabilité de me faire remettre par Monsieur Vahan Koubesserian et des sentiments qu'elle exprime.

Croyez bien que je n'étends pas à tous les Arméniens, dont la masse est restée sage, la réprobation que m'ont inspirée certains actes déraisonnables, conséquences de l'irréflexion de quelques esprits échauffés. En particulier, je n'ai eu qu'à me louer, pendant toute cette période, de la loyauté et de la fermeté de vues de Monseigneur Arslanian. Si ses avis avaient été toujours écoutés, bien des événements regrettables auraient été évités.

Je sais d'autre part quelle série d'infortunes ont accablé les populations chrétiennes de l'Asie Mineure et qu'il faut leur faire crédit pendant de longues années encore pour que leur éducation générale et leur sens politique soient à la mesure des destinées qu'elles ambitionnent. Je leur demande seulement de montrer plus de confiance dans les représentants de la France qui n'ont — personne n'en peut douter — que de bonnes intentions à leur égard.

Veillez bien agréer, Saint Père, les assurances de ma haute considération.

J. Dufieux

ԶՕՐԱՎԱՐ ՏԻՒՖԻՒՅ

Ատանա, 3 Սեպտ. 1920

Ս. Հայր,

Իմ ջերմ շնորհակալութիւնս կը յայտնեմ այն նամակին համար, զոր բարեհաճած էիք Պ. Վ. Խուպէսէրեանի ձեռամբ ինձ ղրկելու, ինչպէս նաև այն զգացումներուն համար որոնք հոն արտայայտուած էին:

Հաւատացէք որ. ես չեմ վերագրեր բոլոր Հայերուն, որոց մեծ մասը լուրջ մնաց, այն դժգոհանքը զոր ինձ ի ներշնչեցին կարգ մը անտրամաբան գործեր, հետեւանք՝ կարգ մը տաք գլուխներու անխորհուրդ արարքներուն: Ի մասնաւորի, ես միայն գովեստ ունիմ բոլոր այն շրջանին համար և Արսլանեան Սրբազանի ուղղամտութեան և հաստատամտութեան համար: Եթէ իր խորհուրդներուն միշտ անսային, շատ մը ցաւալի պատահարներ տեղի չպիտի ունենային:

Միւս կողմէ, ես գիտեմ նաև թէ ինչ դժբաղդ պատահարներու շարքեր հարուածած են փոքր Ասիոյ Քրիստոնեայ բնակչութիւնները, և թէ անոնց տակաւին երկար տարիներ պէտք են, որպէսզի իրենց ընդհանուր դաստիարակութիւնն ու քաղաքական հասկացողութիւնը իրենց բաղձացած ճակատագրի աստիճանին հասնին: Ես իրենցմէ կը խնդրեմ, որ աւելի վստահութիւն ցոյց տան Ֆրանսայի Ներկայացուցիչներուն, որոց ունեցած լաւ մտադրութիւններէն իրենց հանդէպ ոչ ոք կրնայ կասկածիլ:

Հաճեցէք ընդունիլ, Ս. Հայր, բարձր համարմանս հաւաստիքը:

ՏԻՒՖԻՒՅ

REPONSE AU TÉLÉGRAMME DE M. AHARONIAN

Aharonian, Chef Délégation République
Arménienne
Paris

Avons reçu le 24 Août télégramme annonçant heureuse nouvelle signature traité Paris avec Turquie de votre part au nom République Arménienne.

Gloire à Dieu d'avoir exaucé vœux séculaires peuple Arménien, d'avoir agréé sacrifice innombrable martyrs dévoués héros pour la liberté de la patrie. Béni soit éternellement le souvenir sacré de tous ceux tombés sur champs de bataille et chemin d'exil.

Communiquez cordiale félicitation au gouvernement République Arménienne vœux ardents à son héroïque Armée.

Paris, le Aout 1920

SAHAG II.

Catholicos des Arméniens de Cilicie

ՊԱՏԱՍԽԱՆ Պ. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՀԵՌԱԳՐԻՆ

Ահարոնեան, Նախագահ Հայաստանի
Հանրապետութեան Պատուիրակութեան
Բարի

— 24 Օգոստոսին ստացանք հեռագիրը, որ կ'աւետէր երջանկաբեր լուրը խաղաղութեան դաշինքին կնքման թուրքերուն հետ, Ձեր կողմէ, յանուն Հայաստանի Հանրապետութեան:

Փա՛ռք Բարձրելոյն, որ կատարեց Հայ ժողովրդեան դարաւոր բաղձանքները, և ընդունեց անհամար զոհաբերութիւնները անձնազոհ հերոս Մարտիրոսներուն հայրենեաց ապատութեան համար:

Ընդ միշտ օրհնեալ ըլլայ սրբազան յիշատակը բոլոր անոնց վրայ որ ինկան պատերազմի դաշտին և կամ տարագրութեան ճամբուն վրայ:

Հաղորդեցէք սրտագին շնորհաւորութիւններս Հ. Հ. կառավարութեան և իմ անկեղծ մաղթանքներս իր հերոսական բանակին:

Ո Ա Հ Ա Կ Բ .

ԿՍԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ԿԻՒԿԻՈՅ

28 Օգոստ. 1920

11.- էջ 101

Պէյրութ, 22 Օգոստոս 1920

Սիրելի Պ. Տամատեան

Ա տ ա ն ա

Եւրոպայէն մինչեւ ի Պէյրութ շատ ուրախ էի . որ Պրանսացւոց տրամադրութիւնը դէպ 'ի լաւ փոխուած գտայ : Ժենեւրալի հետ կրկին տեսակցութենէս այս տպաւորութիւնը ստացած էի . մանաւանդ 5000նոց միլիոնի կազմութիւնը շատ ու շատ օգտակար կրնար լլլալ :

Աւրախ էի նաև Օգոստոս 4ի Պրանսայի հովանաւորութեան կամ հոգատարութեան տակ Կիլիկիոյ Քրիստոնէից ինքնավարութեան հռչակումը , գտած համակիր ընդունելութիւնը և Կուրդին հեռագրելը վեհաժողովին , եթէ ստոյգ էր մեզ հասած տեղեկութիւնը :

Ասոնց փոխարէն շատ աւելի վշտառիթ էր Օգոս . 5ի անյաջող ձեռնարկը . որովհետեւ նախորդ օրուայ յիշատակապրին հակառակ էր : Եթէ հոգատարը Պրանսան էր , պէտք էր սպասուէր վեհաժողովին կամ Պրանսայի Կեդր . Իշխանութենէն գալիք պատասխանին և կամ գոնէ տեղական իշխանութեան գիտութեամբ և հաւանութեամբ ըլլալու էր : Եթէ չէք նեղորախը ըսեմ , մանաւանդ Ձեր առաջնորդութեամբ ըլլալու չէր . որովհետեւ Ձեր պաշտօնը և պարտաւորութիւնը շատ որոշ էր իբր ներկայացուցիչ Ազգ . Պատու իրակութեան : Դուք Միութեան գիծ մը էիք ընդ մէջ Պրանսացւոց և Ազգին : Երբ խզուած է գիծը , բնականաբար դադար

րած կ'ըլլայ երթեւեկը Ատանայէն Մերսին և փոխադարձաբար :

Մեր ուղեւորութեան առթիւ խորհրդաբար մեզ գրած նամակնիդ կը յիշէք, այնուհետեւ բանիւ բերանոյ խօսածնիդ, որոց պատասխանեցի, եթէ երթամ իբրեւ բողոքող Պրանսայի դէմ, գալիք անախորժ պատահարներուն առթիւ ուրիշ միութեան գլծ չը մնար ընդ մէջ մեր և Պրանսացոց : Իրաւունք տուիք մեզ : Այնուհետեւ ժողովուրդի կեանքի ապահովութեան համար որոշեցի ուղղակի Պրանսայի դիմել, քանի որ բաւականաչափ ուժ ունէր և Փարիզ հասնելուս՝ Պատուիրակութեան Պետը գնահատեց մեր ուղղութիւնը. որովհետեւ Հոնտրայի մէջ վճռակի պատասխան տուած էին. - կիլիկիոյ մասին Պրանսայի պէտք է դիմէք :

Ուղեւորութիւնս արդիւնք ունեցա՞ւ կամ ոչ, ինձ չի մնար պատասխանել. միայն գիտեմ թէ հետզհետէ Քրանսական ուժերը ստուարացան, տրամադրութիւնները փոխուեցան և վճռական քայլեր առնել սկսեցին : Յետ վերագարծիս ժեներալ կուրօին հետ առաջին տեսակցութեանս խոստացաւ նոր ուժեր դրկել և կիլիկիան մաքրել ոճրագործ Չէթէներէն : Երբ կերակուրը պատրաստուած էր, ինչո՞ւ աքացելով թափեցինք : Թուրքերուն աչքը լոյս, դաշնագրութիւնը ստորագրուեցաւ. թիրեւս Պրանսան անախորժութենէ զգածուած Ատանան լքէ, ի՞նչ պիտի ըլլայ դժբաղդ ժողովուրդի վիճակը. Հայաստանի Հանրապետութիւնը պիտի պաշտպանէ. շատ հեռու է և շատ տագնապալիր օրեր կ'անցնէ. Ամանոսի Հանրապետութիւնը, որուն առասպելով Փարիզի մէջ ալ խանդավառութիւններ եղան :

Թէ Ապտ - Օղլուի Հանրապետութիւնը իր կրկնագլուխ
Նախարարութիւններով :

Նորէն , եթէ պէտք ըլլայ , տասնիցս պիտի կրկնեմ և
հարցնեմ , ի՞նչ պիտի ըլլայ տառապակիր ժողովուրդի
վիճակը : Աւելի լաւ չէ՞ր , ամենքնիս ալ մեռնէինք
անտապատներուն մէջ և Թուրքին ճակտին ոճրագործի
դրոշմը աւելի խոր դրոշմուէր , քան թէ գայինք և մեր
փլատակ օճախներուն վրայ նոր պառակտումներու և
խրերամերժ քմայքներու զոհեր ըլլայինք :

Մեր և Ֆրանսացւոց միջեւ բացուած վիճը ինչո՞վ
կը գոցուի . եթէ անձնապէս գահուելով կը դարձանուի
այդ սաւը , պատրաստ եմ . եթէ կանուրիչ միջոցներ ,
պէտք չէ խնայենք . միայն ժողովուրդը փրկուի .
առանց ժողովուրդի ո՛չ ընտանիք , ո՛չ սրբազան օճախ
և ոչ Հայրենիք կայ :

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յ. Գ. - Օգոստ . 17ի տեսակցութեանս մէջ այս
պէս արտայայտուեցաւ Ժեներալը Ձեր մասին . - Տա-
մատեանը , որ շատոնց ի վեր Հայկական գործերը
կը վարէ , բոլորովին գլուխը կորուսած է՝ շատ մը
երիտասարդ ծայրայեղներէ ազդուելով : Լաւագո՞յն էր
գաշոյնի հարուած մը սրտիս , քան այդ խօսքը : Թի-
րեւս Փարիզի Պատուիրակութիւնն ալ կեղրոնի սուր
ու կծու դիտողութիւններէն նեղ դրութեան մէջ իյնայ :
Ձեր օգնականները Պ . Պ . Սասունի և Թահմազեան
այս տեղ շուարուն վիճակ մը ունին : Երբ դու ք յարա-
բերութենէ դադրած էք , օգնականները ինչ կարող են
ընել : Իմ խորհուրդս , թող գան այդ տեղ և գոնէ իրենց
պատկան հոսանքներուն ծայրայեղութիւնները չափա-
ւորեն , եթէ լսող և մտիկ ընող կայ :

12 - էջ 101

Գերաշնորհ
Տ. Գէորգ Մ. Վրդ. Ասլանեան

Առաջնորդ Ատանայի

Ժններալ Կուրօյի արտօնութեամբ Պ. Վահանը կը ղրկեմ գրութիւններս առ Ձեզ բերելու և այդ տեղէն դէպքերու ստոյգ իրականութեան վերահասու ըլլալով զձեզ խարխափումներէ ազատելու համար :

Մեզ համար ցարդ ամենամեծ մթութիւնն է՝ 5-6 ամսուայ շրջանին Ձեզմէ լուր կամ գրութիւն չառնելնիս . միայն Պ. Գրիգոր Թէլլալեանի հետ ղրկուած նամակը ստացած ենք . մինչդեռ օրը օրին տեղեակ պէտք է ըլլայինք և ամեն հարցնողներուն փոխանակ դրական պատասխաններով ցոյց տալու , թէ կապ մը կայ մեր և Կիլիկիոյ , կամ գոնէ մեր և Առաջնորդարանի մէջ՝ քան ամօթով ըսէինք , - Լուր չունինք . ուսյն իսկ Պէյրութէն տրուած հեռագրին պատասխանն անգամ չստացանք :

Մթութիւն էր նաև Թէլլալեանի Փարիզ ղրկուելը : Վստահութիւն չունէին մեր վրայ . կրնայ ըլլալ . որովհետեւ իրենց հրամանով և յանուն կարօտելոց նպաստով չը ճամբորդեցինք . մի՞թէ և վստահութիւն չունէին Պ. Զաքարիա Պլտիկեանի վրայ , որ իրենց Պատուիրակն էր : Ֆրանսան ինչ գաղափար պիտի կազմէ Հայերուս մտայնութեան վրայ , որ իրենց Կիլիկիոյ Կաթողիկոսէն յետոյ , ոմն Թէլլալեան ուսյն քաները պիտի կրկնէ , ինչ որ մենք կանուխէն ըրած էինք . ոչ , նոր Առաքեալը գօնֆէրանսներով և պատմական փաստերով Կիլիկիան Հայերուն ըլլալը պիտի ապացուցանէ : Ասոր ալ պէտք չը կար , Ֆրանսան պիտի քաշուէր , պիտի մնայինք մենք և Թուրքերը . փոխանակ պատմական

փաստերու՝ ներքին ուժերով կրնայինք դիմադրել և
Կիլիկիային տիրել : Եթէ այս՝, ինչ հարկ կար Սան-Րէ-
մոյի Վեհաժողովին ուղղեալ հեռագրին, որով կը խնդ-
րէիք Պրանսայի հովանաւորութիւնը . եթէ անկեղծ
էր այդ հեռագիրը, ինչ հարկ կար վերջին դէպքե-
րուն՝ հակառակ Ֆրանսական Իշխանութեան, նոր
Հանրապետութեանց և ամենէն ցաւալին Օգոստ . 5ի
զաւեշտը, այս օրուայ յարաբերութեանց խզումը և
հետզհետէ ձերբակալութիւնները և վտարումներու
նշաւակ ըլլալը :

Որքան այդ տեղ էի, Միութիւն, Ներկայացուցիչ
և հոսանքներ ոգւով չափ հակառակ էին Ձեզ և Առաջ-
նորդարանին . կ'ամբաստանուէիք շատ բաներով . ամեն
օր առասպելներով գլուխս կը տանէին, նոյնիսկ փա-
րա չընող Զէնիթի բէքլամի պնակը թանկագին ըլին
և կաշառքի դգեստ հազցուցին : Այս ամենը գիտնա-
լով ըստ ամենայնի ապահով էի, որ Պրանսացիք
եթէ առիթ ունենային Ազգէն և նոյն իսկ մեզմէ վըշ-
տանալու, դուք միշտ կը մնայիք Գօլէնէլ Պրեմոնի
վստահելի Ասլանեանը : Ամեն խնդիրներ, ամեն
պէտքեր, դպրոցական նպաստ, նոյն իսկ քահանա-
յական ճանապարհածախս, վսյրկենապէս կը կա-
տարէին :

Այս համոզումով Օգոստոս 17ի տեսակցութեան
միջոցին, երբ ժեներալը շատ աննպաստ և վերջին
ծայր ցաւով արտայայտուեցաւ, ըսինք .- Ժողովուրդին
լուրջ և խոհեմ մասը, մանաւանդ Հոգ. Պետերը հա-
մաձայն և համամիտ չեն : Պ. Տամատեանին համար
չատ աննպաստ արտայայտուած էր, մեր միամիտ
նկատողութեան պատասխանն եղաւ, - Ասլանեան

Վարդապետն ալ միեւնոյն կերպով կը շարժի : Սրտէս
զարնուածի պէս լեզուս կապուեցաւ և բերանս փակ-
ուեցաւ :

Ըսէք և համողեցէք զիս . եթէ Ֆրանսական եւ
թրքական ուժերուն գիմակալելու միջոցներ ունիք , ես
ալ ըլլամ ամենէն ծայրայեղին համաձայն և համամիտ,
ապա թէ ոչ խնայելու ենք ժողովուրդին . Մենք զմեզ
թերեւս ազատենք , բայց ժողովուրդի արեան պատաս-
խանատու ենք : Ո՞ր են մեծխօսիկ ճառողները և
ճամարտակողները :

Եթէ ստոյգ է , որ Ֆրանսական կառավարութիւնը
խզած է ամեն յարաբերութիւն Տամատեանի և Առաջ-
նորդարանի հետ , շատ ցաւալի և ողբալի է . որովհետեւ
նոյնը կրնայ պատահիլ Փարիզի Պատուիրակութեան
հետ :

Լէզէոնական սպայները հետզհետէ կուգան կ'անց-
նին .- Եթէ ընդ փայտ դալար զայդ առնեն , ընդ չորն գի՞նչ
լինիցի ,- Շատերը կը հետապնդուին , եթէ փափաք չու-
նին անծանօթ վայրեր ուխտի երթալ , թող աշխատին
օձիքնին ազատելու :

Ժողովուրդի ներքին բարեկարգութեան կը սպա-
սեմ . ամեն ոք իր պարապմունքին և պարտաւորու-
թեան հետեւի : Թող աշխատին կորսնցուցած վստա-
հութիւննին շահելու : Հաշտութեան դաշնագրութիւնը
ստորագրուած է . եթէ Ֆրանսացիք քէն ընեն և քաշ-
ուին , վա՛յ մեզ , մանաւանդ անմեղ ժողովուրդին :
Չունինք Դաւթի նման Առաջնորդ մը , որ կոտորող
սուրին դէմ բողոքէ , - Ես Հովիւս մեղայ , հօտը ինչ
յանցանք ունի , - Մենք ընդհակառակը ժողովուրդի
արեան լիճերու մէջ աթոռներ կը փնտռենք կամ կը
հաստատենք :

Հայրական սիրոյ սղջունիւ
ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՆԻԿԻՈՅ

13.- էջ 101.

Գեր. Տ. Գէորգ Մ. Վրդ. Ասլանեան

Առաջնորդ Ատանայի

Թէեւ Ձեր հասցէով՝ բայց Կիլիկիոյ սիրելի ժողովուրդիս կը վերաբերի գրիս բովանդակութիւնը . ուստի կը պարտադրեմ, որ վիճակիդ Եկեղեցիներուն մէջ կարդացնել տաք պէտք եղած բացատրութեամբ :

Ըստ ընկալեալ սովորութեան պէտք էր կոնդակի ձեւ ունենար, բայց ո՛չ Հռոմկլայէն և ոչ Սսոյ Մայրավանքէն, այլ Թափառայած օտարութեան մէջ, Լիբանանու ստորոտէն կը գրեմ . ուր ոչ Հայրապետավայել շուք և շքախումբ կան . . . այլ միայն ժողովուրդին, յաճախ օտարներէն, երբեմն ալ ինքնիրեն և մեր ստեղծած դաւ ու կսկիծն ունիմ անբաժան :

Եթէ Եւրոպայէն վերադարձիս ուղղակի յաջողէի Կիլիկիա գալ, կենդանի բարբառով կը պարզէի ուղեւորութեանս մանրամասնութիւնը . սակայն Կիլիկիոյ խառնակ և պաշարեալ վիճակը, հաղորդակցութեանց դժուարութիւնն ու անկարելիութիւնը և ժեներալ Կուբոյի բարեացակամ խորհուրդը՝ կապիցին զիս առժամապէս այս ափանց վրայ : Թէեւ տեսութեամբ հեռի, բայց սրտով եւ հոգւով միշտ ժողովուրդիս հետ . մերթ կը մագլցիմ Լիբանանն ի վեր, Ալէյ, Ժենեբային հետ տեսնուելու, պէտքեր ու ցաւեր մատնանշելու և գիտակցելու Կիլիկիոյ անցուդարձից :

Ինչո՞ւ համար էր անակնկալ ուղեւորութիւնս, և կամ ինչ բանէ թելադրեալ ցամաքի եւ ծովու տաժարքոտ

և երկար ճամբորդութիւնը : Մինչեւ մեկնելս ոչ ոք
զիտեր ինչ որ մտադրած էի . հետեւաբար ոչ ոք կրնար
թելադրել , թէ և շատ կանուխէն անհատներ ու մար-
միններ անցողակի փափաքներ յայտնած էին : Միայն
Մարաշի ահաւոր ջարդը և օրհասի վտանգը կիլիկիոյ
բովանդակ քրիստոնէութեան թելադրողներն եղան ու-
ղեւորութեանս կամ դիմումիս Թրանսայի , զոր Նո-
րին Վսեմութիւն Պօղոս Փաշա կոնտոնէն հեռագրով
գնահատեց :

Նպատակս ինքնին պարզ ու որոշ էր , փրկել ժողո-
վուրդիս կեանքը վերահաս մահուանէ : Դիւանագիտա-
կան հովեր և երազներ չը կային ծրագրիս մէջ , այս
պատճառաւ զգուշացայ ուրիշ մայրաքաղաքներ դի-
մելէ և տարբեր դռներ բաղխելէ :

Առաջին անգամ Ֆրանսական հողի վրայ ոտք
դնելուս՝ հետաքրքիր թղթակիցներու ինչ մտքով որ
արտայայտուեցայ , նոյնը շարունակեցի Ֆրանսական
կառավարութեան մօտ : Տարուած այն մտայնութենէն
զոր Ատանայի մէջ եղած միջոցիս կարգ մը մտաւորա-
կաններ և գործիչներ յաճախ կը կրկնէին .- Թող Ֆրան-
սացիք զէնք տան , մինչ ի մահ իր կողքին կը կռուինք
հասարակաց թշնամիին դէմ . մանաւանդ Հաճընի
դիւցազնաշունչ հեռագրէն .- Լաւագոյն կը համարինք
Ֆրանս . դրօշին տակ մեռնիլ քան թշնամոյն անձնա-
տուր ըլլալ .- ազդուելով՝ համարձակեցայ յայտարարել
մեծանուն և մեծ հայասէր Նախագահին , Լարչապետին
և Պատերազմական Նախարարին .- Եթէ նոր ուժեր
դրկելու դժուարութիւն ունիք , միայն զէնք տուէք
Հայերուն , որ պատրաստ են պաշտպանել Ֆրանսական
շահերը իրենց շահերուն հաւասար : Նախարարը հար-

ցուց .- Որչա՞փ զէնք բաւական է : Համեստ ըլլալու համար 10000 ըսել բաւական սեպեցինք՝ առանց գիտնալու թէ 10000 անձնուէրներ պիտի գտնուէի՞ն պատերազմի պահուն թշնամիին կուրծք տուող : Նախարարը նօթագրեց . այլ եւս չեմ գիտեր , նօթագրեալ քանակով զէնք տրուեցա՞ւ , կամ Ֆրանսացուց կողքին պատերազմելու պատրաստակամութիւնը մինչեւ վերջը պահեցի՞ն գործնականապէս :

Ֆրանսական կառավարութիւնը հաւաստիքներ տուաւ՝ չը թողուլ Հայերը թշնամիին ձեռքը . խոստացաւ նոր ուժեր զրկել և Փարիզ կղած միջոցիս նոր ուժերու առաքումը արդէն սկսած էր : Սան-Րէմոյի դաշնագրութեամբ Ատանան յարակից մասերով թուրքին յանձնելու օրերը համրուած էին և այդ պիտի ըլլար Կիլիկիոյ Հայութեան և Քրիստոնէութեան բնաջնջումը : Նոր դիմումներ Խորհրդարանի նշանաւոր անձնաւորութեանց բանիւ և գրով , նոր բացատրութիւններ և խնդրանքներ . բարեբաղդաբար ի վերջոյ Արեւելեան գործոց Պաշտօնատունէն յաջողեցանք հաւաստինալ , որ Ատանայի պարպումը քաղաքական պատճառներով առ այժմ յետաձգուած է : Ուղեւորութեանս վերջնական կէտին հասած ըլլալով՝ մեկնեցանք Փարիզէն :

Պէյրութ հասնելուս առաջին պարտքս սեպեցին . վսեմութիւն ժեներալ Կուրօյին այցելել և շնորհակալութիւն յայտնել իրին և Ֆրանսական կառավարութեան՝ ոչ միայն պատուալիր ընդունելութեանց , ընծայուած դիւրութեանց , այլ մանաւանդ հայասիրական և հայապաշտպան ոգւոյն , զոր ի Փարիզ ամենականաւոր անձանց մէջ տեսանք : Երկու անգամ այցելեցինք և երկու անգամին ալ լաւ եւ յուսալիր

տպաւորութեամբ մեկնեցանք. որովհետեւ խոստացաւ ոչ միայն Կիլիկիան մաքրել ոճրագործ յելուզակներէ, այլ և աւելցուց .- Հայերը թող կռուին զինեալ թեմամիին հետ, իսկ խաղաղ բնակչութեան ինչքա եւ պատիւը անբռնաբարելի պահեն իբրեւ քաղաքակիրք ազգ:

Ուրախութիւնս կատարեալ էր. որովհետեւ ուղեւորութեանս նպատակը պսակուած կարծեցի:

Օգոստոս 4ի բոլոր Քրիստոնեայ հասարակութեանց կրօնական և աշխարհական Պետերուն և Պատուիրակութեանց միասնաբար ներկայացուցած պաշտօնագիրը, որով Պրանսայի հովանաւորութեան տակ տեղական ինքնավարութիւն կը հռչակուէր, Գոլոնէլ Պրեմիէի սիրալիր ընդունելութիւնը և անմիջապէս ժեներալ Կուրոյին փոխանցելը եւ ստացուած բարեհաճ պատասխանը, արդարեւ գրաւական էին Կիլիկիոյ ժամանակակից Տարեգրութեան նոր եւ խոստմնալից թուական մը բանալու, հոգեկան խնդութեամբ լցուց զմեզ. ուստի անմիջապէս ամսոյ 12ին հեռագրով ունկնդրութիւն խնդրեցի՝ անձնական շնորհակալութիւնս եւ Կիլիկիոյ Քրիստոնեայ հասարակութեան երախտագիտութիւնը մատուցանելու: Պատասխանի յապաղումի օրերուն սկսանք կասկածներով ալէկոծուիլ: Վերջապէս հասած լուրերը ուրախութիւննիս ցնդեցին եւ պարտքերնիս ծանրացուցին:

Ամսոյս 16ին յարգական նամակով մը կը հաղորդէր ժեներալը, Ալէյ ելնելու յոգնութիւնը խնայելով մեզ. - Ամսոյ 17ին Պէյրութ պիտի իջնեմ եւ ժամը 20ին կառավարական պալատին մէջ կը տեսնուինք:

Արոշեալ ժամին տեսակցեցանք : Յանձնարարեց իր ըսածներուն ամփոփոյքը հաղորդել ժողովուրդին եւ կացութեան իրազեկ ընել :

Տե՛ս էջ 91-101 Ո. ր ըսուածներուն վրայ աւելցուց .-

Այս տեղէն Ատանա զրկուած Ապայներէն մին Քարաթաշի մօտերը գինեալ Հայերու կը հանդիպի , որոց մի քանի ազարակներ կրակելուն հետեւանօք 50 չափ թուրք կիներ եւ երեխայներ Քարաթաշ ֆրանսասացիներուն կ'ապաստանին : Այս բաները ներելի չեն , որովհետեւ թէ՛ կռիւներուն սուր հանգամանք առնելուն պատճառ կ'ըլլան եւ թէ՛ ասոր հետեւանօք ֆրանսացիներին արիւնքը աւելի կը հոսի :

Եթէ ներելի համարելու պատճառ մը կայ , այն ալ ժողովուրդի դժբաղդու թիւնն է . բայց եթէ դժբաղդութիւնը ժողովուրդին համար թեթեւացուցիչ պարագայ մ'է՛ իրենց վարիչներուն համար բնաւ ներելի չէ :

Գիտեմ որ այս բաներուն ժողովուրդը պատասխանատու չէ . բայց կայ Ատանայի մէջ ծայրայիղ փարբի մը , որ Դամասկոսի Էֆարեմիսքներուն պէս իրականութեան անտեղիակ՝ ժողովուրդը սխալ ճամբով կ'առաջնորդեն :

Այս ծանրակշիռ յայտարարութեանց մէջ որչափ յը վտանգը կ'ընդնշմարուի , աւելի յստակ կը տեսնուին գուրգուրանք դէպ ի ժողովուրդը , ներող ոգի եւ կարեկցութիւն , եթէ չափաւորութեան սահմանը չոտնակոխուի եւ աւազակային հանգամանք ունեցող ձեռնարկներէ զգուշ մնայ :

Այս ցաւալի պարագայներուն եւ որոշ յայտարար-

րութիւններուն հանդէպ մեր զգացած ցաւը շատ աւելի խորունկ եղաւ ոչ անոր համար, որ մեր քառամսեայ աշխատութիւնը, եղած նիւթական և բարոյական զոհողութիւնները կ'ամլացնեն. այլ մանաւանդ ժողովուրդի կեանքի ապահովութիւնը կը վտանգեն: Այնուհետեւ ամեն լաց ու կոծ, ամեն ողբ ու շիւան անլսելի և անտես պիտի մնան: Բոլոր Պետութեանց մէջ Ֆրանսան է միայն Հայերու տառապանքներուն գիտակից և վշտակից, Հայերուն համակիր եւ սրտակից: Եւ այս ո՛չ երեկի եւ ո՛չ այսօրուայ փորձաւորութեան վկայութիւնն է, այլ դարաւոր պատմութեան: Ճամբորդութեանս մէջ ուրիշ Պետութեան մը բարձր Պաշտօնէի մը հետ տեսնուելու պատահական պատեհութիւնն ունեցայ. Կիլիկիոյ աղէտալի կացութիւնը պարզելու՝ հետեւեալ սառնագոյն եւ հողելտով պատասխանը տուաւ. - Ինչո՞ւ Հայերը Կիլիկիոյ մէջ մնացիւր են, Երեւան չեն երթար:

Արդ՝ սիրելի ժողովուրդ, հայրական վշտաբեկ սրտով եւ սիրով կ'աղաչեմ, կը խնդրեմ եւ կը յորդորեմ, որ երէկի եւ այսօրուայ վիճակնիւք բաղդատութեան դնէք եւ փառք տաք այսօրուայ բաղդաւորութեան եւ անհամեմատ առաւելութեան մասին: Երէկ կեանքերնիս, ինչքերնիս, նոյն իսկ պատիւնիս յանձնեցինք թուրքին լոկ հաճոյլլալու համար. բայց տարագրուեցանք եւ մորթոտուեցանք անասնաբար: Այսօր քրիստոնէայ Պետութիւն մը մեր կողքին արիւն կը թափէ մեր կեանքը ապահովելու համար. ինչո՞ւ չը նուիրուինք կարգապահութեան եւ բոլոր ուժերով օգնելու եւ զօրացնելու Ֆրանս. քաջարի վինուորը: Թրքական վեց հարիւր տարուայ կայսրութիւնը յօշոտ-

ուեցաւ եւ այդ յօշոտումի գլխաւոր պատճառներէն մին էր Հայերու ընչից գրաւումը, Հայերու տարագրումը եւ ջարդը: Ինչո՞ւ այդ վայրենութեան մասնակից ըլլանք եւ անոնց անջնջելի արատը մաքրենք: Քրիստոսի սիրով կ'աղաչեմ, պապենական բարձր առաքինութիւնները յարգեցէք եւ ապագայ զարգացման եւ յառաջադիմութեան ճանապարհները մի փակէք անմեղ արիւնով և աւարառութիւններու տենջով:

Նուիրելով սէր, ողջոյն, օրհնութիւն եւ մաղթելով խաղաղութիւն եւ բարօրութիւն:

Մնամ աղօթարար
ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՆԻԿԻՈՅ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՍՅՆԹԵՑԻ *)

Շնորհագարդ Ս. Հայրապետ,

Փարիզ

Ապրիլ 1 ԵՂ. առաւօտուէն է ի վեր խիտ պաշարումի մը ներքեւ կռուի մէջ ենք թուրքերու հետ : Այս ողբալի կացութեան նախօրեակը տարւոյս սկիզբէն սկսած է : Չորս ամիսներ առաջ, երբ տակաւին, Ատանա էր Չեր Արբաղնութիւնը, տեղեկագիրներ պատրաստեցինք՝ գուշակելով ներկայ ճգնաժամը, բայց չի յաջողեցանք զրկել. և ահա առիթը կը ներկայանայ մեզ տեղեկագրելու տեղւոյս հայութեան շուրջ տեղի ունեցող խնդիրները :

Անցեալ տարի (1919) ամառը երբ Անգլիացիները հոս էին, թուրքերու մէջ սկսած էր Միլլի շարժումը և անգլիական Իշխանութիւնը գրեթէ օրին տեղեկացաւ անոր, բայց միւսնոյ՝ ժամանակ հրահանգ տուած էր աչք գոցել և չի հակառակիլ : (Ահաւասիկ օրինակ մը դայս հաստատող) : ԹՎ Յունիս 14ին ես Այնթապ եկած էի, քանի մը շաբաթ ետք Ս. Սահակ և Ս. Մեսրոպի տօնախմբութեան օրը, երբ ժողովուրդին կը խօսէի եկեղեցւոյ բնմէն՝ թելադրեցի ժողովուրդին որ աչքերնին միշտ այլոց նպատին և օգնութեան վրայ չըլլայ՝ թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական տեսակէտով, այլ Մեծն Սահակի և Մեսրոպի պէս ամէն հայ պէտք է գիտնայ ինքնիրեն օգնել և իր ազգին լուսաւորութեան համար կազմակերպուիլ : Յանձին Սահակի եւ

*) Այս նամակի ամփոփոյժը հաղորդուեցաւ Իսթանպուլից Պետերեանց :

Մեսրոպի երեցող անհատականութիւնը ամէն հայուն նշանաբանը պէտք է ըլլայ: Հետեւեալ օրը տեղւոյ՝ Անգլ. Գօլօնէլը զիս կանչեց և առանց բառ մ'իսկ հարցնելու և խօսակցելու, հայութիւնը պախարակեց իբր խռովարարներ և սպառնաց, որ պիտի աքսորէ իր հրամաններուն անսաստուղները: Իր հրամանները աստնք էին. — Լսարան չընել, ընկերակցութիւններ չի կազմել, նոյն իսկ դպրոցական գործերով չի հետաքրքրուիլ: Թրքական լուծէն աւելի ծանր վիճակի մը ենթարկել կ'ուզէր զմեզ: Ինծի ըսածներուն մէջ նշանակելի էին սա խօսքերը: «Որ և է հայ թուրքերը գրգռող արարքի մը մէջ եթէ գտնուի, կ'աքսորեմ և ամենէն առաջ գքեզ»: Այն պահունհարկ եղած պատասխանը տալով բաժնուեցայ:

Նոյեմբերի (1919) մէջ Անգղիայիք քաշուեցան և Ֆրանսայիք եկան. Մինչև այն ատեն թուրքերը արդէն բաւականաչափ զինուած էին: Առաջին օրէն թուրքերը լաւ աչքով չնայեցան Ֆրանսայուց, որոնք իրենց կարգին, առաջին օրէն սկսան թուրքերը շոյել և զանոնք սիրաշահելու ջանքեր ընել, նոյնիսկ նիւթական գոհողութիւններ ըրին, բայց չի յաջողեցան երբեք: Դեկտեմբերի մէջ այս լարուած վիճակը սաստկացաւ. թուրքերը սկսան փողոցներու և շուկաներու մէջ զինեալ պատիլ ի ցոյց Ֆրանսայուց եւ յերկիւղ հայոց, և Ֆրանսայուց դէմ բացէ ի բաց փրօփականտ ընել. հայերը առ ահի զգուշութեան միջոցներու ձեռնարկեցին: Այս զգուշութիւնները թուրքերու կողմէ աղէկ չը դիտուեցան: Տեղւոյս Ֆրանսական ուժին պետը՝ Լիէօթընան Գօլօնէլ Ֆլի Սէնթ Մարին էր: Մենք կացութիւնը կը պարզէ-

ինք ամէն օր Գօլոնէլին, որ միշտ կը յորդորէր զմեզ թուրքերը գրգռող որեւէ արարքի մէջ չի գտնուիլ, պաղարիւն ըլլալ և անոնց աւելի մօտ երթալ:

Տեղւոյս Ազգ. Միութիւնը նկատելով որ, մեր պաշտպաններուն քաղաքականութեան հակառակիլ վտանգաւոր կրնայ ըլլալ, խոհեմութիւն համարեց ժողովուրդը այն ուղղութեամբ հրահանգել: Գօլէնէլը թուրքերը գրգռել ըսելով կը հասկնար, Հայոց ոմանց՝ շուկաներու մէջ թուրքերուն զինեալ վիճակէն վախնալով՝ տուները քաշուիլը, որ իբր թէ, լարուած վիճակ մը յառաջ բերելով վտանգաւոր կրնայ ըլլալ եղեր: Յունվարի վերջերը կացութիւնը ծանրացաւ: Մարաշի ջարդը լսուեցաւ, և արդէն անկից առաջ, թուրքերը սկսած էին սպառնալ մեզ յայտնի և համարձակ պայքոթով, զրպարտութիւններով, խուզարկութիւններով և ջարդի վախ ազդելու համար ցոյցեր ընելով: Օր մը (Յունուար 22 Եշ.) Ալժերացի զինուոր մը թուրք տղայ մը սպաննեց, հետեւեալ օրը իբր սպահանդէս ցոյց մը կազմակերպեցին, որուն քաղաքիս գրեթէ թրքութեան մեծ մասը մասնակցեցաւ: Հայերը առ ի գգուշութիւն շուկայ չ'իջան: Միւթէսարըֆը՝ կէսօրէն ետքը, պաշտօնագրով մը Հայերը իրենց գործին զլուխը հրաւիրեց: Բայց Հայոց մէջ կասկածները օրէ օր աւելցած ըլլալով՝ Հայոց թաղերէն հեռու գտնուող խանութներու տէրերը չը գացին: Յունուար 29 Բշ. Գօլոնէլը կանչեց իր քով Ազգ. Միութիւնը և Հայոց երևելիները, ու յորդորեց որ ամեն հայ իր գործովը զբաղի, քաղաքականութեան վրայ չը մտածէ և Ֆրանս. պաշտպանութեան վրայ վստահ ըլլայ: Յունուար 31 Շարաթ

օրը թունուզցի զինուոր մը շուկայի մէջ թուրքի մը հետ կռուի կը բռնուի և այս առթիւ խոնուող թուրքերը «Ամա՛ն հասէք, Ֆրանսացիք իսլամը կը մեռցնեն» պոռալով «Եղբարք ի զէն» ահազանգը կը հնչեցնեն և անմիջապէս կ'սկսին շուկայ գտնուող հայերուն վրայ յարձակիլ եւ կոտորել թափել: Այս խուճապի մէջ երիտասարդ հայ մը սպաննուեցաւ և եօթը հոգի վիրաւորուեցան: Հետեւեալ օրը կիրակի առտուն շուկան խռովութիւն մը ըլլալով դարձեալ խուճապ յառաջ եկած է, ու պատարագի միջոցին ժողովուրդը դուրս թափեցաւ եկեղեցիէն, վախցող կիներէն մեռնողներ եղան և շուկայի մէջ երկու հոգի ծանրապէս վիրաւորուեցան: Նոյն օրը Գօլոնէլին դիմելով ապահովութիւն խնդրեցինք: Գոհ չի մնաց մեր դիմումէն և սպառնալից ոճով մը արտայայտուելով ըսաւ «Թուրք կառավարութիւնը պիտի պատժէ ոճրագործները, և արդէն ասանկ դէպքեր ամեն երկրի մէջ կրնան պատահիլ, ասոնք հասարակ ոճրագործութիւններ են, երեկուան եւ այսօրուան դէպքը կանխամտածութեամբ ծրագրեալ բաներ չեն»: Փետր. 3 Գշ. Գօլոնէլ Ծ. Աէնթ Մարին դարձեալ հրաւիրեց Ազգ. Միութիւնը և հրամայեց որ ամէն հայ շուկայ լիջնայ և թուրք թաղերէն եկողները տուներնին դառնան. Միւթէսարըքը խոստացած է ոճրագործները պատժել և շարունակեց ըսելով թէ, եթէ այս ձկտեալ վիճակը շարունակէ հետեւանքը վտանգաւոր կ'ըլլայ և ինք չի կրնար հայերը պաշտպանել: Բայց այս յորդորը անօգուտ դարձաւ և ժողովուրդը ո՛չ միայն շուկայ չիջաւ, այլ տակաւին թուրք թաղերու մէջ մնացողներ հայ թաղերու մէջ հաւաքուեցան: Միւսնոյն

ժամանակ թուրքերն ալ հայ թաղերէն քաշուիլ սկսան ։
Փետր . 17ի գիշերը Գօլոնէլը անգամ մըն ալ հրա-
ւիրեց Ազգ . Միութիւնը և այս անգամ աւելի ծանր
խօսեցաւ և հրամայեց ու պահանջեց որ հայերը շուկայ
իջնեն և թուրքերուն հետ մօտէն յարաբերութիւն ընեն ։
Եւ արդէն թուրքերուն պահանջին վրայ , Իւրիզան զօ-
միսիօն անուն (համերաշխութիւն յառաջ բերելու հա-
մար) ժողով մը կազմած էր , տասը թուրք և տասը
հայ երեւելիներէ , որ իբր թէ կը ջանար անդորրու-
թիւնը ապահովել և խռովութեան առջեւը առնել ։
Փետր . 21 Շք . օրը թուրք երեւելիներ հաւաքուած
էին կառավարութեան պաշտօնատունը . 25 հոգի
հայեր ալ հրաւիրուած էինք ու գաղինք հոն ։
Համերաշխութեան վրայ բանախօսութիւններ եղան ։
Թուրքերը առաջարկեցին , որ հայերը որ և է դիմում
ուղղակի թուրք կառավարութեան ընեն , նոյն իսկ
եթէ հայ մը անարգութի կամ վիրաւորութի թուրքի մը
կողմէն . երկրորդ՝ շուկայ պիտի իջնեն և իրենց տու-
ները պիտի դառնան ։

Հայոց հակառաջարկներն ալ ասոնք եղան . Ա .
Թուրքերը զինեալ չպիտի պտըտին . Բ . Պօյքօթը պի-
տի վերցնեն . առաջարկները երկուստեք ընդունուե-
ցան ։ Մարաշի դէպքին մանրամասնութիւնները լսուած
էին և այս ժողովին որոշումները ապարդիւն մնացին ։
Առաջին անգամ շուկայ իջնող Հայը ծեծուեցաւ , պօյ-
քօթը սաստկացաւ և նոյնիսկ քաղաքի մէջ հայ երի-
տասարդ մը կորսուեցաւ եւ ուրիշ մը յօշոտուեցաւ ։
Այս բոլորը կ'ըլլային հայերը ահաբեկելու համար ,
որպէսզի Ֆրանսական պաշտպանութենէն ձեռնթափ
ըլլան և թուրքերուն հետ միանան թուրք-ֆրանսական

ընդհարուժի միջոցին : Թուրքերը այլեւս համար-
ձակօրէն սկսան ըսել թէ պիտի կռուին Ֆրան-
սացիին դէմ, պիտի մտնեն և հայերն ալ պիտի
ճգմեն ու բնաջնջեն, նկատելով որ հայերը Ֆրանսո-
ճիլ են :

Այս պահուն քաղաքը ամէն կողմէ պաշարուած
էր Չէթէներով և սպառնալիքներ կը զրկէին Ֆրանս .
իշխանութեան . ո՛չ հայ և ո՛չ Ֆրանսացի չէր կրնար ճամ-
բայ ելլել : Հալէպէն եկող երկու Ամերիկացիներ իրենց
օթօմօպիլի շօֆէօրներով յօշոտուած էին : Օրուը գիւղի
հայերէն չորս հոգի Այնթապէն մէկ ժամ հեռաւորու-
թեամբ տեղ մը սպաննուեցան : Քաղաքիս շուրջը գլտ-
նուող Սասունցի ջաղադպաններէն ,մեր գիտցածը միայն,
17 հոգի սպաննուեցան և գիւղերը գործելու գացող
հայերէն ոչ ոք վերադարձաւ : Ֆրանսացին իր ուժին
չէր վստահեր զինուորական գործողութիւն մը՝ ընելու
համար, և միշտ ժամանակ շահելու համար, կը ջա-
նար համաձայնութիւն գոյացնելու պիտակին տակ
թուրքերը սիրաշահել : Մարտ 26-28ին Գրանսական
ուժ մը Քիլիսէն ելաւ և Այնթապ հասաւ՝ չորս օր շա-
րունակ Չէթէներու հետ կռիւ մղելէ ետքը : Մահուան
ստուերի մէջ ապրող հայութիւնը կարծեց թէ շունչ
մը պիտի առնէ, բայց յուսախաբութիւնը դառն
եղաւ :

Ապրիլ 1 երկու շաբթի առտու, հաղիւ Այնթապ
հասնող զօրասիւնը իր հետը առնելով Այնթապ գրա-
նուող սակաւաթիւ զինուորներուն մէկ մասը և ծանր
թնդանօթները, որոնք թուրքերու աչքին փուշն էին,
մեկնեցաւ դէպի Քիլիս : Արդէն ամբողջ մարտ ամսու
մէջ թուրքերը միահամուռ պատրաստութեան մէջ էին

և գիշեր ցորեկ զէնքի բաշխում կար անոնց մէջ :
Շրջակայ գիւղերէն Չէթէներ կը հաւաքուէին քաղաքին
մէջ : Շարունակ Գօլոնէլին գրաւոր սպառնալիք կը
տեղացնէին, մէկ ամսու մէջ 5 6 անգամ շատ անար-
գական ոճով գրուած սպառնագիրեր եկան, որով
կը պահանջէին Քրանսայիին քաղաքէն հեռանալը : Տա-
ճիկներու մնացորդներն ալ հայ թաղերէն քաշուեցան
և իրենց տուներուն մէջ Չէթէներ տեղաւորեցին : Տե-
ղական կառավարութիւնն ալ ամեն օր կը ստիպէր
հայերը հրամայելով՝ որ շուկայ իջնին : Այս բոլորը օրը
օրին տեղեկացուցինք Գաղղիական իշխանութեան,
որոց ի պատասխանի մէկ խօսք ունէր միայն . - Ես
հոս եմ, մի՛ վախնաք, թնդանօթներ ունիմ, որմէ կը
վախնան թուրքերը : Բայց յայտնի էր թէ անոնք չէին
վախնար, որովհետև իրազեկ էին Քրանս . ուժի քա-
նակին և որակին : Վերջին օրեր, Ալի Գըլըճ անուն
Չէթէյապետ մը, Բէմալ փաշայի արքանեակներէն,
«Շարգ մուքրագասը օրսու գօմանսանը» տիտղոսով
Այնթապ եկաւ իր զինուորներով : Ալի Գըլըճի քաղա-
քին մօտ տեղ մը գալը, թուրքերուն անոր մօտ եր-
թալը և Ալի Գըլըճին քաղաք հասած օրը փոթորիկի
մը պայթելու հաւանականութիւնը Գօլոնէլին տեղեկա-
գրուած էր, բայց ի հիճուկս այս բոլորին՝ Քիլիսէն
եկող ոյժը վերադարձած էր : Զօրասիւնի մեկնելէն
ժամ մը ետքը ազդանշանը տրուեցաւ . փոթորիկը
պայթեցաւ և հաւանական է որ զօրասիւնի մէջ լսուե-
ցաւ Այնթապի զէնքերուն ձայնը :

Վերջապէս Ապրիլ 1 ԵՂ . առտու ժամը Տին (ը . ե .)
քաղաքին երկու կողմի (հիւսիս և հարաւ-արեւելեան)
բլուրներու վրայէն տրուած ազդանշանով թուրքերը

կազմակերպեալ ոյժով և ռազմական սխրեմով սկսան յարձակիլ հայ թաղերու վրայ: Բարեբաղդաբար հայ երիտասարդութիւնը երկու ամիս առաջուրնէ կացութեան ծանրութիւնը նկատի առնելով, հայաբնակ փողոցներու ճակատին վրայ դիրքեր շինած պատրաստած էր և իր աննշան թիւով հրացանները բաժնած էր իր մէջ: Երիտասարդները անմիջապէս դիրքերը բռնեցին և մէկ ժամուայ մէջ փողոցներու անցքերուն վրայ պատնէշներ բարձրացնելով ամրապէս փակեցին:

Պատերազմը սկսաւ: Հայերը հերոսաբար դիմադրեցին երկու օր շարունակ՝ զիշեր ցորեկ անընդհատ ահռելի յարձակումներուն: Մեր արեւմտեան կողմը և Գօլէժի և անոր ստորտը արտի մը մէջ ամրացած կը նստէր Ֆրանսացին: Հետեւաբար մեր պաշտպանելիք ճակատը 2¹/₂ քիլօմէթրէն աւելի էր և այսքան երկայնութեան ամեն կէտի վրայ յարձակում կար: Ա.մին տեսակ փորձ ըրին թուրքերը բայց չի յաջողեցան ոչ մէկ կէտի վրայ և ետ մղուեցան կատաղի հրացանաձգութեանց ներքեւ բաւականաչափ կորուստով մը: Առտու կանուխ շուկայ գըտնուողներէն տասնէն աւելի սպաննուած և 22 վիրաւորներ ունեցած էինք: Այս երկու օրուան հերոսամարտին մէջ նշանակելի երկու պարագաներ կան: Ա. Քաղաքիս հիւսիսային կողմը գտնուող Լատինաց (Ֆրանչիսկեան) վանքի (Թէրրա Սանթա) մէջ շուկայէն փախչելով եկող Ֆրանս. զինուոր մը կար, որ միայնակ 24 ժամ պաշտպանեց վանքը, 12 ժամ ետքը զինուորին փամփուշտները հատնելու վրայ էին, և Հայերը փողոցի անդիլի կողմէն փամփուշտ կը հաս-

ցնէին անոր : Առաջին ժամէն Գայաճըզ թաղի հիւսիսային կողմը տուներէն մէկուն մէջ էի և էթամատօրի հետ կը յարաբերուէի թէլէֆօնով ու անցուդարձը կը տեղակացնէի վայրկեանէ վայրկեան : Գօլոնէլը հրահանգեց որ Լատինաց վանքը պարպենք . այս առաջարկը իրագործել մեծ զոհողութիւն (մարդու կորուստ) կը պահանջէր և միւս կողմէն՝ վանքին թուրքերուն ձեռքը անցնելու հաւանականութիւնը կար , որ մեծագոյն վտանգն էր Հայոց համար : Չի պարպեցինք վանքը , (եւ հաղորդեցի այս լուրը մեր զինուորական պետին , որ սաստիկ կերպով հակառակեցաւ) : Վանքը Հայոց թաղերէն բաժնուած է մեծ փողոցով մը , որուն արեւելեան կողմը Չինարյը ճամի կոչուած տեղը , թուրքերուն ամենէն ամուր դիրքն է : Մերինները վանքի հանդիպակաց կողմը գրաւող տան արտաքին պատը ծակեցին և սկսան փողոցի մէջ պատնէշ մը շինել : Չինարյը ճամիէն եկող տեղատարափ կապարներուն երբեւ , յաջողութեամբ պատնէշը լմնցուցին և վանքին պատը ծակելով ներս մտնել փորձեցին : Վանքին մէջ 150 հայեր կային և օգնութիւն կ'աղաղակէին՝ վախնալով թէ թուրքեր կուգան և կը գրաւեն : Վանքին մէջ ծերունի կրօնաւոր մը կար .- Բաղրէ Ամաթիօ , շատ հակառակեցաւ Հայ զինուորներու վանք մտնելուն , բայց հայերը գրաւեցին վանքը : Նոյն պահուն վանքին գրաւուած ըլլալը տեղեկացուցի Գօլոնէլին , որ շատ դոհ մնաց այս լուրէն : Բ.- Հաղարաւոր Հայ բանուորներ , արք և կանայք , ծերք և տղայք՝ դիշերները մինչև առտու կ'աշխատէին դիրքեր ամրացնելով և այս կերպով Ամերիկեան հիւանդանոցէն մինչև Գօլէժ քրակե մը շինեցինք և

Ֆրանսացիին մեզի հետ յարաբերուելու զիւրութիւնը գտանք: Երբ Գօլոնէլը համոզուեցաւ, որ իր զինուորները ապահով ճամբով մը Հայ թաղերէն անցնելով Լատինաց վանքը կրնան երթալ, 25 զինուոր տրամադրեց վանքը պաշտպանելու: Նոյնպէս 12 զինուոր զրկեց Ամերիկեան հաստատութիւններուն համար: Որովհետեւ Ամերիկեան բոլոր հաստատութիւնները թրքական կրակի ենթակայ՝ կը հարուածուէին և առաջին երկու օրերուն մէջ հայերը պաշտպանեցին զանոնք արիաբար ղիմադրելով և զոհողութիւն ընելով: Այս հերոսամարտը տեւեց 15 օր, զիշեր ու ցորեկ անխտիր կռիւը շարունակելով: Առաջին երկու օրէն ետքը, միւս 13 օրերուն մէջ թուրքերը ամէն կողմէն սաստիկ յարձակում գործեցին: Աւագ Հինգշաբթի ըլլալիք գիշերը, 3 ժամ տեւող կռիւը պատերազմի մէջ գտնուողներու վկայութեամբ, կատարեալ պատերազմ մըն էր, բայց փառք Աստուծոյ միշտ յաջողութիւնը մեր կողմը մնաց: Թուրքերը մեր ճակատէն որ և է ճեղք մը չի կրցան բանալ, ընդհակառակը մեր տղաք թուրքերուն կողմէն շատ մը ղիրքեր գլորաւեցին միշտ զիրենք ետ մղելով: Այս 15 օրեայ պատերազմին մէջ 4—5 վիրաւոր և 12 նահատակ միայն ունեցանք:

Ապրիլ 16 և 17 օրերը արեւելքէն և արեւմուտքէն Ֆրանս. ուժեր եկան հասան: Հայ-թուրք կռիւը մասամբ դադար մը ունեցաւ 2—3 օր, բայց ընդհանուր կացութեան մէջ փոփոխութիւն մը չերեւցաւ: Առջի օրէն մինչև այսօր Ֆրանսացին մեզ ուղղակի և դրական որեւէ օգնութիւն չըրաւ ո՛չ զէնքով և ո՛չ զինուորով: Միայն օտարահպատակ հաստատութիւն-

ներու մէջ զետեղուած իշ սակաւաթիւ ոյժով մեր մէկ ճակատի դժուարութիւնը թեթեւցուցած եղաւ օհնդհակառակը մենք ֆրանսացիին օգնեցինք պաշտպանելով թուրքի յարձակումին դէմ և ինք պաշտպանութիւն մը չըրաւ մեզի համար : (Եւ արդէն չէր կրնար ընել) :

Նոր եկող ուժերը պաշարեցին քաղաքը : Թուրքով նամակով հրաման-հրահանգ տուին Միւթէսարըֆին , որ քաղաքէն հեռացնէ Չէթէները : Բայց ան արհամարհեց Տ . Սէնթ Մարիի հրամանները և բողոք բարձաւ քաղաքի պաշարումին և քաղաքի հարաւային կողմը գտնուող՝ Մուսուլլու Սօֆաղը կոչուած թաղին ուրմբակոծուելուն դէմ , ուր թուրք Չէթէներ հաւաքուած էին : Մինչեւ այն ատեն Ֆրանսացին կը յարաբերէր Միւթէսարըֆին հետ , որ իբր թէ միլի շարժումէն անկախ՝ պաշտպան կառավարութեան ներկայացուցիչը կը համարուէր : Այս միջոցին երբեմն բանազնաց սաւառնակ մը կու գայ ու կ'երթայ , որուն երթեւեկութիւնը թուրքերը հրացանաձգութեամբ արգիլել կը ջանան : 16 օրեայ այս պատերազմի միջոցին , թուրքերը մեր վրայ ըրած յարձակումի պահուն , միստամանակ յարձակում գործեցին Ֆրանսական ամրոցներու և բլուրներու վրայ 7-8 օրէ ի վեր եղած պաշարման գծի վրայ շարունակ : Այսօր քաղաքիս արեւելեան կողմը գտնուող Ֆրանս . գինուորները քաշուեցան գացին : Լուսինք թէ Ուրֆա գացեր են : Իարձեալ մնացինք թուրքերուն դէմ հայերս : Առանց որ և է մեզի օժանդակութիւն մը ընելու մեր արեւմտեան կողմէն մեր կռնակը ապահոված եղան Ֆրանսացիք :

Ահաւասիկ մեր կացութիւնը , զոր չեմ գիտեր թէ ինչ

ածականով արակեմ, և չեմ գիտեր թէ ի՞նչպէս պիտի
ազատուինք սա դժոխային ճգնաժամէն: Մեր
երկտասարդութիւնը ուխտած է պատնէշներու վրայ
աւանդել իր վերջին շունչը, բայց արդեօք, 15 հա-
զար հայութիւնը անգամ մ'ալ զոհ պիտի ըլլայ եւրո-
պական խաբերայ քաղաքականութեան: Հոս 3.4 գո-
լոնէլներ միանգամայն գտնուեցան: Ժեներալ Տը լա
Մօտ ևս եկաւ ու գնաց, ամենուն ալ ներկայացանք,
մեր կացութիւնը պարզեցինք և օգնութիւն խնդրե-
ցինք, բայց ի զուր: Ամենուն ալ ըսածը հետեւեալն
է, եթէ մէկ խօսքով ըսել ուզենք զայն. - Զինադա-
դարի օրէնքը թոյլ չի տար մեզ թուրք կառավարու-
թիւնը բռնադատելու, և քաղաքը ուժակոծելով գը-
րաւելու: Մենք Չէթէնիւրը ցրուելու և քաղաքը ան-
դորրացնելու արտօնութիւնը ունինք միայն, դուք
պէտք է որ ընդդիմանաք և համբերէք, մենք չպիտի
թողունք որ թուրքերը ջարդեն զՁեզ - : Բայց իրակա-
նութիւնը այն է որ, եթէ առաջին 15 օրերու մէջ
մենք զմեզ չի կարենայինք պաշտպանել, Ֆրանսացին
իւր շատ տկար ուժով, լուռ հանդիսատես պիտի ըլլար
ստիպողաբար, քաղաքիս բոլոր հայութեան բնաջնջու-
մի հանդէպ: Քանի մը օտարահպատակներու համար
25 զինուոր յատկացուցին, սակայն 15 հազար հայե-
րու պաշտպանութեան համար զէնք մը իսկ չը տուին:

Այս ամենուն մէջ, սակայն մեր էն մեծ թշնամին
պարէնի պակասութիւնն է: Ամիս մըն է 15 հազար հոգի
բազմութիւն մը, կ'ուտէ իր ունեցածը հասարակոր-
դական դրութեամբ: Մինչև այսօր Քիլիսի կողմէն
ծախու առնելով բերել տուած ենք 65 գանթար պա-
րէն, որ մեզ համար 4—5 օրուան կրնայ բաւել: Մեր

այժմու ունեցածը 15 օրուան կը բաւէ : Պրանսացին պարենաւորման համար կ'ուզէ օգնել մեզի , բայց անբաւական են միջոցները : Արդ Վեհափառ Տէր , կը խնդրենք օր առաջ ազատուիլ , որովհետեւ եթէ երկարին օրերը , հազար ու մէկ անպատեհութիւններ յառաջ պիտի գան , զոր թուել աւելորդ է և որոց մէջ ամենէն ծանրը՝ սա հերոս և Վահանեան արիութեամբ ինքզինքը պաշտպանող ժողովուրդին , անօթութիւն կոչուած ճիւղին զոհն ըլլալու դատապարտուելն է :

Մեր երկրորդ պահանջն է զէնք և փամփուշտ եթէ ստիպուած մեանք տակաւին ընդդիմանալու : Վեհափառ Տէր , հաճեցէք անմիջական կերպով դիմել առ որանկ է , որպէսզի կսրենանք փրկել մեր կեանքը , երբ տակաւին ժամանակ կայ Ձեր փոքր հօտին՝ և քաջարի Հայրերուն արժանի ժառանգին :

Պրանսացւոց մեզի շոտլածը , զմեզ գովել և և փառաբանել է : Կը գովեն Հայուն ձեռներեցութիւնը և արթնամտութիւնը , քաջութիւնը և կազմակերպական ոգին : Մեծերիկացիք ամեն օր կը խոստովանին թէ իրենց կեանքը կը պարտին հայուն քաջասրտութեան : Հիմայ շատ մը յանձնաժողովներ ունինք . - Ոստիկանութիւն , Ձինուորութիւն , Քաղաքապետութիւն , Իտալական ատեաններ . - որոց մէջ ամենէն կարեւորն է պարենաւորումի հսկող մարմինը : Մեր այս բոլոր գործերուն մէջ անկախ ենք՝ Պրանսացին մեր ոչ մէկ ներքին գործին կը խառնուի :

Մինչև զատկական ճրագալոյցի օրը՝ ժամ արարողութիւն դադրած էր , որովհետեւ եկեղեցին ամեն կողմէն կրակի ենթակայ էր : Բայց ճրագալոյցի իրիկունէն սկսելով մինչեւ օրս առտու իրիկուն անխաբան ժամեր-

գութիւն կ'ընենք և ըստ սովորականի պատարագ կը մատուցանենք, անշուշտ զգուշական միջոցներ ձեռք առնելով որ վնաս մը, կորուստ մը չը տանք:

Շնորհազարդ Ս. Հայրապետ, Ձեր ձայնը բարձրացուցէք եւ մեր կացութիւնը պարզեցէք քաղաքակրթութեան ներկայացուցիչ համարուած ազգերուն առջեւ և զմեզ փրկելու միջոցները փնտռեցէք: Հաճեցէք ելեքտրական արագութեամբ ընել այս ամենը եթէ ոչ, Ձեր կողմէ կ'իլլիկիոյ վարդը համարուող Այնթապի հայութեան վերջամնացութիւնն ալ փճացած և թուրքի զուլումին ներքեւ ջնջուած պիտի գտնէք:

Սրբազան Հայր, օգնութիւն, օգնութիւն եւ ազատութիւն:

Մատչելով ի համբոյր Սրբազնութեանդ Ս. Աջոյն

Ճեամ որդիական խորին յարգանօք

Կաթող. Փոխանորդ

ՆԵՐՍԷՍ ԲՂՆՅ. Ն. ԹԱՎՈՒԳՃԵԱՆ

1920 Ապրիլ 25-27

Ա յ ն ք ա պ




ԳԻՆ

Սուրիոյ եւ Լիբանանի համար 75 Սուր. Դհ.

Արտասահմանի համար 20 ֆրանգ:



BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE



3 7531 00534587 2